ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

ՀՀ ՊՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ISSN 1829-0108

3 (101). 2019

«ՀԱՅԱՍՏԱՆՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԻ ՊԱՐՏՎԵԼՈՒ
ԵՎ ՈՉ ՄԻ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ»

«АРМЕНИИ НЕ ДАНО ПРОИГРАТЬ НИ В ОДНОЙ ВОЙНЕ»

“ARMENIA CANNOT LOSE ANY WAR”

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ՝ ԿԱՅՈՒՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՄԲ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Հայաստանի Հանրապետության Վարչապետ Նիկոլ Փաշինյանի
և Ռուսաստանի Դաշնության Նախագահ Վլադիմիր Պուտինի
հանդիպումը

Երևան, 2019 թ. հոկտեմբերի 1

Հայաստանի Հանրապետության Վարչապետ Նիկոլ Փաշինյանի
և Սինգապուրի Վարչապետ Լի Սյեն Լունի մամուլի համատեղ ասուլիսը

Երևան, 2019 թ. սեպտեմբերի 29

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

Լույս է տեսնում 1995 թվականից տարին չորս անգամ

3 (101). **2019**

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Տավարածյան Գ. Վ.
(նախագահ)
Չիլինգարյան Դ. Ս.
(գլխավոր խմբագիր)
Ալեքսանյան Ա. Ջ.
Ալթունյան Գ. Ռ.
Այդինյան Ռ. Ա.
Այվազյան Լ. Գ.
Ապերյան Վ. Վ.
Բալայան Գ. Կ.
Գասպարյան Օ. Վ.
Դավթյան Ա. Մ.
Խաչատրյան Տ. Վ.
Ղամբարյան Մ. Ա.
Մակարյան Ա. Ա.
Մարգարյան Ռ. Պ.
Մարգարյան Վ. Հ.
Մարտիկյան Ա. Մ.
Մարտիրոսով Լ. Ա.
Շահնազարյան Թ. Ն.
Սիմոնյան Ս. Վ.
Սմբատյան Ն. Վ.
Վարդանյան Ա. Գ.
Տեր-Գրիգորյանց Ն. Գ.
Օհանյան Ս. Ռ.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՌԱԶՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Գ. Վ. Տավարածյան, Պատերազմի վերաբերյալ պատերազմավարության դասականների տեսակետների համառոտ ակնարկ 7

ՀՕՊ-Ի ԶՈՐՔԵՐՈՒՄ

Ա. Ս. Գրիգորյան, Հակաօդային պաշտպանության խնդիրների կատարման որոշ հարցեր . 23

ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Տ. Մ. Անտոնյան, «Մեծ ռազմավարության» սկզբունքները և ձևավորման մեթոդաբանությունը 33

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Ա. Գ. Ավագյան, Թուրքական հասարակությունում բանակի գործոնի վրա խարսխվող քաղաքական մտածելակերպի ձևավորման ակունքները 44

ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Ս. Ա. Սուջյան, Ժողովրդագրական անվտանգությունը որպես պետության քաղաքականության օբյեկտ 55

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ

Ա. Ժ. Խաչատրյան, Վ. Ն. Աղաբեկյան, Ա. Ս. Հակոբյան, Դ. Հ. Մոսոյան, Գազագենեբատորային կայանների կիրառումը կարկտային երևույթների դեմ պայքարելու համար 69

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Ս. Հ. Բաղդասարյան, Պետության պաշտպանության առնչությամբ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների սահմանափակման պրոբլեմը 80

ՌԱԶՄԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ

Մ. Վ. Սարգսյան, Զինծառայողների շրջանում արտահիվանդանոցային թոքաբորբի ընթացքի որոշ առանձնահատկություններ 89

ՌԱԶՄԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Է. Գ. Մինասյան, Երևանի պետական համալսարանը Հայրենական մեծ պատերազմի տարիներին. համալսարանի 100-ամյա հոբելյանի առթիվ 97

«ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՇՎԱՌՄԱՄԲ» ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ

Ա. Մ. Շահվերդյան, Ժամանակակից պատերազմների բնույթը 111

Մ. Մ. Մարգարյան, Հոգևոր անվտանգության հիմնախնդիրները ՀՀ ԶՈՒ-ի զարգացման համատեքստում 120

ԳԻՏԱԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ն. Հ. Առաքելյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, *Ա. Գ. Ավագյան,* պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր *Լ. Ս. Արզումանյան,* բանասիրական գիտությունների դոկտոր, *Գ. Ե. Բաղդասարյան,* ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, *Ս. Ա. Գալստյան,* բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Ս. Գ. Գալստյան,* բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Հ. Ա. Գևորգյան,* ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, *Կ. Ս. Դանիելյան,* կենսաբանական գիտությունների թեկնածու, աշխարհագրական գիտությունների դոկտոր, *Բ. Ն. Հարությունյան,* բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Վ. Մ. Հարությունյան,* ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, *Հ. Հ. Մաթևոսյան,* ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, *Ա. Հ. Մանթաշյան,* ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, *Մ. Մ. Մարգարյան,* քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Մ. Վ. Մարկոսյան,* տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Է. Գ. Մինասյան,* պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Մ. Մ. Միրիջանյան,* բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Հ. Յ. Սայադյան,* աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Ռ. Ա. Սաֆրաստյան,* ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, *Ա. Հ. Սիմոնյան,* ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, *Հ. Ս. Սիսակյան,* բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Յու. Մ. Սուվարյան,* ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ՀՀ ԳԱԱ նախագահության անդամ, *Հ. Ս. Քոթանջյան,* գեներալ-լեյտենանտ (պաշտոնաթող), քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Գ. Վ. Տավարածյան, գեներալ-մայոր, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի պետ, *Վ. Հ. Մարգարյան,* հոգեբանական գիտությունների դոկտոր, դոցենտ, գնդապետ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի պետի կրթության և գիտության գծով տեղակալ–ԱՌՀԻ-ի պետ, *Ս. Ա. Սուջյան,* աշխարհագրական գիտությունների թեկնածու, պահեստազորի գնդապետ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ռազմարվեստի պատմության հետազոտությունների կենտրոնի պետ, *Դ. Մ. Մանասյան,* պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի տարածաշրջանային ռազմավարական վերլուծությունների կենտրոնի պետ, *Հ. Հ. Հովհաննիսյան,* ռազմական գիտությունների թեկնածու, գնդապետ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ռազմավարական առաջնորդության և կառավարման հետազոտությունների կենտրոնի ավագ դասախոս

«АЙКАКАН БАНАК» («АРМЯНСКАЯ АРМИЯ»)
ВОЕННО-НАУЧНЫЙ ЖУРНАЛ НАЦИОНАЛЬНОГО
ИССЛЕДОВАТЕЛЬСКОГО УНИВЕРСИТЕТА ОБОРОНЫ
МИНИСТЕРСТВА ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
№ 3 (101)**. 2019**
Издается 4 раза в год

РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ

Таварацян Г. В. (председатель), *Чилингарян Д. С.* (гл. редактор),
Айвазян Л. Г., Айдинян Р. А., Алексанян А. Дж., Алтунян Г. Р., Аперян В. В.,
Балаян Г. К., Варданян А. Г., Гамбарян М. А., Гаспарян О. В., Давтян А. М.,
Макарян А. А., Маргарян Р. П., Мартикян А. М., Мартиросов Л. А.,
Оганян С. Р., Симонян С. В., Смбатян Н. В., Тер-Григорьянц Н. Г.,
Хачатрян Т. В., Шахназарян Т. Н.

СОДЕРЖАНИЕ

ВОЕННАЯ НАУКА

Г. В. Таварацян. Краткий очерк взглядов классиков войноведения о войне . . . . . 7 (21)*

В ВОЙСКАХ ПВО

А. С. Григорян. Некоторые вопросы выполнения задач противовоздушной обороны 23 (31)

ПОЛИТОЛОГИЯ БЕЗОПАСНОСТИ

Т. М. Антонян. Принципы «Большой стратегии» и методология ее формирования 33 (42)

РЕГИОНАЛЬНАЯ БЕЗОПАСНОСТЬ

А. Г. Авагян. Истоки формирования в турецком обществе политического мышления, основанного на факторе армии 44 (53)

ДЕМОГРАФИЧЕСКАЯ БЕЗОПАСНОСТЬ

С. А. Суджян. Демографическая безопасность как объект политики государства 55 (68)

ЧРЕЗВЫЧАЙНЫЕ СИТУАЦИИ

А. Ж. Хачатрян, В. Н. Агабекян, А. С. Акопян, Д. О. Мосоян. Применение газогенераторных станций для борьбы с градовыми явлениями 69 (78)

ВОЕННОЕ ПРАВО

С. О. Багдасарян. Проблема ограничения основных прав человека и гражданина в интересах обороны государства 80 (87)

---

* Цифры в скобках обозначают страницу, с которой начинается текст на русском языке.

ВОЕННАЯ МЕДИЦИНА

М. В. Саргсян. Некоторые особенности течения внебольничной пневмонии у военнослужащих 89 (95)

ВОЕННАЯ ИСТОРИЯ

Э. Г. Минасян. Ереванский государственный университет в годы Великой Отечественной войны: к 100-летию университета 97 (107)

МАТЕРИАЛЫ КОНФЕРЕНЦИИ «НАПРАВЛЕНИЯ РАЗВИТИЯ ВООРУЖЕННЫХ СИЛ РА С УЧЕТОМ ХАРАКТЕРА СОВРЕМЕННЫХ ВОЙН»

А. М. Шахвердян. Характер современных войн 111

М. М. Маргарян. Проблемы духовной безопасности в контексте развития ВС РА 120

НАУЧНО-КОНСУЛЬТАЦИОННЫЙ СОВЕТ:

А. Г. Авагян, доктор исторических наук, профессор, *Н. У. Аракелян,* академик НАН РА; *Л. С. Арзуманян,* доктор филологических наук; *Б. Н. Арутюнян,* доктор медицинских наук, профессор; *В. М. Арутюнян,* академик НАН РА; *Г. Е. Багдасарян,* академик НАН РА; *С. А. Галстян,* доктор филологических наук, профессор; *С. Г. Галстян,* доктор медицинских наук, профессор; *Г. А. Геворкян,* академик НАН РА; *К. С. Даниелян,* кандидат биологических наук, доктор географических наук; *Г. С. Котанджян,* генерал-лейтенант (в отставке), доктор политических наук, профессор; *А. А. Манташян,* академик НАН РА; *М. М. Маргарян,* доктор политических наук, профессор; *М. В. Маркосян,* доктор технических наук, профессор; *Г. Г. Матевосян,* член-корреспондент НАН РА; *Э. Г. Минасян,* доктор исторических наук, профессор; *М. М. Мириджанян,* доктор медицинских наук, профессор; *Р. А. Сафрастян,* академик НАН РА, *О. Я. Саядян,* доктор географических наук, профессор, *А. Г. Симонян,* член-корреспондент НАН РА, *А. С. Сисакян,* доктор медицинских наук, профессор, *Ю. М. Суварян,* академик-секретарь Отделения арменоведения и общественных наук НАН РА, член Президиума НАН РА

ВОЕННО-НАУЧНЫЙ СОВЕТ:

Г. В. Таварацян, генерал-майор, начальник НИУО МО РА;

В. Г. Маргарян, доктор психологических наук, доцент, полковник, заместитель начальника НИУО МО РА по образованию и науке-начальник ИНСИ;

С. А. Суджян, кандидат географических наук, полковник запаса, начальник Центра исследований истории военного искусства НИУО МО РА;

Д. М. Манасян, кандидат исторических наук, начальник Центра региональных стратегических исследований, *Г. О. Оганисян,* кандидат военных наук, полковник, старший преподаватель Центра исследований стратегического руководства и управления НИУО МО РА

«HAIKAKAN BANAK» («ARMENIAN ARMY»)
DEFENSE-ACADEMIC JOURNAL,
NATIONAL DEFENSE RESEARCH UNIVERSITY,
MINISTRY OF DEFENSE, REPUBLIC OF ARMENIA

№ 3 (101)**. 2019**
Is published 4 times a year

EDITORIAL BOARD

Tavaratsyan G. V. (Chairman), *Chilingaryan D. S.* (Editor-in-Chief), *Alexanyan A. J., Altunyan G. R., Aperyan V. V., Ayvazyan L. G., Balayan G. K., Davtyan A. M., Gasparyan O. V., Ghambaryan M. A., Idinyan R. A., Khachatryan T. V., Makaryan A. A., Margaryan R. P., Margaryan V. H., Martikyan A. M., Martirossov L. A., Ohanyan S. R., Shahnazaryan T. N., Simonyan S. V., Smbatyan N. V., Ter-Grigoryants N. G., Vardanyan A. G.*

CONTENTS

MILITARY SCIENCE

G. V. Tavaratsyan. Brief sketch of views of classics of warfare on war . . . . . 7 (22)*

IN THE AIR DEFENSE FORCES

A. S. Grigoryan. Some issues of air defense task completion 23 (32)

POLITICAL SCIENCE OF SECURITY

T. M. Antonyan. The principles of Grand Strategy and its formation methodology 33 (43)

REGIONAL SECURITY

A. G. Avagyan. The origins of forming political thinking in the Turkish society based on the factor of the army 44 (54)

DEMOGRAPHIC SECURITY

S. A. Sujyan. Demographic security as the object of state policy . 55 (68)

EMERGENCY SITUATIONS

A. Zh. Khachatryan, V. N. Aghabekyan, A. S. Hakobyan, D. H. Mosoyan. Implementation of gas-generating plants in fighting hail phenomena 69 (79)

MILITARY LAW

S. H. Baghdasaryan. The problem of restriction of the fundamental human and citizen's rights for the defense of the state 80 (88)

MILITARY MEDICINE

M. V. Sargsyan. Some peculiarities of the progress of community-acquired pneumonia in the military 89 (96)

* Numbers in brackets mean the page of the text in English.

MILITARY HISTORY

E. G. Minasyan. Yerevan State University during the Great Patriotic War: on the 100th Anniversary of the University 97 (108)

MATERIALS OF THE CONFERENCE "DIRECTIONS FOR THE DEVELOPMENT OF THE RA ARMED FORCES GIVEN THE NATURE OF CONTEMPORARY WARFARE"

A. M. Shahverdyan. The nature of contemporary warfare 111

M. M. Margaryan. Problems of spiritual security in the context of the RA Armed Forces development 120

ACADEMIC-ADVISORY COUNCIL:

A. G. Avagyan, Doctor of History, Professor; *N. H. Arakelian,* Full Member, NAS, RA; *L. S. Arzumanyan,* Doctor of Philology; *G. Y. Baghdassarian,* Full Member, NAS, RA; *K. S. Danielyan,* PhD in Biology, Doctor of Geography; *S. A. Galstyan,* Doctor of Philology, Professor; *S. G. Galstyan,* Doctor of Medical Sciences, Professor; *H. A. Gevorkian,* Full Member, NAS, RA; *B. N. Harutyunyan,* Doctor of Medical Sciences, Professor; *V. M. Haroutyounian,* Full Member, NAS, RA; *H. S. Kotanjian,* Lieutenant General (retired), Doctor of Political Sciences, Professor; *A. H. Mantashian,* Full Member, NAS, RA; *M. M. Margaryan,* Doctor of Political Sciences, Professor; *M. V. Markosyan,* Doctor of Technical Sciences, Professor; *H. H. Matevosyan,* Corresponding Member, NAS, RA; *E. G. Minasyan,* Doctor of Historical Sciences, Professor; *M. M. Miridjanian,* Doctor of Medical Sciences, Professor; *R. A. Safrastyan,* Full Member, NAS, RA; *Hov. Y. Sayadyan,* Doctor in Geography, Professor; *A. H. Simonyan,* Corresponding Member, NAS, RA; *H. S. Sissakian,* Doctor of Medical Sciences, Professor; *Yu. M. Suvaryan,* Academician-Secretary of the Division of Armenology and Social Sciences, NAS, RA, Member of the Presidium, NAS, RA

DEFENSE-ACADEMIC COUNCIL:

G. V. Tavaratsyan, MG, Head, NDRU, MOD, RA; V. H. Margaryan, Doctor of Psychology, Associate Professor, Col, Deputy Head in Education and Research — Head, INSS, NDRU, MOD, RA; S. A. Sujyan, PhD in Geography, Col (Ret.), Head, Center for Research on the History of Military Art, NDRU, MOD, RA; D. M. Manasyan, PhD in History, Head, Center for Regional Strategic Analyses, NDRU, MOD, RA; H. H. Hovhannisyan, PhD in Military Science, Col, Senior Lecturer, Center for Research on Strategic Leadership and Management, NDRU, MOD, RA

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՏԵՐԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԿԱՆՆԵՐԻ ՏԵՍԱԿԵՏՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Գ. Վ. ՏԱՎԱՐԱԾՅԱՆ, գեներալ-մայոր, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի պետ

Վերջին տարիներին արագ տեմպերով փոխվում են պատերազմների բնույթը, ձևերը և վարման եղանակները, նոր թափ են ստանում հիբրիդային և անհամաչափ պատերազմները, կատարելագործվում են զինված պայքարի միջոցները, ստեղծվում են սպառազինության և մարտական գործողությունների ապահովման սկզբունքորեն նոր համակարգեր, մարտական գործողությունները դառնում են ավելի դինամիկ: Միևնույն ժամանակ, ռազմական գործողությունների համալիրում մարտական գործողությունների հետ մեկտեղ ավելի ու ավելի լայն կիրառում են ստանում քաղաքական-դիվանագիտական, տեղեկատվաքարոզչական, ֆինանսատնտեսական և այլ միջոցառումներ:

Յուրաքանչյուր պետություն իր պաշտպանական համակարգը զարգացնելիս պետք է հաշվի առնի այս իրողությունները: Նման պայմաններում Հայաստանի համար Ղարաբաղյան հակամարտության չլուծվածությունն ստեղծում է լրացուցիչ բարդություններ՝ նոր համալիր խնդիրներ առաջադրելով պաշտպանական համակարգին և կառավարման ոլորտներին: Ընդսմին պետք չէ մոռանալ, որ Հայաստանն իր սուղ աշխարհագրական, ժողովրդագրական, ֆինանսատնտեսական ռեսուրսների հաշվառմամբ չի կարող պարզապես պատճենել աշխարհառազմավարական առումով առաջատար պետությունների փորձը: Ուստի, կարծում ենք, ավելի նպատակահարմար է հանգամանորեն ուսումնասիրել այն հիմքային դրույթները, որոնց վրա են խարսխվում առաջատար պետությունների ժամանակակից պատերազմավարական տեսությունները և փորձել ուրվագծել պաշտպանական համակարգի զարգացման մեր ուրույն ճանապարհը՝ աչքաթող չանելով նաև առաջավոր փորձը, առաջատար պետությունների թույլ տրված սխալներն ու նվաճումները:

Հենց այս նկատառումներով մենք սույն հոդվածում փորձ ենք անում համեմատական մեթոդի կիրառմամբ վերլուծել պատերազմի մասին պատերազմավարության բնագավառի դասականներ չինացի Սուն Ցզիի, գերմանացի հռչակավոր ռազմագետ Կառլ ֆոն Կլաուզևիցի, ֆրանսիական բանակի գեներալ Անտուան Ժոմինիի, անգլիացիներ գեներալ-մայոր Զոն Ֆուլերի ու կապիտան Բեզիլ Լիդել Հարտի, ինչպես նաև իտալացի գեներալ Ջուլիո Դուեի հայացքները և գիտական մեթոդները: Ձգտելով մշակելու գիտական սկզբունքների արտածման և գիտության զարգացման ապագա միտումների

կանխատեսման հուսալի մեթոդ՝ նրանք փորձել են ի մի բերել բազմադարյան ռազմական փորձը:

ԿԱՌԼ ՖՈՆ ԿԼԱՈՒԶԵՎԻՑԻ ԵՎ ԱՆՏՈՒԱՆ–ԱՆՐԻ ԺՈՄԻՆԻԻ ՏԵՍԱԿԵՏՆԵՐԸ

Կլաուզևիցի «Պատերազմի մասին» աշխատության մշակումը անմիջականորեն հաջորդեց Եվրոպան ընդգրկած և ժամանակակից ազգային պետությունների ու եվրոպական ազգերի առաջացմանը հանգեցրած խոր սոցիալական փոփոխությունների ժամանակաշրջանը: Ֆրանսիական հեղափոխության գաղափարներով տոգորված զարգացումները թափանցել էին հասարակական կյանքի բոլոր ոլորտներ, այդ թվում՝ ռազմական: Վտանգը, որ իր հետ բերում էր հեղափոխական Ֆրանսիան, ակնհայտորեն կապված չէր սպառազինությունների, ռազմական տեխնոլոգիաների, մարտավարության առավելությունների հետ, թեպետ ֆրանսիական բանակն ուներ անգերազանցելի հրետանի և փայլուն կերպով օգտագործում էր ճկուն ու խելամտորեն դիրքավորվող նոր հետևակային միավորումների ներուժը: Նոր սպառնալիքին հաջողությամբ դիմագրավելու համար անհրաժեշտ էր հասկանալ տեղի ունեցող փոփոխությունների խորքային պատճառներն ու շարժիչ գործոնները: Այս խնդիրը դարձավ Կլաուզևիցի հետազոտությունների առարկան:

Փորձելով հասկանալ պատերազմի բնույթը՝ Կլաուզևիցը այն դիտարկում է քաղաքական իրավիճակի և ամբողջ հասարակական կյանքի համատեքստում՝ այն սահմանելով որպես «ուժային գործողություն՝ նպատակաուղղված թշնամուն մեր կամքը պարտադրելուն»[1]: Պատերազմի օբյեկտիվ բնույթը ներառում է այնպիսի տարրեր, ինչպիսիք են բռնությունը, անհամապատասխանությունը (*friction),* դիպվածը և անորոշությունը *(fog of war)*, որոնք առանց բացառության բոլոր պատերազմների անքակտելի հատկանիշներն են: Կլաուզևիցը անհամապատասխանությունը սահմանում է որպես «այն հասկացությունը, որով իրական պատերազմը տարբերվում է թղթին գրված պատերազմից, այն բոլոր անակնկալները, որոնք տեղի են ունենում պատերազմի ժամանակ, երբ ամենապարզ թվացող իրերը կարող են դառնալ ամենադժվարը: Ռազմական մեքենան՝ բանակը և այն ամենը, ինչ առնչվում է նրա հետ, պարզ է թվում, ուստի և հեշտությամբ կառավարելի: Բայց հիշենք, որ դրա բաղադրատարրերից և ոչ մեկը չի կազմված մի ամբողջական կտորից: Այդ սարսափելի անհամապատասխանություն-շփումները, որոնք չեն կարող, ինչպես մեխանիկայում, կենտրոնանալ սակավաթիվ կետերում, ամենուրեք առնչվում են պատահականության հետ և առաջ բերում երևույթներ, որոնք նախապես հաշվի առնել հնարավոր չէ, քանի որ դրանք մեծ մասամբ պատահական բնույթի են»[2]:

Կլաուզևիցը համարում է, որ հրամանատարի համար ամենամեծ մար-

[1] *Carl von Clausewitz.* On War. Edited and Translated by Michael Howard and Peter Paret. Princeton, 1976, P. 37.

[2] Նույն տեղում, էջ 119–121:

տահիրավերը պատերազմում առաջացող անհամապատասխանության հաղթահարումն է. «Պատերազմում ամեն ինչ շատ պարզ է, բայց ամենապարզը դժվար է ... հպարտ ոգու կուռ կամքը գերիշխում է պատերազմի արվեստի վրա»[3]: Այս առումով Կլաուզևիցը մեծապես կարևորում է մարդկային կամքը՝ դառնալով առաջին տեսաբանը, որը կամքը բնութագրում է որպես պատերազմի առանցքային գործոն:

Պատերազմի բնույթը Կլաուզևիցը վերլուծում է երեք մակարդակներում, թեև ինքն ավելի հայտնի է որպես ռազմավարական մտածող: Ռազմական գործողությունների թատերաբեմին և մարտավարությանը վերաբերող նրա դիտարկումները, որոնք արդիական էին նրա ժամանակներում, ներկայումս, ընդհանուր առմամբ, այլևս կիրառելի չեն:

Ռազմավարական մակարդակում, Կլաուզևիցի կարծիքով, ռազմական գործողությունները մեծապես կապված են քաղաքականության հետ: Ռազմական գործողությունները (ռազմարշավներ, ճակատամարտեր) պետք է այնպես իրագործվեն, որ պետության սահմանած ռազմավարական քաղաքականության նպատակները դառնան հասանելի:

Կլաուզևիցը, ինչպես և Սուն Ցզին, մշակել է հաղթանակի հասնելու համար անհրաժեշտ՝ թշնամական և յուրային ուժերի ու միջոցների հարաբերակցության գնահատման մեթոդ, քանի որ նա կարծում էր, որ հակառակորդի ուժեղ և թույլ կողմերը չափելի են:

Ըստ Կլաուզևիցի՝ գոյություն ունեն երեք դինամիկ բաղադրիչներ, որոնք փոխազդում են և հարմարվում պատերազմի տարբեր հանգամանքներին: Կլաուզևիցը դրանք անվանում է «տարիմաստական եռամիասնություն»: Պատերազմում գերակշռող միտումները նման են մի «եռյակի», որում միավորվում են կույր բնական ուժը, «հնարավորության և հավանականության խաղը, որում ստեղծագործ ոգին ազատ կերպով շրջում է», և «ենթակարգության տարրը»: Տվյալ երրորդության յուրաքանչյուր կողմին առանձնահատուկ են կամային հատկանիշները: Այս երեք տարրերից առաջինը հիմնականում վերաբերում է ընդհանրապես մարդկանց, երկրորդը՝ հրամանատարին և նրա բանակին, իսկ երրորդը՝ կառավարությանը: Այն տեսությունը, որը մերժում է տվյալ երեք միտումները, բախվելու է իրականության հետ[4]:

Կլաուզևիցն առաջինը կիրառում է *ծանրության կենտրոնի* գաղափարը՝ գործածելով «Շվերպունկտ» *(Schwerpunkt)* տերմինը: «Պատերազմի մասին» աշխատությունում նա այդ հասկացությունը սահմանում է որպես «ուժերի հանգույց, որից կախված է ամեն ինչ: Դա այն կետն է, որի դեմ ուղղված է լինելու ամբողջ էներգիան, ...իսկ ամենաարդյունավետ հարված համարվում է ծանրության կենտրոնին հասցված հարվածը, այդ թվում՝ պատերազմի ժամանակ»[5]: Ըստ Կլաուզևիցի՝ «Ռազմական գործողությունների թատերաբեմում մղված մեծ ճակատամարտերը երկու ծանրության կենտրոնների միջև

[3] Նույն տեղում, էջ 119:

[4] Տես նույն տեղում, էջ 89:

[5] Նույն տեղում, էջ 595–596:

տեղի ունեցող բախումներն են: Որքան շատ ուժեր կուտակենք մեր ծանրության կենտրոնում, այնքան (թշնամու ծանրության կենտրոնին ուղղված հարվածը – *Գ. Տ.*) կլինի զանգվածեղ»[6]: Ծանրության կենտրոնը վերաբերում է հզորությանը, կամ, այսպես կոչված, ուղղակի գործողությունների ռազմավարությանը[7]: Ըստ Կլաուզևիցի՝ ռազմավարական մակարդակում կան ծանրության երեք կենտրոններ, որոնց վրա պետք է հարձակվել հակառակորդին պարտության մատնելու համար: Դրանք են. 1) թշնամու բանակի ոչնչացումը, 2) մայրաքաղաքի գրավումը, մանավանդ, եթե դա նաև նրա հասարակական-քաղաքական կենտրոնն է, և 3) հաղթանակը թշնամու գլխավոր դաշնակիցի նկատմամբ:

Կլաուզևիցը համոզված էր, որ ճակատամարտում *քանակական գերազանցությունը* այն գործոններից է, որը պայմանավորում է հաղթանակը, այլ կերպ ասած՝ վճռորոշ կետում պետք է ներգրավվեն մեծ թվով զորքեր: Այդ դեպքում նույնիսկ ամենատաղանդավոր հրամանատարը ծայրաստիճան դժվարությամբ կարող է հաղթել երկու անգամ ավելի ուժեղ հակառակորդին:

Սակայն վճռորոշ կետում առանց թշնամուն *հանկարծակիությամբ* պարտության մատնելու հանգամանքի քանակական գերազանցությունը առավելություն չի համարվում: Այստեղ, ըստ էության, խոսքը վերաբերում է ոչ թե հանկարծակի հարձակմանը, այլ հակառակորդին ընդհանրապես հանկարծակիի բերելուն և խոցելուն: Սակայն այն պատկերացումը, որ պատերազմի ժամանակ հանկարծակիության միջոցով կարելի է հասնել շատ բանի, սխալ է: Որպես միտք՝ այն չափազանց գայթակղիչ է, բայց գործնականում չի իրագործվում *անհամապատասխանության* պատճառով: Ի հավելումն դրա՝ հարկ է նշել, որ պատերազմին նախապատրաստումը միայն տևում է մի քանի ամիս, հետևաբար զորքերի տեղաբաշխման ուղղությունները շատ արագորեն են բացահայտվում: Ուստի, ռազմարշավի ընթացքում հանկարծակիության սկզբունքով զգալի արդյունքների հասնելը միշտ չէ, որ հնարավոր է լինում:

Ըստ Կլաուզևիցի՝ պատերազմի վճռորոշ ելքի համար էական նշանակություն ունեն հրամանատարի տաղանդը, զինվորական սխրագործությունը և ժողովրդի ոգին, որոնցից էլ կազմված է *բարոյական ներուժը*: Այս բաղադրատարրերից ամենակարևորը բանակի զինվորական սխրագործությունն է, սակայն եթե այն բավարար չէ, ապա պատերազմում հաղթանակ տանելու համար անհրաժեշտ է զորավարի բացառիկ տաղանդ և ժողովրդի ամուր ոգի:

Կլաուզևիցի և նրա ժամանակակից տեսաբան Ժոմինիի հայացքները ընդհանուր առմամբ համընկնում էին: Ըստ Ժոմինիի՝ պատերազմի արվեստը բաղկացած է վեց տարրերից: Դրանք են.

[6] Նույն տեղում:

[7] Տես *Jacob Barford.* Centre of gravity analysis and operational design. Alabama, March 2009 (https://media.defense.gov/2017/Dec/04/2001851653/-1/-1/0/WF_0038_BARFOED_CENTER_OF_GRAVITY.PDF):

1. պատերազմի նկատմամբ պետության վերաբերմունքի հարցում նրա կառավարման արվեստը,
2. ռազմավարությունը, կամ պատերազմի թատերաբեմում մարդկանց հոծ բազմությունները հմտորեն կառավարելու արվեստը ինչպես պաշտպանության, այնպես էլ հարձակման դեպքում,
3. մեծ մարտավարությունը,
4. թիկունքային ապահովումը, կամ բանակների տեղափոխման արվեստը,
5. ինժեներական արվեստը ամրաշինությունների վրա գրոհի և դրանց պաշտպանության գործում,
6. փոքր մարտավարությունը:

Ժոմինիի կարծիքով՝ այն պետությունները, որոնցում չկան ներքին երկպառակություններ և երրորդ կողմի հարձակման սպասումներ, միշտ էլ առավելություն կստանան այն բանում, որ պատերազմը կընթանա թշնամու տարածքում: Իսկ զուտ ռազմական առումով՝ յուրային տարածքում գործող բանակն ունի մեծ առավելություններ պատերազմի թատերաբեմում, որի բոլոր առանձնահատկություններին քաջ ծանոթ է, որտեղ շարժունակությանը նպաստում են երկրի լավ իմացությունը, բնակչության հավատարմությունը և օրինական իշխանությունների օգնությունը:

Ըստ Ժոմինիի՝ այս տարրական ճշմարտությունները համապատասխանում են պատերազմի բոլոր նկարագրություններին, սակայն եթե ռազմավարության սկզբունքները միշտ էլ նույնն են, ապա պատերազմի քաղաքական բաղադրատարրը նույնը չէ, այլ փոխվում է՝ պայմանավորված պետություններում ու դրա բնակավայրերում տիրող տրամադրություններով և պետությունների ու բանակների գլուխ կանգնած մարդկանց բնավորություններով: Այս փոփոխությունների գոյության փաստը ցույց է տալիս, որ պատերազմը չունի կանոններ[8]:

Ժոմինին համարում էր, որ գոյություն ունեն *«նպատակահարմար պատերազմներ»*, որոնք լինում են երկու տեսակի. առաջինը, երբ ուժեղ պետությունը պատերազմում է՝ հիմնվելով իր քաղաքական կամ տնտեսական շահերի վրա, այն է՝ իր աշխարհագրական սահմանների ընդարձակման համար, երկրորդը, երբ պետությունը ձգտում է կանխելու վտանգավոր մրցակցի հզորացումը: Այս վերջին տեսակի պատերազմները դասվում են ինտերվենցիական պատերազմների թվին, քանի որ պետությունը հազվադեպ է հարձակվում վտանգավոր հակառակորդի վրա միայնակ՝ ձգտելով ձևավորելու դաշնադրություն: Ժոմինին առանձնացնում է հակառակորդի դեմ երկու տեսակի հարձակում. մեկի դեպքում հարձակման է ենթարկվում հարևան պետությունը, իսկ մյուսի դեպքում՝ հեռավոր կետը, այսինքն՝ ներխուժում մեծ փռվածությամբ տարածք, որի բնակիչները կարող են լինել չեզոք, տատանվող կամ թշնամական: Առանց համոզիչ պատճառի ներխուժմամբ պատերազմը նման է Չինգիզ խանի վարած պատերազմներին, այդ պատե-

[8] Տես *Генрих Антуан-Анри Жомини.* Стратегия и тактика в военном искусстве. М., 2009:

ռազմները մարդկության դեմ ուղղված հանցագործություն են, սակայն դրանք կարելի է ներել, եթե արդարացված են, եթե բխում են մեծ շահերից, կամ եթե մղվում են ճիշտ շարժառիթավորմամբ: Ներխուժումը սաստիկ բարկացած ժողովրդի տարածք, երբ նա պատրաստ է գնալու ցանկացած զոհողությունների և ունի ուժեղ հարևանից աջակցություն ստանալու հավանականություն, հույժ վտանգավոր ձեռնարկում է:

Պաշտպանական և հարձակողական պատերազմներում հաղթական բանակ ունենալը Ժոմինին պայմանավորել է 12 հիմնական հանգամանքներով: Դրանք են՝ 1) բանակ հավաքագրելու արդյունավետ համակարգը, 2) ճիշտ կազմակերպումը, 3) ազգային պահուստների խելամտորեն կազմակերպված համակարգը, 4) շարային պատրաստման և ներքին ծառայության վերաբերյալ սպաների և զինվորների բարձր մակարդակի կրթությունը, 5) խիստ, սակայն չնվաստացնող կարգապահությունը և ենթակարգության ու ճշտապահության ոգին, որոնք հիմնվում են ավելի շատ համոզմունքների, քան ծառայողական ձևականության վրա, 6) պարգևատրումների հասկանալի համակարգը, որը խթանում է մրցակցությունը, 7) հատուկ զորատեսակները, այնպիսին, ինչպիսիք են ինժեներական զորքերը և հրետանին, որոնք պետք է լավ ուսուցանված լինեն, 8) հակառակորդի նկատմամբ գերազանցությունը, եթե դա հնարավոր է, ինչպես պաշտպանողական, այնպես էլ հարձակողական սպառազինությամբ, 9) Գերագույն շտաբը, որը պետք է ունենա մի հաստատություն՝ նախատեսված սպաների տեսագործնական ուսուցման կատարելագործման համար, 10) կոմիսարիատների, հոսպիտալների և գլխավոր վարչության համակարգը, 11) հրամանատարական կետերի նշանակման և հիմնական ռազմական օպերացիաների ղեկավարման արդյունավետ համակարգը,12) մարդկանց մարտական ոգու խթանումը և պահպանումը:

Ժոմինին համոզված էր, որ խելացի ռազմական գերատեսչությունների, հայրենասիրության, ֆինանսների արդյունավետ կառավարման, ներքին հարստության և հասարակության վստահության արդյունավետ զուգակցումը նպաստում է, որ պետությունը կարողանա դիմակայել երկարատև պատերազմին:

ՍՈՒՆ ՑԶԻԻ ԵՎ ԼԻԴԵԼ ՀԱՐՏԻ ՏԵՍԱԿԵՏՆԵՐԸ

Հին շրջանի չինացի ռազմավարագետ Սուն Ցզին առաջինն էր, որ մշակեց պատերազմի վարման վերաբերյալ համընդգրկուն տեսություն և այն ներկայացրեց «Պատերազմի արվեստը» կոչվող իր աշխատությունում[9]: Տվյալ աշխատությունը չինացի կայսրերի համար դարձավ մի ուսուցողական ձեռնարկ, որում նկարագրվում էր, թե ինչպես է հնարավոր պահպանել պետությունը այլ պետությունների դեմ պայքարում: Այս տեսակետից այն նման է քաղաքական իշխանությունը պահպանելու վերաբերյալ Մաքիավելիի տեսությանը, որը նա ամփոփել է «Տիրակալը» աշխատության մեջ:

[9] Sun *SunTzu.* The Art of Warfare. Translated, with an introduction and commentary, by Roger T. Ames. New York, 1993:

Սուն Ցզին պատերազմի վերաբերյալ իր տեսակետները ուրվագծել է բոլոր մակարդակներում՝ ռազմավարական, օպերատիվ և մարտավարական: Ռազմավարական մակարդակում Սուն Ցզին իր աշխատության առաջին գլխում նշել է. «Պատերազմը պետության համար կենսական հարց է: Դա այն ոլորտն է, որով որոշվում է պետության կյանքը կամ մահը, և այն ճանապարհը, որը տանում է դեպի կա՛մ գոյատևում, կա՛մ կործանում, և պետք է ուսումնասիրվի առավելագույն ուշադրությամբ»[10]:

Ռազմավարական գնահատումների համար Սուն Ցզին առանձնացրել է հինգ գործոններ՝ տաո (միջոց, ուղի), կլիմա, տեղանք, հրամանատարություն և կառավարում: Տաոն վերաբերում էր հրամանատար առաջնորդի և ենթակաների միասնությանը, հրամանատարությանը՝ առաջնորդության հատկություններին (իմաստնություն, մարդասիրություն, քաջություն, կարգապահություն): Կառավարումը հրամանատարական և կազմակերպական կառույցների նյութատեխնիկական ապահովման գնահատումն էր: Այս հինգ գործոնները անհրաժեշտ էին երկու կողմերի ուժեղ կողմերը համեմատելու համար՝ նախքան պատերազմի մեջ մտնելը. «Իմացեք մյուսին, ճանաչեք ինքներդ ձեզ, և հաղթանակը ռիսկի չեք ենթարկի»[11]: Այս գործոնների գնահատումների հիման վրա Սուն Ցզին ուրվագծեց գործողության այն ընթացքը, որը կապահովեր «ռազմավարական առավելություն» հաղթանակ տանելու համար:

Օպերատիվ մակարդակում Սուն Ցզին կարևորել է հետախուզության դերը՝ նշելով, որ «հետախուզությունը պատերազմի էությունն է. դրանից է կախված բանակների յուրաքանչյուր քայլ»[12]:

Սուն Ցզիի մյուս կարևոր հայեցակարգը «ռազմավարական դիրքավորումն» է, որով հրամանատարը որոշում է ճակատամարտի համար լավագույն վայրը: Սուն Ցզիի կարծիքով՝ ուժերի պահպանման համար պատերազմի ամենանպաստավոր ձևը պաշտպանությունն է, բայց հաղթանակի համար անհրաժեշտ է հարձակում[13]:

Մարտավարական մակարդակում Սուն Ցզին կիրառում է ցանկացած հոգեբանական հնարք մարտի դաշտում հակառակորդի կամքը կոտրելու համար: Այս մակարդակում ամենակարևոր հասկացություններն են ժամանակը, կարգապահությունը և բարոյահոգեբանական պատրաստությունը:

Ըստ Սուն Ցզիի՝ հակառակորդի ծանրության կենտրոնը նրա խորամանկությունն է *(stratagem)*: Ռազմավարական մակարդակում վճռորոշ դեր են խաղում հակառակորդի հետ մարտի բռնվելու տրամադրվածության նախնական գնահատումները: Եթե ուժեղ և թույլ կողմերի գնահատումներով որոշվի, որ թշնամին պարտվելու է, ապա հաղթանակն արդեն ապահովված կլինի: Եթե նախնական գնահատումները նպաստավոր չեն, ապա հրա-

[10] Նույն տեղում, էջ 103:

[11] Նույն տեղում, էջ 151:

[12] Նույն տեղում, էջ 169–171:

[13] Նույն տեղում, էջ 115:

մանատարը չպետք է բանակը տանի կռվի: Սա էր ըստ Սուն Ցզիի «ռազմավարական առավելությունը», որով շեշտվում էր քաղաքական նպատակներով պատերազմ սկսելու վերաբերյալ որոշումների կայացման գործում հոգեբանության խաղացած դերը:

Սուն Ցզին գրում է. «Հարյուրավոր մարտերում հարյուրավոր հաղթանակ նվաճելը գերազանցություն չէ. բարձրագույն գերազանցությունը՝ առանց կռվելու թշնամու բանակին հպատակեցնելն է: Հետևաբար, լավագույն ռազմական քաղաքականությունը «հարձակումն» է ռազմավարության վրա, հաջորդը՝ հարձակումն է դաշինքների վրա, մյուսը՝ զինվորների վրա, իսկ ամենավատը՝ ամուր պատերով շրջապատված քաղաքների վրա»[14]: Հակառակորդի ռազմավարության վրա «հարձակումը» հանգեցնում է այն բանին, որ թշնամին սկսում է գիտակցել պատերազմում իր հաղթանակի անհնարինությունը և հանձնվում է ու դիմում բանակցությունների:

Օգտագործելով մոլորեցնելու, ռազմավարական առավելության, ռազմավարական դիրքի և անակնկալ հարձակումների նախապես կատարված գնահատումները՝ հրամանատարը կարող է կանխատեսել պատերազմի արգասիքը գործողությունների յուրաքանչյուր մակարդակում:

Սուն Ցզիի մտածողությունը մեծ ազդեցություն է գործել անգլիացի տեսաբան Լիդել Հարտի վրա: Հարտը նույնպես նշել է, որ իր *«անուղղակի գործողությունների ռազմավարության»* տեսությունը շատ ընդհանուր կողմեր ունի հանկարծակիի բերելու առավելությամբ հաղթանակի հասնելու Սուն Ցզիի գաղափարի հետ:

Լիդել Հարտը գրում է, որ պետք է «պատերազմն իր տարբեր կողմերով գիտականորեն ուսումնասիրելով» հասնել «օբյեկտիվ ճշմարտության»[15]: «Անշուշտ պատերազմի մասին ինչ-որ գիտություն գոյություն ունի, բայց մենք շատ հեռու ենք այն հայտնաբերելուց: Ձենքերն օգտագործելու պարզ հնարներից զատ, այն, ինչ մենք ընդունում ենք որպես «ռազմական գիտություն», ոչ ավելին է, քան ավանդույթով ստեղծված և հայրենասիրության զգացմունքով ու մասնագիտական վերաբերմունքով պայմանավորվող ձևախախտված պայմանականությունների մեկնաբանություն: Զգացմունքներն ու գիտությունը անհամատեղելի են, բայց այս ճշմարտությունը դեռ նոր պետք է ընդունվի ռազմական աշխարհում»[16]:

Լիդել Հարտի հետաքրքրությունը ավելի շուտ ռազմավարությունն էր, քան բուն պատերազմի բնույթը, առավելապես՝ «անուղղակի գործողությունների ռազմավարությունը» (*strategy of indirect approach, стратегия непрямых действий):* Անուղղակի գործողությունների ռազմավարության առավելությունը հաղթանակի ձեռքբերումն է հանկարծակիության, հոգեբանական խառնաշփոթի էֆեկտի շնորհիվ, առանց հակառակորդի հետ ուղղակի բախման մեջ մտնելու, այն հիմնված է անակնկալների, շարժունակության և տա-

[14] Նույն տեղում, էջ 111:

[15] *B. H. Liddell Hart.* Thoughts on War. Spellmount Publishers, 1999, P. 16.

[16] Նույն տեղում, էջ 24:

ռաշարժի վրա՝ *բացարձակ պատերազմի (absolute war)* գաղափարի քննադատությամբ: «Իսկական նպատակը ոչ այնքան ճակատամարտելն է, որքան շահավետ ռազմավարական իրադրության ստեղծումը»: Լիդել Հարտի կարծիքով՝ բացարձակ պատերազմով հնարավոր է հաղթանակ տանել միայն զանգվածային ոչնչացման դեպքում: Նա համարում էր, որ ավիացիան, հատկապես՝ ավիացիայի և զրահատեխնիկայի սիներգիկ փոխգործությունը, *ապագայի պատերազմում* կգբաղեցնեն առաջնային տեղ[17]:

1925 թ. Հարտը գրել է «Պարիս, կամ պատերազմի ապագան» աշխատությունը[18]: Պարիսը աշխարհի ամենաուժեղ մարտիկի՝ Աքիլլեսի հետ մարտի բռնվելու փոխարեն ընտրել է ռիսկերի չեզոքացմամբ հակառակորդի վրա հարձակվելու անուղղակի և հեռահար գործողություն[19]:

Լիդել Հարտը իր անուղղակի գործողությունները ձևակերպել է այսպես կոչված 8 աքսիոմների տեսքով՝

- քո նպատակները համապատասխանեցրու՛ միջոցներիդ,
- նշանակետը մշտապես պահի՛ր ուշադրության կենտրոնում,
- ընտրի՛ր առավել քիչ ակնկալվող ուղղությունը,
- օգտագործի՛ր առավել թույլ դիմակայող ուղղությունը,
- ընտրի՛ր այն օպերացիոն ուղղությունը, որն այլընտրանքային է,
- համոզվի՛ր, որ թե՛ պլանը, թե՛ դիրքավորումը ճկուն են՝ հանգամանքներին հարմարեցված,
- մի՛ հասցրու հարված, քանի դեռ քո հակառակորդը զգոն է,
- կրկին մի՛ հարձակվիր հենց այն ուղղությամբ, որում ձախողվել էիր[20]:

«Պարիս»-ում Լիդել Հարտը ռազմավարական ռմբակոծությունը դիտել է որպես ցամաքային պատերազմի հետևանքով տեղի ունեցող արյունահեղության այլընտրանք: Ականատես լինելով, թե ինչպես են Մեծ Բրիտանիայի որոշ քաղաքներում գերմանական «Ցեպելինները» և ռմբակոծիչները առաջացնում խուճապ, նա կանխատեսել է, որ ապագայի պատերազմներում այդպիսի ռմբակոծությունները դառնալու են սովորական երևույթ[21]:

Ըստ Հարտի՝ *ապագայի պատերազմներում* կարևոր տեղ է հատկացվելու հենց անուղղակի միջոցներին: «Մենք (բրիտանացիներս – *Գ. Տ.*) մշտապես մտադրվել ենք սահմանափակելու մեր ռազմական ձգտումները՝ դրանք հասցնելով նվազագույնի: Այս մեծ ռազմավարական սկզբունքով մենք պահպանել ենք մեր հզորությունը՝ թշնամու դեմ կիրառելով այն, ինչին նա առավելապես քիչ է տիրապետում: Դա ռազմավարության բաղկացուցիչն է. հայտնաբերել և խոցել թշնամու Աքիլլեսյան գարշապարը՝ հարվածելով ոչ թե նրա ամենաուժեղ, այլ ամենախոցելի կետին»:

Մարտավարության, ռազմավարության և ռազմական պատմության մասին իր տեսություններում Լիդել Հարտը կենտրոնացած է եղել կրակային

[17] Տես *Basil H. Liddell Hart.* The Liddell Hart Memoirs, Vol. 2. New York, 1966:

[18] Տես *Basil H. Liddell Hart.* Paris, or the Future of War. New York, 1972:

[19] Տես նույն տեղում, էջ 348–349:

[20] Տես նույն տեղում, էջ 11:

[21] Տես նույն տեղում, էջ 40–41:

ուժի տարաշարժի և հետևակի առաջխաղացման, իսկ ավելի ուշ՝ զրահապատ ուժի *(armoured force)* ստեղծման վրա, մի ուժի, որն իր տարաշարժի հնարավորությունները իրագործելու է թշնամու թիկունքում: Հարտը ավելի հանգամանորեն վերլուծել է հետևակային ստորաբաժանումների մարտավարական գործողությունները ներթափանցումից հետո: Այս դրույթը, այսպես կոչված, «Հուտերի մարտավարության», կամ ներթափանցման մարտավարության *(Infiltration tactics)*, վերլուծությունն է: Տվյալ մարտավարության էությունն այն է, որ ռմբակոծությամբ ուղեկցվող զանգվածային հետևակային հարձակման փոխարեն լավ պատրաստված փոքր հետևակային ստորաբաժանումը հարձակվում է հակառակորդի վերջապահ զորքի վրա՝ նրան մեկուսացնելով հիմնական ուժերից և ստեղծելով պայմաններ, որ դրանց վրա հարձակումը ձեռնարկվի ծանր զրահատեխնիկայով: Սակայն, շատ ուսումնասիրողներ պնդում են, որ տարաշարժի տեսության մեջ Լիդել Հարտի ներբերումը որոշակիորեն չափազանցված է[22]:

Ըստ Լիդել Հարտի՝ ծանրության կենտրոնը պետք է ձևավորվի ոչ թե «հզորությունն ընդդեմ հզորության», այլ «հզորությունն ընդդեմ թուլության» հարացույցով՝ անհրաժեշտաբար խուսափելով հակառակորդի հետ անմիջական բախումից[23]: Հարտի կարծիքով՝ Կլաուզևիցը ռազմավարության կարևորագույն առանցքում՝ «արգասիքներ–եղանակներ–միջոցներ» *(ends-means-ways)* շղթայում, ստեղծել է շփոթ: «Միջոցները շփոթելով արգասիքի հետ՝ նա եկել է սխալ եզրահանգման, թե ճակատամարտը գերակա է պատերազմի մյուս նպատակների նկատմամբ»: 1932–1933 թթ. Լի Նոուլսում կարդացած իր դասախոսություններում Լիդել Հարտը, Կլաուզևիցին անվանելով «զանգվածների Մահդի»*, քննադատել է «քաղաքականությունը ռազմավարության ստրուկն է» նրա թեզը՝ հիմնավորելով, որ «Կլաուզևիցի հայացքները սահմանափակվում էին միայն պատերազմով, ոչ թե տարածվում պատերազմից այն կողմ՝ խաղաղության տիրույթում»: Լիդել Հարտի պնդմամբ ռազմավարության նպատակը ոչ թե բացառապես ճակատամարտի արգասիքն է, այլ հետագա դիմադրության նվազեցման հնարավորությունը: Ճշգրիտ ռազմավարությունը պետք է բաղկացած լինի տարաշարժի և անակնկալների տարրերից:

ՖՐԵԴԵՐԻԿ ՖՈՒԼԵՐԻ ԵՎ ՋՈՒԼԻՈ ԴՈՒԵԻ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

Ֆրեդերիկ Ֆուլերն ու Ջուլիո Դուեն պատերազմավարության այն տեսաբաններն էին, որոնց կարծիքով ապագայի պատերազմները լինելու են բացառապես մեքենայացված: Նրանցից Ֆուլերը ապավինում էր զրահատեխնիկային, իսկ Դուեն՝ օդուժին:

---

[22] Տես *Jay Luvaas*. Liddell Hart and the Mearsheimer Critique: A “Pupil's” Retrospective. “Parameters”. March 1990, Vol. XX, N 1:

[23] Տես *B. H. Liddel Hart.* Revolution in warfare (https://archive.org/stream/B.H.LiddellHartREVOLUTIONINWARFAREbook4me.org/[B.H._Liddell_Hart]_REVOLUTION_IN_WARFARE(book4me.org)_djvu.txt), P. 18:

* *Մահդի* (արաբ.)՝ մահմեդականության մեջ վերջին՝ թաքնված, մարգարեն, որը հայտարարելու է աշխարհի վերջի մասին:–*Խմբ.*:

Ֆուլերն սկզբում ուսումնասիրել է նորագյուտ տանկային կորպուսի ուսումնավարժեցումը, դոկտրինը, սպառազինության ու ռազմական տեխնիկայի հետ կապված հարցեր: Միայն հետագայում՝ մեկ տասնամյակ անց, Ֆուլերն սկսել է զբաղվել ռազմավարության ուսումնասիրությամբ: Նա համարել է, որ «Պատերազմը նույնքան գիտություն է, որքան մյուս բոլոր տեսակների մարդկային գործունեությունը, և բոլոր մյուս գիտությունների նման այն կառուցված է անհամար թվով փաստերի հիման վրա»[24]: Ֆուլերը ուսումնասիրել է ռազմական պատմությունը՝ ձգտելով կիրառելու գիտության մեթոդները: Այդ պատճառով նա ավելի մեծ չափով օգտվել է Հերբերտ Սպենսերի և Ուիլյամ Ջեյմսի, քան Կլաուզևիցի աշխատություններից, քանի որ վերջինս երբևէ փորձ չի արել պատերազմի հետազոտության մեջ կիրառելու ժամանակակից մեթոդներ:

Ֆուլերի ամենալուրջ հետազոտությունը «Պատերազմական գիտության հիմունքներն» է, որում նա ձգտել է գիտության մեթոդները դարձնելու կիրառելի պատերազմի նկատմամբ: Ֆուլերի պնդմամբ՝ ո՛չ Կլաուզևիցին ու Ժոմինիին, ո՛չ էլ 19-րդ դարի որևէ այլ տեսաբանի չի հաջողվել պատերազմը դիտարկել գիտության տեսանկյունից: Եթե պատերազմի հետազոտությունը իսկապես գիտություն է, ապա գիտության մեթոդների կիրառմամբ՝ վերլուծության, համադրման և գիտական ենթադրությունների հիման վրա կարելի է գտնել ճշմարտությունը, հետո կարելի է որոշել ապագայում պատերազմի պայմաններն ու, հետևաբար, պահանջմունքները:

Պատերազմի համար զինվորների ուսումնավարժեցմանը նվիրված իր գրքույկում Ֆուլերը դիմել է ռազմական իմաստնության առաջնային «գանձարանին»՝ Նապոլեոնի նամակագրությանը: 22 հազար նամակներում պարունակվող գաղափարներից, ինչպես նաև Սբ. Հեղինե կղզում թելադրված հուշերի չորս հատորներից Ֆուլերը քաղել է պատերազմի վեց սկզբունքները, որոնք, իր կարծիքով, առաջնորդել են Նապոլեոնին: Պատերազմի վերաբերյալ հետագա վերլուծությունների ժամանակ դրանց գումարվել է ևս երկու սկզբունք[*], ընդսմին հետագայում դրանք ներառվել են ԱՄՆ-ի դոկտրինում:

Ֆուլերը, սահմանելով ռազմավարի պարտականությունները, գրում է. «Գլխավոր ռազմավարի առաջին պարտականությունն է … որոշել իր պետության առևտրային ու ֆինանսական վիճակը, պարզել, թե երկիրն ի՞նչ

[24] Տես *Michael Welch.* Science of war: A discussion of J.F.C. Fuller's shattering of British contiuity. "Journal of the Society for Army Historical Research", Winter 2001, Vol. 79, N 320 (https://www.jstor.org/stable/44230745?seq=1#page_scan_tab_contents):

[*] Պատերազմի վարման այդ սկզբունքերն էին՝ **կողմնորոշումը**, **կենտրոնացումը**, **բաշխումը**, **վճռականությունը**, **հանկարծակիությունը, տոկունությունը**, **տարաշարժունությունը**, **թշնամու ուժերի կազմալուծումը:** Հետագայում տվյալ սկզբունքները խմբավորվել են տարբեր կարգախմբերում. *կառավարում*, *ճնշում* և *տոկունություն:* Կառավարման սկզբունքներն են **կողմնորոշումը, վճռականությունը և տարաշարժունությունը,** ճնշմանը՝ **կենտրոնացումը, անակնկալը և հարձակողական գործողությունը,** իսկ դիմադրությանը՝ **բաշխումը և տոկունությունը:**

ռեսուրսներ և պարտավորություններ ունի: Հետո նա պետք է հասկանա իր համերկրացիների բարոյական բնութագիրը, ընդհանուր պատմությունը, առանձնահատկությունները, հասարակական սովորույթները և կառավարման համակարգը, որովհետև այս բոլոր քանակական ու որակական ցուցանիշները ռազմական կամարի հենասյուներն են: Այսօրվա մեծ ռազմավարն այլևս չպետք է լինի պարզապես հարափոփոխ կառավարության, այլ իր ազգի ծառան: … Իրականում նա պետք է լինի գիտուն պատմաբան և հեռատես փիլիսոփա, ինչպես նաև հմուտ ռազմավար: Ռազմավարության տեսանկյունից ճիշտ նույնքան կարևոր է ազգի բարոյական ուժի որակի, որքան նրա մարդկային ներուժի քանակի գիտակցումը»[25]: Կլաուզևիցի նման՝ Ֆուլերը համարում է, որ ռազմավարի գործողությունները պետք է արտացոլեն ազգային քաղաքականությունը: Նրա կարծիքով՝ նապոլեոններ ոչ թե ծնվում են, այլ դառնում, իսկ Նապոլեոնը կլիներ ուղղակի լավ գեներալ, եթե իր հանճարը պատերազմների կարիքներին համապատասխան ուղղորդելու համար չունենար նաև գործելու ազատություն[26]:

Ֆուլերն իր համակարգի հիմքում դրել է եռակիության կարգը, համաձայն որի՝ իմացությունը վերաբերում է մարդուն, առարկային և նրանց միջև ձևավորված հարաբերությանը: Պատերազմի եռակի բնույթ նշանակում է շարժում, զենքեր և պաշտպանություն: Վերլուծելով ռազմավարական և մարտավարական այն կազմավորումները, որոնք լավագույնս էին միավորում այդ տարրերը, Ֆուլերը որոշում է, որ հրետանուն պետք է օժտել շարժման ավելի մեծ հզորությամբ, հետևակին պետք է տրվի ավելի մեծ հարձակողական հզորություն, իսկ հեծելազորը պետք է լինի ավելի լավ պաշտպանված: Ըստ Ֆուլերի՝ այդ խնդրի լուծումը տանկային կազմավորումների ստեղծումն է:

Հետագայում իր հաջորդ՝ «Պատերազմն ու Արևմտյան քաղաքակրթությունը 1832–1932 թթ.», գրքում Ֆուլերն առաջ է քաշում այն թեզը, թե պատերազմը՝ որպես զանգվածային ժողովրդավարության դրսևորում, դառնում է ավելի ու ավելի հուզական և կատաղի, մինչդեռ գիտությունը «զանգվածների ձեռքն էր տվել ավելի ու ավելի մահաբեր միջոցներ»:Դրանք երկու ահեղ հոսանքներ էին, որոնք ձուլվել էին իրար, որպեսզի վերացնեն պատերազմի վարման ավանդական եղանակները: Ֆուլերը գրել է, որ գոյություն ունի պատերազմի միայն մեկ ձև, այն է՝ գրոհել թշնամու վրա: Լավագույն ռազմավարությունը միշտ ուժեղ լինելն է: «Պաշտպանական բնույթի պատերազմն ինքնին ավելի զորեղ է, քան հարձակողականը…, բայց ունի բացասական նպատակ…: Միայն մեծ և գլխավոր ճակատամարտերն են տալիս էական արդյունքներ: Պատերազմը բաղկացած է նախապատրաստումից և գործողությունից…. Պատերազմում ամեն ինչ շատ պարզ է, բայց ամենապարզ բանը բարդ է»[27]:

[25] *J. F. C. Fuller.* The Reformation of War. London, 1923, PP. 218–219 (https://archive.org/stream/reformation ofwar00fulluoft/reformationofwar00fulluoft_djvu.txt).

[26] Տես նույն տեղում, էջ 227:

[27] Տես *J. F. C. Fuller.* War and Western Civilization 1832-1932: A Study of War as a

Ֆուլերը զարգացրել է ապագայի պատերազմի մասին իր հայեցակարգերը «Դաշտային ծառայության կանոնակարգի մասին» դասախոսություններում, որոնցում ներկայացրել է մեքենայացված ուժերի իր «դոկտրինը»: Առաջին համաշխարհային պատերազմից հետո բրիտանական բանակի դոկտրինը շարունակում էր մնալ կենտրոնացած հետևակի վրա, իսկ պատերազմների հեղափոխական միջոցներին՝ տանկերին և ինքնաթիռներին, շատ քիչ տեղ էր հատկացվում: Ֆուլերի կարծիքով՝ «այս դոգմատիկ մտածողությանը հավատարմությունը ոչնչացրեց բանակներ և կորցրեց մարտեր ու կյանքեր ավելի շատ, քան ցանկացած այլ պատճառ»:

Ապագայի պատերազմի մասին իր վերլուծությունը Ֆուլերը կատարել է հիմնականում օպերատիվ և մարտավարական մակարդակներում՝ միևնույն ժամանակ նշելով, որ սպառազինությունում և դոկտրինում կատարվող արմատական փոփոխությունները առաջ են բերելու ռազմավարական հետևանքներ: Ըստ Ֆուլերի՝ ապագայի բանակները լինելու են փոքրաթիվ, բայց պրոֆեսիոնալ, և զինվորները պետք է ունենան բարձր հմտություններ՝ լինելով ոչ թե գյուղատնտեսական, այլ արդյունաբերական դարաշրջանի ներկայացուցիչներ: Ֆուլերի կարծիքով՝ օդային ուժերը ներկայացնում են ռազմավարական մակարդակի օղակը, քանի որ նրանք կարող են ոչ միայն հարվածներ հասցնել ռազմական կազմավորումներին, այլև ուղղակիորեն կոտրել հակառակորդի քաղաքական և ազգային կամքը: Պատերազմի օպերատիվ և մարտավարական մակարդակներում հաղթանակ տանելու համար հարկավոր է համակցել օդուժի և մեքենայացված հետևակի հնարավորությունները, որպեսզի հարվածները հասցվեն հակառակորդի խորքային տարածքներում:

Ֆուլերը առաջիններից էր, որ ասպարեզ մտցրեց նախաձեռնողականության վրա հիմնված գործողությունների գաղափարը: Հրամանատարները կմշակեն «ընդհանուր գաղափար» (ներկայումս օգտագործվում է «մտահղացումը»), իսկ ենթակաները կգործեն առանց կենտրոնացված կառավարման: Նա նաև առաջիններից էր, որ գրել է որոշման կետերի մարտավարության մասին: Այս մարտավարության նպատակն էր հակառակորդին պարտության մատնել շնորհիվ գործողությունների հանկարծակիության և արագության: Ֆուլերը նաև կարծում էր, որ վճռորոշ և ժամանակին տրված տեղեկույթը մեքենայացված պատերազմի անհրաժեշտ գործոնն է: Այս գաղափարները 21-րդ դարում հիմք դարձան տեղեկատվաքարոզչական պատերազմների վերլուծության համար:

Ֆուլերի վերը հիշատակված այն գաղափարը, թե հարկավոր է ծավալել օդուժի և մեքենայացված հետևակի ինտեգրված գործունեություն, չէր կիսում իտալացի գեներալ Ջուլիո Դուեն՝ համարելով, որ թշնամու դիմադրությունը կոտրելու համար բանակները մարտադաշտում պետք է պարզապես

Political Instrument and the Expression of Mass Democracy. London, 1932, PP. 47, 158, 226; *նույնի*՝ “The First of the League Wars: Its Lessons and Omens”. London, 1936, P. 103:

աջակցեն օդուժի ռազմավարական նպատակներին: Բանակն ու նավատորմի ուժերը կարող են կոտրել հակառակորդի դիմադրությունը հյուծման միջոցով, մինչդեռ նրա կամքի վրա անմիջականորեն ազդում է օդուժը:

Պատերազմում օդային ուժի վերաբերյալ Դուեի տեսությունը հիմնված էր այն կանխադրույթի վրա, թե պատերազմի բնույթը փոխվել է: Դուեի վերլուծությունները ունեին ռազմավարական բնույթ, նա սակավ էր խոսում պատերազմի օպերատիվ և մարտավարական կողմերի մասին: Համարելով, որ օդուժն ունի ռազմավարական նշանակության, Դուեն առաջարկում էր այն չկիրառել մարտավարական թիրախներ ոչնչացնելու համար:

Դուեն առաջիններից էր, ով առաջարկել էր քաղաքացիական կենտրոնները դիտել որպես ռազմական թիրախ, դա հիմնավորելով այն տեսակետով, որ քաղաքացիական բնակչությունը ավելի քիչ կդիմադրի, քան ավելի կարգապահ և կազմակերպված բանակներն ու ռազմածովային ուժերը: Ըստ այդմ՝ պատերազմներն արագորեն կավարտվեն, քանի որ քաղաքացիական անձինք չեն կարողանա հաղթահարել պատերազմի «սարսափները»: Դուեի կարծիքով՝ քաղաքացիական բնակչությունը կրելու է քիմիական զենքի կիրառման հետևանքները, ինչն էլ տեղի ունեցավ Առաջին համաշխարհային պատերազմում: Դուեն չէր կիսում Կլաուզևիցի այն գաղափարը, թե հնարավոր կլինի սահմանափակ միջոցների կիրառմամբ խուսափել համատարած պատերազմից:

Դուեն կարծում էր, որ օդուժը հարկավոր է կիրառել միայն հարձակողական օպերացիաներում, քանի որ պաշտպանելու համար ծառայող օդուժը շատ ավելի ռեսուրսներ է պահանջում, քան հարձակողականը: Երբ հակառակորդի օդուժը ոչնչացվի, անհրաժեշտ է վերացնել նաև նրա ավիացիոն արդյունաբերությունը՝ դրանով իսկ հակառակորդին դարձնելով օդային հարձակողական գործողությունների նկատմամբ ամբողջովին խոցելի: Սա Դուեն համարում էր օդային մարտի վճռորոշ կետը:

Սույն համառոտ ակնարկն ավարտելով՝ հույս ենք հայտնում, որ այն կարող է ծառայել որպես նախադեպ՝ ռազմագիտության դասականների տեսակետների համեմատական վերլուծության համար, ինչը ոչ միայն կնպաստի հայ սպայի ընդհանուր մասնագիտական մտահորիզոնի ընդարձակմանը, այլև նախադրյալներ կստեղծի մեր ազգային ռազմական ռազմավարության ստեղծման համար:

ВОЕННАЯ НАУКА

КРАТКИЙ ОЧЕРК ВЗГЛЯДОВ КЛАССИКОВ ВОЙНОВЕДЕНИЯ О ВОЙНЕ

Г. В. ТАВАРАЦЯН, генерал-майор, Начальник НИУО МО РА

РЕЗЮМЕ

В настоящее время каждое государство, развивая свою оборонную систему, должно учитывать факт изменения быстрыми темпами характера войны. Для оборонной системы и сферы управления Республики Армения дополнительные сложности возникают в связи с неразрешенностью Карабахского конфликта. При этом не стоит забывать и о том, что Армения ввиду своих скудных географических, демографических и финансово-экономических ресурсов не может просто перенять опыт передовых в военно-экономическом плане стран. Следовательно, считается более целесообразным детальное изучение тех фундаментальных положений, на которых базируются современные теории войноведения передовых государств, и намечение собственного пути развития оборонной системы с учетом передового опыта, допущенных ведущими государствами ошибок и достигнутых результатов.

Именно исходя из этих соображений, в данной статье делается попытка посредством сравнительного метода проанализировать взгляды на понятия «*центр тяжести», «количественное превосходство», «нанесение поражения противнику внезапностью», «моральный потенциал»* и т. д. таких классиков войноведения, как китайский стратег и мыслитель Сунь-Цзы, выдающийся немецкий стратег Карл фон Клаузевиц, генерал французской армии Антуан-Анри Жомини, генерал-майор Джон Фуллер и капитан Бэзил Лиддел Гарт, а также итальянский генерал Джулио Дуэ.

Взгляды Клаузевица и Жомини на войну в основном совпадают, а теория «стратегии непрямых действий» Лиддел Гарта во многих аспектах совпадает с идеей Сунь-Цзы о победе путем достижения превосходства внезапностью. Фуллер и Дуэ разделяли идею об исключительной механизации будущих войн.

Ожидается, что данная статья, являясь прецедентом для сравнительного анализа взглядов классиков стратегии, не только способствует расширению профессионального кругозора армянского офицера, но и послужит предпосылкой для создания национальной военной стратегии Республики Армения.

MILITARY SCIENCE

BRIEF SKETCH OF VIEWS OF CLASSICS OF WARFARE ON WAR

G. V. TAVARATSYAN, Major General, Head, NDRU, MOD, RA

SUMMARY

At present any state, in developing its defense system, should take into account the fact that the character of war changes at a rapid pace. For the RA defense system and governance, there arise some additional difficulties concerned with the unresolved Karabakh conflict. After all, due to its deficiency in geographic, demographic, financial and economic resources Armenia can't simply adopt the experience of the leading in geo-strategic terms states. Thus, it is more appropriate to thoroughly study those fundamental statements on which the modern warfare theories of leading states are based, as well as to design its own course of defense system development with a view on the best practices, mistakes made and results achieved by the leading states.

With this in view, the article argues an attempt of analyzing through the comparative method the views of such classics of warfare as the Chinese strategist and philosopher Sun Tzu, profound German strategist Carl von Clausewitz, General of French Army Antoine-Henri Jomini, Major General John Fuller and Captain Basil Liddell Hart, and Italian General Giulio Douhet upon such notions as the "centre of gravity", "quantitative superiority", "surprise", "morale", etc.

Views by Clausewitz and Jomini on the war mainly coincide, and Liddell Hart's theory of "the Strategy of Indirect Approach" in many aspects corresponds to Sun Tzu's idea of having victory by gaining superiority through surprise. Fuller and Douhet shared the idea of total mechanization of the future wars.

The article, as a precedent for a comparative analysis of the strategy classics' views, is anticipated not only to help broaden the professional horizon of the Armenian officer, but also to serve as a premise for developing the military strategy of the Republic of Armenia.

ՀԱԿԱՕԴԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

Ա. Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ, պահեստազորի գնդապետ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի օպերատիվ արվեստի հետազոտությունների կենտրոնի գիտական-վերլուծաբան

Ներկայումս, երբ գիտատեխնիկական առաջընթացը հնարավորություն է տալիս արտադրելու էժան գերճշգրիտ զենքեր, հատկապես օդային հարձակման միջոցներ, մեծացել են պետությունների կողմից ժամանակակից մարտավարական ու ռազմավարական հարձակողական սպառազինության և ռազմական տեխնիկայի (համազարկային կրակի ռեակտիվ համակարգեր, մարտական ինքնաթիռներ ու ուղղաթիռներ, մարտավարական, օպերատիվ-մարտավարական հրթիռներ, անօդաչու թռչող ապարատներ և այլն) ձեռքբերման հնարավորությունները, և յուրաքանչյուր պետության համար գերակա խնդիր է հակաօդային պաշտպանության համակարգի կատարելագործումը: Հակառակորդի օդային հարձակման կանխման, նրա օդային հարվածների հետմղման, կենսական նշանակությամբ օբյեկտների ծածկապաշտպանության և նմանատիպ պաշտպանական խնդիրների արդյունավետ կատարման տեսանկյունից առաջնահերթություն է ԶՈՒ-ի հակաօդային պաշտպանության համակարգի կատարելագործումն ու արդյունավետության մեծացումը: Ռազմագիտական գրականության մեջ հակաօդային պաշտպանությունը (ՀՕՊ) սահմանվում է որպես միջոցառումների, ուժերի, միջոցների ու գործողությունների համախումբ՝ նպատակաուղղված հակառակորդի օդային հարձակման հետմղմանը և օդից հասցվող հարվածներից օբյեկտների, բնակչության ու զորքերի պաշտպանությանը: Պետության (պետությունների դաշնադրության) կամ առանձին տարածաշրջանների, արդյունաբերական շրջանների, վարչաքաղաքական կենտրոնների, ԶՈՒ-ի խմբավորումների և կարևորագույն օբյեկտների մասշտաբով ՀՕՊ-ը ապահովվում է համապետական միջոցառումներով և պետության (պետությունների խմբի) ԶՈՒ-ի կազմից նշանակված զորքերով (ուժերով) ու միջոցներով[1]:

Տարբեր մակարդակի և ինտենսիվության պատերազմների ու ռազմական հակամարտությունների պահպանվող սպառնալիքների, օդատիեզերական հարձակման միջոցների մարտական արդյունավետության և դերի

[1] Տես «Военный энциклопедический словарь», т. II. М., 2001, с. 398:

կտրուկ աճման պայմաններում ՀՕՊ-ի պատրաստման և վարման հիմնախնդիրների լուծումը պատերազմի ամբողջ ընթացքում և հատկապես՝ սկզբնական շրջանում, ունի առաջնահերթ կարևորություն: Երկրորդ համաշխարհային պատերազմի, ինչպես նաև ժամանակակից պատերազմների փորձի ուսումնասիրությունները ևս ցույց են տալիս, որ ռազմական գործողություններում մարտական խնդիրների կատարումն զգալի չափով պայմանավորված է օդային հարվածներից զորքերի և պետության կարևոր օբյեկտների պաշտպանության արդյունավետությամբ: Հուսալի ՀՕՊ-ը ունակ է ոչ միայն հետ մղելու հակառակորդի գրոհները, այլև այլ զորքերի (ուժերի) համար ստեղծելու պատերազմի մեջ մտնելու բարենպաստ պայմաններ[2]: Նշենք նաև, որ ժամանակակից պայմաններում հուսալի ՀՕՊ-ը պետության ռազմավարական զսպման համակարգի մի մասն է:

20-րդ դարի երկրորդ կեսին տեղի ունեցած բազմաթիվ տեղային պատերազմների ու զինված հակամարտությունների վերլուծությունը հնարավորություն է տալիս կատարելու մի շարք ընդհանրացումներ ու եզրակացություններ և կանխատեսելու ՀՕՊ-ի կատարելագործման հիմնական ուղղությունները: Փորձը ցույց է տալիս, որ գրեթե միշտ հարձակվող կողմը հանկարծակի զանգվածեղ ավիացիոն (ավիահրթիռային) հարվածներ է հասցնում՝ առաջին հերթին ձգտելով ոչնչացնելու ՀՕՊ-ի, ռազմական և պետական կառավարման, տնտեսության կենսականորեն կարևոր օբյեկտները, հաղորդակցության ուղիները, կապի հանգույցները և այլն: Առանձին դեպքերում հակառակորդի այս տեսակի օդային հարձակումներն սկզբից ևեթ պայմանավորել են մարտական գործողությունների ընթացքն ու վճռել դրանց ելքը, օրինակ՝ Մերձավոր Արևելքում 1967 թ., Պարսից ծոցում 1991 և 1998 թթ., Հարավսլավիայում 1999 թ.:

Արդյունավետ հակաօդային պաշտպանությամբ հնարավոր է ձախողել հակառակորդի օպերացիաները և նրան հասցնել վճռորոշ կորուստներ միայն այն դեպքում, եթե այն ստեղծվել և ծավալվել է խաղաղ ժամանակ, հագեցած է բավարար թվաքանակով սպառազինությամբ և ռազմական տեխնիկայով, ըստ պատերազմական ժամանակի հաստիքների (կամ դրանց մոտ) համալրված է անձնակազմով և պատրաստ է ժամանակակից պահանջներին համապատասխան լուծելու հակաօդային պաշտպանության բարդ խնդիրները: Այսպես. Կորեայում ռազմական գործողությունների սկզբնական շրջանում ԿԺԴՀ տարածքում գործնականում չկար ՀՕՊ-ի համակարգ: Այն ստեղծվեց պատերազմի ընթացքում՝ 1950-ականների վերջին – 1951 թթ. սկզբին, ԽՍՀՄ ակտիվ ռազմական աջակցությամբ և դրա ստեղծմամբ զգալի վնաս հասցվեց ԱՄՆ-ի և նրա դաշնակիցների ռազմաօդային ուժերին (ՌՕՈՒ). խորհրդային կործանիչները խոցեցին շուրջ 1100 ՕՀՄ, զենիթայինները՝ 212: Չնայած դրան՝ երկրի պաշտպանության խնդիրը ամբողջությամբ

[2] Տես *А. Мальгин.* Войны – локальные, выводы – глобальные. «Независимое военное обозрение», 19.10.2001 (http://nvo.ng.ru/concepts/2001-10-19/4_wars.html):

չհաջողվեց լուծել, քանի որ տնտեսությանը մինչ այդ արդեն հասցված էր հսկայական վնաս, իսկ մարդկային կորուստները կազմեցին շուրջ 4 միլիոն մարդ, որոնցից 84 %-ը՝ խաղաղ բնակչություն[3]:

1964–1966 թվականներին Վիետնամի Դեմոկրատական Հանրապետությունը նույնպես չուներ ՀՕՊ-ի համակարգ, և դրա ստեղծման համար պատերազմի ընթացքում պահանջվեց ավելի քան մեկ տարի: Արդեն 1965 թ. Հյուսիսային Վիետնամում խոցվեց ԱՄՆ-ի օդային հարձակման 857 միջոց, 1966–1967 թթ.՝ 1787, սակայն այս բավական մեծ արդյունքները ապահովվեցին բանակի և երկրի բնակչության բացառիկ լարվածության գնով:

Մերձավոր Արևելքում 1967 թվականի հունիսին Իսրայելի բանակը մեկ շաբաթվա ընթացքում ջախջախեց Եգիպտոսի, Սիրիայի և Հորդանանի զինված ուժերը՝ նախապես օդանավակայաններում ոչնչացնելով ավիացիան: Գլխավոր պատճառներից մեկը արաբական երկրների ռազմական և քաղաքական ղեկավարության ոչ պատշաճ ուշադրությունն էր հակաօդային պաշտպանության համակարգերի ստեղծման և ամրապնդման հարցերին[4]:

Պետության ՀՕՊ-ի համակարգը պետք է ստեղծվի ըստ միասնական մտահղացման և պլանի, ներառի ոչ միայն զենիթային միջոցները, այլև ցանկացած այլ միջոց, որն ունակ է այս կամ այլ եղանակով խոցելու օդային հակառակորդին կամ բարդացնելու նրա գործողությունները, նվազեցնելու նրա հարվածների արդյունավետությունը: Օդային հակառակորդի միջոցները անհրաժեշտ է բերել մեկ հրամանատարության ներքո: Հետևաբար, զորքերի և օբյեկտների արդյունավետ հակաօդային պաշտպանության խնդիրը լուծելու համար զորքերի խմբավորումների (ուժերի) բոլոր ուժերն ու միջոցները, որոնք մասնակցում են օդային հակառակորդի դեմ պայքարին, անհրաժեշտ է միավորել մեկ համակարգում, որն իր մեջ կարող է ներառել հետևյալ ենթահամակարգերը՝ կառավարում, հետախուզական-տեղեկատվական ապահովում, օդային հակառակորդի կրակային խոցում և ռադիոէլեկտրոնային խոցում (ճնշում)՝ գետնի վրա և օդային (օդատիեզերական) տարածությունում:

Նշված համակարգը հնարավորություն կտա կայուն և համալիր կերպով կառավարելու հետախուզության և խոցման միջոցները մարտական գործողությունների պատրաստման ու վարման բոլոր փուլերում և կապահովի վաղօրոք պլանավորումը, անհրաժեշտության դեպքում հետախուզության և խոցման ենթահամակարգերի շտկումը և կախված ստեղծված իրական իրադրությունից՝ տեղեկույթի ու կառավարման հրամանների հասցնումը

[3] Տես *Александр Алексеев.* Корейская война 1950-1953 гг.: региональный конфликт с глобальными последствиями (http://энциклопедия.минобороны.рф/encyclopedia/history/more.htm?id=11776564@cms Article); «Корейская война 1950-1953 годов». «РИА новости», 27.07.2013 (https://ria.ru/20130727/952230106.html):

[4] Տես *Артем Кречетников.* Шестидневная война и СССР: "Затевать мировую войну не собираемся". «BBC News», 9 июня 2017 (https://www.bbc.com/russian/features-40188604):

սպառողներին պահանջվող ճշգրտությամբ և ժամանակի իրական մասշտաբում[5]:

Արդի հակաօդային մարտը դարձել է գերարագընթաց և գերլարված: Օդային հարձակման ժամանակակից միջոցները, շնորհիվ ռելիեֆակրկնիչ համակարգի, ունակ են թռչելու մակերևույթից 10 մ բարձրությամբ՝ կրկնելով ռելիեֆը, մարտական խնդրի կատարման ժամանակ թռչելու գերձայնային արագություններով, կիրառելու հակառադիոտեղորոշումային հրթիռներ ու տարբեր տեսակի գերճշգրիտ զենքեր, ստեղծելու զանազան ակտիվ ու պասիվ խանգարումներ: Ըստ մասնագիտական գնահատումների՝ օդային հարձակման ժամանակակից միջոցների մարտական հնարավորությունների ու մարտավարատեխնիկական բնութագրերի հաշվառմամբ օդային մարտի (օպերացիայի) տևողությունը ՀՀ տարածքի համար կկազմի մի քանի րոպե, ուստի ՀՀ ՁՈՒ-ի ՀՕՊ-ի համակարգի զարգացման ուղղության և կազմակերպման սկզբունքների որոշարկման հարցում առանցքային պետք է լինեն իրադրության արագ գնահատման, կողմնորոշման և որոշման ընդունման սկզբունքները, այսինքն՝ շեշտը պետք է դրվի ՀՕՊ-ի համակարգի կառավարման կատարելագործման, կառավարման ավտոմատացման բազմօղակ միջոցների ներդրման վրա[6]: Այս առումով անհրաժեշտ է ուսումնասիրել առաջատար պետությունների ՀՕՊ-ի, օդատիեզերական ու հակահրթիռային պաշտպանության համակարգերի զարգացման միտումները և առաջավոր փորձը: Օրինակ՝ որոշ պետություններում գործող համակարգերը հնարավորություն են տալիս ժամանակի իրական մասշտաբում գնահատելու օդային իրավիճակը, որոշարկելու նշանակետերը, պարզելու դրանց պատկանելությունը և համապատասխան ուժերն ու միջոցները բերելու տարբեր աստիճանների պատրաստության:

ՆԱՏՕ-ի անդամ պետություններում գործում է կառավարման ավտոմատացված համակարգ (ԿԱՀ), որն ապահովված է կապի բոլոր տեսակներով, այդ թվում՝ արբանյակային, և օդատիեզերական պաշտպանության խմբավորման բաղկացուցիչ մասն է: Տվյալ համակարգը հնարավորություն է տալիս ժամանակի իրական մասշտաբում կառավարելու հակաօդային մարտին մասնակցող բոլոր օղակների գործողությունները և ըստ անհրաժեշտության միջամտելու դրանց[7]:

ՀՕՊ-ի ուժերի և միջոցների կառավարումը կառավարման մարմինների նպատակաուղղված գործունեությունն է՝ հիմնված զինված պայքարի օրենք-

---

[5] Տես *Н. Фролов.* Роль, место и перспективы развития войсковой ПВО (http://army.lv/ru/Rol-mesto-i-perspektivi-razvitiya-voyskovoy-PVO/2424/4357):

[6] Տես *Ս. Ռ. Գալստյան,* ՀՕՊ-ի և ավիացիայի զարգացման հեռանկարները մարտական կարողությունների կատարելագործման համատեքստում: «ՀԲ», 2015, հմ. 4 (էլեկտրոնային տարբերակը՝ https://razmavaraget.files.wordpress.com/2016/02/haykakan-banak_2015-n4.pdf):

[7] Տես «Справочник НАТО», г. 33: «Противовоздушная оборона». NATO, 2006, сс. 319–321 (https://www.nato.int/docu/handbook/2006/hb-rus-2006.pdf):

ների և ռազմական արվեստի սկզբունքների վրա: Այն ներառում է ընդհանուր առմամբ օդային հակառակորդի և օդային իրադրության վերաբերյալ տեղեկույթի հավաքում, վերամշակում և վերլուծում, կառավարող ազդեցությունների մշակում և կառավարման օբյեկտներին դրանց հաղորդում՝ ուժերն ու միջոցները մշտական մարտական պատրաստության մեջ պահելու, հակաօդային օպերացիաների (մարտական գործողությունների) վարմանը նրանց պատրաստելու նպատակով, առաջադրված մարտական խնդիրների կատարման ժամանակ ուժերի և միջոցների ղեկավարում[8]:

ՀՕՊ-ի ուժերի և միջոցների կառավարման համակարգը գործառույթներով և աստիճանակարգորեն կապված կառավարման մարմինների, կառավարման կետերի, կապի միջոցների, ավտոմատացման միջոցների համալիրների, ինչպես նաև տեղեկույթի հավաքումը, մշակումը և փոխանցումն ապահովող հատուկ համակարգերի ամբողջությունն է: Այն պետք է ծավալվի կործանիչ ավիացիայի (ԿԱ), զենիթահրթիռային և ռադիոտեխնիկական զորքերի, ինչպես նաև ռադիոէլեկտրոնային պայքարի միջոցների կառավարման ինտեգրված համակարգերի հիմքի վրա:

Առաջատար պետությունները, օդային հարձակման միջոցների (ՕՀՄ) և զինված պայքարի վարման եղանակների զարգացման գործում մեծ կարևորություն են տալիս ՀՕՊ-ի ուժերի և միջոցների կառավարման համակարգերի կատարելագործմանը: Ընդսմին նրանք ՀՕՊ-ի ուժերի և միջոցների կառավարման համակարգի հիմք համարում են ԿԱՀ-ը, որը կիրառվում է հետևյալ նպատակներով.

- զգալիորեն բարձրացնելու հակաօդային օպերացիաների (մարտական գործողությունների) կառավարման օպերատիվության, վարման ժամանակ ընդունվող վարչական որոշումների և մշակվող պլանների հիմնավորվածության մակարդակները,
- մարտական գործողությունների վարման ընթացքում առավելագույնս իրացնելու ՀՕՊ-ի խմբավորումների մարտական հնարավորությունները,
- էապես բարելավելու կառավարման մարմինների պաշտոնատար անձանց գործունեության տեղեկատվական ապահովման որակը՝ միևնույն ժամանակ նվազեցնելով օդային իրադրության մասին տեղեկույթի հավաքման, մշակման, պահման և արտապատկերման վրա ծախսվող ժամանակը,
- բարձրացնելու կառավարման մարմինների պաշտոնատար անձանց աշխատանքի հուսալիության մակարդակը իրադրության տարբեր պայմաններում,

[8] Տես *Б. А. Демидов, Ю. Ф. Кучеренко, М. В. Науменко.* «Методический подход к обоснованию и выбору показателей оценивания качества и эффективности применения по назначению АСУ силами и средствами ПВО в современных условиях борьбы с воздушным противником» (http://www.hups.mil.gov.ua/periodic-app/article/4051):

- զգալիորեն կրճատելու պլանային և հաշվետու փաստաթղթերի մշակման վրա ծախսվող ժամանակը և այլն[9]:

Անշուշտ, նման համակարգերի առկայությունը կտրուկ կերպով մեծացնում է ՁՈՒ-ի մարտական գործողությունների արդյունավետությունը: Սակայն պետք է նշել, որ ՀՕՊ-ի ուժերի և միջոցների ԿԱՀ-ի ստեղծումը, ներդրումը և հետագա զարգացումը բազմափուլ և բավական բարդ գործ է, որի ընթացքում լուծվում են մեծաթիվ կազմակերպական, օպերատիվ-մարտավարական, գիտատեխնիկական և այլ պրոբլեմներ: Օպերատիվ մակարդակում կառավարման համակարգը չի կարող ստեղծվել միայն մարտական գործողությունների նախապատրաստման ընթացքում (կամ դրանց սկսվելուց հետո): Դա կարող է պատճառ դառնալ ստեղծված իրադրության ոչ համարժեք գնահատման, սխալ և ուշացած հրամանների ու կարգադրությունների տրման, ինչը կհանգեցնի մարդկային ու նյութական մեծ կորուստների կամ պարտության: Ենթակա զորքերի մարտական գործողությունների արդյունավետ կառավարման հիմնական պայմանը համապատասխան հրամանատարական կետում (ՀԿ) սպառիչ ծավալով հավաստի և բավարար ամբողջական տեղեկույթի առկայությունն է ժամանակի իրական մասշտաբում կամ նվազագույն ուշացումով: Այսպես. 1967 թ. հունվարի 2-ին ամերիկյան հրամանատարությունը որոշեց օդային օպերացիա ձեռնարկել Նոյի-Բայ օդանավակայանում (Հանոյից 30 կմ հյուսիս-արևմուտք տեղաբաշխվող վիետնամական ՄիԳ-17 և ՄիԳ-21 կործանիչները ոչնչացնելու համար)[10]: Այս խնդիրը լուծելու համար ներգրավվել էին 90 Ֆ-4 (կործանիչներ) և Ֆ-105 (կործանիչ-ռմբակոծիչներ) ինքնաթիռներ:

ԱՄՆ-ի ավիացիայի հարձակման մասին տեղեկույթ ստանալուց միայն որոշակի ժամանակ անց հյուսիսվիետնամական ՌՕՈՒ-ի և ՀՕՊ-ի կենտրոնական հրամանատարական կետից (ԿՀԿ) տրվեց ՄիԳ-երն օդ բարձրացնելու հրաման, սակայն այն ռազմատիեզերական զորքերի վաշտերի և գումարտակների ՀԿ – ՌՕՈՒ-ի և ՀՕՊ-ի ԿՀԿ – կործանիչ ավիացիոն գնդի ՀԿ օղակին հասավ 5-7 րոպե ուշացումով: ՄիԳ-երը (22 միավոր), չհասցնելով կազմել զույգեր և օղակներ, մեկ առ մեկ հայտնվեցին Ֆ-4Ս խմբերի առջև, որոնք բառացիորեն գնդակոծեցին նրանց «օդ–օդ» հրթիռներով: Օդային մարտի 12 րոպեում խոցվեց 5 հատ ՄԻԳ -21 ինքնաթիռ:

Ինչպես նշվեց, ՀՕՊ-ի ուժերի և միջոցների կառավարման արդյունավետությունը էապես կախված է ԿԱՀ-ի առկայությունից: ԿԱՀ չլինելու հանգամանքը կարող է ազդել ՀՕՊ-ի կրակային հնարավորությունների ընդհանրացված ցուցանիշի՝ հարձակման դեպքում ոչնչացված նշանակետերի թվի մաթեմատիկական սպասման վրա, ինչն արտահայտվում է հետևյալ բանաձևով.

[9] Տես նույն տեղում:

[10] Տես *Ա. Մալիգին,* Նշ. աշխ.:

$$M = S \times M_i,$$

որտեղ՝ S-ը ՀՕՊ-ի զորամասում, զորամիավորումում առկա համալիրների տիպերի թվաքանակն է,

M_i-ն i-րդ կրակային համալիրի ոչնչացրած նշանակետերի թվի մաթեմատիկական սպասումն է, ընդ որում,

$$M_i = N_i \times m_i \times Pn_i \times K_{\text{կառ}\,i} \times K_{\text{մսն}\,i} \times K_{\text{մպ}\,i},$$

որտեղ N_i-ն i-րդ տեսակի նշանուղիների թիվն է,

m_i -ն՝ օդային հարձակման ընթացքում i-րդ տեսակի նշանուղու կրակոցի քանակը,

Pn_i-ն՝ ՕՀՄ-ների խոցման հավանականությունը n թվով հրթիռներով (կրակահերթով) կրակակոծման դեպքում,

$K_{\text{կառ}\,i}$-ն՝ կառավարելիության գործակիցը,

$K_{\text{մսն}\,i}$-ը՝ ՕՀՄ-ների հարձակման հետմղման գործում i-րդ նշանուղիների մասնակցության գործակիցն է,

$K_{\text{մպ}\,i}$-ն՝ նշանուղու մարտական պատրաստության գործակիցը:

Կառավարելիության $K_{\text{կառ}\,i}$ գործակիցը բնութագրում է նշանուղիների թվաքանակի նվազումը, որի պատճառը հարձակումը հետ մղելիս կառավարման համակարգի թերի լինելն է: Ավտոմատացված համակարգի դեպքում այն հավասար է 0,8-0,9-ի, ոչ ավտոմատացված համակարգի դեպքում՝ 0,3-0,5: Այստեղից երևում է, որ ԿԱՀ-ի դեպքում ՀՕՊ-ի հնարավորությունները 2-3 անգամ մեծ են[11]:

ՁՈՒ-ի ՀՕՊ-ի ուժերում ԿԱՀ-երի ներդրմամբ մեծանում է հրամանատարների արագ և օպտիմալ որոշումների կայացման հավանականությունը:

ՕՀՄ-ները ամենաարագ շարժվող նշանակետերն են, ուստի ՀՕՊ-ի համակարգի հրամանատարները իրենց որոշումները ընդունում են ժամանակի սղության պայմաններում: Եղած ժամանակում հրամանատարը փաստացի ի վիճակի է ընդունելու և հիմնավորելու որոշման միայն մեկ տարբերակ, մինչդեռ որոշումն օպտիմալ լինելու համար անհրաժեշտ է մշակել առնվազն երեք տարբերակ, գնահատել յուրաքանչյուրի արդյունավետությունը և ընտրել լավագույնը, ինչը ռեալ իրադրությունում բավական բարդ է, եթե չկիրառվեն կառավարման ավտոմատացված համակարգեր, ավտոմատացման միջոցներ, հատուկ մեթոդաբանություն ու մոդելներ[12]:

---

[11] Տես «Тактика войск ПВО», г. 4: «Боевые возможности соединений и частей войсковой ПВО и эффективность их боевого применения» (https://zinref.ru/000_uchebniki/05599_voenoe_delo/023_00_00_taktika_voisk_PVO/001.htm):

[12] Տես *Ա. Գ. Կարդանյան,* Պաշտպանական բարեփոխումների շրջանակներում հակաօդային պաշտպանության համակարգի արդյունավետության մեծացման հիմնական ուղղությունները: «ՀԲ», 2013, հմ. 1-2 (էլեկտրոնային տարբերակը՝ https://razmavaraget.files.wordpress.com/2014/01/armenian-army-n-1-2_2013-_final.pdf):

Ժամանակակից հակաօդային մարտը բնութագրվում է իր արագընթացությամբ, տարաշարժությամբ, վճռականությամբ, վարվում է օդային բարդ իրադրությունում և պահանջում է մասնակցող ուժերի և միջոցների հստակ փոխգործություն: Օրինակ՝ Վիետնամական պատերազմի ընթացքում, մի շարք դեպքերում, մարտական գործողությունները մի օր վարում էին միայն զենիթահրթիռային զորքերը (ԶՀԶ), իսկ մյուս օրը՝ միայն ՀՕՊ-ի ԿԱ-ն: Ընդհանուր առմամբ, զորատեսակների միջև փոխգործություն չկար, և, հետևաբար, հազվադեպ չէին զենիթային հրթիռային և հրետանային ստորաբաժանումների կրակով յուրային կործանիչների կրակակոծման դեպքերը (խոցվեց մի քանի տասնյակ ինքնաթիռ):

Մերձավոր Արևելքում, Արաբական երկրների ԶՀԶ-ների (զենիթային հրետանու (ԶՀ)) և ՀՕՊ-ի ԿԱ-ի փոխգործությունը նույնպես շատ վատ էր կազմակերպված: Պատահական չէ, որ 1973 թ. հոկտեմբերյան պատերազմում արաբների հակաօդային պաշտպանության վրագետնյա զենիթային միջոցները խոցեցին 83 յուրային ինքնաթիռ ու ուղղաթիռ[13]: Պատճառները բազմաթիվ էին, սակայն առավել էականներից նշենք ՀՕՊ-ի ուժերի տեսակների բոլոր օղակների ՀԿ-ների վատ տեխնիկական հագեցածությունը, որը չէր ապահովում ԶՀԶ և ԶՀ կրակի գոտիներում գործող ավիացիայի կառավարումը, ԶՀԶ և ԶՀ կրակի գոտու սահմաններից ԿԱ-ի մարտական գործողությունների գոտու դուրսբերման սահմանափակ լինելը, ԿԱ-ի բազավորման թռիչքադաշտերի գտնվելը ԶՀԶ և ԶՀ կրակի գոտիների սահմաններում (ինչը պահանջում էր վայրէջքի միջանցքները օգտագործելիս հստակ համաձայնեցում), փոխգործող ՀՕՊ-ի զորամասերի հրամանատարական կազմերի պատրաստականության ցածր մակարդակը և այլն:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ ՀՕՊ-ի կառավարման կատարելագործման համար, բացի ավտոմատացված միջոցների համալիրներով կառավարման կետերի օժտումից, նպատակահարմար է կազմակերպել համապատասխան գիտահետազոտական աշխատանքներ և դրանց արգասիքները ներդնել զորքերում և շտաբների գործունեության պրակտիկայում: Դրանց թեմաներ կարող են լինել մեթոդիկաների ու մոդելների մշակումը օպերատիվ-մարտավարական հաշվարկումների ավտոմատացման, գրաֆիկական փաստաթղթերի նոր էլեկտրոնային ձևերի ստեղծման և մարտական գործողությունների արդյունավետության գնահատման համար, ընդսմին դրանք պետք է ավտոմատացման միջոցների առկայության և ներկայացվող բոլոր պահանջների առումով առավելագույնս համապատասխանեցված լինեն շտաբների հնարավորություններին[14]:

Այսպիսով՝ տեղային պատերազմների և ռազմական հակամարտությունների փորձի ուսումնասիրությունը և ՀՕՊ-ի կազմակերպման ու պլանավոր-

[13] Տես *Ա. Մալիգին,* Նշ. աշխ.:

[14] Տես *Ա. Գ. Վարդանյան,* Նշ. աշխ.:

ման գործում դրա արդյունքների գրագետ օգտագործումը կարևոր են ցանկացած պետության օդային տարածքի արդյունավետ և հուսալի պաշտպանության համար: Հակաօդային պաշտպանության՝ որպես հակառակորդի օդային հարձակման կանխման, հետմղման, ինչպես նաև օդային հարվածներից բնակչության, զինված ուժերի օբյեկտների պաշտպանության նպատակով կազմակերպվող և իրականացվող համապետական ու ռազմական միջոցառումների, զորքերի (ուժերի և միջոցների) օպերացիաների և մարտական գործողությունների համալիրի հուսալիությունն ու արդյունավետությունը էապես կախված են ՀՕՊ-ի զորքերի կառավարման արդյունավետությունից:

В ВОЙСКАХ ПВО

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ВЫПОЛНЕНИЯ ЗАДАЧ ПРОТИВОВОЗДУШНОЙ ОБОРОНЫ

А. С. ГРИГОРЯН, полковник запаса, ученый-аналитик Центра исследований оперативного искусства НИУО МО РА

РЕЗЮМЕ

Надежность и эффективность противовоздушной обороны как комплекса общегосударственных и военных мероприятий, операций и боевых действий, организуемых и осуществляемых войсками (силами и средствами) в целях предотвращения и отражения воздушных атак противника, а также защиты государственных объектов стратегического значения, вооруженных сил и населения, во многих аспектах обусловлены эффективным применением войск ПВО. Анализ опыта многочисленных локальных войн и вооруженных конфликтов II половины XX-го в. и современности, а также тактико-технических характеристик современных средств воздушных атак указывает на то, что современный противовоздушный бой характеризуется стремительностью, маневренностью, решительностью, ведется в сложной воздушной обстановке и требует при выполнении боевых задач эффективного управления участвующими войсками и средствами. Основой для подобного управления должны служить в частности автоматизированные системы управления. Внедрение подобных средств в систему ПВО способствует повышению оперативности и надежности управления противовоздушными операциями, боевых возможностей группировок ПВО, а также значительному улучшению качества информационного обеспечения органов управления.

IN THE AIR DEFENSE FORCES

SOME ISSUES OF AIR DEFENSE TASK COMPLETION

A. S. GRIGORYAN, Colonel (Ret.), Research Fellow, Center for Research on Operational Art, NDRU, MOD, RA

SUMMARY

The reliability and efficiency of air defense as a complex of national and military measures, operations and combat activities, organized and accomplished by the forces to prevent and repulse the adversary's air attacks, as well as to protect the state property of strategic value, armed forces and population, are in many aspects concerned with the effective employment of Air Defense Forces. The analysis of the experience of the 20th century and present time numerous local wars and armed conflicts, as well as of the operational characteristics of modern means of air attacks, comes to prove the fact that the contemporary air defense battle is characterized by its momentum, maneuverability, and decisiveness, is led in a complex air situation and, throughout the mission accomplishment, requires a skillful management of the forces and means involved. At the core of such management Automated Command and Control Systems should in particular lie. The implementation of Automated Command Control Systems into the air defense system will boost the operability and reliability of the air defense operations, combat capabilities of air defense groups, as well as the quality of data support to the command units.

ՀՕՊ-Ի ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԻՋՈՑՆԵՐ

Ռուսաստանյան Ս-400 «Տրիումֆ» զենիթահրթիռային համալիր
(https://bowenpress.com/news/bowen_137299.html)

Ամերիկյան «Պատրիոտ» զենիթահրթիռային համալիր
(https://army-news.ru/2019/08/ssha-uluchshayut-zrk-petriot-dlya-budushhej-vojny/)

Ռուսաստանյան «Բուկ-Մ3» զենիթահրթիռային համալիր
(https://topwar.ru/131141-raketnaya-brigada-v-kurskoy-oblasti-perevooruzhaetsya-na-zrk-buk-m3.html)

Ռուսաստանյան «Տոռ» զենիթահրթիռային համալիր
(https://novostik.com/zenitnye-kompleksy-tor-m2/)

Ռուսաստանյան «Պանցիր-Ս 1» զենիթային
հրթիռաթնդանոթային համալիր
(http://worlddefensereview.blogspot.com/2012/08/96
k6-pantsir-s1-air-defence-gun.html)



Ռուսաստանյան «ԻԳԼԱ-Ս» կրովի զենիթահրթիռային համալիր
(https://topwar.ru/12883-rossiyskiy-perenosnoy-zrk-igla-super-
oruzhie-preduprezhdeniya-atak-s-vozduha.html)

ԴՐՎԱԳՆԵՐ ՀՀ ՊՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ «ՊԵՏՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ» ԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՄԵԿՆԱՐԿԻՑ

Երևան, 2019 թ. հոկտեմբերի 21

Ձախից աջ՝ ՀՀ ՊՆ մամուլի քարտուղար *Ա. Հովհաննիսյան,*
ՀՀ ԶՈՒ-ի Մարտական պատրաստության վարչության պետ–
ՀՀ ԶՈՒ-ի Գլխավոր շտաբի պետի տեղակալ գեներալ-մայոր *Ա. Մակարյան,*
ՀՀ Պաշտպանության նախարարի տեղակալ *Գ. Բալայան,*
ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի պետ
գեներալ-մայոր *Գ. Տավարածյան,* ՀՀ ԶՈՒ-ի Հրթիռային զորքերի
և հրետանու վարչության պետ գնդապետ *Ա. Հարությունյան,*
ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի պետի տեղակալ գնդապետ *Գ. Սարուխանյան,*
ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի պետի՝ կրթության և գիտության գծով տեղակալ–
ԱՌՀԻ-ի պետ գնդապետ *Վ. Մարգարյան*

«ՄԵԾ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ» ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Տ. Մ. ԱՆՏՈՆՅԱՆ, մայոր, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի Գիտահիրատարակչական կենտրոնի լեզվական խմբագրման խմբի պետ



1. «ՄԵԾ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ ազգային անվտանգության ապահովումը մեծապես կախված է միջազգային ռազմաքաղաքական և աշխարհաքաղաքական զարգացումներից: Արդի մարտահրավերներին համարժեքորեն արձագանքելու համար Հայաստանը որդեգրել է միջազգային ռազմաքաղաքական ու տնտեսական ինտեգրման և ակտիվ ներգրավման միջոցով ազգային շահերը պաշտպանելու քաղաքականություն: Նա ակտիվորեն մասնակցում է թե՛ արևմտյան, թե՛ եվրասիական տարածքում տեղի ունեցող գործընթացներին, հարաբերություններ է զարգացնում համաշխարհային ուժային կենտրոնների հետ: Բնական է, որ ռազմավարական դաշնակից Ռուսաստանի հետ Հայաստանն ունի պատմականորեն ձևավորված ամուր կապեր, ինչը նպաստել է ՌԴ տարածաշրջանային քաղաքականությունը լավ հասկանալուն, ապա նույնը, թերևս, չի կարելի ասել արևմտյան պետությունների, հատկապես՝ ԱՄՆ-ի վարած տարածաշրջանային քաղաքականության վերաբերյալ: Տվյալ հանգամանքով պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջանում ուսումնասիրելու ԱՄՆ-ի վարած քաղաքականության էությունը, որի ձևավորման վրա մեծ ազդեցություն ունի ԱՄՆ-ի բարձրագույն քաղաքական ղեկավարության ռազմավարական մտածողությունը:

ԱՄՆ-ի ռազմավարագիտության ոլորտում գոյություն ունի ներքին և արտաքին քաղաքականության բնագավառներում պետության գործունեության համընդգրկուն գիտական վերաիմաստավորման ավանդույթ: Դա, մասնավորապես, արվում է այսպես կոչված «Մեծ ռազմավարության» (*«Grand strategy»*) համատեքստում: «Մեծ ռազմավարությունը» արտաքին քաղաքական նպատակներին ոչ ռազմական և ռազմական մեթոդներով հասնելու համար պետության ամբողջ հզորության արդյունավետ օգտագործման օպտիմալ ուղիների առավել լայն տեսականն է[1]: Այն կարող է չլինել փաստաթղթային տեսքով ձևակերպված և ոչ էլ համակարգված: Մեծ ռազմավարությունների՝ որպես քաղաքական-պետական երևույթի հետազո-

[1] Տես *Դ. Ս. Չիլինգարյան, Ե. Լ. Երգնկյան,* Պաշտպանական-անվտանգային տերմինների բացատրական հայերեն-ռուսերեն-անգլերեն, ռուսերեն-հայերեն, անգլերեն-հայերեն մեծ բառարան: Ե., 2015, էջ 521:

տությունները հստակ պատկերացում են տալիս պետության բարձրագույն նպատակների, ազգային շահերի, միջազգային հարաբերություններում այդ նպատակները կենսագործելու և շահերը պաշտպանելու եղանակների ու միջոցների մասին: ԱՄՆ-ի Բանակի պատերազմական քոլեջը «Մեծ ռազմավարությունը» սահմանում է որպես նպատակների, գործողությունների եղանակների (մեթոդների) և միջոցների (ապահովող ռեսուրսների) ձևակերպում, համադասում ու կիրառում՝ ազգային շահերն ամրապնդելու և պաշտպանելու համար[2]:

Առաջին անգամ «Մեծ ռազմավարությունը»՝ որպես գիտական տերմին, օգտագործել է անգլիացի ռազմական տեսաբան Լիդել Հարտը 1967 թ.: Նա այդ ռազմավարությունը բնութագրել է որպես ռազմավարագիտության մեջ եղած աստիճանակարգության ամենաբարձր մակարդակ: «Ճիշտ այնպես, ինչպես մարտավարությունն է ռազմավարության կիրառումը ստորին մակարդակում, այդպես էլ ռազմավարությունն* է «մեծ ռազմավարության» ստորին մակարդակը»[3]:

Նկ. 1. «Մեծ ռազմավարությունը» ռազմավարագիտության աստիճանակարգում

Ըստ Հարտի՝ եթե ռազմական ռազմավարության «տիրույթը» սահմանափակվում է պատերազմով, ապա «Մեծ ռազմավարությունը» վերաբերում է նաև պատերազմին հաջորդող իրադրությանը, իսկ ռազմական ուժը «Մեծ ռազմավարության» ընդամենը մեկ գործիքն է: Լիդել Հարտի ասիս-

[2] Տես «US Army War College guide to strategy». Ed. by Joseph R. Cerami, James F. Holcomb, Jr. February 2001 (https://ssi.armywarcollege.edu/pdffiles/PUB362.pdf):

* Հարտը նկատի ունի ռազմական ռազմավարությունը:

[3] *Liddell Hart*. Strategy. 2nd review edition. New York, 1991, P. 357.

տենտ, ապա Յեյլի համալսարանի պրոֆեսոր Փոլ Քենեդին իր «Մեծ ռազմավարությունները պատերազմի և խաղաղության ժամանակ» գրքում նշել էր, որ «Մեծ ռազմավարությունը պետության ղեկավարի ունակությունն է պետության երկարաժամկետ նպատակներին հասնելու համար ի մի բերելու պետության բոլոր տարրերը՝ թե՛ ռազմական, թե՛ ոչ ռազմական: Դա բավական բարդ արվեստ է՝ գործել բոլոր մակարդակներում՝ ռազմավարական, օպերատիվ, մարտավարական»[4]:

«Մեծ ռազմավարությունը»՝ որպես պլան

Հռչակավոր ռազմական տեսաբան Կառլ ֆոն Կլաուզևիցը ռազմավարությունը դիտել է որպես պատերազմի քաղաքական նպատակներին հասնելու վերջնանպատակով նախօրոք կազմված *պլան*: Որպես Կլաուզևիցի այս դրույթի տրամաբանական շարունակություն՝ պրոֆեսոր Քենեդին «Մեծ ռազմավարությունը» նույնպես համարում է պլան, որը, նման լինելով ռազմական ռազմավարությանը, դրանից տարբերվում է այն բանով, որ ներառում է պետության կենսագործունեության բոլոր ոլորտները[5]:

Ըստ էության, «Մեծ ռազմավարության» առանձին դրույթներ կարող են արտացոլված լինել ազգային անվտանգության ռազմավարությունում: Համաձայն ԱՄՆ-ի Գոլդուոտեր–Նիկոլս ակտի 603-րդ կետի՝ նախագահական վարչակազմերը պարտավոր են հրապարակել Ազգային անվտանգության ռազմավարություն (ԱԱՌ), որը «պետք է արտահայտի ԱՄՆ-ի *շահերը, նպատակները և խնդիրները*, ինչպես նաև այդ նպատակներին հասնելու եղանակները և ռեսուրսները» [6]:

Բացի ԱԱՌ-ից, «Մեծ ռազմավարությունը» կարող է արտացոլված լինել դոկտրիններում կամ հայեցակարգերում: Այսպես. *«Մարշալի պլանը»*, կամ *«Եվրոպայի վերականգնման ծրագիրը»*, ԱՄՆ-ի «Մեծ ռազմավարության»՝ որպես պլանի օրինակ է: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ԱՄՆ-ը կարողացել է Արևմտյան Եվրոպայի պետությունների թուլացած տնտեսությունների վերականգնմանն օգնելու, կոմունիզմի առաջխաղացմանը խոչընդոտելու, Խորհրդային Միության և սոցիալիստական ճամբարի դեմ միասնական ճակատ ստեղծելու ճանապարհով Եվրոպային պահել ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական կախվածության մեջ: Իսկ «Մարշալի պլանը» և «Տրումենի դոկտրինը» նախորդեցին և նպաստեցին ՆԱՏՕ-ի կազմավորմանը: Այս «Մեծ ռազմավարության» միջոցով ԱՄՆ-ը կարողացավ առաջին անգամ Եվրոպայի նկատմամբ հաստատել համընդգրկուն գերիշխանություն:

---

[4] *Paul M. Kennedy.* Grand strategies in war and peace. Yale University press, 1991, P. 3.

[5] Տես նույն տեղում էջ 4:

[6] Տես *Catherine Dale.* National Security Strategy: Mandates, Execution to Date, and Issues for Congress. CRS Report R43174. Washington, DC, 6 August 2013, P. 3 (https://fas.org/sgp/crs/natsec/R43174.pdf):

«Մեծ ռազմավարությունը»՝ որպես առաջնորդող սկզբունք

«Մեծ ռազմավարություն» երևույթն ուսումնասիրող գիտնականները և փորձագետները, որոնք դեմ են դրա՝ պլան լինելու գաղափարին, պնդում են, թե այն առաջնորդող սկզբունք *(guiding principle)* կամ սկզբունքների համախումբ է: Ինչպես նշում է Հենրի Քիսինջերը, պլանի և «առաջնորդող սկզբունքի» միջև տարբերությունն «ուղղությունն» է: է. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանում» պլանը բացատրվում է որպես «ընդհանուր նպատակադրումով միավորված աշխատանքների՝ գործունեության ևն իրականացման նախապես նշվող միջոցառումների համակարգ ներկայացնող ծրագիր», իսկ սկզբունքը՝ որպես «որևէ կարգի գործունեության հիմնական՝ ղեկավար դրույթը, ղեկավարող կարգ՝ կանոն»[7]:

«Մեծ ռազմավարության»՝ ղեկավար սկզբունք լինելու ամենացցուն օրինակն է Սառը պատերազմի ժամանակ Խորհրդային Միության դեմ Միացյալ Նահանգների կիրառած զսպման ռազմավարությունը: Զսպման ռազմավարությունը հայտնի դարձավ որպես «Քենանի ռազմավարություն», քանի որ Ջորջ Քենանն առաջինն էր, որ իր «Երկար հեռագիր» անվանմամբ դիվանագիտական նոթերում գործածել էր «զսպում» տերմինը[8]: Տվյալ ռազմավարությունը արտացոլված չէր որևէ փաստաթղթում, չէր նախատեսում հատուկ նպատակների հասնելու համար ուժերի լարման հատուկ միջոցներ: Փոխարենը՝ այն Միացյալ Նահանգների արտաքին քաղաքականության ղեկավար սկզբունքն էր մինչև ԽՍՀՄ փլուզումը: ԽՍՀՄ փլուզումից հետո՝ 1990-ական թվականներին, գիտնականներ Բ. Փոզենը և է. Լ. Ռոսը, հաշվի առնելով «Մեծ ռազմավարության»՝ ղեկավար սկզբունք լինելու հանգամանքը, առանձնացրել են ԱՄՆ-ի «Մեծ ռազմավարությունների» չորս սկզբունքները՝ որպես հիմք ընդունելով պետության «հիմնական նպատակները», միջազգային քաղաքականության ասպարեզում նրա վարած գործունեության հիմնական նախադրյալները, ինչպես նաև «նախընտրված քաղաքական և ռազմական գործիքները»[9]: Ըստ այդմ 1990-ական թվականներին ԱՄՆ-ի չորս «Մեծ ռազմավարություններն» էին.

- նոր մեկուսականությունը *(neo-isolationism),*
- ընտրողական ներգրավվածությունը *(selective engagement),*
- համագործակցային անվտանգությունը *(cooperative security),*
- առաջնությունը *(первенство, primacy):*

Նոր մեկուսականություն: Առաջնորդվելով միջազգային հարաբերությունների պաշտպանական ռեալիզմի (իրատեսականության) սկզբունքնե-

[7] Տես *է. Աղայան*, Արդի հայերենի բացատրական բառարան: Ե., 1976, էջ 1216 և 1310:

[8] Տես *George F. Kennan.* The Charge in the Soviet Union (Kennan) to the Secretary of State. Moscow, 22 February 1946. “National Security Archive” (http://nsarchive.gwu.edu/coldwar/documents/episode-1/kennan.htm):

[9] Տես *Barry R. Posen, Andrew L. Ross.* Competing Visions for U.S. Grand Strategy. “International Security”, Winter 1996-1997, Vol. 21, N 3 (https://www.jstor.org/stable/2539272?seq=1#page_scan_tab_contents):

որով՝ «նոր մեկուսականության» վրա խարսխվող «Մեծ ռազմավարության» սկզբունքի կողմնակիցները պաշտպանում են միջազգային հարաբերությունների ասպարեզում ԱՄՆ-ի՝ հանուն իր ազգային անվտանգության ակտիվ ներգրավվածությունից խուսափելու քաղաքականությունը: Նրանք պնդում են, որ քանի դեռ ԱՄՆ-ը չունի իր դեմ ուղղված որևէ անվտանգային սպառնալիք, նա չպետք է միջամտի իր տարածքից դուրս տեղի ունեցող քաղաքական կամ ռազմական զարգացումներին: Այս սկզբունքի կողմնակիցների հիմնավորումն այն է, որ Միացյալ Նահանգների քաղաքական ինքնիշխանության և տարածքային ամբողջականության ապահովվածությունը երաշխավորված է միջուկային զենք ունենալու հանգամանքով, իսկ այդ զենքի չտարածումը հնարավորություն է տալիս կանխելու եվրասիական տարածաշրջանում Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Չինաստանի և Ռուսաստանի հետ մրցակցող ցանկացած հեգեմոնի ի հայտ գալը: Ավելին. ԱՄՆ-ը պատասխանատվություն չի կրում և պարտավոր չէ տնտեսապես աջակցելու դաշնակիցներին: Այլ կերպ ասած՝ նոր մեկուսականության հետևորդները համարում են, որ Միացյալ Նահանգները պետք է պահպանի ռազմավարական անկախություն՝ կենտրոնանալով այլ պետություններում իր ռազմական ներկայությունը սահմանափակելու վրա[10]:

Ընտրողական ներգրավվածություն: Տվյալ սկզբունքը կարելի է բացատրել միջազգային հարաբերությունների ռեալիզմով: Համաձայն «Մեծ ռազմավարության» այս սկզբունքի կողմնակիցների՝ Միացյալ Նահանգները պետք է միջամտի տարածաշրջանային (մասնավորապես՝ Եվրասիական ու Մերձավորարևելյան) պրոբլեմներին միայն այն դեպքում, երբ դրանք անմիջականորեն ազդում են իր անվտանգության վրա, իսկ միջամտության նպատակը պետք է լինի հակամարտող պետությունների միջև պատերազմի կանխումը: Մինչդեռ «Մեծ ռազմավարության» տվյալ սկզբունքի ընդդիմախոսների կարծիքով՝ դժվար է որոշել այն սահմանագիծը, որով հնարավոր լինի տարանջատել անհրաժեշտ և անհարկի ներգրավվածությունները: Միևնույն ժամանակ, գիտնական Ռոբերտ Արտի պնդմամբ՝ «ընտրողական ներգրավվածությունը» 21-րդ դարի լավագույն «Մեծ ռազմավարությունն» է, որի շնորհիվ ԱՄՆ-ը պաշտպանում է իր ազգային շահերը ոչ չափազանց շատ և ոչ էլ չափազանց քիչ ռազմական միջոցների կիրառմամբ[11]:

Համագործակցային անվտանգություն: Այս սկզբունքի առանձնահատկությունն այն է, որ «բոլորը հավասարաչափ մասնակցում են խաղաղության հաստատմանը»: Ի տարբերություն «Մեծ ռազմավարության» այլ սկզբունքներից՝ համագործակցային անվտանգությունը շեշտը դնում է ոչ թե իրատեսականության, այլ ազատականության (լիբերալիզմ) վրա: Շեշտադրելով համաշխարհային խաղաղության և միջազգային համագործակցության կարևորությունը՝ այս սկզբունքի կողմնակիցները անվտանգային խնդիրները և միջ-

[10] Տես նույն տեղում, էջ 7:

[11] Տես *Robert J. Art.* Geopolitics Updated: The Strategy of Selective Engagement. “International Security”, Winter, 1998-1999, Vol. 23, N 3:

պետական հակամարտությունները հաղթահարելու գործում կարևորում են ժողովրդավարական կառավարումը և միջազգային հաստատությունների գործունեությունը:

Առաջնություն: Այս սկզբունքի կողմնակիցների կարծիքով՝ ԱՄՆ-ը պետք է ձգտի միջազգային համակարգում իր գերիշխանության և տնտեսական, քաղաքական ու ռազմական տիրապետության հաստատմանը՝ հրաժարվելով բազմակենտրոնության համակարգից, կանխելով ցանկացած մրցակցի ոտնձգությունները: Տվյալ նպատակներին հասնելու համար ԱՄՆ-ը պետք է վարի Չինաստանի և մյուս մրցակիցների ոչ թե «ներգրավման», այլ զսպման ու սաստման քաղաքականություն: Այս սկզբունքի ընդդիմախոսների կարծիքով՝ դրա իրականացումը կարող է հանգեցնել ռազմական ուժերի այնպիսի մակարդակի հաստատմանը, որը կար Սառը պատերազմի ժամանակ:

Ներկայիս աշխարհառազմավարական պրոբլեմների վերագնահատման նպատակով վերը նշված սկզբունքները փոխարինվել են նորերով: Այսպես. առաջնությունը և համագործակցային անվտանգությունը կերպափոխվել են ազատական գերիշխանության *(liberal hegemony)*, նոր մեկուսականությունը և ընտրողական ներգավվածությունը՝ զսպվածության *(restraint)* և օֆշոր հաշվեկշռման *(offshore balancing):*

Ազատական գերիշխանության սկզբունքի կողմնակիցների տեսակետից՝ կարևոր են միջազգային ազատական աշխարհակարգի պահպանումն ու զարգացումը և Միացյալ Նահանգների՝ գերիշխող պետություն լինելը: Այս դեպքում, ըստ նրանց, իրավաչափ կլինի, եթե ԱՄՆ-ը ուժ կիրառի ազատական արժեքները պահպանելու համար: Սակայն տվյալ սկզբունքի իրականացմանը խոչընդոտում են «երեք հիմնական աղբյուրներից բխող սպառնալիքները՝ ձախողված պետությունները *(failed states)*, «խարդախ» պետությունները *(rogue states)* և ոչ ազատական արժեհամակարգ ունեցող մրցակիցները: *Ձախողված պետությունները* անկայունության աղբյուր են, *«խարդախ» պետությունները* կարող են հովանավորել ահաբեկչությունը, ձեռք բերել զանգվածային ոչնչացման զենքեր և վարել անկանխատեսելի գործունեություն, իսկ *ոչ ազատական արժեհամակարգով* մրցակիցները ձգտելու են փոխել գոյություն ունեցող աշխարհակարգը՝ «բարդացնելով ազատական արժեքներով հաստատությունների գործունեությունը և ազատական պետութենաշինությունը:

Ազատական գերիշխանության ռազմավարությունը դարձել էր ԱՄՆ-ի «Մեծ ռազմավարության» մի մասը: Թերևս դրանով կարելի է բացատրել ԱՄՆ-ի ներխուժումը Իրաք (2003 թ.) և Լիբիա (2011 թ.), թեև այդ հակամարտություններում ԱՄՆ-ի ռազմական ներգրավումը նախաձեռնել էին տարբեր կուսակցությունների նախագահներ. մի դեպքում հանրապետական Ջ. Բուշ Կրտսերը, մյուս դեպքում՝ դեմոկրատ Բ. Օբաման:

Զսպվածության սկզբունքի համաձայն՝ ԱՄՆ-ը պետք է սահմանափակի դաշնակիցների նկատմամբ անվտանգային պարտավորությունների կատարումը և խուսափի հակամարտությունների մեջ ներքաշվելուց, քանի որ

Միացյալ Նահանգները հարուստ է, հեռու մյուս մեծ տերություններից և պաշտպանված հզոր միջուկային ներուժով: Զսպվածության սկզբունքի կողմնակիցները, հղում կատարելով Կլաուզևիցին, պնդում են, թե ռազմական ուժը շատ թանկ ու *անկանխատեսելի* գործիք է և պետք է օգտագործվի միայն հազվադեպ՝ հստակորեն որոշված նպատակներով: Ըստ փորձագետների՝ Նախագահ Թրամպի վարչակազմն իր արտաքին քաղաքականությունում առաջնորդվում է «Մեծ ռազմավարության» զսպվածության սկզբունքներով[12]:

Օֆշորային (ափամերձ) հաշվեկշռման սկզբունքի դեպքում ԱՄՆ-ը պետք է խուսափի այլ պետությունների անվտանգության հարցերի մեջ զգալի չափով ներքաշվելուց, բացառությամբ այն տարածաշրջանների, որոնք համարվում են ռազմավարական կարևորություն ունեցող, ինչպիսիք են Արևմտյան Եվրոպան, Հյուսիսարևելյան Ասիան և Պարսից ծոցը: Այս ռազմավարությունը, ի տարբերություն ազատական գերիշխանությունից, էապես նվազեցնում է ԱՄՆ-ի ներգրավվածությունն այլ պետությունների գործերում, սակայն անհրաժեշտ է համարում որոշ դեպքերում միջամտել՝ բացառապես վերոնշյալ տարածաշրջաններում:

«Մեծ ռազմավարությունը»՝ որպես քաղաքականություն

Որոշ գիտնականներ համարում են, որ «Մեծ ռազմավարությունը» պետության համալիր քաղաքականությունն է: Ըստ էդվարդ Լյուտվակի՝ եթե պետությունն իր ամբողջ ոլորտային գործիքակազմը, ներառյալ՝ ռազմական ուժը, դիվանագիտությունը և տնտեսությունը, կիրառում է պետության առջև դրված մեծ նպատակներին հասնելու համար, ապա դա հենց «Մեծ ռազմավարությունն» է[13]:

Ընդհանուր առմամբ, այն գիտնականները, որոնք «Մեծ ռազմավարությունը» համարում են պետության համալիր քաղաքականություն, իրենց ուսումնասիրություններում հիմնականում արծարծել են այն հարցը, թե արդյոք մեծ պլանի կամ ղեկավար սկզբունքի կիրառումը արդեն քաղաքականություն չէ՞: Օրինակ, Դյուկը պնդում է, որ «իրականում նշանակություն չունի… թե պետությունների մեծ մասն իրոք հետևում է որևէ նախապես կազմված ռազմավարական «պլանի», թե ոչ»[14]: Իսկ Լոբելը պնդում է, որ «Մեծ ռազմավարությունը ենթադրում է երկարաժամկետ պլանավորում՝ տասնամյակներ և գուցե անգամ դարեր շարունակ: «Մեծ ռազմավարությունը» դրսևորվում է «պետության դիվանագիտական գործունեության, ռե-

[12] Տես *Barry Posen.* Restraint: A New Foundation for U.S. Grand Strategy. “Foreign Affairs”, May-June 2015 (https://www.foreignaffairs.com/reviews/capsule-review/restraint-new-foundation-us-grand-strategy)**:**

[13] Տես *Edward N. Luttwak.* The Grand Strategy of the Byzantine Empire. Cambridge, Massachusetts, and London, England, 2009, P. 409:

[14] *C. Dueck.* Reluctant Crusaders: Power, Culture, and Change in American Grand Strategy. Princeton University Press, 2006, P. 5.

սուրսների արդյունավետ օգտագործման ձևով, տնտեսական և ռազմական քաղաքականություններում»[15]:

2. «ՄԵԾ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ» ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ «ՆՊԱՏԱԿՆԵՐ–ԵՂԱՆԱԿՆԵՐ–ՄԻՋՈՑՆԵՐ» *(ENDS–WAYS–MEANS)* ՀԱՐԱՑՈՒՅՑԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Ընդհանուր առմամբ, «Մեծ ռազմավարությունը» իրականացվում է վերջնանպատակի, եղանակների և միջոցների կիրառմամբ: Այսինքն՝ «Մեծ ռազմավարության» մեթոդաբանությունը մշակելիս անհրաժեշտ է պատասխանել հետևյալ երեք հարցերին՝

– ի՞նչի ենք ուզում հասնել, կամ որո՞նք են ցանկալի արդասիքները *(ends)*,
– ինչպե՞ս ենք այնտեղ հասնելու, կամ ի՞նչ եղանակներով *(ways)*,
– ի՞նչ ռեսուրսներ ունենք, կամ ի՞նչ միջոցներ ենք օգտագործելու *(means):*

Եթե առաջին հարցը գերազանցապես պատկանում է քաղաքական որոշում կայացնողների պատասխանատվության տիրույթին, ապա երկրորդ ու երրորդ հարցերին պետք է պատասխանեն ռազմական ռազմավարները: Գիտնականներ Հենրի Բարտլետը և Փոլ Հոլմանը առաջ են քաշել «Մեծ ռազմավարության» ձևավորման մի մոդել: Ըստ դրա՝ «Մեծ ռազմավարությունը» ձևավորվում է անվտանգության միջավայրի ազդեցությամբ և «նպատակներ–եղանակներ–միջոցներ» հարացույցի առկայության դեպքում[16]:

«Մեծ ռազմավարության» մշակման առաջին փուլերում նպատակները սահմանելիս ռազմավարագետը որպես ելակետ է ընդունում *ազգային շահերը:* Ազգային շահերը կարող են լինել ընդհանրական, ինչպես, օրինակ, պետության անվտանգության ապահովումը: Ինչպես գիտենք, Հանս Մորգենթաուն շահերը տարբերակել է որպես կենսական ազգային և երկրորդակարգ[17]: ԱՄՆ-ի Ծովային պատերազմական քոլեջի փորձագետ Փիտեր Լիոտայի ուսումնասիրությունից կարող ենք եզրակացնել, որ ազգային շահերը սահմանելիս պետք է կարողանալ պատասխանել հետևյալ հիմնարար հարցերին[18].

1. «Հանուն ի՞նչի ենք մենք պատրաստ մեռնել» *(կենսական շահեր):*
2. «Հանուն ի՞նչի ենք մենք ուզում սպանել» *(կարևոր շահեր):*

[15] *Steven E. Lobell.* The Challenge of Hegemony: Grand Strategy, Trade, and Domestic Politics. University of Michigan Press, 2003, P. 3.

[16] Տես *Henry C. Bartlett, G. Paul Holman, Jr., and Timothy E. Somes.* The Art of Strategy and Force Planning, 4th ed. Newport, RI: Naval War College Press, 2004:

[17] Տես *Hans J. Morgenthau.* The Impasse of American Foreign Policy. Chicago, 1962, P. 191:

[18] Տես *P. H. Liotta.* To Die For: National Interests and the Nature of Strategy. *Henry C. Bartlett, G. Paul Holman, Jr., and Timothy E. Somes.* The Art of Strategy and Force Planning, P. 114:

3. «Ի՞նչ ենք պատրաստ վճարել այդ ամենի դիմաց» *(երկրորդակարգ շահեր)*:



Նկ 2. «Մեծ ռազմավարության» ձևավորման մեթոդաբանություն

Նպատակները սահմանելուց հետո ռազմավարության և ազգային անվտանգության մասնագետները մշակում են ազգային շահերի ապահովմանը հասնելու ուղիները կամ եղանակները, որոշում հատկացվելիք միջոցները, ընդսմին պետությունը «Մեծ ռազմավարություն» իրականացնելիս գործում է ոչ թե «տվյալ դեպքի համար» *(ad hoc)* սկզբունքով՝ արձագանքելով անվտանգային միջավայրով ձևավորված գործոններին, այլ ունի հեռուն գնացող և համընդգրկուն *նպատակներ*, լիովին տիրապետում է իր ընտրած *եղանակներին ու միջոցներին*, այսինքն՝ պետությունը դրսևորում է համապետական (*whole-of-nation)* և համակառավարական (*whole-of-government)* մոտեցումներ:



Ռազմավարության թեստավորումը կարող է կատարվել, իրականալիության, ընդունելիության և համապատասխանության *(feasibility, acceptability, and suitability, FAS)*՝ չափանիշներով, որոնք հնարավորություն են տալիս գնահատելու «նպատակներ–եղանակներ–միջոցներ» հարացույցի բաղադրիչները[19]: *Իրականալիության* չափանիշով գնահատվում է, թե նպատակներին հասնելու միջոցները, առկա միջոցները, կառավարման մեթոդները և այլ պարագաներ արդյոք հնարավորություն տալիս են իրագործելու առաջարկվող հայեցակարգը: *Ընդունելիությամբ* գնահատվում են նպատակին հասնելու եղանակները, թե առաջարկվող գործողություններն արդյոք հնա-

[19] Տես *Darek S. Reveron, James L. Cook.* From National to Theatre. Developing Strategy (https://ndupress.ndu.edu/Portals/68/Documents/jfq/jfq-70/JFQ-70_113-120_Reveron-Cook.pdf):

րավորություն տալիս են հասնելու արդյունքի առանց ռեսուրսների չափազանց մեծ ծախսերի և եղած կարողությունների սահմաններում: *Համապատասխանության* չափանիշով որոշարկվում է, թե ընտրված ռազմավարությունն արդյոք հնարավորություն տալիս է հասնելու սահմանված նպատակներին: Առաջարկվող ռազմավարական հայեցակարգների դեպքում բոլոր երեք հարցերին պետք է տրվի դրական պատասխան, ինչի շնորհիվ դրանով կձևավորվի մոտեցումների և հնարավոր լուծումների որոշ բազմություն: Իրական արվեստը այդ բազմությունից օպտիմալ լուծումներ քաղելու կարողությունն է:

Եվ այսպես. կարծում ենք, որ նպատակահարմար է կատարել ԱՄՆ-ի «Մեծ ռազմավարության» ուսումնասիրություն, որպեսզի ՀՀ ԱԱՌ-ի վերանայման շրջանակներում հնարավորինս կիրառվեն դրա մշակման տեղայնացված մեթոդաբանությունն ու սկզբունքները, ինչի շնորհիվ հնարավոր կլինի ստեղծել ավելի առաջադիմական և արդյունավետ ռազմավարություն, զարգացնել մի ճկուն համակարգ, որն ի զորու կլինի հավանական հակառակորդից հուսալիորեն պաշտպանելու մեր պետությունն ու նրա բնակչությանը:

ПОЛИТОЛОГИЯ БЕЗОПАСНОСТИ

ПРИНЦИПЫ «БОЛЬШОЙ СТРАТЕГИИ» И МЕТОДОЛОГИЯ ЕЕ ФОРМИРОВАНИЯ

Т. М. АНТОНЯН, майор, начальник Группы лингвистического редактирования Научно-издательского центра НИУО МО РА

РЕЗЮМЕ

В статье на примере США рассматривается проблема определения «Большой стратегии» и вопрос ее «существования». Ученые и эксперты в целом согласны с тем, что «Большая стратегия» является высшей степенью искусства управлять государством и определяет, как именно государства или другие политические образования располагают в соответствии с приоритетами и мобилизуют военные, дипломатические, политические, экономические и другие источники власти в целях защиты того, что они расценивают как свои интересы. Не вполне ясен истинный механизм или фактор, посредством которого проявляются подобные качества, что указывает на недостатки в методах, применяемых учеными для определения и применения на практике данных концепций.

Существует ли «Большая стратегия», является ли она целевой, в какой степени «Большая стратегия» остается неизменной или изменяется и все ли государства могут иметь или действительно имеют «Большую стратегию», – ответы на эти вопросы зависят от того, воспринимается ли «Большая стратегия» как план, принцип или модель поведения. Не существует единого понятия «Большой стратегии».

POLITICAL SCIENCE OF SECURITY

THE PRINCIPLES OF GRAND STRATEGY AND ITS FORMATION METHODOLOGY

T. M. ANTONYAN, Major, Head of Linguistic Editing Group, Academic-Publishing Center, NDRU, MOD, RA

SUMMARY

The article examines the problem of defining *Grand Strategy* and the matter of its “existence” on the US example. Scholars and experts broadly agree that Grand Strategy is the highest level of national statecraft that establishes how states or other political entities prioritize and mobilize military, diplomatic, political, economic, and other sources of power to ensure what they perceive as their interests. The exact essence or phenomenon manifesting these characteristics is less clear, which indicates the deficiencies in the methods used by scholars to define and employ concepts.

Whether Grand Strategy exists, whether it is action-oriented, whether there exists a degree to which Grand Strategy remains constant or changes, and whether all states can or do have Grand Strategy, all those are questions depending on whether Grand Strategy is conceptualized as a plan, a principle, or a pattern of behavior. There is not a single concept of Grand Strategy.

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԲԱՆԱԿԻ ԳՈՐԾՈՆԻ ՎՐԱ ԽԱՐՍԽՎՈՂ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏԱԾԵԼԱԿԵՐՊԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ

Ա. Գ. ԱՎԱԳՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ արտաքին գործերի նախարարության սահմանակից երկրների վարչության պետ

Ժամանակակից Թուրքիայում տեղի ունեցած ռազմական հեղաշրջումները հանգամանորեն հետազոտվել են, և այսօր էլ թե՛ Թուրքիայում, թե՛ այդ երկրի սահմաններից դուրս շարունակաբար լույս են տեսնում նորանոր, փաստագրական նյութերով հարուստ ուսումնասիրություններ:

Բազմազգ կայսրությունից մինչև ազգային պետության անցման ժամանակաշրջանում, որի կարևոր հատվածը երիտթուրքական կառավարման տարիներն էին (1908–1918 թթ.), բանակը ռազմական հեղաշրջումների կամ իշխանությանը վերջնագրեր ներկայացնելու ճանապարհով ակտիվորեն միջամտել է քաղաքականությանը, իսկ «Միություն և առաջադիմություն» կուսակցության տասնամյա կառավարման շրջանում եղել է իշխանության հիմնական հենարանը: Նրան ընդդիմադիր «Ազատություն և համաձայնություն» կուսակցությանը, բանակում ընդդիմադիր «հալասքյար» խմբավորման վրա հենվելով, հաջողվել է կարճ ժամանակով (1912 թ. հոկտեմբեր–1913 թ. հունվար) իթթիհատականներին հեռացնել իշխանությունից: Սակայն բանակի ճնշման, ինչպես նաև 1913 թ. հունվարի 23-ի Բաբ-Ալիի ռազմական հեղաշրջման միջոցով երիտթուրքերը վերստին զավթել են իշխանությունը:

Զինված ուժերի աջակցության գործոնի վրա հենվող քաղաքականությունը բնորոշ էր երիտթուրքական մտածելակերպին: Անգամ 1926 թ. Իզմիրում Մուստաֆա Քեմալ Աթաթուրքի դեմ դավադրության կազմակերպման հիմքում թուրքական բանակի ենթադրյալ աջակցությունն էր*:

Հանրապետական Թուրքիայի գաղափարախոսական ելևէջները խարըսխված են երիտթուրքական՝ ազգային պետություն ստեղծելու նախագծի վրա: Երիտթուրքական կառավարությունը ձեռնամուխ է եղել բազմազգ կայսրությունից ազգային (թուրքական) պետության անցման նախագծի մշակմանը, որով նախատեսվում էր գծանշել պետության սահմանները

* Ուշագրավ է, որ Քեմալ Թահիրն իր «Գայլի օրենքը» պատմավեպում իթթիհատականների առաջնորդ Քարա Քեմալին վերագրում է այն խոսքը, թե վճռական փաստարկը «բանակը մեզ է սատարում» կարգախոսն է (տես *Kemal Tahir.* Kurt Kanunu. İstanbul, 2001, s. 183):

փոքրամասնությունների ունեցվածքի յուրացման ճանապարհով, ստեղծել ազգային բուրժուազիա, բնակչության մի հատվածի (քրիստոնյաների, մասնավորապես՝ հայերի, հույների, ասորիների) ոչնչացմամբ և «էթնիկական ինժեներիայի» *(Etnisite Mühendisliği)* միջոցով[1] Անատոլիայում ձևավորել միատարր թուրքական տարածություն:

Այս նախագիծը շտկումների է ենթարկվել Աթաթուրքի բարեփոխումների շրջանում[*]: Աթաթուրքի հռչակած «խաղաղություն երկրում, խաղաղություն աշխարհում» *(Yurtta sulh, cihanda sulh)* կարգախոսը նպատակաուղղված է եղել նաև միջազգայնորեն ճանաչված նոր թուրքական պետության հստակորեն գծանշված սահմաններում անատոլիակենտրոն թուրքական ազգային պետության ձևավորման ծրագրի իրագործմանը: Այդ գործում Զինված ուժերը՝ բարձրաստիճան սպայական կազմի ղեկավարությամբ, ունեցել են իրենց ուրույն դերը, ինչը պայմանավորված է եղել 19-րդ դարի երկրորդ կեսին Օսմանյան կայսրության զարգացման առանձնահատկություններով: Այդ ժամանակ կայսրությունը եվրոպական ոճով արդիականացնելու (արևմտականացնելու) գործում նախաձեռնող և իրագործող տարրը սպայական կազմն էր, որն էլ կարևոր դեր է խաղացել Թուրքիայի Հանրապետության կազմավորման ընթացքում: Սա պատահական չէր: Պատմական իրադարձությունների զարգացման բերումով բանակի գործոնի վրա հիմնվող քաղաքական մտածելակերպը, ընդհանուր առմամբ, թուրքական հասարակությունում, համակարգվել, վերջնականապես իր տեսքն է ստացել երիտթուրքերի և քեմալականների իշխանության օրոք, սակայն այն սկսել էր ձևավորվել դեռ 18-րդ դարի վերջին, և այդ հասարակական-քաղաքական մտածելակերպի տարածումն ու ամրապնդումը պայմանավորված էին թուրքական հասարակությանը բնորոշ՝ Զինված ուժերին հատկացվող յուրահատուկ դերով և գործառույթներով:

Ուստի թուրքական հասարակությունում զինվորականության ավանդաբար առանձնահատուկ դերակատարությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ պատմության ընթացքում բանակը, լինելով ընդհանրապես թյուրքական պետությունների կազմավորման առաջնային պետութեենակերտ գործոն, մշտապես, բացի իր բնականոն գործառույթներից, օժտված է եղել

[1] Այս մասին ավելի հանգամանորեն տես *Fuat Dündar.* Modern Türkiye'nin Sifresi. İttihat ve Terakki'nin Etnisite Mühendisliği (1913–1918). İstanbul, 2008:

[*] Թուրք պատմաբան Շուքրու Հանիօղլուն նշում է, որ ժամանակակից Թուրքիայում շարունակում են տիրապետել իթթիհատական գաղափարախոսությունն ու մտածելակերպը: Ըստ նրա՝ «Այսօրվա քաղաքական և հասարակական կյանքում մարդկանց ենթագիտակցության մեջ գոյություն ունեցող այդ գաղափարախոսությունը իշխող է դարձել 1908 թ. հուլիսի 10 (23) հեղափոխությամբ սկիզբ առած հասարակության նորաձևման զարգացումներից հետո, և մինչ օրս էլ այն շարունակում է իշխել: Այս դարավոր գաղափարախոսությունը փոփոխությունների պայմաններում հարկադրված կերպով էվոլյուցիա է ապրել, իրեն ազգ-պետության պայմաններին համապատասխանող տեսքի է բերել, սակայն որպես աշխարհայացք մեծ փոփոխություններ չի կրել» (տես *M. Sükrü Hanioğlu.* Asırlık Bir İdeolojinin Yıldönümü. "Osmanlı'dan Cumhuriyet'e Zihniyet, Siyaset ve Tarih". İstanbul, 2009, s. 73-74):

ավելի լայն առաքելությամբ, որի իրականացման բնագավառներն էին քաղաքական, սոցիալական և տնտեսական ոլորտները: Թուրքական հասարակությունը բանակը դիտել է նաև որպես ներքին քաղաքական կայունության ապահովման երաշխիք, իսկ 1960 թ. մայիսի 27-ի ռազմական հեղաշրջումից հետո զինվորականության ստեղծած «Բանակին օգնության բաժնետիրական ընկերություն» *(«Ordu Yardınlaşma Anonim Şirketi»)* կառույցի շնորհիվ բանակը ներկայումս խոշոր կորպորատիվ արդյունաբերողների առաջին հնգյակում է:

Քաղաքական գործընթացներում Զինված ուժերի ներգրավման դեպքում հասարակության քաղաքականորեն ակտիվ զանգվածում ձևավորվում են զինվորականության հետ փոխկապված ազդեցիկ խմբավորումներ, որոնք ի վիճակի են ընդհանուր հասարակական կարծիքում կամ գոնե դրա մի որոշ հատվածում արմատավորելու քաղաքական գործընթացներին բանակի միջամտության անհրաժեշտության մեջ համոզվածություն և արդարացնելու այդ միջամտությունը: Այսպիսով՝ ձևավորվում է քաղաքական գործընթացներին բանակի միջամտության հասարակական պահանջմունք և մոտալուտ ռազմական հեղաշրջման սպառնալիք:

Բանակի աջակցության՝ որպես ճնշող գործոնի օգտագործմամբ կառավարությանը պարտադրվում է իշխանությունը հանձնել զինվորականության վստահությունը վայելող քաղաքական ուժին: Այդ ուժը, օգտագործելով բանակից սատարվելու հանգամանքը, միևնույն ժամանակ, գիտակցում է, որ ռազմական հեղաշրջումն ու իշխանությունն անմիջականորեն բանակի ձեռքն անցնելը քաղաքական զարգացումները տանում են այլ ուղղությամբ, իսկ իշխանությունը զավթած խունտան չի վայելում հասարակության լայն զանգվածի համակրանքը և առաջին իսկ էական արտաքին անհաջողության դեպքում ստիպված է լինում հեռանալ իշխանությունից իր և իրեն սատարողների համար ծանր հետևանքներով[*]: Այդ իսկ պատճառով Զինված ուժերի աջակցությամբ իշխանությանը հավակնող քաղաքական ուժը փորձում է գեներալիտետի հետ գալ համաձայնության:

Տվյալ քաղաքական-պետական երևույթի համար անհրաժեշտ տարր է, որպեսզի հասարակության լայն զանգվածը, գիտակցելով նման միջամտության ոչ օրինականությունը, ռազմական հեղաշրջումը համարի բնական և ճանաչի նման հեղաշրջում կատարելու բանակի իրավունքը: Ավելին. նա պետք է նաև համակերպվի այն մտքի հետ, որ դա արվել է հանուն հայրենիքի և ազգի փրկության:

Քաղաքական կուսակցությունների կամ քաղաքականացված հասարակական կառույցների ու կազմակերպությունների հաշվարկներում Զինված ուժերի դերի արդյունք կարելի է համարել այն, որ պետության համար կենսականորեն կարևոր հարցերում բանակի խնդիրը դառնում է հասարակության առօրյա, կենցաղային խոսակցությունների թեմաներից մեկը:

[*] Այդպես էր, օրինակ, «սև գնդապետների վարչակարգը» Հունաստանում՝ 1974 թ. Կիպրոս թուրքական ներխուժումից հետո, կամ Արգենտինայում՝ 1983 թ. անգլո-արգենտինյան պատերազմում կրած պարտությունից հետո:

Առնվազն մինչև 2016 թ. հուլիսի 15-ի ձախողված ռազմական հեղաշրջումը գեներալիտետի կամ նրա հետ կապված ուժերի քաղաքական օրակարգ ձևավորելու, քաղաքական զարգացումների, քաղաքական կուսակցությունների և հոսանքների հարաբերակցության վրա ազդելու, ինչպես նաև յուրաքանչյուր հարցում իր խոսքն ունենալու իրավասությունը գտնվել է հասարակության ուշադրության կենտրոնում: Թուրքիայի Զինված ուժերին վերաբերող մի շարք հետազոտությունների հեղինակ լրագրող Մեհմեդ Ալի Բիրանդը այսպես է ներկայացնում բանակի քաղաքական դերի հասարակական ընկալումը. «Թուրքական Զինված ուժերն իրենց միջամտությամբ ազդեցություն են գործում մեր քաղաքական կյանքի և առօրեական կենցաղի վրա, և ակնհայտ է, որ առաջիկա տարիներին էլ լինելու են մի ուժ, որի ազդեցությունն զգալի է: Մասնավոր խոսակցություններում, ընդհուպ մինչև ներքին քաղաքականության հարցերի քննարկումներում, մշտապես հարց է տրվում, թե «բանակն ինչ է ասում», և պատասխաններ են փնտրվում: Ընդհանուր առմամբ, թուրքական հասարակությունը բանակով է հպարտանում, ցանկանում է, որ այն լինի ուժեղ, և այնպիսի տեղ է տալիս, որը ՆԱՏՕ-ի անդամ որևէ այլ պետությունում չես հանդիպի: Բանակի մասին հնչում են միայն գովասանքի խոսքեր, այն երբևէ չի քննադատվում: Դա գրեթե տաբու է: Կարծում են, որ նեղն ընկած ժամանակ այն կլինի փրկիչ»[2]:

Բիրանդի գիրքը լույս է տեսել 1986 թ.: Դրանից հետո թուրքական բանակը կատարել է հեղաշրջման ևս երկու փորձ՝ հաջողված (1997 թ. փետրվարի 28-ի այսպես կոչված հետարդիական (պոստ-մոդեռն) հեղաշրջումը) և անհաջող (2016 թ. հուլիսի 15-ին): 1997 թ. հեղաշրջումից հետո թուրքական հասարակությունում բանակի տեղի ու դերի ընկալման մեջ կատարվել են կարևոր փոփոխություններ մասնավորապես՝ բանակին քննադատելը կորցրել է «տաբույացվածության» կարգավիճակը, իսկ վերջին տասը տարվա ընթացքում տեղի ունեցած մի շարք իրադարձություններ[*], կարծես պետք է խորհրդանշեին քաղաքականությունից բանակի հեռանալը և ռազմական հեղաշրջումների անհնարինության դարաշրջանի հաստատումը: Սակայն քրդական ուժերի դեմ ռազմական գործողությունները ինչպես Թուրքիայում, այնպես էլ հյուսիսային Սիրիայում նպաստում են բանակի դիրքերի ամրապնդմանը: Դրա հետ մեկտեղ «գյուլենականության» դեմ պայքարի ընթացքում ի հայտ եկավ մի նոր երևույթ՝ բանակի ազգայնական (եվրասիական ուղղվածությամբ սպաների ու քեմալականների) թևի և «Արդարություն և

[2] Տես *M. Ali Birand.* Emret Komutanım. İstanbul, 1986, s. 13:

[*] Դրանցից նշենք Զինված ուժերի հետ կապված և նրանց սատարմանը ապավինելով իշխանության գալու հույսեր տածող «էրգենեկոնի» ու նրա հետ կապված «Բալյոզ» («Balyoz»՝ ամբարցիչ), «Կաֆես» («Kafes»՝ վանդակ) ու նման այլ ուժերի գործով դատավարությունները, 2016 թ. հուլիսի 15-ի հեղաշրջման փորձից հետո բարձրաստիճան զինվորականության ձերբակալությունները, բանակի շարքերը «գյուլենական» սպաներից զտումը, նախագահական կառավարման համակարգի անցմամբ ՊՆ ու ԳՇ գործառույթների վերանայումը և լիազորությունների վերաբաշխումը, ռազմակրթական հաստատություններում ձեռնարկված արմատական փոփոխությունները:

զարգացում» *(AKP)* կուսակցության բյուրոկրատիայի համագործակցությունն ու միավորումը *(birleştirilmesi)*: Այսինքն. չնայած տարվող քարոզչությանը՝ հասարակության քաղաքականացված հատվածում բանակի աջակցությանն ապավինելու մտածելակերպը դեռ պահպանվում է:

Քաղաքական գործընթացներում զինվորականության ներգրավվածության, նույնիսկ դրանց ուղղորդման վերաբերյալ հասարակության և քաղաքական վերնախավի պատկերացումներից է նաև «բանակ–«խորքային պետություն»» զուգորդումը: Թուրքիայի 9-րդ Նախագահ Սուլեյման Դեմիրելը, 2005 թ. Յավուզ Դոնաթի վարած հեռուստաթրագրում խոսելով «խորքային պետության» մասին, ասաց, որ «դա՝ զինվորականությունն է»[3]: Ս. Դեմիրելն արել է այն ուշագրավ դիտարկումը, որ «խորքային պետության» կենսունակության հիմքը **«պետության կործանման վտանգի» վերացումն է,** և այդ մտավախությունը ձևավորվել է 1912 թ.: Բանակին ապավինելու պատճառն այն է, որ «ամենակազմակերպված ուժը զինվորականությունն է»[4]: Ս. Դեմիրելի կարծիքը լրացնում է 1980 թ. սեպտեմբերի 12-ի ռազմական հեղաշրջման ղեկավար, Թուրքիայի 7-րդ Նախագահ Քենան Էվրենի հետևյալ դիտարկումը. «Եթե պետությունը թուլություն է ցուցաբերում, ապա միջամտում է խորքային պետությունը»[5]: Ք. Էվրենի ակնարկով՝ բանակին ապավինելու քաղաքական մտածելակերպի ուժեղացումն անմիջականորեն կապ ունի պետական ապարատի թուլության հետ, և պատահական չէ, որ այն իր դրսևորումներն է ունեցել հատկապես 1960–1970-ական թթ. և 1990-ականների վերջին: Այդ համատեքստում Թուրքիայում ձևավորվել է մեկ այլ՝ «բանակ–խորքային պետություն–քաղաքական կուսակցություններ և կառույցներ» քաղաքական-հասարակական առանցքը:

Ինչպես վերը նշեցինք, քաղաքականությունը ՁՈՒ-ի վրա հիմնելու ավանդույթը բխում է հին թյուրքական հասարակությունների պետութենակերտ գործունեության առանձնահատկությունից: Թյուրքական քոչվոր հասարակությունների ռազմական ժողովրդավարության համակարգում իշխանություն ու զորք հասկացություններն անբաժան էին և միակենտրոն, իշխանության ձևավորումը պայմանավորված էր առաջին հերթին ռազմական արշավանքներով: Ընդհանուր առմամբ, թյուրքական պետական կազմավորումները՝ խաքանությունները, բանակածին էին՝ հիմնված այլ ժողովուրդների հպատակեցման և թալանի վրա[*]:

Ռազմական ժողովրդավարության երկարատև ընթացքն անցած քոչվոր ժողովուրդների շրջանում բանակը ձեռք էր բերել սրբազան իմաստ՝ լինելով ոչ միայն ուժեղ ու միասնական պետության խորհրդանիշը, այլև ընդհանրա-

[3] Տես *Belma Akçura.* Derin Devlet Oldu Devlet. İstanbul, 2006, s. 16:

[4] Տես նույն տեղում, էջ 17:

[5] Տես նույն տեղում:

[*] Այսպես. պատմաբան Թոմպսոնը նշում է, որ մինչև Աթիլայի կառավարումը հոները չունեին կենտրոնական իշխանություն, և «որ այդ իշխանությունը գոյություն ուներ միայն ռազմական ժամանակաշրջանում» (տես *Э. А. Томпсон.* Гунны. Грозные воины степей. М., 2010, с. 63):

պես ժողովրդի գոյատևման երաշխիքը: Ընդսմին այդ պետական համակարգը մարմնավորում էր դասական «ազգ–բանակ» հայեցակարգը: Ռազմական պարտությունը շատ դեպքերում համարժեք էր պետական կառույցի (հորդա կամ խաքանություն) վերացմանը և պարտվածների զանգվածային ոչնչացմանը*: Թյուրքական խաքանություններում ռազմական և քաղաքացիական իշխանության միավորումը՝ ի դեմս խաքանի, միասնության խորհրդանիշ էր, սակայն՝ ռազմական բաղադրիչի առավելությամբ, քանի որ խժդժությունների կամ իշխանության համար պայքարի ժամանակ խաքան ընտրվում էր նա, ում սատարում էր ռազմական ուժը: Այսինքն՝ թյուրքական պետական միավորումներն ու պետությունները «ազգ–բանակ» հայեցակարգի դասական օրինակ էին:

Թյուրքական պետությունները, այդ թվում՝ Օսմանյան կայսրությունը, ստեղծվել են որպես ռազմական ուժի հզորության ու արշավանքների արդյունք, իսկ կայսրության տիմարիոտական համակարգն** ու դևշիրմեի հաստատությունն ուղղված էին ռազմական հզորության ապահովմանը: «Միլեթների» օսմանյան համակարգը հնարավորություն էր տալիս առավելագույնս օգտագործելու նվաճված ժողովուրդների տնտեսական, գիտական, մշակութային և այլ ներուժը՝ արգելելով նրանց մուտքը թուրքերին (մահմեդականներին) պատկանող զինվորական ծառայության բնագավառ:

Օսմանյան կայսրությունում սուլթանի գահընկեցության գործառույթը վերապահված էր բանակի ընտրյալ խավին՝ մայրաքաղաքում տեղակայված ենիչերական գվարդիային***: Ռազմական հեղաշրջման արդյունքների օրինականացման համար ուլեմաների աջակցության կարիք ունեցող ենիչերա-

* Նույնիսկ պետության ստեղծումից հետո ռազմական պարտությունը ընկալվում էր որպես բնաջնջման ազդակ: Այդ իսկ պատճառով 1071 թ. Մանազկերտի ճակատամարտից առաջ սելջուկյան զորքը, գիտակցելով, որ պարտության դեպքում բյուզանդացիները կոչնչացնեն իրենց, ներառյալ՝ կանանց ու երեխաներին, սպիտակ շապիկներ էին հագել, քանի որ սուլթան Ալփ Արսլանն ասել էր. «Եթե զոհվեմ, թո՛ղ սա իմ սավանը դառնա», իսկ ճակատամարտի նախօրեին դիմելով զորքին՝ նշել էր. «Եթե հաղթենք, կհասնենք մեր ուզած արդյունքին, հակառակ դեպքում՝ որպես նահատակ կգնանք դրախտ» (տես *Muharrem Kesik.* Sultan Alp Arslan'ın Liderlik Vasıfları. "FSM İlmi Araştırmaları". İstanbul, Güz 2014, sayı: 4, s. 48):

** Թուրք պատմաբան Դողան Ավշիողլուն նշում է, որ «օսմանցիները տիմարի համակարգը ժառանգել էին սելջուկներից և Իրանի մոնղոլներից» (տես *Doğan Avcıoğlu.* Osmanlı'nın Düzeni. Türklerin Tarihi: 6 Kitap. İstanbul, 2013, s. 19): Տիմարը ռազմական ավատ է, որը հաստատվել է սուլթան Մուրադ 1-ինի օրոք: Այն ունեցել է ֆեոդալական պայմանական հողատիրության ձև և Օսմանյան կայսրությունում գոյություն է ունեցել ընդհուպ մինչև ռազմա-ավատական համակարգի վերացումը (1839 թ.):–*Խմբ.:*

*** Թուրք պատմաբան Ահմեթ Թուրան Ալքանը նշում է, որ «Մշտապես պետության կենտրոնում տեղաբաշխված լինելու հանգամանքի բերումով ենիչերական զորքը իշխանությանը միջամտելու գործնական կարողությունն իր ձեռքում պահող միակ ուժն էր: Սակայն, քանի որ որևէ միջամտության օրինականացման համար անհրաժեշտ էին ուլեմներ, այդ երկու կառույցը մինչև 1826 թ. ենիչերական զորքի վերացումը կազմում էին «ավանդական» դաշինք», *(Ahmet Turan Alkan.* İkinci Meşrutiyet Devrinde Ordu ve Siyaset. İstanbul, 2001, s.17):

կան զորքը չուներ որևէ այլ հասարակական ուժի սատարման անհրաժեշտություն, օրինակ՝ իշխանության երրորդ ուժի՝ բյուրոկրատիայի, որը մարմնավորում էին մեծ վեզիրը կամ վեզիրները*: Ենիչերիներ–ուլեմներ համագործակցությամբ «կաթսա շրջելուն»** հակազդեցություն գործելու հասարակության հնարավորությունները սահմանափակ էին: Կայսրության անկման ժամանակ, հատկապես՝ «Կակաչների դարաշրջանում» *(lale devri)*, որը համարվում է Օսմանյան կայսրության «ոսկե դարաշրջանի» ավարտ, ռազմական արշավանքների և արքունիքի շքեղության համար կատարվող ծախսերը հանգեցրեցին գների աճման և հարկային բեռի աճման, ինչը դժգոհություն հարուցեց մայրաքաղաքի արհեստավորների ու վաճառականների շրջանում[6]:

Ընդունված է Օսմանյան կայսրության անկման սկիզբ համարել 1699 թ. ստորագրված Կառլովիցի պայմանագիրը: Եվրոպական պետությունների հետ մղվող պատերազմներում ենիչերական զորքի պարտությունները օսմանյան վերնախավում ամրապնդել էին բանակում անհրաժեշտաբար փոփոխություններ կատարելու մտադրությունը, հատկապես, որ պարտություններն անդառնալիորեն խորապես ազդում էին ենիչերական զորքի վրա՝ նպաստելով կարգապահության թուլացմանը, ինչն իր հերթին դառնում էր նոր պարտությունների պատճառ: Ուստի և Կառլովիցի պայմանագրի կնքումից հետո մեծ վեզիր *(sadrazam)* Ամջազադե Հուսեին փաշան ենիչերական զորքի թվաքանակը 70000-ից կրճատել էր մինչև 34000-ի՝ ազատվելով վտանգ ներկայացնող անկարգապահ զանգվածից[7]: Օսմանյան բանակի բարեփոխման երկրորդ փորձը ձեռնարկվել էր «Կակաչների դարաշրջանի» սկզբին՝ Ահմեդ 3-րդի օրոք, երբ մեծ վեզիր Դամաթ Իբրահիմ փաշան մշակել էր համապատասխան նախագիծ և այն ներկայացրել սուլթանին[8]:

1730 թ. սեպտեմբերի 28-ից նոյեմբերի 25-ը տևած Պատրոնա Հալիլի ապստամբությունը կարելի է դիտել որպես Օսմանյան կայսրությունում «բանակը մեզ է սատարում» քաղաքական մտածելակերպով ձեռնարկված առաջին ապստամբությունն ու իշխանափոխությունը: Այն նաև սուլթանի գահընկեցությամբ առաջին իշխանափոխությունն էր, որն իրականացվեց ոչ ավանդական ենիչերական զորք–ուլեմներ համագործակցության սխեմայով:

---

* Ենիչերական զորքում ավանդաբար մեծ ազդեցություն ուներ «բեքթաշի» սուֆիական հոսանքը, որի հետևորդներին կարելի է համարել ենիչերների հասարակական հենարանը (տես «Бекташийа». «Ислам». «Энциклопедический словарь». М., 1991, сс. 39–41):

** Ընդունված ավանդույթի համաձայն՝ սուլթանն ամեն օր իր խոհանոցից փլավ էր ուղարկում ենիչերական գվարդիային: Ապստամբության ժամանակ ենիչերները շրջում էին սուլթանի ուղարկած փլավով կաթսան: Այստեղից «կաթսան շրջել» «*kazan devirmek»* արտահայտությունը հոմանիշ դարձավ «ապստամբություն» բառին (տես «Турецко-русский словарь». М., 1977, с. 527):

[6] Տես *М. С. Мейер.* Восстание городских низов Стамбула в 1730. «Народы Азии и Африки», 1963, № 4:

[7] Տես *Sipahi Çataltepe.* 19. Yüzyıl Başlarında Avrupa Dengesi ve Nizam-ı Cedit Ordusu. İstanbul, 1997, s. 9:

[8] Տես նույն տեղում:

Ապստամբության շարժիչ ուժերը արհեստավորներն ու մանր վաճառականներն էին, որոնց ղեկավարում էր ալբանացի Հալիլը[9]: Ապստամբները դժգոհ էին արքունիքի ճոխ կյանքից և հարկերի ավելացումից: Սակայն ապստամբությունը հաջողությամբ չէր պսակվի, եթե դրան չսատարեին ենիչերները, որոնք դժգոհ էին 1730 թ. թուրք-պարսկական պատերազմում սուլթան Ահմեդ 3-րդի և մեծ վեզիր Իբրահիմ փաշայի գործողություններից, ինչպես նաև մտավախություն ունեին, որ մեծ վեզիրը նպատակադրվել է ենիչերական զորքին զուգահեռաբար եվրոպական պետությունների օրինակով ստեղծելու նոր կարգի զորք[10]:

Այսպիսով՝ ժողովրդի դժգոհությունը համընկնում է բանակում տարածված մտավախության հետ և կանխորոշում համատեղ գործողությունների ձեռնարկումը: Պատրոնա Հալիլի առաջնորդած ամբոխին ենիչերական զորքի սատարումը ոգեշնչում է ապստամբներին բացեիբաց հանդես գալու արքունիքի դեմ, ինչպես նաև դառնում ապստամբության հաջողության լուրջ նախադրյալը: Խռովության ընթացքը Ստամբուլում տեղի է ունենում ավանդական սխեմայով. «խանութները, շուկաները փակվեցին, քրիստոնյաները փախան կղզիներ»[11]:

Ուշագրավ է, որ մեծ վեզիր Դամադ Իբրահիմ փաշան, ստանալով ապստամբության լուրը, թերագնահատել է այն վտանգը, որը արքունիքի համար կարող է ներկայացնել Ստամբուլի մանր վաճառականների և արհեստավորների այդ շարժումը, քանի որ այդ պահին ենիչերիները դեռ չէին միացել ապստամբներին[12]:

Չնայած 1730 թ. Պատրոնա Հալիլի ապստամբությունը «բանակը մեզ է սատարում» քաղաքական մտածելակերպի առաջին դրսևորումն էր, սակայն տվյալ պահին օսմանյան հասարակության զարգացման մակարդակը բավարար չէր, որպեսզի ապստամբները, այսինքն՝ քաղաքականապես ակտիվ զանգվածը, կարողանան օգտվել իշխանափոխությունից կամ վայելել հաղթանակի արդյունքները: Սուլթան Ահմեդ 3-րդի գահընկեցությունից և մեծ վեզիր Իբրահիմ փաշայի սպանությունից հետո գահ բարձրացած սուլթան Մահմուդ 1-ինը գահակալության առաջին օրերին հայտնվել էր ապստամբների ձեռքում և համաձայնվել, որ Ստամբուլում եղած 120 պալատները թալանվեն ու քանդվեն[13]: Սակայն որոշ ժամանակ անց Մահմուդ 1-ինը, ամրապնդելով իր դիրքերը, կարողացել է ճնշել ապստամբությունը, սպանել Պատրոնա Հալիլին և նրա կողմնակիցներից շատերին, այդ թվում՝ ենիչերական աղա Մեհմեդին[14]:

---

[9] Տես նույն տեղում:

[10] Տես նույն տեղում:

[11] Տես *Դողան Ավջիօղլու,* Նշ. աշխ., էջ 196:

[12] Տես *Alan Palmer.* The Decline and Fall of the Ottoman Empire. N.Y., 1994, P. 39:

[13] *Դողան Ավջիօղլու,* Նշ. աշխ., էջ 197:

[14] Տես նույն տեղում:

Մինչև 19-րդ դարի երկրորդ կեսը, երբ որպես բարեփոխումների արդյունք օսմանյան հասարակությունում ձևավորվել էր մտավորականների խավ, հասարակության քաղաքականապես ակտիվ հատված էին իսլամական դպրոցների ուսանողները՝ սոֆտերը, որոնց ցույցերը հայտնի են դեռ 16-րդ դարից: Որոշ դեպքերում նրանց ցույցերի պատճառով սուլթանը դիմել է զիջումների, սակայն սոֆտերի պահանջները սահմանափակ բնույթի էին:

Թուրքական պատմության մեջ 1730 թ. Պատրոնա Հալիլի ապստամբությունը կարևոր է նաև մեկ այլ քաղաքական գործընթացի սկզբնավորման տեսակետից: Խոսքը բանակ–իշխանություն հարաբերությունները կարգավորող և քաղաքականությանը բանակի միջամտության հնարավորությունը սահմանափակող իրավական փաստաթուղթ մշակելու մասին է: Քանի որ Օսմանյան կայսրությունը շարիաթական օրենքով կառավարվող պետություն էր, ուլեմների մշակած և 1730 թ. հոկտեմբերի 12-ին սուլթան Մահմուդ 1-ինի ու ենիչերական գվարդիայի հրամանատարի (աղա) միջև կնքված փաստաթուղթը հետագայում ստացավ «շարիաթական ակտ, կամ փաստաթուղթ» *("hüccet-i şer'iye")* անվանումը[15]: Ենիչերները երդվել էին չխառնվել պետական գործերին, իսկ եթե որևէ մեկը նման մտադրություն ունենար, նրան հանձնելու էին իշխանություններին[16]: Մահմուդ 1-ինը սուլթանական հրովարտակ էր հրապարակել, որտեղ խոստանում էր հավատարիմ մնալ «շարիաթական փաստաթղթին»[17]: Պատրոնա Հալիլի ապստամբության համատեքստում «շարիաթական փաստաթուղթը» ապստամբներին զրկել է իրենց հիմնական հենարանից. ենիչերական գվարդիան անցել է նոր սուլթանի կողմը, և, չնայած ապստամբության ղեկավարների բոլոր ամբոխահաճո քայլերին, այդ թվում՝ ընդդեմ «ֆրանկիզմի» (*Frankish*, այսինքն՝ արևմտականություն)[18] մշակութային այլատեցության հաստատմանը, որը պահանջում էր մահմեդական բնակչությունը, սուլթանը հնարավորություն է ստացել ազատվելու ապստամբների վերահսկողությունից և ոչնչացնելու նրանց:

Պատրոնա Հալիլի ապստամբության ժամանակ տեղի է ունեցել մի ուշագրավ դրվագ ևս. եվրոպական օրինակով ստեղծված Բոստանջի ստորաբաժանումը միացել է ապստամբներին, ապա ցրվել նոր սուլթանի հրամանով[19]:

Այսպիսով՝ 1730 թ. Ստամբուլի ապստամբությունն սկզբնավորել է երկու կարևոր գործընթաց՝ «բանակը մեզ է սատարում» քաղաքական մտածելակերպի ձևավորումը և այդ սկզբունքով իրագործված առաջին իշխանափոխությունը, իսկ մյուս կողմից՝ բանակ–իշխանություն հարաբերությունների

[15] Տես *Hakan Erdem.* Hüccet-i Şer'iye 1807: Unutulmuş bir sözleşme. "KARAR" 02.04.2017 (www.karar.com/yazarlar/hakan-erdem/huccet-i-seriye-1807-unutulmus-bir-sozlesme-3680):

[16] Տես նույն տեղում:

[17] Տես նույն տեղում:

[18] Տես *Ալան Փալմեր,* Նշ. աշխ., էջ 39:

[19] Տես *Միփահի Չաթալթեփե*, Նշ. աշխ., էջ 10:

կարգավորման և ռազմական միջամտությունների արգելման իրավական փաստաթուղթ մշակելու առաջին փորձը*:

1730 թ. ապստամբությունից մինչև 19-րդ դարի սկիզբը օսմանյան վերնախավում արմատավորվել է եվրոպական օրինակով պետության արդիականացման *(çağdaşlaşma)*, և բարեփոխումների անհրաժեշտության գաղափարը, և Սելիմ 3-րդը (1789–1807 թթ.) նախաձեռնել է առաջին արմատական բարեփոխումները[20]: Արդիականացման այս նախնական շրջանում (նախնական, որովհետև եվրոպականացման գաղափարի վրա հիմնվող խորքային բարեփոխումներն սկսվել են Թանզիմաթի շրջանով) օսմանյան հասարակությունում նկատվել է երկու որակական փոփոխության գործընթացի մեկնարկ: Առաջին. հասարակությունում ուլեմների փոխարեն սկսել է ձևավորվել գիտակից «մտավորականների» խավը, որը, թուրք պատմաբան Նիյազի Բերքեսի բնութագրմամբ, հետագա փոփոխությունների շնորհիվ վերածվել է «ժամանակակից մտավորականության» (*intelligentsia)*[21]: Երկրորդ. ավելի արդիական է դարձել զորքի միջնադարյան անարդյունավետ կառուցվածքից և սպառազինությունից հրաժարվելու, եվրոպական պետությունների օրինակով «նոր կարգի» *(Nizam-ı Cedid)* բանակ ստեղծելու անհրաժեշտությունը[22]:

Ահա սրանք են այն հիմնական պատմական նախադրյալները, որոնք հանգեցրել են այսօրվա թուրքական հասարակությունում տիրող՝ «բանակը մեզ հետ է» մտածելակերպի հաստատմանը:

---

* Արևմտյան պատմագրությունում «Կակաչների դարաշրջանը» դիտվում է որպես ոչ միայն արդիականացման առաջին փորձ, այլև՝ համաշխարհային գործընթացներին Օսմանյան կայսրության ինտեգրման սկիզբ (տես *Лорд Кинросс*. Расцвет и упадок Османской империи. М., 1999. с. 409):

[20] Տես *Niyazi Berkes.* Türkiye'de Çağdaşlaşma. İstanbul, 2016, s. 101:

[21] Տես նույն տեղում:

[22] Տես նույն տեղում:

РЕГИОНАЛЬНАЯ БЕЗОПАСНОСТЬ

ИСТОКИ ФОРМИРОВАНИЯ В ТУРЕЦКОМ ОБЩЕСТВЕ ПОЛИТИЧЕСКОГО МЫШЛЕНИЯ, ОСНОВАННОГО НА ФАКТОРЕ АРМИИ

А. Г. АВАГЯН, доктор исторических наук, профессор, начальник Департамента сопредельных государств МИД РА

РЕЗЮМЕ

Специфика ранних тюркских государственных образований и Османской империи, государствообразующим принципом которых был принцип приоритета военной силы, оказала огромное воздействие на формирование такого политического мышления, для которого в каче-

стве основного аргумента при смене и приходе к власти воспринимается поддержка со стороны руководства вооруженных сил. В Турции армия кроме привычных функций выполняет также несвойственные ей функции в социальной, экономической и других сферах, а также вовлечена в политические процессы. Политизация армии в общественном сознании воспринимается как естественное явление, а политические расчеты смены власти производятся с учетом именно этого фактора.

В данной статье восстание Патрона Халила в Стамбуле в 1730 г. рассматривается в качестве первого примера смены власти, осуществленной на основе политического принципа «армия нас поддерживает».

REGIONAL SECURITY

THE ORIGINS OF FORMING POLITICAL THINKING IN THE TURKISH SOCIETY BASED ON THE FACTOR OF THE ARMY

A. G. AVAGYAN, Doctor of History, Professor, Head, Department of Bordering Countries, MFA, RA

SUMMARY

The specificity of the early Turkic state entities and the Ottoman Empire, the state-building principle of which was the principle of prioritizing the military force, influenced profoundly the formation of such political thinking that deems the support of the armed forces leadership as the most fundamental argument in the change and rise of power. In Turkey, apart from the usual functions, the army also performs “unusual” functions in the social, economic, and other spheres, i.e., it is also involved in political processes. Politicization of the army is publicly perceived as a natural phenomenon, thus political calculations of the change of power are made depending on that very factor.

This article addresses the 1730 Patrona Halil’s rebellion in Istanbul as the first example of the change of power implemented on the basis of “the Army supports us” political principle.

ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ

Ս. Ա. ՍՈՒՋՅԱՆ, աշխարհագրական գիտությունների թեկնածու, պահեստազորի գնդապետ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ռազմարվեստի պատմության հետազոտությունների կենտրոնի պետ

1970-ական թվականներին ձևավորված **«ռազմական ժողովրդագրություն»** գիտաճյուղի կարևոր ուղղություններից է պատերազմների ժողովրդագրական հետևանքների, բնակչության թվաքանակի շարժընթացի (դինամիկայի) վրա դրանց ազդեցության, ծնելիության, մահացության, ամուսնությունների, ամուսնալուծությունների, պատերազմում զոհված և պատերազմի անուղղակի ազդեցությամբ բնակչության կորուստների հետազոտությունը: Միևնույն ժամանակ, կարևոր է հասկանալ, թե բնակչության քանակական և որակական փոփոխություններն ինչպես են ազդում պատերազմ վարելու պետության հնարավորությունների և կարողությունների, ԶՈՒ-ի համալրման եղանակի ընտրության վրա:

Պետության ռեսուրսների որոշման համար ռազմական ժողովրդագրությունում կարևոր նշանակություն ունեն բնակչության հեռանկարային հաշվարկումներն ըստ տարիքի և սեռի: Հայտնի է, որ պետության զորահավաքային հնարավորությունները կախված են տիրող ժողովրդագրական իրավիճակից և դրա փոփոխման միտումներից, այդ թվում՝ բնակչության թվաքանակի շարժընթացից, ծնելիության, մահացության և միգրացիայի բնույթից: Ժողովրդագրական իրավիճակը աշխարհի բոլոր պետությունների կառավարությունների ուշադրության կենտրոնում է:

Հատկապես դեպոպուլյացիայով *(բնակչության թվաքանակի նվազում)* պայմանավորված վերջին տարիներին աշխարհում ավելի ու ավելի է բարձրաձայնվում ժողովրդագրական անվտանգության հարցը, քանի որ նա ազգային անվտանգության կարևորագույն տարրերից է և ընդգրկում է հասարակության կենսագործունեության բոլոր բնագավառները: Պատահական չէ, որ աշխարհի մեծ թվով պետություններ արդեն ակտիվորեն ներգրավված են ժողովրդագրական անվտանգությունն ապահովող սկզբունքներն ու միգրացիաները կարգավորող օրենքների մշակմանն ուղղված աշխատանքներում:

Ազգային անվտանգության և ազգային զարգացման ռազմավարության մեջ ժողովրդագրական անվտանգության ընդգրկումը նոր երևույթ չէ: Դեռ մի քանի դար առաջ ֆրանսիացի ռազմական ինժեներ մարշալ *Սեբաստիեն*

դե Վոբանն (1633–1707) իր «Թագավորական տասանորդի նախագիծը» գրքում հիմնավորել է, որ թագավորների մեծությունն ուղղակիորեն կախված է նրանց հպատակների թվից, որոնք ապահովում են ցանկացած պետության ուժը, հարստությունը և բարեկեցությունը: Անհիմն չէ ֆրանսիացի ժողովրդագիր *Ալֆրեդ Սովիի (1898–1990)* այն պնդումը, թե բնակչության հիմնախնդիրներն այնքան կարևոր են, որ դրանց գոյությունը ժխտողը դաժանորեն վճարում է դրա համար[1]: Ժամանակին Մ. Լոմոնոսովն ասել է, որ «ռուսական պետության հզորությունը կաճի ոչ միայն տարածքի ընդլայնման, այլև այն բնակեցնող ժողովուրդների թվաքանակի աճման շնորհիվ»[2]:

Ժողովրդագրական անվտանգությունը չի կորցրել իր արդիականությունը նաև 21-րդ դարում, ինչը պայմանավորված է մի շարք գործոններով: Մոլորակի պետությունների մեծ մասում նկատվում է հասարակության սոցիալ-տնտեսական զարգացման վրա ժողովրդագրական բաղադրիչների ազդեցության դերի աճում և ամրապնդում (գերազանցապես՝ բացասական): Հետևաբար այդ պետությունների կառավարություններն ստիպված են լուծելու լայն սպեկտրով ժողովրդագրական պրոբլեմներ, որոնք հասել են ազգային անվտանգության հիմնախնդիրների կարգավիճակի: Ստեղծված պայմաններում ակնհայտ է, որ ժողովրդագրական, իսկ լայն իմաստով՝ ազգային անվտանգության ապահովումը հնարավոր է միայն գոյություն ունեցող իրավիճակի համապատասխան գնահատականի հիման վրա: Տվյալ խնդրի լուծման գործում կարևոր դերերից մեկը պատկանում է վիճակագրությանը, որը տվյալների հավաքման, մշակման և վերլուծության հատուկ մեթոդների կիրառմամբ ի վիճակի է քանակապես բնութագրելու ժողովրդագրական անվտանգության բազմազան մոտեցումները:

Որպեսզի մանրամասնորեն և համակողմանիորեն պարզաբանվի **«ժողովրդագրական անվտանգությունը»**, առաջին հերթին անհրաժեշտ է ուսումնասիրել հենց անվտանգությունը: **«Անվտանգություն»** հասկացությունը բարդ կատեգորիա է և ենթադրում է ոչ միայն օբյեկտի նորմալ վիճակի պաշտպանություն դրա վրա ազդող գործոններից, որոնք վտանգում են կենսագործունեությունը, այլև այդ նորմալ վիճակի վերականգնում[3]: Պետության անվտանգության բնութագրման համար օգտագործվում է **«ազգային անվտանգություն»** հասկացությունը, որը գիտական գրականությունում մեկնաբանվում է որպես «սոցիալական համակարգերի, սուբյեկտների, անհատների, պետական հաստատությունների միջև հասարա-

[1] Տես *М. В. Карманов, О. В. Кучмаева, О. Л. Петрякова.* Демографическая безопасность: теория, методология, оценка. «Экономика, статистика и информатика», 2015, № 4:

[2] Տես նույն տեղում:

[3] Տես *Մ. Ֆահրադյան,* ժողովրդագրական անվտանգության գնահատման վիճակագրական ցուցանիշների համակարգը և դրա կարգավորման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում: «Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի», 2017, հմ. 3:

կական հարաբերությունների համակարգի վիճակ»[4]: Ըստ *Դ.Պոգորելիի, Վ.Ֆեսենկոյի, Կ. Ֆիլիպովի՝ «Ազգային անվտանգությունը քաղաքական գիտության կատեգորիա է, որը բնութագրում է սոցիալական հաստատությունների վիճակը և ապահովում է դրանց արդյունավետ գործունեությունը»*[5]:

Ազգային անվտանգությունն իր մեջ ներառում է *ժողովրդագրական, տնտեսական, սոցիալական, քաղաքական, ռազմական, հոգևոր-մշակութային, տեղեկատվական և այլ տեսակների անվտանգության համալիրը,* որոնցից մեր տարածաշրջանի համար հենակետային են **ժողովրդագրականը, ռազմականը և տնտեսականը**:

ժողովրդագրական անվտանգությունը կարող է ներկայացվել որպես ժողովրդագրական գործընթացների այն վիճակը, որը բավարար է բնական ճանապարհով (առանց արտաքին գործոնների էական ազդեցության) պետության աշխարհաքաղաքական շահերի հաշվառմամբ նրան մարդկային ռեսուրսներով ապահովելու համար[6]: Այն հասկացվում է որպես «կենսընթացների և մարդկանց սերունդների անդադար բնական վերականգնման ապահովվածություն»[7]: **ժողովրդագրական անվտանգությունը իրական և տեսականորեն հնարավոր սպառնալիքներից կենսական նշանակություն ունեցող ժողովրդագրական գործընթացների պաշտպանվածության վիճակն է:** Կենսական նշանակության ժողովրդագրական գործընթացներ ասելով հասկանում ենք այն գործընթացները, որոնք կապված են մարդու գոյության հետ և արտացոլում են դրա որակն ու կենսագործունեության մակարդակը: Այդպիսիք են՝ վերարտադրությունը, որը բնակչության շարժի երեք տեսակների ամբողջությունն է՝ *բնական* (ծնելիություն, մահ, ամուսնություն, ամուսնալուծություն), *տարածական* (միգրացիա), *սոցիալական* (սոցիալական կառուցվածքի փոփոխություն), ինչպես նաև բնակչության որակական հատկանիշների վրա (ֆիզիկական, հոգեկան, սոցիալական առողջություն) ազդող գործընթացները**:**

ժողովրդագրական սպառնալիքները երևույթներ և միտումներ են, որոնց առաջացման և զարգացման հետևանքով բնակչության զարգացման գործում տեղի են ունենում բացասական քանակական և որակական փոփոխություններ, որոնք էլ խաթարում են պետության կայուն զարգացումը:

Ընդհանրացնելով ասվածը՝ կարող ենք նշել, որ **ժողովրդագրական անվտանգությունը արտաքին և ներքին ժողովրդագրական սպառնալիքներից**

---

[4] Տես «Безопасность национальная». «Социология: Энциклопедия». Под. ред. *А. А. Грицанова.* Минск, 2003 (http://sociology.niv.ru/doc/encyclopedia/sociological/articles/467/bezopasnost-nacionalnaya.htm):

[5] Տես *Д. Е. Погорелый, В. Ю. Фесенко, К. В. Филиппов*. Политологический словарь-справочник. Ростов-на-Дону, 2008, с. 215:

[6] Տես «Миграция и национальная безопасность». Научная серия: «Международная миграция населения: Россия и современный мир», вып. 11. М., 2003, с. 15:

[7] Տես «Геополитика и национальная безопасность». Словарь основных понятий и определений. М., 1999, с. 54:

հասարակության սոցիալ-տնտեսական զարգացման պաշտպանվածությունն է, որով նվազագույնը ապահովվում է պետության աշխարհաքաղաքական, էթնիկական և տնտեսական կարգավիճակի պահպանումը[8]:

Ժողովրդագրական անվտանգությունը դրսևորվում է «արտաքին օբյեկտների» հետ բնակչության փոխգործության, շրջակա աշխարհին նրա հարմարվողականության, գոյատևման, վերարտադրման, իր կարիքների բավարարման միջոցով: Միևնույն ժամանակ, մարդուն և՛ որպես կենսաբանական, և՛ որպես սոցիալական էակի դիտարկելու դեպքում կարելի է առանձնացնել 6 խումբ ցուցանիշներ, որոնք արտացոլում են ժողովրդագրական անվտանգության համակարգը և միջավայրը[9]:

Բնակչության կյանքի որակի ցուցանիշներն ընդգրկում են բնակչության վերարտադրության, ժողովրդագրական կառուցվածքի, հիվանդությունների ցուցանիշները, առողջապահության համակարգի վիճակը, կրթության մակարդակը և մշակույթը:

Բնակչության բարեկեցության մակարդակի ցուցանիշներն ընդգրկում են կյանքի մակարդակի ցուցանիշները և արտացոլում են նրա նյութական ու հոգևոր բավարարվածության աստիճանը:

Տնտեսական զարգացման ցուցանիշները բնութագրում են տնտեսության ճյուղային կառուցվածքը, աշխատանքի շուկայի վիճակը:

Սոցիալական ոլորտում ռիսկերի ցուցանիշներն արտացոլում են աշխատանքային պայմանների մակարդակը, վիճակը և սոցիալական բնույթի հիվանդությունները:

Շրջակա միջավայրի որակի ցուցանիշներն ընդհանրացնում են օդային տարածության, հողերի և ջրի աղտոտվածության տվյալները:

Բնակլիմայական ցուցանիշները բնութագրվում են բնահումքային ռեսուրսների կազմով ու ծավալներով, կլիմայով:

Ժողովրդագրական անվտանգության հիմնախնդիրների ուսումնասիրումը ներառում է ժողովրդագրական անվտանգության դեմ ուղղված այն առկա և հնարավոր սպառնալիքների բնութագիրը, որոնք հանդես են գալիս որպես սոցիալ-տնտեսական պայմանների ու գործոնների ամբողջություն և վտանգներ են ստեղծում կյանքի կարևոր ժողովրդագրական գործընթացների համար:

Ժողովրդագրական անվտանգության ռեալ սպառնալիքներից է բնակչության թվաքանակի նվազումը՝ դեպոպուլյացիան, որը սերունդների պարզ փոխարինումը չապահովող, մի կողմից, ցածր մակարդակի ծնելիության, մյուս կողմից՝ կործանարար բարձր մակարդակի մահացության հետևանք է:

---

[8] Տես *Մ. Վ. Կարմանով, Օ. Վ. Կուչմաևա, Օ. Լ. Պետրյակովա,* Նշ. աշխ.:

[9] Տես *Օ. И. Бантикова.* Демографическое состояние как реальная и потенциальная угроза устойчивому развитию общества. «Взаимодействие реального и финансового секторов в трансформационной экономике». Материалы Всероссийской научно-практической конференции. Оренбург, 2006, сс. 92–97:

Յուրաքանչյուր պետության ժողովրդագրական անվտանգության վրա ազդում են հետևյալ հիմնական գործոնները.

1. պատմական առանձնահատկությունները,
2. աշխարհագրական և տնտեսական դիրքը,
3. ռեսուրսային բազան,
4. ներքին և արտաքին կապերը,
5. կրթությունը և առողջապահությունը,
6. պետության առանձին մասերում տեղի ունեցող իրադարձություններն ու տիրող իրավիճակը:

Ժողովրդագրական անվտանգության ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ամբողջականորեն և խորապես հետազոտելու ժողովրդագրական գործընթացները, պարզելու դրանց միտումներն ու առանձնահատկությունները, բացասական երևույթների ու գործընթացների ծագման, ժողովրդագրական անվտանգության մակարդակի նվազման պատճառները:

Ժողովրդագրական անվտանգության հասկացության նկատմամբ հիմնական մոտեցումները գործիքային և արժեքային մոտեցումներն են: *Գործիքային* մոտեցման դեպքում ժողովրդագրական գործընթացները գնահատվում են տնտեսական, սոցիալական, քաղաքական, ռազմական բնույթի խնդիրների լուծման գործում դրանց ունեցած դերի տեսակետից, երբ այն դիտվում է որպես ռազմավարական նպատակներին հասնելու միջոց, գործիք: Օրինակ՝ Հայաստանի Հանրապետությունում բնակչության թվաքանակի նվազման անթույլատրելիությունը՝ որպես ժողովրդագրության զարգացման ռազմավարական ուղղություն, պետք է բխի այն բանից, որ մենք գտնվում ենք բարդ տարածաշրջանում, փաստացի չհայտարարված պատերազմի վիճակում, ուստի և կարիք կա կազմավորելու ինչպես հզոր բանակ, այնպես էլ ուժեղ, ռազմականորեն կրթված ու մարտունակ պահեստազոր, անհրաժեշտաբար ունենալու կայուն և զարգացած տնտեսություն՝ իր հմուտ ու բանիմաց աշխատանքային ռեսուրսներով: Սա Հայաստանի Հանրապետության համար առավել կարևոր ռազմավարական խնդիրներից է, որը բխում է տարածաշրջանում ձևավորված աշխարհաքաղաքական ու ռազմաքաղաքական իրավիճակից: Այստեղ խոսքը, կարծես, այլ տեսակի անվտանգության մասին է, որն ապահովվում է ժողովրդագրական գործընթացներով:

Ժողովրդագրական անվտանգության նկատմամբ երկրորդ մոտեցումը ենթադրում է մարդկանց, մարդկային ռեսուրսների՝ որպես բարձրագույն արժեքի պահպանումը և զարգացումը: Ժողովրդագրական անվտանգությունը հասկացվում է որպես կյանքի և մարդկանց սերունդների անընդհատ բնական թարմացման գործընթացի պաշտպանվածություն, իսկ դրա ամրապնդումը կապվում է մարդկային կյանքի տևողության երկարաձգման, ժողովրդագրական վերարտադրության արդյունավետության մեծացման, ժողովրդագրական ազատության ընդլայնման հետ: Այս նպատակներին հասնելն ինքնին կարող է լինել ռազմավարական խնդիր:

Բնակչության վերարտադրության հիմնախնդիրներն զգալի դեր են խա-

ղում պետության տնտեսության, ներքին և արտաքին քաղաքականության, սոցիալական ոլորտներում, հատկապես, եթե պետությունը գտնվում է անցումային փուլում: Կենսական նշանակության ռազմավարական սոցիալ-տնտեսական խնդիրների լուծումները կարող են ապահովվել համապատասխան քանակաորակական հատկանիշներով օժտված մարդկային ռեսուրսների առկայության պարագայում: Այսպիսով՝ կարելի է փաստել, որ բնակչության ֆիզիկական, հոգեկան, բարոյական և նյութական վիճակը տնտեսության կայուն զարգացման հիմքն է: Մյուս կողմից՝ չլուծված ժողովրդագրական հիմնախնդիրները ծայրաստիճան սրում են սոցիալ-տնտեսական իրավիճակը, խոչընդոտում տնտեսության հետագա զարգացմանը:



Նկ. 1. Ժողովրդագրական անվտանգության փոխադարձ կապը ազգային անվտանգության մյուս բաղադրիչների հետ

Պետության ժողովրդագրական անվտանգության դեմ ուղղված առավել կարևոր սպառնալիքներ հարուցող ոլորտներն են.

1. **բնակչության թվաքանակը՝**
   - դեպոպուլյացիան՝ բնակչության թվաքանակի նվազումը (չնայած որոշ պետություններ վարում են իրենց բնակչության թվաքանակի պահպանման կամ կրճատման քաղաքականություն),
   - բնակչության թվաքանակի էական աճումը (թեև մի շարք պետություններ վարում են բնակչության թվաքանակի աճը խրախուսելու քաղաքականություն),
   - պետության ամբողջ բնակչության կազմում անցանկալի մասնաբաժնի փոփոխությունը,
   - բնակչության փոքր կամ մեծ խտությունը,
2. **բնակչության տեղաբաշխումը՝**
   - բնակչության տեղաբաշխման անհամաչափությունը,
   - բնակչության փաստացի տեղաբաշխման և պետության սոցիալ-

տնտեսական զարգացման ռազմավարական նպատակների անհամապատասխանությունը,

3. **բնակչության կառուցվածքը՝**
   - բնակչության ծերացումը,
   - սեռային կազմի անհամամասնությունը,
   - ամուսնական-ընտանեկան կազմի բացասական փոփոխությունները,
   - բնակչության էթնիկական, ազգային, կրոնական, ռասայական կազմի ձևափոխումը,
4. **բնակչության բնական շարժը՝**
   - բնակչության ցածր կամ չափազանց բարձր մակարդակի ծնելիությունը,
   - բնակչության բարձր մակարդակի մահացությունը,
   - բնակչության բացասական բնական աճը (այսինքն՝ նվազումը),
   - ամուսնությունների ինտենսիվության նվազումը,
   - ամուսնալուծությունների ինտենսիվության ավելացումը,
   - ընտանիքի հաստատության քայքայումը,
5. **բնակչության միգրացիոն տեղաշարժերը՝**
   - երկրից մեկնողների թվաքանակը,
   - միգրանտների մեծ հոսքը,
   - ոչ օրինական միգրանտների հոսքը,
   - միգրացիայի բացասական գործակիցը,
   - ներքին միգրացիոն հոսքերը, որոնք չեն համապատասխանում պետության սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարական նպատակներին,
6. **բնակչության վերարտադրությունը՝**
   - նեղացված վերարտադրությունը,
   - չափից շատ ընդլայնված վերարտադրությունը,
   - կյանքի ցածր միջին տևողությունը,
   - մահացության պատճառով բնակչության մեծ կորուստները:

Ժողովրդագրական անվտանգությունը բնութագրելու համար կան բազմաթիվ ցուցանիշներ, որոնցից առավել կարևոր են հետևյալները.

1. **Ծնելիության գումարային գործակիցը** կամ **պտղաբերության գործակիցը,** որը մեկ կնոջ ծննդաբերած երեխաների միջին թիվն է[10]: Դա ժողովրդագրական շարժընթացի գնահատման համար բավարար տեղեկույթ է: Տվյալ պահին կյանքի սպասվող տևողության և առկա սեռատարիքային կառուցվածքի պայմաններում բնակչության վերարտադրության ապահովման համար այդ ցուցանիշի սահմանային շեմը պետք է հավասար լինի 2,14-ի, որից ցածր արժեքների դեպքում հաստատվում է նեղ վերարտադրության ռեժիմը, երբ յուրաքանչյուր հաջորդ սերնդի թվաքանակն ավելի քիչ է, քան նախորդինը: Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության իրական ժողովրդագրական վտանգներից է ցածր մակարդակի ծնելիութ-

[10] Տես *Մ. Մանասյան,* Բնակչության աշխարհագրություն: Ե., 2011, էջ 46:

յունը, որը չի ապահովում բնակչության պարզ վերարտադրություն: Հանրապետությունում ծնելիության գումարային գործակիցը 1990 թ. 2,62-ից նվազել է՝ 2015 թ. հասնելով 1,65-ի: Այսպիսով՝ 2015 թ. ծնված երեխաների թիվը կազմել է 43,0 հազար, կամ 1990 թ. արժեքի 54 %-ը:

Ծնելիության (ծննդի) ընդհանուր գործակիցը* նշված ժամանակաշրջանում 22,5 ‰-ից նվազել է մինչև 13,9 ‰-ի[12]: Նման երևույթը գնահատվում է որպես կրիտիկական, քանի որ հետագա տարիներին հանգեցնելու է բնակչության «մահացության գործընթացի»: Ծնելիությունը շարունակում է նվազել. 2016 թ. Հայաստանում ծնվել է 40,6 հազար, 2017 թ.՝ 37,7 հազար, 2018 թ.՝ 36 հազար 502 երեխա: Ծնունդների թվաքանակի նվազումը, որն առաջ է բերում ժողովրդագրական ճգնաժամ, հանգեցնում է աշխատունակ տարիքի բնակչության նվազման, ինչը լուրջ մարտահրավեր է ապագայում աշխատուժի պահպանման և աճի համար: Նույնիսկ ՄԱԿ-ի լավատեսական կանխատեսումների համաձայն՝ 2050 թ. Հայաստանի բնակչության շուրջ 40 %-ը կազմելու են տարեցները: ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի ներկայացմամբ՝ «եթե 1990 թ. Հայաստանում 11 հոգի աշխատում էր, որպեսզի պետությունը 1 հոգի չաշխատող պահեր, 2010 թ. 6 հոգի էր աշխատում՝ 1 հոգի պահելու համար, ապա 2050 թ. 1,6 հոգին պետք է պահի 1 հոգու: Այսինքն՝ սոցիալ-տնտեսական բեռը, որը նստելու է պետության և բնակչության ուսերին, մոտ տասն անգամ ավելանալու է»[13]: Այստեղ տեղին է հիշատակել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի այն հայտարարությունը, թե Հայաստանի Հանրապետությունը 2050 թ. պետք է ունենա 5 մլն բնակչություն: Ուստի, ներկայիս ժողովրդագրական գործընթացների ու զարգացման միտումների հաշվառմամբ, անհրաժեշտ են կտրուկ ողջամիտ քայլեր, որոնց շնորհիվ հնարավոր կլինի կյանքի կոչել Վարչապետի ցանկությունը:

2. Միգրացիայի արդյունավետության գործակիցը, որը ծնելիության կայուն նվազման պայմաններում ձեռք է բերել մեծ նշանակություն: Ժամանող միգրանտներն ապահովում են բնակչության թվաքանակի ընդհանուր աճը: Այդ պատճառով իմիգրանտների գերակշռությունը էմիգրանտների նկատմամբ ժողովրդագրական անվտանգության կարևոր բաղադրիչն է: Այստեղ կարևոր ցուցանիշ է նաև ընդհանուր միգրացիայի կազմում ոչ օրինական միգրանտների մասնաբաժինը: Մեր երկրում ժողովրդագրական, ասել է թե ազգային անվտանգության իրական, սպառնալիքներից են հանրապետության քաղաքների և գյուղերի միջև ներքին միգրացիոն հոսքերի

* Ծնելիության կամ ծննդի ընդհանուր գործակիցը հաշվարկվում է որպես տվյալ տարում գրանցված կենդանածին երեխաների թվի և բնակչության միջին տարեկան թվի հարաբերությամբ՝ արտահայտված պրոմիլներով (տես նույն տեղում, էջ 45):

[12] Տես «Աշխարհը թվերով ու փաստերով. տեղեկատու»: Կազմեցին՝ Մ. Ա. Գրիգորյան, Ս. Ա. Սուջյան: Ե., 2018, էջ 54:

[13] Տես «Հայաստանի դեմոգրաֆիական ճգնաժամը», 05.05.2018 (https://ampop.am/demographic-crisis-in-armenia/), *նաև*՝ «Միգրացիա, ծնելիություն, ծերացում. որո՞նք են լուծումները»: «CIVILNET», 24.07.2014 (https://www.civilnet.am/news/2014/07/24/c-academy-unfpa-garik-hayrapetyan-img_0231-6/236705):

անհամամասնությունները, ինչպես նաև արտաքին միգրացիայի մեծ ինտենսիվությունը, անօրինական միգրացիայի ծավալների աճման միտումները: Այս ամենի հետևանքով ՀՀ բնակչությունը նվազում է ոչ միայն առանձին տարածքներում (առանձնակի նվազել է սահմանամերձ, բարձրլեռնային գոտիներում, ինչպես նաև 1988 թ. երկրաշարժից հետո ձևակերպում ստացած «Աղետի գոտում»), այլև ամբողջ երկրի մասշտաբով: Այսպես. պաշտոնական տվյալներով հանրապետության բնակչության թիվը 2015 թվականին, 1992 թ. համեմատությամբ, նվազել է շուրջ 634,7 հազար մարդով, այսինքն՝ բնակչության հավելաճը միշտ ունեցել է տարեկան նվազման միտում այն դեպքում, երբ բնակչության բնական հավելաճը կազմել է 401,7 հազար մարդ: 2015 թ. Հայաստանի Հանրապետությունում միգրացիոն սալդոն ունեցել է բացասական ցուցանիշ՝ – 5,8 ‰[14]: Փաստորեն, հանրապետության բնակչությունը նշված ժամանակաշրջանում նվազել է ավելի քան մեկ միլիոնով, ինչը հիմնականում պայմանավորված է արտաքին միգրացիայի մեծ ինտենսիվությամբ: Այս խնդրի կարգավորման համար հանրապետությունում պետք է ձեռնարկվի ակտիվ միգրացիոն քաղաքականություն:

3. Միայնակ ծնողների ընտանիքների մասնաբաժինը և ընտանիքի հաստատության ամրապնդումը, քանի որ ազգային անվտանգության դեմ ուղղված իրական սպառնալիքներից են ընտանիքներում երեխա ունենալու ձգտումների և ընտանիքի կառուցվածքի փոփոխությունները: Կարևորագույն հիմնախնդիրներից է ընտանիքի անդամների պլանավորումը: Ներկայումս ընտանիքի հաստատությունն աշխարհում ապրում է լուրջ ճգնաժամ, որն սկսվել է դեռ 20-րդ դարի կեսերին: Այն բնութագրվում է ամուսնությունների նվազող թվաքանակով, անկայուն ընտանիքներով, ամուսնալուծությունների թվաքանակի աճմամբ, ոչ լիարժեք, ոչ ամբողջական, ոչ բարեկեցիկ ընտանիքների մասնաբաժնի աճմամբ, իսկ 21-րդ դարում նաև՝ միասեռ ամուսնությունների օրինականացմամբ: Նման ընտանիքներում երեխաների ծնունդների հավանականությունը շատ փոքր է, ինչը հնարավորություն չի տալիս ապահովելու նույնիսկ բնակչության պարզ վերարտադրությունը: Երբ այդ ընտանիքների տեսակարար կշիռը կգերազանցի ընդհանուր թվաքանակի 1/3-ը, դա ժողովրդագրական զարգացման համար կլինի ծայրաստիճան վտանգավոր:

4. Կյանքի սպասվող միջին տևողությունը, որը պետության սոցիալ-ժողովրդագրական զարգացման որոշիչ պարամետրներից է, քանի որ շատ դեպքերում կախված է կյանքի որակից և մակարդակից: Այն համարվում է տնտեսական և սոցիալական անվտանգության ցուցանիշ: Միևնույն ժամանակ, բնակչության կյանքի միջին մեծ տևողությունը նպաստում է աշխատանքային երկարակեցության և բնակչության տնտեսական ակտիվության մակարդակների բարձրացմանը, հետևաբար՝ ներքին համախառն արտադրանքի աճին: Սակայն հարկ է նշել, որ Աշխատանքի միջազգային կազմակերպության ձևակերպմամբ՝ տնտեսապես ակտիվ բնակչությունը 14–72

[14] Տես «Աշխարհը թվերով ու փաստերով. տեղեկատու», էջ 57:

տարեկան մարդիկ են: Դրա հետ մեկտեղ զարգացած պետություններում բնակչության առողջության մակարդակը գնահատելու համար վիճակագրական ցուցանիշների համակարգում օգտագործվում են կյանքի սպասվելիք միջին տևողության տվյալները: Հանրապետությունում հետագա տարիներին ծննդի ինտենսիվության մակարդակի նվազումը, ինչպես նաև բնակչության ծերացման արագացումը, հիվանդացությունների կառուցվածքային փոփոխությունները չեն նպաստելու առաջիկա կյանքի միջին տևողության մեծացմանը՝ նույնիսկ, եթե հաշվի առնենք բժշկական գիտության զարգացման հեռանկարային միտումները: 2012 թ. դրությամբ մեր երկրում կյանքի սպասվող միջին տևողությունը կազմել է 72,93 տարի[15]: Աշխարհում ամենաբարձր ցուցանիշներն արձանագրվել են Մոնակոյում՝ 89,73 տարի, Սան Մարինոյում՝ 83,01, Անդորրայում՝ 82,43, Ճապոնիայում՝ 82,34, Սինգապուրում՝ 82,14, Ավստրալիայում՝ 81,81, Իտալիայում՝ 81,77, Ֆրանսիայում՝ 81,50 տարի և այլն: Կյանքի ամենանվազ սպասվող տևողություն ունեցել են Էսվաթինին՝ 33,32 տարի, Անգոլան՝ 38,20, Զամբիան՝ 38,64, Լեսոտոն՝ 40,38, Մոզամբիկը՝ 41,18 տարի և այլն[16]:

5. 60–65 տարեկան և բարձր տարիքի բնակչության մասնաբաժինը, քանի որ գրեթե բոլոր զարգացած երկրներում տեղի է ունենում բնակչության ծերացում, ինչը պայմանավորված է ժողովրդագրական գործընթացներով: Ֆրանսիացի հետազոտող Ժակլին Բոժիե-Գառնիեն և լեհ ժողովրդագիր Էդվարդ Ռոսետը 20-րդ դարի կեսերին մշակել են բնակչության ծերացման մի սանդղակ, որում հաշվի էր առնվում 60 տարեկանից բարձր բնակչության բաժինը, սակայն այն աստիճանաբար կորցնում է իր արդիականությունը, քանի որ, ըստ այդ սանդղակի՝ զարգացած երկրների մեծ մասում դիտվում է բնակչության ծերացման շատ բարձր մակարդակ (60 տարեկան և բարձր բնակչության տեսակարար կշիռը 18 և ավելի տոկոս է): 2015 թ. բնակչության կազմում այդ տարիքի ամենաբարձր տեսակարար կշիռ ունեցել են Ճապոնիան (40,9 %), Իտալիան (35,4 %), Հունաստանը (33,4 %), Գերմանիան (33,3 %), Պորտուգալիան (33,0 %): Ամենացածր ցուցանիշներ արձանագրվել են ԱՄԷ-ում (2,4 %), Կատարում (2,4 %), Նաուրուում (2,5 %), Քուվեյթում (3,6 %), Գամբիայում (3,9 %) և այլն: Հայաստանի Հանրապետությունում այդ ցուցանիշը կազմել է 19,2 %[17]: Ըստ ՄԱԿ-ի՝ ծերության շեմը 65 տարեկանն է, և բնակչությունը ծեր է համարվում, եթե 65 և ավելի տարիքի բնակչության տեսակարար կշիռը կազմում է 7 և ավելի տոկոս: Զարգացող և տնտեսապես հետամնաց երկրները, ընդհակառակը, բնութագրվում են բնակչության մեջ անչափահասների մեծ տեսակարար կշռով: 2015 թ. նրանք կազմում էին Նիգերում՝ 51 %, Ուգանդայում, Անգոլայում, Չադում, Մալիում՝ 48 %, Սոմալիում՝ 47 %, Գամբիայում, Կոնգոյի ԺՀ-ում, Զամբիայում, Բուրկինա Ֆասոյում՝ 46 %, Մոզամբիկում, Մալավիում, Տան-

[15] Տես նույն տեղում, էջ 65:

[16] Տես նույն տեղում, էջ 64–65:

[17] Տես նույն տեղում, էջ 49-50:

զանիայում՝ 45 %: Փոխարենը ամենացածր ցուցանիշներն ունեն Գերմանիան, Ճապոնիան, Չինաստանը՝ 13 %, Բոսնիա և Հերցեգովինան, Իտալիան, ԱՄԷ-ն, Հարավային Կորեան, Բուլղարիան, Պորտուգալիան, Ավստրիան՝ 14 %: Հայաստանում այդ ցուցանիշը 18,4 % է:

6. Պաշտոնապես չամուսնացած կանանցից ծնված երեխաների տեսակարար կշիռը, որը թեև այսօր դեռ իր ցուցանիշներով աղետալի չէ, սակայն կարևոր է, քանի որ արտահայտում է տվյալ երկրում ընտանիքի հաստատության վիճակը: Այդ երևույթի աճը նկատելի է հատկապես զարգացած երկրներում, սակայն ընդհանուր առմամբ պաշտոնապես ամուսնացած կանանցից ծնվող երեխաների թիվը 1,5-2 անգամ գերազանցում է ապօրինի ծնվածներին: Եթե գա մի այնպիսի պահ, երբ արտամուսնական կապերից ծնված երեխաների թիվը կլինի ավելի մեծ, քան ընտանիքում ծնվածներինը, իսկ այդ աճումը կլինի օրինաչափություն, ապա պետք կլինի խոսել ընտանիքի հաստատության անդառնալի ճգնաժամի մասին, որն անմիջապես կանդրադառնա պետության սոցիալական կայունության վրա և կվերաճի ազգային ու ժողովրդագրական անվտանգության համար լուրջ սպառնալիքի:

7. Բնակչության մահացությունը, որը բնական աճի կարևոր ցուցանիշներից է: Բնակչության տարիքային բուրգի կանխատեսման հիման վրա բացահայտվել են մահացության բարձրացման միտումները, ընդսմին ենթադրվել է, որ հասարակության կազմում կաճի տարիքավորների թիվը: Մահացության ցուցանիշները տարբեր ժամանակաշրջաններում եղել են տարբեր, իսկ վերջին տարիներին մահացության հարաբերական տոկոսը մեծացել է: Հայաստանում մահացության ցուցանիշը 1985 թ. կազմել է 5,9 ‰, 1990 թ.՝ 6,2 ‰, 1995 թ.՝ 6,6 ‰, 2000 թ.՝ 6,3 ‰, 2005 թ.՝ 8,2 ‰, 2015 թ.՝ 9,3 ‰[18]: Ադրբեջանում 2015 թ. այդ ցուցանիշը եղել է 7,1 ‰, Թուրքիայում և Իրանում՝ 5,9 ‰, Վրաստանում՝ 10,8 ‰[19]:

8. Ծնունդների, աբորտների և մանկամահացության վիճակագրությունը, որը կարևոր ցուցանիշ է, քանի որ արտացոլում է աբորտների հաճախականությունը, ինչպես նաև ծնունդների և աբորտների հարաբերակցությունը: Ցածր մակարդակի ծնելիության պարագայում նկատվում է հղիության ընդհատման թվի աճ: Հղիության ընդհատումը ընտանիքի պլանավորման հիմնական մեթոդներից է: Դրա թվի մեծացումը բացասաբար է անդրադառնում ոչ միայն բնակչության վերարտադրության ինտենսիվության, այլև կանանց վերարտադրողական առողջության վրա: Զարգացած երկրներում այն երբեմն աղետալի է, իսկ զարգացող երկրների համար լրջագույն խնդիր է հատկապես մինչև 1 տարեկան երեխաների մահացության բարձր ցուցանիշները (Աֆղանստան՝ 117,2 երեխա յուրաքանչյուր 1000 ծնվածից, Մալի՝ 104,3, Սոմալի՝ 100,1, ԿԱՀ՝ 92,9, Գվինեա-Բիսսաու՝ 90,9, Չադ՝ 90,3 և այլն:

[18] Տես նույն տեղում, էջ 54:

[19] Տես «Список стран по уровню смертности». «NONEWS» (https://nonews.co/directory/lists/countries/death):

Հայաստանի Հանրապետությունում այն կազմել է 13,97 երեխա, 2014 թ. դրությամբ)[20]:

Վերը նշվածի հաշվառմամբ ժողովրդագրական անվտանգության ազգային ծրագրերը պետք է ներառեն հետևյալ միջոցառումները.

1. *ռեալ և հնարավոր ժողովրդագրական սպառնալիքների գնահատում,*
2. *սահմանված ժամկետում իրականացված ժողովրդագրական քաղաքականության ու ստեղծված ժողովրդագրական իրավիճակի բնութագրում և գնահատում,*
3. *բնակչության կենսամակարդակի բարձրացմանը, կյանքի միջին տևողության մեծացմանը և առողջության պահպանմանն ուղղված պետական քաղաքականության մշակում, ներառյալ՝*
   – առողջ ապրելակերպի ձևավորման և ինքնուրույն պաշտպանության գիտակցության զանգվածային քարոզչություն,
   – ալկոհոլի, թմրամիջոցների և այլ վնասակար միջոցների օգտագործման նվազեցմանն ուղղված քարոզչության ակտիվացում,
   – բնակչությանը հոգեբանահոգեբուժական օգնության ցուցաբերման համակարգի կատարելագործում,
   – նորածիններին և հղիներին տրամադրվող բուժօգնության որակի բարելավում,
   – հատուկ պայմաններում աշխատողների առողջության պահպանման համար գործատուների կողմից այդ պայմանների բարելավում,
   – բարձրորակ բուժսպասարկման համընդհանուր մատչելիության ապահովում, առողջապահական, կուրորտային, վերականգնողական, ռեկրեացիոն կենտրոնների կատարելագործում և մատչելիության աստիճանի բարձրացում,
4. *պետական ընտանեկան քաղաքականության մշակում և ներդրում, ներառյալ՝*
   – ընտանիքի հաստատության ամրապնդում,
   – բնակչության սոցիալապես խոցելի կարգախմբերի «մեծահասակներ, երեխաներ, հաշմանդամներ» սոցիալ-իրավական պաշտպանության համակարգի կատարելագործում,
   – աշխատանքային գործունեության և ընտանեկան պարտականությունների կատարման համատեղման համար պայմանների ստեղծում,
   – երեխաների դաստիարակության հարցում տղամարդկանց և կանանց իրավունքների ու պատասխանատվության հավասարության ապահովում,
   – ընտանեկան արժեքների քարոզում, լիարժեք և լիակատար բազմազավակ ընտանիքի կերպարի ձևավորում, քարոզում և արմատավորում,
   – սեռական դաստիարակություն և երիտասարդների նախապատրաստում ամուսնությանը,

[20] Տես «Աշխարհը թվերով ու փաստերով. տեղեկատու», էջ 63–64:

5. *կյանքի որակի և մակարդակի բարձրացման քաղաքականության մշակում և ներդրում, ներառյալ՝*
   - աշխատունակ բնակչության կյանքի մակարդակի ինքնապահովման համար պայմանների ստեղծում,
   - ծեր հասակում, աշխատունակության կորստի, հիվանդության, գործազրկության դեպքում քաղաքացիների սոցիալական ապահովում,
   - սակավ ապահովված քաղաքացիներին հասցեական սոցիալական օգնության տրամադրում,
   - քաղաքացիների բնակարանային խնդիրների լուծում,
   - բոլոր քաղաքացիներին կրթության, առողջապահության, մշակույթի, արվեստի, սպորտի և այլ բնագավառների ծառայությունների մատչելիության ապահովում,
   - ծեր բնակչության սոցիալական ակտիվության խրախուսում,
6. *միգրացիոն քաղաքականության մշակում և ներդրում, ներառյալ՝*
   - սոցիալ-տնտեսական պայմաններով, ժողովրդագրական իրավիճակով պայմանավորված միգրացիոն հոսքերի կարգավորում,
   - աշխատանքի ազգային շուկայի պաշտպանություն օտարերկրյա աշխատուժի չվերահսկվող ներհոսքից,
   - գիտատեխնիկական, մտավոր, ստեղծագործ կադրերի և ներուժի արտահոսքը կրճատելու համար շարժառիթների ստեղծում,
   - օտարերկրյա միգրացիոն ներուժի օգտագործում ի շահ պետության ժողովրդագրական զարգացման:

Պետության կենսունակության, սոցիալական հարմարավետության մակարդակի, իր ապագայի նկատմամբ բնակչության վստահության լավագույն վկայությունն է ժողովրդագրական իրադրությունը: Երեխա ունենալու ձըգտումը համարվում է ամենակարևոր ժողովրդագրական ցուցանիշը և արտահայտում է իր կյանքն ու տվյալ տարածքում իր ցեղի գոյությունը երկարաձգելու մարդու ցանկությունը: Այդ գործում հույժ մեծ է պետության դերը. որպեսզի տվյալ տարածքը լինի ապրելու համար հետաքրքրական, համապատասխան տնտեսական պայմաններ ստեղծելուց զատ պետք է ձևավորվեն անհրաժեշտ հոգևոր-գաղափարական մթնոլորտ ու բարենպաստ միջավայր:

ДЕМОГРАФИЧЕСКАЯ БЕЗОПАСНОСТЬ

ДЕМОГРАФИЧЕСКАЯ БЕЗОПАСНОСТЬ КАК ОБЪЕКТ ПОЛИТИКИ ГОСУДАРСТВА

С. А. СУДЖЯН, кандидат географических наук, полковник запаса, начальник Центра исследований истории военного искусства НИУО МО РА

РЕЗЮМЕ

На способность государства вести войну непосредственное влияние оказывают людские ресурсы данного государства, для эвальвации которых важное значение имеют демографические перспективные расчеты населения по возрасту и полу. В этом отношении логика геополитических реалий диктует необходимость уделения первоочередного внимания демографическим проблемам в контексте обеспечения национальной безопасности. Проблемы снижения рождаемости, роста смертности, изменения гендерно-возрастного состава населения и некоторые другие демографические проблемы приобретают бо́льшее значение в контексте демографической безопасности государства. Для эффективного решения демографических проблем необходимо осуществление ряда мероприятий, которые окажут непосредственное влияние на регулярную и обороноспособную армию государства, укрепление обороноспособности государства и обеспеченность государства мобилизационными ресурсами.

DEMOGRAPHIC SECURITY

DEMOGRAPHIC SECURITY AS THE OBJECT OF STATE POLICY

S. A. SUJYAN, PhD in Geography, Colonel (Ret.), Head, Center for Research on the History of Military Art

SUMMARY

The state’s ability to wage war is directly affected by the human resources of the given state, for the evaluation of which the demographic perspective age and gender estimates of the population are of key significance. In this respect, the logic of geopolitical realities dictates the need for giving priority to demographic problems in the context of ensuring national security. The problems of reduced birth rates, increased mortality, changes in the gender and age structure of the population, and some other demographic problems acquire more value in the context of the state demographic security. To effectively solve demographic problems it is necessary to implement a number of activities that will have a direct impact on the state’s regular and defense-capable army, as well as on strengthening the state’s defense capability and providing it with mobilization resources.

ԳԱԶԱԳԵՆԵՐԱՏՈՐԱՅԻՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԿԱՐԿՏԱՅԻՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ա. Ժ. ԽԱՉԱՏՐՅԱՆ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀԱՊՀ ֆիզիկայի ամբիոնի վարիչ,
Վ. Ն. ԱՂԱԲԵԿՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտի (ՖԿՊԱ) մոդուլյացիոն երևույթների լաբորատորիայի վարիչ, Ա. Ս. ՀԱԿՈԲՅԱՆ, ՖԿՊԱ Կարգավորված և չկարգավորված ծակոտկեն միջավայրների լաբորատորիայի ավագ ճարտարագետ,
Դ. Հ. ՄՈՍՈՅԱՆ, ՀԱՊՀ ռադիոտեխնիկայի ֆակուլտետի ռադիոտեխնիկական սարքերի ամբիոնի ասպիրանտ

Բոլոր պետությունները, անկախ իրենց հզորությունից, ենթարկվում են բնական ու մարդածին աղետների: Դրանց հետևանքներն առավել ծանր ու կորստաբեր են սուղ մարդկային, տարածքային, նյութական ու ֆինանսական ռեսուրսներ ունեցող փոքր պետությունների համար, ինչպիսին Հայաստանի Հանրապետությունն է, որն իր բնակլիմայական պայմանների բերումով գտնվում է կարկտավտանգ գոտում: Տարերային աղետների շարքում իր առավել մեծ տարածվածությամբ ու հաճախակիությամբ առանձնանում է կարկուտը, որը գերազանցապես վնաս է պատճառում պետության գյուղատնտեսական ոլորտին:

Այդ հետևանքով հանրապետության տնտեսությունը կրում է նյութական մեծ վնասներ, որը միայն բուսաբուծության ճյուղում հասնում է 15–20 մլրդ դրամի:

Շատ երկրներում մշակվում և կիրառվում են կարկտաբեր պրոցեսների վրա ազդելու տարբեր եղանակներ: Մթնոլորտային երևույթների նպատակաուղղված կերպափոխման պրոբլեմի լուծման գործում կարևոր տեղ է տրվում ամպերի վրա ակտիվ ներգործությամբ դրանց զարգացման բնականոն ընթացքի կարգավորմանը[1]: Այս մեթոդի առանձնահատկությունն այն է, որ պետք է լինում գործ ունենալ մի քանի տասնյակ խորանարդ կիլոմետրերի հասնող հսկայական ծավալների հետ, որոնց սահմաններով տեղի է ունենում շրջակա միջավայրի հետ զանգվածի և էներգիայի ինտենսիվ փոխանակում: Կարկտավտանգ ամպերի առաջացման էներգետիկան այնքան մեծ է, որ ըստ էության հնարավոր չէ դրանց նկատմամբ կիրարկել ուղղակի էներգետիկական ազդեցություն[2], ուստի և, կարկտային երևույթ-

[1] Տես *Ա. Մ. Боровиков, И. И. Гайворонский, В. В. Костарев, Е. Г. Зак, И. П. Мазин.* Физика облаков. Ленинград, 1961; *А. Деннис.* Изменение погоды засевом облаков. М., 1983:

[2] Տես *Ա. Մ. Բորովիկով, Ի. Ի. Գայվորոնսկի, Վ. Վ. Կոստարև, Ե. Գ. Զակ, Ի. Պ. Մազին,*

ների կանխումը պետք է հիմնված լինի ամպերի ձևավորման մեխանիզմների վրա ներգործության դինամիկական մեթոդների օգտագործման վրա, որպեսզի ոչ մեծ ակտիվ ֆիզիկական, քիմիական կամ մեխանիկական ներգործության միջոցով հնարավոր լինի մթնոլորտի անկայունության էներգիայի օգտագործմամբ շրջել ֆիզիկական պրոցեսների ընթացքը դեպի ամպերի քայքայում: Ամպերի վրա ներգործության տեխնոլոգիաների գիտական հիմքը ամպերի կարկտածին օջախներում տեղի ունեցող պրոցեսների բնական ընթացքի փոփոխումն է դրանց ֆազային ու կոլոիդային անկայունության իրացման միջոցով[3]: Դրա համար ամպի զարգացման շղթայում անհրաժեշտ է գտնել մի այնպիսի օղակ, որի վրա ներգործությունը կկանխի կարկտային կազմավորումների ձևավորումը և չի հանգեցնի համապատասխան տարածքում բնապահպանական իրադրության փոփոխման:

Գիտափորձաքննության են ենթարկվել կարկտավտանգ ամպերի վրա ներգործության նկատմամբ տարբեր մոտեցումներ, որոնք միմյանցից զանազանվում են ամպերի նկարագրության մոդելներով, դրանց որոշարկման եղանակներով, ներգործության ֆիզիկական սկզբունքներով, դրանց վրա ակտիվ ներգործության եղանակներով ու տեխնիկական միջոցներով: Կախված տեղական բնակլիմայական պայմաններից՝ կիրառվում են կարկտային երևույթների դեմ պայքարի տարբեր մեթոդներ՝ ավիացիոն, հրետանային, հրթիռային և վրագետնյա-գեներատորային եղանակները[4]:

Վերջին տարիներին աշխարհի տարբեր երկրներում կարկտային երևույթի դեմ պայքարելու համար սկսել են լայնորեն կիրառվել գազագեներատորային կայանքները[5] (ԳԳԿ), որոնցում կարկտավտանգ ամպերի վրա ներգործելու համար օգտագործվում են դրանցով առաջացված հզոր ձայնային ալիքները: Սակայն մինչ օրս դեռ չի կատարվել ամպերի վրա ձայնային ալիքների ներգործության աստիճանի գնահատում: Այս կապակցությամբ, կարկտավտանգ ամպերի վրա ԳԳԿ առաջացրած ձայնային ալիքի ներգործության քանակական գնահատականը ԳԳԿ կիրառման արդյունավետության գնահատման ամենակարևոր խնդիրն է:

Նշ. աշխ., *Г. К. Сулаквелидзе, Н. Ш. Бибилашвили, В. Ф. Лапчева.* Образование осадков и воздействие на градовые процессы. Л., 1965:

[3] Տես *Л. Г. Качурин.* Физические основы воздействия на атмосферные процессы. Экспериментальная физика атмосферы. Л., 1990, *Б. Д. Мейсон.* Физика облаков. Л., 1961:

[4] Տես *А. М. Абшаев, М. Т. Абшаев, М. В. Барекова, А. М. Малкарова.* Руководство по организации и проведению противоградовых работ. Нальчик, 2014; *Г. К. Сулаквелидзе.* Ливневые осадки и град. Л., 1967:

[5] Տես *А. А. Варданян, Г. А. Галечян, В. Г. Перепелкин, И. П. Чунчузов.* О генерации ударной волны в установке градовой защиты. «Журнал технической физики», 2011, т. 81, вып. 10; *Hermes U. Ramírez Sánchez.* Análisis sobre el ruido generado por las explosiones de los cañones antigranizo. Instituto de Astronomia y Meteorologia Universidad de Guadalajara. Mexico, 2006; *F. S. Escobar, M. A. Escobar, E. Ruiz.* Sistema de proteccion contra granizo. GEO Servicios Argentina, 2002:

ԳԳԿ առաջացրած ձայնային ալիքի բնութագրիչների որոշում և հաշվարկում

ԳԳԿ[6] գործողությունը պայմանավորված է ամպերում կարկտածին օջախների վրա դրանցով ստեղծված հարվածային ձայնային ալիքի (ՀՁԱ) ներգործությամբ: ՀՁԱ-ներն ստեղծվում են գազախցում գազերի այրման հետևանքով առաջացած գազային խառնուրդը ԳԳԿ ծայրափողակից գերձայնային արագությամբ մթնոլորտ արտանետելու շնորհիվ: Ծայրափողակից դուրս գալով՝ գազի հոսքը ճնշում է օդի հանդիպակաց շերտերը՝ ստեղծելով սեղմված օդի գոտի, որն ուղղագիծ շարժվում է դեպի վեր՝ գեներացնելով ՀՁԱ-ներ: ՀՁԱ-ների տարածման ժամանակ տեղի է ունենում մոլեկուլների մեխանիկական հետադարձ-առաջընթաց շարժում, որն ուղեկցվում է օդի սեղմմամբ և ընդարձակմամբ, ինչը հանգեցնում է ամպերում ջրի գոլորշիների մակարդմանը և կարկտավտանգ ամպերում զարգացող ապագա կարկտածին շրջաններում տեղումների առաջացման պրոցեսի արագացմանը[7]:

Այրված գազերի հոսքի՝ մինչև գերձայնային արագություններ թափառքի համար ԳԳԿ-ում կիրառվում է Լավալի ծայրափողակ: Դա փոփոխական հատույթով կոնային մակերևույթ ունեցող խողովակ է, որը կազմված է նեղացող և ելքի ընդարձակվող մասերից: Նեղացող մասում գազերի հոսքի արագությունն սկզբնական արժեքից բկանցքում աճում է մինչև ձայնի արագություն, իսկ ընդարձակվող մասում շարունակում է ևս աճել[8]:

Եթե ԳԳԿ խցիկում գազի այրման ընթացքում անջատված էներգիան համարենք հավասար 2.10^6 Ջ-ի[9], ապա դրա մի մասը, որը վերափոխվում է ծայրափողակից դուրս եկող գազի կինետիկ էներգիայի, հավասար կլինի 1,4. 10^6 Ջ-ի (Լավալի ծայրափողակի ՕԳԳ-ն մոտ 70 % է): $E_{կին}=mV^2/2$ արտահայտության հիման վրա, հաշվի առնելով, որ m = 0,65 կգ[10], մենք մթնոլորտ գազերի արտանետման արագության համար կստանանք՝ V= 2000 մ/վ:

Հաշվարկենք այն բարձրության արժեքը, որի դեպքում հարվածային ալիքը կփոխակերպվի ձայնայինի, այսինքն՝ ՀՁԱ-ի տարածման արագությունը կնվազի՝ հավասարվելով ձայնի արագության: Դիտարկենք էներգիական հավասարումը, որը նկարագրում է ԳԳԿ ծայրափողակից դուրս եկող

[6] Տես *Ա. Ա. Վարդանյան, Գ. Ա. Գալեչյան, Վ. Գ. Պերեպելկին, Ի. Պ. Չուչուգով,* Նշ. աշխ.:

[7] Տես *Т. В. Тулайкова, А. В. Мищенко, С. Р. Амирова.* Акустические дожди. М., 2010:

[8] Տես *А. И. Никифоров.* Термодинамика и теплопередача. Учебное пособие, ч. II: «Основы газовой динамики ГТД». СПб, 2014:

[9] Տես *А. Ж. Хачатрян, Г. Г. Суренян, А. В. Хоецян, В. Н. Агабекян, А. С. Акопян, Д. О. Мосоян.* Исследование эффективности применения газогенераторных станций в качестве инструмента борьбы с градовым явлением. «Вестник науки и образования», 2019, № 3 (57), ч. 1:

[10] Տես նույն տեղում:

գազի հոսքի շարժումը: Ընդունենք, որ այն տարածվում է միայն ուղղաձիգ ուղղությամբ: Անտեսելով կորուստները՝ կարող ենք համարել, որ ծայրափողակից դուրս եկող գազի E էներգիան ծախսվում է հետևյալ գործողությունների կատարման վրա. ծայրափողակի մարմնային անկյունով սահմանափակվող օդի ծավալի բարձրացում՝ *h* բարձրությամբ գազի հոսքի ճանապարհին հանդիպող օդի սեղմման ժամանակ առաջացնող առաձգականության ուժի հաղթահարում, այդ օդին շարժման *V* որոշակի արագության հաղորդում:

էներգիայի պահպանման օրենքի հաշվառմամբ կարող ենք գրել.

$$E = \frac{m(h)V^2}{2} + m(h)gh + P_0 h^3 \Delta\Omega\,, \qquad (1)$$

որտեղ *m(h)*-ը տվյալ ծավալով օդի զանգվածն է *h* բարձրության վրա, P_0-ն՝ օդի տեղափոխվող շերտի ներքին ճնշումը:

Դիցուք V=350 մ/վ, E=1,4·10^6 Ջ., P_0=130 մթն.[11], $\Delta\Omega$=1/36 ստեռադիան: *m(h)*-ը հաշվարկելով $m(h) = \rho\Delta\Omega h^3/3$ բանաձևով՝ կստանանք բարձրության համապատասխան արժեքը, որը հավասար է 7,5 մետրի: Տվյալ բարձրության դեպքում (3) հավասարման բաղադրիչների հաշվարկված արժեքները կլինեն. առաջինի համար՝ օդի սեղմման վրա ծախսվող էներգիան 0,238·10^6 Ջ է (այրման էներգիայի 17 %-ը), երկրորդի՝ օդը բարձրացնելու վրա ծախսվող էներգիայի համար՝ 0,14·10^5 Ջ (այրման էներգիայի 1 %-ը), երրորդի՝ օդի աճող ծավալի ներքին էներգիայի համար՝ 1,148·10^6 Ջ (այրման էներգիայի 82 %-ը):

Ինչպես գիտենք, փոփոխվող զանգվածով համակարգերի դինամիկան նկարագրվում է Մեշչերսկու հավասարմամբ[12], որը մեր դեպքում կստանա հետևյալ տեսքը.

$$\frac{d}{dt}[m(t)v(t)] = -m(t)g - P_0 h^2(t)\Delta\Omega\,, \qquad (2)$$

որտեղ $m(t) = \rho\dfrac{\Delta\Omega}{3}h^3(t)$:

Ստացված արտահայտությունը լրացնենք զանգվածի պահպանման օրենքով՝

$$\frac{dm(t)}{dt} = \frac{\rho\Delta\Omega}{3}\left[\int_0^t v(\tau)d\tau\right]^3, \qquad (3)$$

Այսպիսով՝ ստանում ենք այն դիֆերենցիալ հավասարումների լրիվ համակարգը, որոնք արտահայտում են սեղմված օդի շերտի զանգվածի և շարժման արագության ժամանակային կախումները՝ *m(t)*-ն և *v(t)*-ն: (2) և (3) հավասարումները լուծելով թվային մեթոդներով՝ կստանանք ժամա-

[11] Տես նույն տեղում:

[12] Տես *Я. Б. Зельдович.* Теория ударных волн и введение в газодинамику. М., 1966:

նակի այն արժեքը, որի ընթացքում հարվածային ալիքի արագությունը նվազում է մինչև ձայնի արագություն՝ $\tau=6\cdot10^{-3}$ վ: Տվյալ ժամանակահատվածում սեղմված օդի շերտի համար ստանում ենք՝ *m(t)*=3,75 կգ և հաստությունը՝ 8 սմ:

Հիմնվելով գազային դինամիկայի օրենքների վրա[13] և անտեսելով բարձրացվող օդի զանգվածի վրա ծանրության ուժի ազդեցությունը՝ ուսումնասիրենք ժամանակի *t* պահին օդի *dh* հաստությամբ, *ρ(h,t)* խտությամբ և *v(h,t)* արագությամբ շերտի տարրական ծավալի շարժումը՝ գրելով հավասարումներ հետևյալ օրենքների համար.

– զանգվածի պահպանման՝

$$h^2\frac{\partial\rho(h,t)}{\partial t}+\frac{\partial}{\partial h}[\rho(h,t)v(h,t)h^2]=0\,, \qquad (4)$$

– իմպուլսի պահպանման՝

$$h^2\frac{\partial v(h,t)\rho(h,t)}{\partial t}+\frac{\partial}{\partial h}[h^2(p(h,t)+\rho(h,t)v^2(h,t))]=0, \qquad (5)$$

– էներգիայի պահպանման՝

$$h^2\frac{\partial}{\partial t}\left[\rho(h,t)e(h,t)+\frac{\rho(h,t)v^2(h,t)}{2}\right]+\frac{\partial}{\partial h}\left[h^2\left(\rho(h,t)\left(e(h,t)+\right.\right.\right.$$

$$\left.\left.\left.+\frac{v^2(h,t)}{2}\right)+p(h,t)v(h,t)\right)\right]=0, \qquad (6),$$

որտեղ՝ *e(h,t)*-ն տվյալ տարրի ներքին էներգիան է:

(6)–(8) դիֆերենցիալ հավասարումների ընդհանուր լուծումը կլինի հետևյալ տեսքի.

$$P=\frac{A_1}{h}f_1(h-vt)+\frac{A_2}{h}f_2(h+vt), \qquad (7)$$

որտեղ՝ f_1-ն ու f_2-ը կամայական ֆունկցիաներ են, A_1-ն ու A_2-ը՝ կամայական հաստատուններ:

Ընդունելով, որ օդի ձևախախտումը (սեղմումն ու ընդլայնումը) կրում է ադիաբատային բնույթ, կարող ենք ձայնային ալիքի շարժումը նկարագրող հավասարումը գրել հետևյալ տեսքով.

$$\frac{\partial^2P}{\partial t^2}-v^2\left(\frac{\partial^2P}{\partial h^2}+\frac{2}{h}\frac{\partial P}{\partial h}\right)=0, \qquad (8)$$

որտեղ՝ $P=(\mathrm{P}_0-p_{մթն})$-ը ավելցուկային ճնշումն է, $p_{մթն}$ -ը՝ մթնոլորտային ճնշումը ծովի մակերևույթի պայմաններում, իսկ v-ն հավասար է 350 մ/վ-ի:

Տվյալ հավասարման մեջ P փոփոխականի փոխարինումը $P\cdot h$ փոփոխականով այն կկերպափոխի Դալամբերի ալիքային հավասարման.

[13] Տես *Ա. Ի. Նիկիֆորով,* Նշ. աշխ., *նաև՝ Յա. Բ. Զալդովիչ,* Նշ. աշխ.:

$$\frac{\partial^2\psi(h,t)}{\partial t^2} - v^2\frac{\partial^2\psi(h,t)}{\partial h^2} = 0: \qquad (9)$$

Սահմանափակվելով միայն տարամիտող ալիքների դեպքով և *Ψ(h,t)* ֆունկցիան ներկայացնելով $\Psi(h,t) = P(h,t)\cdot h$ տեսքով՝ կարող ենք երկրորդ կարգի (9) հավասարումը գրել հետևյալ ձևով՝

$$\frac{\partial\psi(h,t)}{\partial t} - v\frac{\partial\psi(h,t)}{\partial h} = 0: \qquad (10)$$

Սույն ալիքային հավասարումը կարող է լուծված լինել $\Psi(h,0) = \Psi_0(h)$ սկզբնական պայմանի հիման վրա, իսկ այդ պայմանը՝ հետազոտվող խնդրի համար կարող ենք գրել.

$\psi_0(h) = p_{մթն}\cdot h,$ եթե h< 7,5մ և h>7,5 մ+8 սմ,

$\psi_0(h) = 130\cdot p_{atm}\cdot h$, եթե 7,5 մ $\leq h \leq$ 7,5 մ+8 սմ:

Հեշտ է համոզվել, որ (10) հավասարման լուծում կլինի սկզբնական պայմանի *Ψ₀(h)* ֆունկցիան, որում *h* փոփոխականը փոխարինված է $(h - vt)$ փոփոխականով, այն է՝

$$\psi(h,t) = \psi_0(h - vt): \qquad (11)$$

Ըստ ստացված արդյունքի՝ օդի սեղմված շերտում ճնշումը՝ կախված բարձրությունից, նվազում է հիպերբոլական օրենքով, եթե հաստությունը մնում է անփոփոխ: Տվյալ պնդումը նշանակում է, որ բոլոր բարձրություններում ձայնային ալիքի գոյության տևողությունը հաստատուն է և հավասար է Δt=8 սմ/350 մ/վ=2,3 ·10^{-4} վ:

(10)-ից հետևում է, որ օդի սեղմված շերտում ավելցուկային P ճնշումը և բարձրությանն այդ շերտի հասնելու պահին կարող ենք ներկայացնել հետևյալ տեսքով՝

$$P = \frac{\bar{P}}{h}\bar{h} \quad , \qquad (12)$$

որտեղ՝ $\bar{P} = 130\cdot p_{մթն},\ \bar{h} = 7{,}5մ$:

(10) հավասարման հիման վրա և սկզբնական պայմանի հաշվառմամբ ձայնային ալիքի ճնշումը կարող ենք ներկայացնել հարմոնիկ գնդային ալիքի համար Ֆուրիեի ինտեգրալի տեսքով.

$$P(h,t) = \frac{2\bar{P}\cdot\bar{h}}{\pi h}\int_0^\infty \frac{\sin[\omega\Delta t/2]}{\omega}\cos[\omega(t - h/v)]d\omega, \qquad (13)$$

որտեղ $\sin[\omega\Delta t/2]/\omega$ ենթաինտեգրալային ֆունկցիան ձայնային ալիքի սպեկտրն է: Օգտագործելով (13) հավասարումը՝ կարող ենք ըստ հաճախականությունների կատարված՝ ալիքների ճնշման խտությունների բաշխումը ներկայացնել հետևյալ տեսքով.

$$P_\omega = \frac{2\overline{P}\overline{h}}{\pi h} \cdot \frac{\sin[\omega \Delta t / 2]}{\omega}, \qquad (14)$$

$P_\omega d\omega$ մեծությունը նկարագրում է $d\omega$ հաճախականային տիրույթում ալիքների ստեղծած ճնշումը:



Նկ. 1. ՀՁԱ-ի ճնշման սպեկտրալ կախումը
(1՝ h=500 մ, 2՝ h=750 մ, 3՝ h=1000 մ)

Նկ. 1-ում բերված է հաճախականությունից P_ω ճնշման կախումը՝ հաշվարկված ըստ (14) հավասարման տարբեր բարձրությունների համար: Նկարից երևում է, որ ՀՁԱ-ի ճնշման բացարձակ արժեքը հաճախականության աճմանը համեմատ նվազում է, իսկ 10000 Հg-ից բարձր հաճախականությունների դեպքում կտրուկ կերպով մարում է՝ ձգտելով 0-ի: Ընդսմին հաճախականային սպեկտրի տարբեր տիրույթներում ճնշումը կարող է ընդունել ինչպես դրական, այնպես էլ բացասական արժեքներ, այսինքն՝ ձայնային ալիքները որոշ հաճախականային տիրույթում սեղմում են օդը, իսկ որոշ տիրույթում՝ նոսրացնում (սեղմաթողում):

Հարմոնիկ ձայնային ալիքի համար ըստ հաճախականության ինտենսիվությունը որոշվում է հետևյալ արտահայտությամբ՝

$$I_\omega(h) = \frac{P_\omega^2}{\rho \cdot v}. \qquad (15)$$

(14) ու (15) հավասարությունների կիրառմամբ հաշվարկենք հաճախականությունից ինտենսիվության կախումը տարբեր բարձրությունների դեպքում (տես. նկ. 2):



Նկ. 2 ՀՁԱ-ի ինտենսիվության կախումը հաճախականությունից
(1՝ h =500 մ, 2՝ h =750 մ, 3՝ h=1000 մ)

Նկ. 2-ից երևում է, որ ձայնային ալիքի ինտենսիվության հիմնական մասը կենտրոնացած է մինչև 2000 Հg տիրույթում:

ՀՁԱ-ի ինտենսիվության մակարդակի գնահատման հայտնի բանաձևի $L = 10 \cdot \lg\left(I / I_0\right)$ հիման վրա հաշվարկենք L-ի արժեքները ըստ հաճախականության, որտեղ՝ $I_0 = 10^{-12}$ Վտ/մ^2-ն 1000 Հg հաճախականությամբ ձայնային ալիքի լսելիության ինտենսիվության շեմային արժեքն է:

Բարձրությունների դիտարկվող արժեքների համար (500 մ, 750 մ, 1000 մ) հաշվարկվել է *L* մեծության կախումը հաճախականությունից (տես նկ. 3):



Նկ. 3. Հաճախականությունից ՀՁԱ-ի ինտենսիվության կախումը
(1՝h=500 մ, 2՝h=750 մ, 3՝h=1000մ)

ՀՁԱ-ի ընդհանուր (գումարային) ինտենսիվությունը կարելի է սահմանել որպես՝

$$I(h) = \int_0^{\omega} I_\omega(h) d\omega : \qquad (16)$$

Կիրարկելով (14) ու (15) հավասարումները՝ կարող ենք հեշտությամբ ստանալ բարձրությունից ՀՁԱ-ի ինտենսիվության կախումը՝

$$I(h) = 2{,}8 \cdot 10^8/h^2, \qquad (17)$$

Ըստ վերջին հավասարման՝ ՀՁԱ-ի ինտենսիվության արժեքները բարձրության համեմատ նվազում են և հավասար են՝ h=500 մ դեպքում 1120 Վտ/մ^2-ի, h=750 մ դեպքում՝ 500 Վտ/մ^2-ի, h=1000 մ դեպքում՝ 280 Վտ/մ^2-ի:

Նկատի ունենալով, որ ձայնային ալիքի տևողությունը հավասար է 2,3×10^{-4}վ, կարող ենք ՀՁԱ-ում 1մ^2 մակերեսով տեղափոխվող էներգիայի քանակը որոշել

$$\Delta E(h) = I(h)\Delta t \qquad (18)$$

բանաձևով:

Մեր վերցրած դեպքերի համար կստանանք՝ ΔE(h=500մ)=0,258 Ջ/մ^2, ΔE(h=750մ)=0,115 Ջ/մ^2, ΔE(h=1000մ)=0,064 Ջ/մ^2:

ԱՄՓՈՓՈՒՄ

Գազագեներատորային կայանքներով ստեղծվող ձայնային ալիքները կարող են ներգործել երկրի մակերևույթից 500 մ, 750 մ և 1000 մ հեռավորությունների վրա գտնվող կարկտավտանգ ամպերում տեղի ունեցող ֆիզիկական պրոցեսների վրա:

Տվյալ ալիքների էներգիայի մակերևութային խտությունների համար ստացված արժեքները (0,258Ջ/մ^2, 0,115 Ջ/մ^2 և 0,064 Ջ/մ^2) միանգամայն բավարար են, որպեսզի այդ պրոցեսները հարուցվեն: Դա պայմանավորված է այն հանգամանքով[14], որ 17 Ջ/վ·մ^2 և ավելի ինտենսիվությամբ ձայնային ալիքների անընդհատ ներգործությունը 6 վ-ի ընթացքում ակտիվացնում է մակարդային պրոցեսները, որոնց հետևանքով ամպերում առաջանում է կաթիլների միկրոկառուցվածքի մաքսիմումի շարժ դեպի մեծ կաթիլների ձևավորում, ինչը հանգեցնում է ամպի միկրոկառուցվածքի փոփոխման:

Նպատակահարմար է սույն տեսական ուսումնասիրության արդյունքներն ստուգել փորձով. չափել գազագեներատորային կայանքներով ստեղծված ՀՁԱ-ների ինտենսիվությունները զանազան բարձրություններում և ստացված արժեքները համեմատել մեր առաջարկած մեթոդով հաշվարկված արժեքների հետ:

[14] Տես *Տ. Վ. Տուլայկովա, Ա. Վ. Միշենկո, Ս. Ռ. Ամիրովա,* Նշ. աշխ., *Т. А. Галачян.* К вопросу стимулирования осадков акустическими волнами. Журнал тех. физики, 2005, т. 75, вып. 9, 85–88 с.

ЧРЕЗВЫЧАЙНЫЕ СИТУАЦИИ

ПРИМЕНЕНИЕ ГАЗОГЕНЕРАТОРНЫХ СТАНЦИЙ ДЛЯ БОРЬБЫ С ГРАДОВЫМИ ЯВЛЕНИЯМИ

А. Ж. ХАЧАТРЯН, доктор физико-математических наук, профессор, заведующий кафедрой физики Национального политехнического университета Армении (НПУА), В. Н. АГАБЕКЯН, заведующий лабораторией модуляционных явлений Института прикладных проблем физики (ИППФ) НАН РА, А. С. АКОПЯН, старший инженер лаборатории упорядоченных и неупорядоченных пористых сред ИППФ НАН РА, Д. О. МОСОЯН, аспирант кафедры радиотехнических устройств факультета радиотехники НПУА

РЕЗЮМЕ

Армения в силу своих природных условий является одной из наиболее градоопасных зон. Существуют различные способы воздействия на градовые процессы в целях уменьшения ущерба от градобития. Одним из наиболее перспективных направлений является активное воздействие на облака с целью регулирования естественного хода развития градоопасных очагов.

С использованием законов сохранения энергии и газовой динамики проведены исследования физических процессов, происходящих при выходе в атмосферу из сопла газогенераторной станции (ГГС) со сверхзвуковой скоростью образовавшейся при сгорании в камере газовой смеси, возбуждающей звуковые волны, а также определены спектральные зависимости давления этих волн. Рассчитаны соответствующие зависимости интенсивностей звуковых волн от частоты, зависимости уровней интенсивностей воздействия звуковых волн на облака в зависимости от частоты и высоты.

Рассчитанные значения поверхностных плотностей энергии возбужденных звуковых волн на высотах 500 м, 750 м и 1000 м, равные, соответственно, 0,258, 0,115 и 0,064 Дж/м^2, вполне достаточны для предотвращения процессов градообразования на данных высотах.

EMERGENCY SITUATIONS

IMPLEMENTATION OF GAS-GENERATING PLANTS IN FIGHTING HAIL PHENOMENA

A. Zh. KHACHATRYAN, Doctor of Physical and Mathematical Science, Professor, Head, Physics Department, National Polytechnic University of Armenia (NPUA), V. N. AGHABEKYAN, Head, Laboratory of Modulation Effects, Institute of Applied Problems of Physics (IAPP), National Academy of Sciences, RA, A. S. HAKOBYAN, Senior Engineer, Head, Laboratory of Random and Nonrandom Porous Media, IAPP, National Academy of Sciences, RA, D. H. MOSOYAN, Graduate Student, Chair of Radio Engineering Devices, Department of Radio Engineering, NPUA

SUMMARY

In view of its environmental conditions, Armenia is one of the most hail-prone areas. There exist different methods in hail control to reduce the affect of the hail damage. Active cloud influencing is one of the most perspective directions of regulating the evolution of hail nuclei.

By means of the laws of conservation of energy and gas dynamics, studies have been carried out on physical processes occurring when gas mixture, generated in the combustion camera, exits the nozzle of the gas-generating plant (GGP) into the atmosphere at a supersonic speed, exciting sound waves. Also spectral dependences of pressure of such waves have been defined. The respective dependences of sound-wave intensity on the frequency, as well as the dependences of intensity level of sound-wave influence on clouds in regard to the frequency and height have been calculated.

The values of surface energy densities of sound waves, calculated at the altitude of 500 m, 700 m and 1000 m, equal to respectively 0,258, 0,115 and 0,064 J/m^2, are quite sufficient to prevent hail processes at the given altitudes.

ՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ՄԱՐԴՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՊՐՈԲԼԵՄԸ

Ս. Հ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ, Հայ-Ռուսական համալսարանի ասպիրանտ, իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի դասախոս

Պարբերական սահմանադրական կարգավորումների բերումով մարդու և քաղաքացու իրավունքների սահմանափակման հարցը մշտապես եղել և մնում է մասնագետների ուշադրության կենտրոնում: Դրա էությունը պարզելու համար նպատակահարմար ենք համարում դիտարկել 1995 թ., 2005 թ., 2015 թ. խմբագրություններով ՀՀ Սահմանադրությունը, Մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության եվրոպական կոնվենցիան, ինչպես նաև մի շարք պետություններում կատարված համապատասխան ուսումնասիրություններ:

ՀՀ Սահմանադրությամբ սահմանված հիմքերով և միայն օրենքով սահմանափակման ենթակա իրավունքների և ազատությունների համար Սահմանադրությունը համապատասխան իրավունքը ամրագրող հոդվածում նախատեսում է նաև սահմանափակման հիմքերը և կարգը[1]: Ընդ որում, մի շարք իրավունքների՝ սահմանադրական իրավակարգավորումներով սահմանափակման նպատակների շարքում Սահմանադրությունը չի նշում պաշտպանությունը: Դրան առավել մոտ հասկացությունը, որ շրջանառում է «օրենքով սահմանափակման ենթակա» կոնկրետ իրավունքի կամ ազատության սահմանափակման նպատակների թվարկման մեջ, պետական անվտանգությունն է: Սահմանադրության 2-րդ գլխում արծարծված այս՝ առաջին հայացքից իրավատեխնիկական, պրոբլեմը ունի գիտական մեկնաբանության կարիք:

ՀՀ 1995 թ. Սահմանադրությամբ մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատություններն ամրագրված էին 2-րդ գլխում (14–48-րդ հոդվածներ): Դրանց սահմանափակումները Սահմանադրությամբ կարգավորվում էին 44-րդ և 45-րդ հոդվածներով: 45-րդ հոդվածը սահմանում էր մարդու և քաղաքացու իրավունքների սահմանափակումը ռազմական և արտակարգ

[1] Տես *Ա. Վաղարշյան,* Մարդու իրավունքների ու ազատությունների կենսագործման և սահմանափակման սահմանադրական նորամուծությունները (համակարգային և ձևական իրավաբանական մեկնաբանություն) (http://www.ysu.am/files/01A_Vagharshyan-1516337765-.pdf):

դրությունների դեպքերում: Այդ հոդվածը Սահմանադրությամբ ամրագրված՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները բաժանում էր երկու խմբի՝ չսահմանափակվող (Սահմանադրության 17-րդ, 19-րդ, 20-րդ, 39-րդ, 41–43-րդ հոդվածներով ամրագրված) և սահմանափակվող (Սահմանադրության 14–16-րդ, 18-րդ, 19-րդ, 21–38-րդ, 40–42-րդ հոդվածներով ամրագրված): Ռազմական և արտակարգ դրությունների ժամանակ Սահմանադրությամբ որպես չսահմանափակվող ճանաչված իրավունքները ենթակա չէին որևէ կերպ սահմանափակման: Իսկ սահմանափակվող իրավունքները կարող էին այդ դրությունների ժամանակ օրենքով սահմանված կարգով ժամանակավորապես սահմանափակվել: Ռազմական դրության հաստատումն ունի մեկ հիմնական նպատակ. պետության պաշտպանության շահերը: Այս դեպքում իրավունքների սահմանափակման բովանդակությունը, իրավունքների և ազատությունների ցանկը, սահմանները տեղափոխվում էին ռազմական և արտակարգ դրություններին վերաբերող օրենքներ:

1995 թ. Սահմանադրության 44-րդ հոդվածը սահմանում էր, որ 23–27-րդ հոդվածներում թվարկված իրավունքները և ազատությունները կարող են սահմանափակվել միայն օրենքով[*], «եթե դա անհրաժեշտ է պետական և հասարակական անվտանգության, հասարակական կարգի, հանրության առողջության ու բարքերի, այլոց իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար»: Հոդվածում թվարկվում էին սահմանափակման հիմքերը, այսինքն՝ այն շահերը, որոնք պաշտպանելու համար օրենսդիրը դիմում է օրենքով սահմանափակման: *Դրանց շարքում 1995 թ. Սահմանադրությամբ նախատեսված չէր «պաշտպանությունը»: Հետևաբար, այդ իրավունքների սահմանափակման իրավական ձևը դրա նախատեսումն էր բուն Սահմանադրության մեջ:* Այսպես. 25-րդ հոդվածում ամրագրված՝ միավորումներ կազմելու, արհեստակցական միություններ կամ կուսակցություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունքները կարող էին սահմանափակվել զինված ուժերում և իրավապահ մարմիններում ծառայողների նկատմամբ[2]: Ակնհայտ է, որ այդ սահմանափակման նպատակը պետության պաշտպանության շահերն էին:

2005 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը պահպանեց 1995 թ. խմբագրությամբ ամրագրվող՝ մարդու իրավունքների սահմանափակումների կարգավորման իրավատեխնիկական սկզբունքները: Սակայն Սահմանադրության 43-րդ հոդվածում ներառված՝ պաշտպանության ենթակա շահերի շարքում և իրավական տերմիններում (ձևակերպումներում) կա-

[*] Դա վերաբերում էր մտքի, խղճի և դավանանքի ազատությանը, կարծիքի վրա պնդելու, խոսքի ազատության, տեղեկատվության, միավորումներ ու կուսակցություններ կազմելու, ժողովներ ու հանրահավաքներ անցկացնելու, պետական կառավարմանը մասնակցելու իրավունքներին (տես «Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն»: Ընդունվել է հանրաքվեով 1995 թ. հուլիսի 5-ին (https://www.arlis.am/documentview.aspx ?docID=1)):

[2] Տես նույն տեղում, հոդ. 25, մաս 3:

տարվեց որոշակի խմբագրում, մասնավորապես՝ մարդու և քաղաքացու իրավունքները «կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար»[3]:

Այսպիսով՝ 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը մասնակիորեն պահպանեց 23–25-րդ, 27-րդ, 28–30-րդ, 30.1-րդ հոդվածներով, 32-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրված իրավունքներն ու ազատություններն օրենքով սահմանափակելու հիմքերը, ընդ որում, այդ հիմքերի շրջանում «պաշտպանությունը» դարձյալ նախատեսված չէր[4]:

2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունն արմատապես վերանայեց մարդու իրավունքների սահմանափակման սահմանակարգը (ինստիտուտը) և՛ իրավատեխնիկական, և՛ բովանդակային կողմերով: Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումն արտակարգ և ռազմական դրությունների ժամանակ (76-րդ հոդված) պահպանեց նախորդ խմբագրությամբ սահմանադրությունների հիմքում դրված հայեցակարգը: Սակայն նախկին երկու խմբագրություններում առկա սահմանափակման ընդհանուր հոդվածի փոխարեն (համապատասխանաբար՝ հոդված 45 և հոդված 43 օրենքով սահմանափակվող իրավունքներ) Սահմանադրության 2-րդ գլխում սահմանված կոնկրետ իրավունքը կամ ազատությունը ամրագրող հոդվածում սահմանվել են նաև դրա սահմանափակման հիմքերը՝ «նպատակ» ձևակերպմամբ: Այսպես. 42-րդ հոդվածով ամրագրված՝ կարծիքի արտահայտման ազատությունը, համաձայն այդ հոդվածի 3-րդ մասի, «կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց պատվի ու բարի համբավի և այլ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով»: Այս բնույթի մաս-ձևակերպումներ կան ՀՀ 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրության 2-րդ գլխի (23–81-րդ հոդվածներ) 10-ից ավելի հոդվածներում[*]: Ընդ որում, այդ հոդվածներում

[3] Տես «Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (փոփոխություններով)»: Սահմանադրության փոփոխությունները կատարվել են 2005 թ. նոյեմբերի 27-ի ՀՀ հանրաքվեով (https://www.arlis.am/documentview.aspx?docID=75780):

[4] Տես նույն տեղում:

[*] Այդ հոդվածներն են՝ 25-րդ (ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիություն), 31-րդ (մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիություն), 32-րդ (բնակարանի անձեռնմխելիություն), 33-րդ (հաղորդակցության ազատություն ու գաղտնիություն), 34-րդ (անձնական տվյալների պաշտպանություն), 40-րդ (ազատ տեղաշարժվելու), 41-րդ (մտքի, խղճի և կրոնի ազատություն), 42-րդ (կարծիքի արտահայտման ազատություն), 44-րդ (հավաքների ազատություն), 45-րդ (միավորումների ազատություն), 48-րդ (քաղաքացիության իրավունք), 51-րդ (տեղեկություններ ստանալու իրավունք), 60-րդ (սեփականության իրավունք) (տես «Հայաստանի Հանրապետության Սահմա-

նշված սահմանափակման հիմքերը հիմնականում կրկնվում են, և դրանց թվում դարձյալ չկա պաշտպանությունը:

Մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակման հիմքերի (նպատակների) առումով նորմատիվային դրույթների շարադրման նման տեխնիկա կիրառվել է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայում: Կոնվենցիայի 8-րդ հոդվածի (անձնական և ընտանեկան կյանքի հարգանքի իրավունք), 9-րդ հոդվածի (մտքի, խղճի և կրոնի ազատություն), 10-րդ հոդվածի (կարծիքի արտահայտման ազատություն), 11-րդ հոդվածի (ժողովների ու միավորումների ազատություն) 2-րդ մասերում սահմանված են համապատասխան իրավունքների սահմանափակման «շահերը», «նպատակները»[5]:

Սակայն «հիմքերի», «նպատակների», «շահերի» շրջանի որոշման հարցում ՀՀ 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը, տեխնիկական կողմի ընդօրինակումից բացի, ՄԻԵԿ-ի հետ ունի մասնակի ընդհանրություն նաև բովանդակային առումով: Տվյալ պնդումն անում ենք նշված նպատակների համեմատության հիման վրա: Այսպես. կարծիքն արտահայտելու ազատության սահմանափակման նպատակների շարքում ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 3-րդ մասում նշվում են. ա) պետական անվտանգությունը, բ) հասարակական կարգը, գ) առողջությունը և բարոյականությունը, դ) այլոց պատիվը ու բարի համբավը, ե) այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը: ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածի 2-րդ մասում թվարկված են հետևյալ նպատակներն ու շահերը. ա) պետական անվտանգությունը, բ) տարածքային ամբողջականությունը, գ) հասարակական անդորրը, դ) անկարգությունների և հանցագործությունների կանխումը, ե) առողջությունը և բարոյականությունը, զ) այլոց բարի համբավը, է) այլոց իրավունքները, ը) գաղտնիության (կոնֆիդենցիալ) կարգով ստացված տեղեկության հրապարակման կանխումը, թ) արդարադատության հեղինակության ու անկողմնակալության ապահովումը:

Ամրագրված նպատակների շրջանների միջև եղած տարբերությունը (ՀՀ-ում դրանք հինգն են, իսկ ՄԻԵԿ-ում՝ 9-ը) վկայում է, որ ՀՀ Սահմանադրության մեջ տեղի է ունեցել դրանց վերախմբագրում: Սահմանադրության 2-րդ գլխում օրենքով սահմանափակվող իրավունքների սահմանափակման նպատակների շարքի նման վերախմբագրում նկատում ենք նաև այլ հոդվածներում[*]:

նադրության փոփոխություններ»: Փոփոխությունները կատարվել են ՀՀ հանրաքվեով 2015 թ. դեկտեմբերի 6-ին (https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=102510)):

[5] Այդ հիմքերի, շահերի, նպատակների վերլուծությունը տես *Կ. Экштайн*. Основные права и свободы. По российской Конституции и Европейской Конвенции. М., 2004, сс. 60-70:

[*] Դա ակնհայտ է դառնում ՄԻԵԿ-ի 9–10-րդ հոդվածների, ինչպես նաև Հմ. 1 Արձանագրության 1-ին հոդվածի (սեփականության իրավունք), Հմ. 4 Արձանագրության 2-րդ հոդվածի (տեղաշարժման ազատություն) և ՀՀ Սահմանադրության 25-րդ, 31–34-րդ, 40–42-րդ, 44–45-րդ, 60-րդ հոդվածների համեմատական վերլուծությունից:

Վերլուծության արդյունքներով անում ենք հետևյալ եզրակացությունները.

1. Միայն օրենքով սահմանափակվող՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների սահմանափակման նպատակների շրջանների սահմանման հարցում ՀՀ Սահմանադրությունը տեխնիկական շարադրման տեսանկյունից հետևել է ՄԻԵԿ-ին:

2. Սահմանափակման նպատակների կամ դրանով պաշտպանվող շահերի շրջանի հարցում չկա ուղղակի փոխառում, հետևաբար ՀՀ Սահմանադրության մեջ դրանք ենթարկվել են որոշակի փոփոխությունների և՛ շրջանի (նեղացում կամ ընդլայնում), և՛ բովանդակային առումներով[6]:

3. ՀՀ Սահմանադրությունում օրենքով սահմանափակվող իրավունքների սահմանափակման «նպատակների» ու «շահերի» թվում չկա «պաշտպանությունը»:

4. «Պետության պաշտպանության նպատակ» հասկացությանն ամենամոտ հասկացությունը, որ կա ՀՀ Սահմանադրության մեջ թվարկված «շահերի» ու «նպատակների» շարքում, «պետական անվտանգությունն» է:

Նախ. պետք է նկատի ունենալ, որ եթե համեմատում ենք ռազմական արվեստի տեսության և անվտանգաբանության մոտեցումները, ապա նկատում ենք **տարբերություններ «պաշտպանություն» և «պետական անվտանգություն» կամ «ազգային անվտանգություն» հասկացությունների միջև**: Պետության պաշտպանությունը սահմանվում է որպես պետության ձեռնարկած քաղաքական, ռազմական, սոցիալական, իրավական և այլ միջոցների համախումբ, որոնք նպատակաուղղված են ցանկացած ագրեսորի անպատիժ հարձակումը կանխելու, զինված ագրեսիային դիմակայությանը պետության պատրաստության ապահովմանը, ինչպես նաև դրա անմիջական հետմղմանը, պատերազմի վարմանը, ինչպես նաև բնակչության ու տարածքի պահպանությանը[7]: Սովորաբար պետության պաշտպանության ապահովման խնդիրը դրվում է զինված ուժերի և ռազմաարդյունաբերական համալիրի վրա: Պետության պաշտպանական գործունեությունը հիմնվում է նրա ռազմական դոկտրինի վրա և ներառում է մի քանի հիմնական ուղղություն. 1) պետության պաշտպանական հզորության ամրապնդում, որի երաշխիքը զարգացած, արդյունավետ, գիտահեն տնտեսությունն է, 2) զինված ուժերի կատարելագործում, դրանց մարտունակության և մարտական պատրաստության մակարդակների բարձրացում, 3) պետական սահմանների անձեռնմխելիության ապահովում, 4) քաղաքացիական պաշտպանության կազմակերպում, 5) զինված ուժերի պահեստազորի ռազմական ուսուցում: Պատերազմի ժամանակ պետության պաշտպանությունն ընդունում է հակառակորդի դեմ զինված պայքարի ձև:

[6] Հանգամանորեն հմմտ. «Протокол № 1 к Конвенции о защите прав человека и основных свобод (Париж, 20 марта 1952 г.) с изменениями от 11 мая 1994 г.» (http://www.echr.ru/documents/doc/2440801/2440801.htm) և «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխություններ», 2015:

[7] Տես «Оборона государства». «Война и мир в терминах и определениях». Военно-политический словарь. Под. ред. Д. О. Рогозина. М., 2017, с. 64:

Իսկ «պետական անվտանգությունը», կամ «պետության անվտանգությունը», սահմանվում է որպես «ազգային անվտանգության կարևորագույն բաղադրիչ, որը կապված է պետական ինքնիշխանության ու տարածքային ամբողջականության, սահմանադրական կարգի հիմքերի, իրավական ու կառավարման համակարգերի պաշտպանության հետ»[8]:

ՌԴ Սահմանադրությունը մարդու և քաղաքացու իրավունքների սահմանափակման սկզբունքներն ամրագրում է 55-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում[9]: Սահմանադրական իրավունքներն ու ազատությունները կարող է սահմանափակել միայն դաշնային օրենսդիրը՝ դաշնային օրենքով: Դաշնային օրենսդիրն ազատ չէ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման մեջ. նա կարող է դա անել միայն անհրաժեշտության դեպքում և այն չափով, որքանով որ դա անհրաժեշտ է հետևյալ նպատակների համար՝ պետության սահմանադրական կարգերի հիմքերի պաշտպանություն, բարոյականության պաշտպանություն, այլ անձանց առողջության պաշտպանություն, այլ անձանց օրինական շահերի պաշտպանություն, պետության պաշտպանության ապահովում, պետության անվտանգություն[10]:

Այսպիսով՝ ՌԴ Սահմանադրությամբ որպես մարդու իրավունքների սահմանափակման նպատակ նախատեսվում է և՛ «պետության անվտանգությունը», և՛ «պետության պաշտպանության ապահովումը»: Ընդ որում, այն օգտագործում է ոչ թե «պետական անվտանգություն», այլ «պետության անվտանգություն» հասկացությունը:

Պետք է նկատի ունենալ, որ մարդու իրավունքների սահմանափակման սահմանադրական կարգավորումն ընդհանուր առմամբ բնութագրական է 20-րդ դարի վերջի և 21-րդ դարի սկզբի սահմանադրություններին:

Այսպես. համաձայն Շվեյցարիայի Սահմանադրության 36-րդ հոդվածի՝ հիմնական իրավունքների «ցանկացած սահմանափակում պետք է ունենա օրինական հիմքեր: Հիմնական իրավունքի ցանկացած սահմանափակում պետք է արդարացվի հանրային շահերով կամ մարդու հիմնական իրավունքների պաշտպանությամբ»[11]: Այս հոդվածը որպես սահմանափակման նպատակ կամ «արդարացում» դիտում է «հասարակական շահերը կամ մարդու հիմնական իրավունքի պաշտպանությունը»: «Հասարակական շա-

[8] Տես «Государственная безопасность». «Война и мир в терминах и определениях». Военно-политический словарь, с. 42, *Դ. Ս. Չիլինգարյան, Ե. Լ. Երգնկյան,* Պաշտպանական-անվտանգային տերմինների բացատրական հայերեն–ռուսերեն–անգլերեն, ռուսերեն–հայերեն, անգլերեն–հայերեն մեծ բառարան: Ե., 2015, էջ 75:

[9] Տես «Конституция Российской Федерации». М., 2001, с. 55: ՌԴ-ում մարդու իրավունքների սահմանափակման հիմքերի և կարգի մասին ավելի մանրամասն տես *Կ. Էկշտայն,* Նշ. աշխ., էջ 60–70; «Критерии законодательного установления пределов прав человека». «Конституция Российской Федерации: Проблемный комментарий». Под ред. В. А. Четвернина. М., 1997, сс. 30–36:

[10] Տես *Կ. Էկշտայն,* Նշ. աշխ., էջ 60:

[11] Տես «Федеральная Конституция Швейцарской Конфедерации 1999 г.», ст. 36. «Конституции зарубежных стран». Сборник. Сост. В. Н. Дубровин. М., 2008, с. 97:

հեր» հասկացությունն ունի շատ լայն իմաստ: Կ. Էկշտայնի բնորոշմամբ՝ «սկզբունքորեն բոլոր միջոցառումները, որոնք պետությունը համարում է իր խնդիրները կատարելու համար օգտակար, համարվում են հասարակական շահ»[12]: Ընդ որում, դրանում անխուսափելիորեն ներառված են նաև պետության պաշտպանության շահերը:

Գերմանիայի Սահմանադրության 19-րդ հոդվածը, սահմանելով հիմնական իրավունքների սահմանափակման չափանիշները, չի սահմանում սահմանափակման նպատակները[13]: Սակայն Սահմանադրության 2-րդ մասի բազմաթիվ հոդվածներում սահմանված են հիմնական իրավունքների սահմանափակումներ պաշտպանական կամ ռազմական կարիքների համար, քաղաքացիական պաշտպանության և Հայրենիքի պաշտպանության, ներառյալ՝ զինվորական և այլընտրանքային ծառայության պարտականությունների բովանդակությունները ներկայացված են բավական մանրամասնորեն և, հետևաբար, պետության պաշտպանական գործառույթի կատարմանը վնասում կամ դրանց անտեսում սահմանադրական կարգավորման մեջ չկա:

Հունգարիայի Սահմանադրությունը 8-րդ հոդվածում հիմնական իրավունքների սահմանափակումը կարգավորում է շատ ընդհանուր ձևով՝ առանց նպատակների կամ շահերի ամրագրման. «Օրենքը չի կարող սահմանափակել հիմնական իրավունքների սկզբունքային նշանակությունը և բովանդակությունը»[14]:

Ակնհայտ է, որ արևմտաեվրոպական պետությունների հիմնական մասի սահմանադրություններն այսպես ասած միջին սերնդի են: Ուստի փորձենք տվյալ պրոբլեմն ուսումնասիրել հետխորհրդային անկախ հանրապետությունների սահմանադրությունների օրինակով:

Ադրբեջանի Սահմանադրությունը 71-րդ հոդվածով սահմանում է, որ ոչ ոք չի կարող սահմանափակել մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների իրացումը: «Միայն պատերազմ, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելու, ինչպես նաև զորահավաքի դեպքում մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների իրացումը կարող է մասնակիորեն և ժամանակավորապես սահմանափակվել Ադրբեջանի Հանրապետության միջազգային պարտավորությունների հաշվառմամբ»[15]:

Ղազախստանի Սահմանադրությունը (հոդված 39) սահմանում է մարդու իրավունքների սահմանափակման հետևյալ նպատակները. սահմանադրական կարգը, պաշտպանությունը, հասարակական կարգը, մարդու իրավունքները և ազատությունները, բնակչության առողջությունը և բարոյականությունը: **Ընդ որում, նկատի առնենք, որ Ղազախստանի Սահմանադրության**

[12] Տես *Կ. Էկշտայն,* Նշ. աշխ., էջ 67:

[13] Տես «Конституция Федеративной Республики Германия», ст. 19. «Коституции зарубежных стран», с. 134:

[14] Տես «Конституция Венгерской Республики», ст. 8. «Коституции зарубежных стран», с. 381:

[15] Տես «Конституция Азербайджанской Республики». «Конституции стран СНГ и Балтии». Сост. Г. Н. Андреева. М., 1999. с. 43:

1-ին՝ «Ընդհանուր դրույթներ», բաժնում որպես հանրապետության գործունեության հիմնարար սկզբունք սահմանվում է «ղազախական հայրենասիրությունը» (հոդված 2)[16]:

Այսպիսով՝ մարդու և քաղաքացու իրավունքների սահմանափակումը դիտարկելով 1995 թ., 2005 թ., 2015 թ. խմբագրություններով ՀՀ Սահմանադրությունում, Մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության եվրոպական կոնվենցիայում, ինչպես նաև մի շարք պետությունների սահմանադրական պրակտիկայում կիրառվող իրավակարգավորումների համատեքստում՝ կարելի է եզրակացնել, որ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման նպատակների և շահերի հարցում ՀՀ Սահմանադրությունն ունի ՄԻԵԿ-ի հետ մասնակի ընդհանրություններ: Ըստ ՀՀ Սահմանադրության՝ օրենքով սահմանափակվող իրավունքների սահմանափակման «նպատակների» և «շահերի» շարքում չի նշվում «պաշտպանություն» տերմինը: Սակայն սահմանադրական կարգավորումները պետք է խարսխվեն պետության, ժողովրդի ու նրա առանձնահատկությունների վրա, լինեն դրանց համահունչ: Այդ առանձնահատկությունները և անկախության շրջանի աշխարհաքաղաքական իրավիճակը թելադրում են, որպեսզի պետության պաշտպանությունը դիտվի որպես պետության կարևորագույն սահմանադրական գործառույթ: Հետևաբար անհրաժեշտ է մարդու իրավունքների սահմանափակման օրինաչափ շահ կամ նպատակ ճանաչել «պաշտպանությունը»:

[16] Տես «Конституция Республики Казахстан». «Конституции стран СНГ и Балтии», с. 201:

ВОЕННОЕ ПРАВО

ПРОБЛЕМА ОГРАНИЧЕНИЯ ОСНОВНЫХ ПРАВ ЧЕЛОВЕКА И ГРАЖДАНИНА В ИНТЕРЕСАХ ОБОРОНЫ ГОСУДАРСТВА

С. О. БАГДАСАРЯН, аспирант Российско-Армянского университета, лектор кафедры теории права и конституционного права

РЕЗЮМЕ

В статье проблема ограничения основных прав и свобод человека и гражданина рассматривается в контексте соответствующего правового регулирования в редакциях Конституции РА от 1995-го, 2005-го, 2015-го гг., в Европейской конвенции о защите прав человека и основных свобод, а также конституционной практике ряда государств. Сопоставительный анализ указанных выше источников выявил частичные совпадения и определенные различия между Конституцией РА и ЕКПЧ в плане содержания и технического изложения целей ограничения основных прав и свобод человека и гражданина и защищаемых подобными ограничениями интересов государства.

Следует отметить, что в ряду перечисленных в Конституции «целей» ограничения прав и «интересов», преследуемых подобными ограничениями, понятие «оборона государства» не значится, а самое близкое из понятий, стоящих в одном ряду с перечисленными понятиями, является термин «государственная безопасность». Между тем, интересы государства и геополитическая обстановка в период становления независимости диктуют необходимость рассмотрения защиты государства в качестве главнейшей конституционной задачи государства. Следовательно, необходимо понятие «оборона государства» признать в качестве закономерного интереса или цели ограничения основных прав и свобод человека, тем более, что само понятие «государственная безопасность» полемично.

MILITARY LAW

THE PROBLEM OF RESTRICTION OF THE FUNDAMENTAL HUMAN AND CITIZEN'S RIGHTS FOR THE STATE DEFENSE

S. H. BAGHDASARYAN, Graduate Student, Russian-Armenian University, Lecturer, Department of Theory of Law and Constitutional Law

SUMMARY

The article argues the problem of restriction of the fundamental rights and freedoms of a man and citizen in the context of the relevant legal regulation in the revisions of the RA Constitution of 1995, 2005, 2015, in the European Convention on Human Rights ((EHCR) the Convention for the Protection of Human Rights and Fundamental Freedoms), as well as in the constitutional practice of a number of states. A comparative analysis of the above-mentioned sources revealed partial coincidences and certain distinctions between the RA Constitution and the ECHR in terms of content and technical rendering of the goals of restricting the fundamental rights and freedoms of a man and citizen, as well as the state interests protected by such restrictions.

It should be noted that among the "goals" of restriction of rights and "interests", pursued by such restrictions, listed in the Constitution, the concept of "state defense" does not figure there, and the closest of the concepts that are on a par with the listed concepts is the term "state security". Meanwhile, the interests of the state and the geopolitical situation during the gaining of independence dictate the need to review the state protection as the state's main constitutional task. Therefore, it is necessary to recognize the concept "state defense" as a vested interest or goal of restricting fundamental human rights and freedoms, especially since the very concept "state security" is polemical.

ՁԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ԱՐՏԱՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ԹՈՔԱԲՈՐԲԻ ԸՆԹԱՑՔԻ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մ. Վ. ՍԱՐԳՍՅԱՆ, բ/ծ փոխգնդապետ, բժշկական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԵՊԲՀ ռազմադաշտային թերապիայի ամբիոնի դասախոս

Ամբողջ աշխարհում թոքաբորբը դասվում է առավել տարածված հիվանդությունների թվին: Այն հանդիպում է 1000-ից 3–15 մարդու շրջանում: ԱՄՆ-ում տարեկան գրանցվում է հիվանդության ավելի քան 3 մլն դեպք, Ռուսաստանում՝ 1 մլն-ից ավելի: Արտահիվանդանոցային թոքաբորբերից (ԱՀԹ) մահացության մակարդակը կազմում է 1–5 % (ծանր և ծայրահեղ ծանր ընթացքով թոքաբորբի հաշվին), իսկ ներհիվանդանոցային թոքաբորբերինը՝ 20–40 %[1]:

Ըստ մի շարք հեղինակների՝ արտահիվանդանոցային թոքաբորբերի ծանրության աստիճանի որոշման և բուժման հետ կապված հիմնախնդիրը շարունակում է պահպանել իր արդիականությունը զինված ուժերի համար[2]:

Վ. Բոնդարենկոն, Օ. Կլոչկովը, Գ. Մարինը, Ա. Մայկովը և Վ. Մոսյագինը[3] նշում են, որ ՌԴ պարտադիր զորակոչով զինծառայողների շրջանում ԱՀԹ ախտորոշման, բուժման և կանխարգելման հիմնահարցերը չեն կարող դիտարկվել միայն բժշկական տեսանկյունից, քանի որ դրանք ձեռք են բերել լուրջ սոցիալական հնչեղություն և ունեն տնտեսական նշանակություն: Նույն հեղինակներն շեշտում են, որ 2002–2006 թթ. ժամանակահատվածում Մոսկվայի զինվորական օկրուգում շնչառական հիվանդությունները բոլոր հիվանդությունների շարքում գերազանցել են 1/3, իսկ ԱՀԹ տեսակարար կշիռը

[1] Տես *А. Е. Абатуров, О. Н. Герасименко.* Особенности антибактериальной терапии респираторных инфекций у детей. «Здоровье ребенка», 2014, № 5; *Г.-Р. Бурместер, А. Пецутто.* Наглядная иммунология. М., 2007; *R. Vanhoof, K. Camps, M. Carpentier, et al.* 10th survey of antimicrobial resistance in noninvasive clinical isolates of Streptococcus pneumoniae collected in Belgium during winter 2007–2008. “Pathologie Biologie”, 2010, Vol. 58, N 2:

[2] Տես, օրինակ, *С. Д. Жоголев, П. И. Огарков, П. И. Мельниченко.* Эпидемиологический анализ заболеваемости внебольничной пневмонией в войсках. «Военно-медицинский журнал», 2004, т. 325, № 3:

[3] Տես *В. И. Бондаренко, О. И. Клочков, Г. Г. Марьин, А. В. Майков, В. Д. Мосягин.* Организационно-эпидемиологические аспекты профилактики внебольничных пневмоний в Московском военном округе. «Военно-медицинский журнал», 2008, № 3:

թոքերի հիվանդությունների շարքում 17 %-ից ավելի է: ԱՀԹ զարգացման ռիսկի գործոնների շարքում նրանք նշում են զինծառայողների խիտ բնակեցումը զորանոցներում, վերջիններիս ոչ բավարար օդափոխումը, հարաբերակցական կապը սուր շնչառական մյուս հիվանդությունների հետ, միկրոկլիմայի պայմանները, ոչ համարժեք սնունդը, զինծառայողների գերհոգնածությունը և այլն:

Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունում նկատվում է թոքաբորբով հիվանդացության և մահացության աճման կայուն միտում: Թոքաբորբի պատճառական գործոնի ճշգրտումը ավանդական ախտորոշումային մեթոդներով հաստատում է ախտորոշումը ընդամենը 50–70 % դեպքում: Այդ նպատակով հնարավոր պատճառական գործոնը որոշելու և, հետևաբար, ճիշտ ախտորոշում կատարելու համար կարևոր է ուշադրություն դարձնել նաև վարակման վայրին, հանգամանքներին և օրգանիզմի իմունաբանական հակազդեցությանը[4]: Արտահիվանդանոցային թոքաբորբերի ծանրության աստիճանի գնահատման չափանիշների սահմանումը հիվանդի ընդունման պահին և բուժման ընթացքում եղել է և շարունակում է մնալ բացառիկ կարևորության խնդիր[5]: Հեղինակների մեծ մասը[6] համարում է, որ արտահիվանդանոցային թոքաբորբով (ԱՀԹ) հիվանդների նկատմամբ վարվող մարտավարությունը գործնականում որոշվում է նրանց ընդունման պահին կամ անմիջապես մինչև բուժումը սկսելը նրանց վիճակի ճիշտ գնահատմամբ, քանի որ գրականության տվյալների համաձայն՝ ամեն տասներորդի դեպքում նկատվում է հիվանդության ծանր ընթացք, որը

[4] Տես *А. Г. Чучалин, А. И. Синопальников, Р. С. Козлов, И. Е. Тюрин, С. А. Рачина.* Внебольничная пневмония у взрослых: практические рекомендации по диагностике, лечению и профилактике (пособие для врачей). «Инфекционные болезни: Новости. Мнения. Обучение», 2013, № 1; *А. С. Левина, И. В. Бабаченко, Е. В. Шарипова и др.* Этиологическая характеристика внебольничной пневмонии у детей в зависимости от возраста. «Пульмонология», 2014, № 5; *Sarah S. Long.* Variability in care for children hospitalized for pneumonia: no excuses this time. “The Journal of pediatrics”, 2014, Vol. 65, N 3:

[5] Տես *Т. Н. Биличенко, А. Г. Чучалин, И. М. Сон.* Основные итоги развития специализированной медицинской помощи больным пульмонологического профиля на территории Российской Федерации за период 2004-2010 гг. «Пульмонология», 2012, № 3; «Итоги Совета экспертов: разработка региональных программ по профилактике пневмококковой инфекции у пациентов группы риска». «Пульмонология», 2011, № 1; *V. Gielen, S. Johnston, M. Edwards.* Azithromycin induces antiviral responses in bronchial epithelial cells. “European Respiratory Journal”, 2010, Vol. 36, N 3:

[6] Տես *А. П. Волосовец, А. Е. Абатуров, Л. В. Беш и др.* Результаты многоцентрового исследования ЦЕФ-ПРОСТО (цефподоксима проксетил в стартовой терапии внебольничной пневмонии у детей) в Украине. «Современная педиатрия», 2011, № 2; *Y. Feshchenko, F. Dzyublik, T. Pertseva et al.* Antibacterial resistance among Streptococcus pneumonia and Haemophilus influenza from Ukraine: Results from the Survey of Antibiotic Resistance (SOAR) 2011–2013. Poster presentation (P-1589) 24th ECCMID. Barselona, 2014; *L. Washington, D. Palacio.* Imaging of bacterial pulmonary infection in the immunocompetent patient. “Seminars in Roentgenology”, 2007, Vol. 42, N 2:

պահանջում է հոսպիտալացում վերակենդանացման կամ ինտենսիվ թերապիայի բաժանմունքում, հոսպիտալացման հարցում ուշացումը հանգեցնում է հիվանդության ընթացքի կտրուկ վատթարացմանը[7]: Նույն հեղինակները առաջարկում են թոքաբորբով հիվանդի վիճակի գնահատման համար օգտագործել արդեն մշակված և լայն կիրառում ստացած սանդղակները[8]:

Սույն ուսումնասիրության նպատակը զինծառայողների շրջանում որոշ կլինիկական, կենսաքիմիական և հորմոնային ցուցանիշների փոփոխությունների կապի գնահատումն է արտահիվանդանոցային թոքաբորբերի ծանրության աստիճանի հետ:

Հետազոտվել է 18–22 տարեկան 290 արական սեռի բուժվող զինծառայող: Ըստ հիվանդության ծանրության՝ նրանց բաժանել են 4 խմբի (թեթև, միջին ծանրության, ծանր, ծայրահեղ ծանր), կլինիկական տվյալների դրսևորմանը համապատասխան՝ հաշվի են առնվել հետևյալ ցուցանիշները. արագացած շնչառությունը, սիստոլային ճնշման նվազումը մինչև ≤ 90 մմ սնդիկի սյան, մուլտիլոբարային ինֆիլտրացիան, $Pa0_2/FiO_2$ ցուցանիշները, թոքերի արհեստական օդահարման անհրաժեշտությունը, սեպտիկ ցնցակաթվածի առկայությունը: Ստուգողական խմբում ներառված էին գործնականում առողջ նույն տարիքի ու սեռի 50 զինծառայողներ: Կատարվել են հետևյալ հետազոտությունները. արյան և մեզի կլինիկական հետազոտություն, արյան կենսաքիմիական հետազոտություն՝ ընդհանուր սպիտակուցն ու նրա ֆրակցիաները, կրեատինինը, ԱԼՏ-ը, ԱՍՏ-ը, բիլիռուբինն ու նրա ֆրակցիաները, կոագուլագրամման, իմունաֆերմենտային մեթոդով հետազոտվել են արյան սիճուկում կորտիզոլի, տեստոստերոնի, պրոլակտինի և որոշ հորմոնների (TTG, T_3, T_4, anti-TG և anti-TPO) մակարդակները:

Պրոլակտինի, կորտիզոլի և տեստոստերոնի մակարդակը որոշվել է զինծառայողների օրգանիզմում ցիրկադային ռիթմերի հաշվառմամբ: Կատարվել են նաև հետևյալ գործիքային հետազոտությունները. էՍԳ, էԽՈՍԳ, որովայնախոռոչի օրգանների սոնոգրաֆիա, կրծքավանդակի օրգանների ռենտգեն հետազոտություն, համակարգչային շերտագրում՝ ըստ ցուցումների:

---

[7] Տես *А. С. Димов, О. А. Волкова, Н. И. Максимов.* Клинико-организационные и некоторые деонтологические аспекты ведения больных с внебольничной пневмонией тяжелого течения. «Клиническая медицина», 2008, № 9; *Р. С. Козлов, О. В. Сивая, О. И. Кречикова, Н. В. Иванчик.* Динамика резистентности Streptococcus pneumoniae к антибиотикам в России за период 1999–2009 гг. (Результаты многоцентрового проспективного исследования ПеГАС). «Клиническая микробиология и антимикробная химиотерапия», 2010, т. 12, № 4; *А. Петри.* Наглядная медицинская статистика. М., 2009; *L. L. Dwyer, L. D. Harris-Kojetin, R. H. Valverde et al.* Infections in long-term care populations in the United States. “Journal of the American Geriatrics Society”, 2013, Vol. 61, N 3:

[8] Տես *Ռ. Ս. Կոզլով, Օ. Վ. Սիվայա, Օ. Ի. Կրեչիկովա, Ն. Վ. Իվանչիկ*, Նշ. աշխ., *Ս. Պետրի,* Նշ. աշխ., *M. Asada, M. Yoshida, T. Suzuki.* Macrolide antibiotics inhibit respiratory syncytial virus infection in human airway epithelial cells. “Antiviral research”, 2009, Vol. 83, N 2; *Յ. Ֆեշչենկո, Ֆ. Ղզյուբլիկ, Տ. Պերցևա,* Նշ. աշխ.:

Հետազոտության առաջին փուլում ուսումնասիրվել են արյան ընդհանուր հետազոտության տվյալները: Հետազոտության արդյունքները բերված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

ԱՀԹ-ՈՎ ՀԻՎԱՆԴՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ՊԵՐԻՖԵՐԻԿ ԱՐՅԱՆ ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Խմբեր	Ցուցանիշներ								
	Հեմոգլոբին	Էրիտրոցիտներ	Լեյկոցիտներ						
			Նեյտրոֆիլներ		Լիմֆոցիտներ	Էոզինոֆիլներ	Բազոֆիլներ	Մոնոցիտներ	ԷՆԱ
			Ցուպիկակորիզավոր	Հատվածակորիզավոր					
ստուգողական՝ 50 մարդ	135,4± 12,3	4,2± 0,32	1,3± 0,8	65,2± 3,45	25,8± 1,2	1,2± 0,38	0,4± 0,08	6,1± 0,4	11,3± 2,5
Հիվանդների խումբ (290 մարդ)									
Թեթև՝114 (39,4 %)	128,3± 10,4	4,5± 0,51	2,7± 0,08	61,1± 5,41	28,5± 2,8	0,9± 0,33	0,5± 0,1	6,3± 0,1	18,7± 1,7
Միջին ծանրության՝ 91 (31,5 %)	122,5± 11,8	3,2± 0,22	4,6± 1,0	64,7± 6,37	22,3± 2,1	1,4± 0,28	0,2± 0,09	6,0± 0,3	20,5± 2,3
ծանր՝ 47 (16,1%)	118,1± 9,7	3,3± 0,28	5,8± 1,3	60,2± 4,29	26,3± 1,9	1,5± 0,26	0,2± 0,07	6,0± 0,4	30,3± 2,8
Ծայրահեղ ծանր՝ 38 (13,0%)	109,2± 10,1	3,0± 0,31	7,4± 2,2	62,7± 3,52	22,2± 3,4	1,1± 0,19	0,5± 0,09	6,1± 0,7	48,1± 3,4

Ըստ հետազոտության տվյալների՝ ծանր և ծայրահեղ ծանր հիվանդների շրջանում նկատվում է հեմոգլոբինի և էրիտրոցիտների քանակի նվազման ակնհայտ միտում, լեյկոցիտների քանակը չի ավելանում և նույնիսկ նկատվում է նրանց նվազման միտում (տվյալ երևույթը կարող է պայմանավորված լինել համակշռիչ-հարմարումային մեխանիզմների սպառմամբ): Բոլոր խմբերում, բացառությամբ ԱՀԹ թեթև տեսակների, նկատվում է ցուպիկակորիզավոր նեյտրոֆիլների աճ: Լեյկոցիտոզ նկատվում է այն հիվանդների շրջանում, որոնց հիվանդությունը թեթև և միջին ծանրության է: Լիմֆոցիտոզ նկատվում է միայն թոքաբորբի թեթև տեսակով հիվանդ զինծառայողների շրջանում: Էրիտրոցիտների նստեցման արագության (ԷՆԱ) մեծացում նկատվում է բոլոր դեպքերում, և այն ուղիղ համեմատական է հիվանդի վիճակի ծանրության աստիճանին:

Արյան կենսաքիմիական ցուցանիշների տվյալների վերլուծությունը ներկայացված է աղյուսակներ 2-ում և 3-ում:

Աղյուսակ 2

ԱՀԹ-ՈՎ ՀԻՎԱՆԴՆԵՐԻ ԱՐՅԱՆ ԿԵՆՍԱՔԻՄԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

Արյան կենսաքիմիական ցուցանիշներ						
	Ընդհանուր սպիտակուց	ալբումին	գլոբուլին	կրեատինին	ԱՍՏ	ԱԼՏ
Ստուգողական՝ (50 մարդ)	74,7± 3,4	44,1± 2,9	30,5± 1,9	84,2± 4,3	34,1± 4,5	28,5± 2,6
Հիվանդների խումբ (290 մարդ)						
Թեթև՝ 114 (39,4 %)	67,5± 4,1	41,4± 3,1	28,2± 1,9	78,4± 4,3	30,1± 3,3	26,5± 2,5
Միջին ծանրության՝ 91 (31,5 %)	72,4± 5,8	46,2± 3,6	25,4± 1,8	94,5± 5,8	28,6± 2,8	32,4± 3,2
Ծանր՝ 47 (16,1%)	56,5± 3,8	32,5± 1,9	24,4± 2,8	110,6± 4,7	45,8± 3,	59,3± 2,1
Ծայրահեղ ծանր՝ 38 (13,0 %)	50,2± 4,1	24,1± 1,9	25,4± 2,8	132,8± 3,4	67,5± 5,1	72,8± 4,3

Աղյուսակ 3

ԱՀԹ-ՈՎ ՀԻՎԱՆԴՆԵՐԻ ԱՐՅԱՆ ԿԵՆՍԱՔԻՄԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

Արյան կենսաքիմիական ցուցանիշներ				
	Ընդհանուր բիլիռուբին	Ֆիբրինոգեն	Պրոտրոմբինային ինդեքս	C-ռեակտիվ սպիտակուց
Ստուգողական՝ 50 մարդ	17,4±3,1	4,2±0,7	88,0±3,8	3,7±0,8
Հիվանդների խումբ (290 մարդ)				
Թեթև՝ 114 (39,4%)	18,1±3,1	4,1±0,3	84,6±5,5	22,5±4,3
Միջին ծանրության՝ 91 (31,5%)	20,3±2,6	3,6±0,5	80,3±7,3	27,9±3,8
Ծանր՝ 47 (16,1%)	23,1±4,2	2,8±0,6	75,4±6,8	39,4±2,9
Ծայրահեղ ծանր՝ 38 (13,0%)	28,7±3,7	2,0 ±0,5	68,9±4,7	55,1±3,3

Ինչպես երևում է աղյուսակներ 2-ից և 3-ից, ծանր և ծայրահեղ ծանր ընթացք ունեցող թոքաբորբի դեպքում կան բազմաօրգանային ախտահարումների ախտանիշներ: Այսպիսով՝ ծանր և ծայրահեղ ծանր ընթացք ունեցող թոքաբորբի դեպքում նկատվում է ընդհանուր սպիտակուցի մոտավորապես 24,4–32,7 %-ով նվազում, ալբումինի մակարդակի նվազում՝ 26,3–45,3 %-ով, կրեատինինի ակնհայտ բարձրացում՝ 30–57 %-ով, ԱԼՏ մակարդակի բարձրացում՝ 108–155 %-ով ստուգողական խմբի համեմատությամբ, ԱՍՏ ցուցանիշի բարձրացում՝ 34,3–98,2 %-ով: Ընդհանուր բիլիռուբինի մակարդակը առավելապես բարձր է ծայրահեղ ծանր թոքաբորբներով հիվանդների շրջանում՝ մոտ 39,3 %, C-ռեակտիվ սպիտակուցի մակարդակի ակնհայտ բարձրացում դիտվում է բոլոր խմբերի հիվանդների շրջանում:

Հետազոտվող խմբի արյան հետազոտություններում առկա հորմոնային շեղումների փոփոխությունները բերված են աղյուսակներ 4-ում և 5-ում:

Աղյուսակ 4

ՀԵՏԱԶՈՏՎԱԾՆԵՐԻ ԱՐՅԱՆ ՍԻԶՈՒԿՈՒՄ ՊՐՈԼԱԿՏԻՆԻ, ԿՈՐՏԻԶՈԼԻ, ՏԵՍՏՈՍՏԵՐՈՆԻ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԸ

Արյան հորմոնային անալիզ			
	պրոլակտին	տեստոստերոն	կորտիզոլ
Ստուգողական՝ 50 մարդ	9,8±1,69	5,3±0,89	460,4±74,73
Հիվանդների խումբ (290 մարդ)			
Թեթև՝ 114 (39,4 %)	9,82±1,69	4,48±1,13	454,33±64,98
Միջին ծանրության՝ 91 (31,5 %)	10,68±3,32	4,45±1,13	434,63±74,98
Ծանր՝ 47 (16,1 %)	10,88±3,32	4,35±1,11	428,43±69,98
Ծայրահեղ ծանր՝ 38 (13,0 %)	11,22±3,32	4,26±0,93	411,63±68,78

Աղյուսակ 5

ՀԵՏԱԶՈՏՎԱԾՆԵՐԻ ԱՐՅԱՆ ՍԻԶՈՒԿՈՒՄ T_3-ի, T_4-ի, TTG-ի , anti-TG-ի, anti-TPO-ի ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԸ

Արյան հորմոնային անալիզ					
	T_3	T_4	TTG	Հակա TG	Հակա TPO
Ստուգողական՝ 50 մարդ	1,52± 0,23	7,38± 1,19	2,78± 1,35	23,86± 13,36	16,08± 9,20
Հիվանդների խումբ (290 մարդ)					
Թեթև՝ 114 (39,4 %)	1,25± 0,18	9,37± 1,92	2,02± 0,78	17,34± 7,96	7,95± 4,04
Միջին ծանրության՝ 91 (31,5 %)	1,38± 0,19	9,36± 1,60	2,10± 0,71	15,21± 4,62	7,19± 2,88
Ծանր՝ 47 (16,1 %)	1,33± 0,22	9,27± 1,39	1,90± 0,76	16,34± 7,96	7,84± 4,69
Ծայրահեղ ծանր՝ 38 (13,0 %)	1,33± 0,24	9,24± 1,57	1,89± 0,72	16,47± 8,28	7,98± 4,02

Հետազոտությունը ցույց է տալիս, որ գործնականում առողջ զինծառայողների համեմատությամբ հիվանդության բարդության աստիճանի մեծացմանը զուգընթաց դիտվում է պրոլակտինի մակարդակի բարձրացման, տեստոստերոնի և կորտիզոլի մակարդակների նվազման միտում:

Այսպիսով՝ հիվանդության բարդության աստիճանի աճմամբ նկատվում են արյան ընդհանուր կլինիկական հետազոտության հետևյալ փոփոխությունները. հեմոգլոբինի, էրիտրոցիտների և լեյկոցիտների քանակի նվազում, ցուպիկակորիզավոր նեյտրոֆիլների ակնհայտ ավելացում, հիվանդության թեթև ձևերի դեպքում նկատվում է լիմֆոցիտոզ: ԷՆԱ և C–ռեակտիվ սպիտակուցի ցուցանիշի բարձրացումը ուղիղ համեմատական է հիվանդության ծանրությանը: Ներզատիչ գեղձերի հակազդումը ԱՀԹ-ին պարադոքսային է: Մենք ենթադրում ենք, որ միջին ծանրության, ծանր և ծայրահեղ ծանր

ընթացք ունեցող թոքաբորբերի դեպքում օրգանիզմի երկարատև հարմարումային ռեսուրսների օրինաչափորեն զարգացող հյուծման հետևանքով կատարվում է նյարդաներզատիչ օղակի ակտիվացում հետևյալ հաջորդականությամբ՝ պրոլակտին–գլյուկոկորտիկոիդներ–տեստոստերոն: Հետազոտվողների խմբի արյան սիճուկում կորտիզոլի մակարդակի նվազման միտումը կարող է հանգեցնել աղեստամոքսային տրակտի խանգարումների, մկանային ցավերի, հոգնածության մշտական զգացողության, դյուրագրգռության և այլն: Պրոլակտինի բարձրացման ազդեցությամբ օրգանիզմում ուժգնորեն արտադրվում է էստրոգեն, ինչը ինքնին նվազեցնում է տեստոստերոնի մակարդակը: Երկարատև հիպերպրոլակտինեմիան կարող է առաջացնել վերարտադրողական ֆունկցիաների խանգարում երիտասարդների օրգանիզմում:

Հաշվի առնելով վերը նշված փոփոխությունները՝ անհրաժեշտ ենք համարում հիվանդների հետազոտման դեպքում կատարել հորմոնային հետազոտություններ, իսկ խանգարումների առկայության դեպքում՝ հիվանդներին պահել նաև ներզատաբանի (էնդոկրինոլոգ) դինամիկ հսկողության ներքո: Բուժում նշանակելիս խորհուրդ տալ խուսափել ստրեսային իրավիճակներից, ապահովել կանոնավոր քուն, հետևել սահմանված սննդակարգին: Հիմնական հիվանդության բուժումից հետո հիվանդը պետք է դեռ մնա ներզատաբանի լիարժեք հսկողության տակ և միջոցներ ձեռնարկի տեղ գտած հորմոնային խանգարման կարգավորման համար:

ВОЕННАЯ МЕДИЦИНА

НЕКОТОРЫЕ ОСОБЕННОСТИ ТЕЧЕНИЯ ВНЕБОЛЬНИЧНОЙ ПНЕВМОНИИ У ВОЕННОСЛУЖАЩИХ

М. В. САРГСЯН, подполковник м/с, кандидат медицинских наук, доцент кафедры военно-полевой терапии ЕГМУ

РЕЗЮМЕ

На основе данных, полученных в рамках клинического анализа периферической крови, биохимического анализа крови, гормональных анализов, а также ряда инструментальных исследований среди 290 военнослужащих в возрасте 18-20 лет в статье оценивается связь клинических, биохимических и гормональных показателей со степенью тяжести внебольничной пневмонии.

Результаты исследования показывают, что с ростом степени тяжести заболевания наблюдаются следующие изменения в анализах крови: понижение гемоглобина, количества эритроцитов и лейкоцитов; явное увеличение палочкоядерных нейтрофилов; при легких формах заболевания наблюдается лимфоцитоз. Повышение СОЭ и показателя С-реактивного белка прямо пропорционально тяжести

заболевания. Реакция эндокринных желез на ВБП парадоксальна: с повышением степени тяжести болезни наблюдается тенденция к повышению уровня пролактина, понижению уровня тестостерона и уровня кортизола. Таким образом, при пневмониях средне тяжелого, тяжелого и крайне тяжелого течения в результате закономерно развивающегося истощения ресурсов длительной адаптации организма происходит активация нейроэндокринного звена в следующей последовательности: пролактин-глюкокортикоиды-тестостерон. Учитывая вышеуказанные изменения, считается необходимым при обследовании больных производить гормональные исследования, а при наличии нарушений − взять больных также под динамический контроль эндокринолога.

MILITARY MEDICINE

SOME PECULIARITIES OF THE PROGRESS OF COMMUNITY-ACQUIRED PNEUMONIA IN THE MILITARY

M. V. SARGSYAN, Lieutenant Colonel of Medical Service, PhD of Medical Sciences, Associate Professor, Chair of Military Field Therapy, YSMU

SUMMARY

The article argues the relation between clinical, biochemical and hormone levels and the severity of community-acquired pneumonia (CAP), drawn from the data received from the complete analysis of peripherical blood, blood chemistry tests, endocrine tests, and a set of instrumental methods of examination among 290 militaries aged 18-20.

The research findings show that with the developing pneumonia severity the following changes occur in the blood tests: decrease in haemoglobin, erythrocyte and leucocyte levels; apparent increase in stab neutrophils, while in the mild course of disease lymphocytosis is detected. The ESR increase and elevation of C-reactive protein are directly related to the severity of illness. The reaction of endocrine glands to the CAP is paradoxical: with the growing severity of illness, there is a trend of elevation of prolactin level, and decline in testosterone and cortisol levels. Thus, when moderate to severe, severe or overwhelming pneumonia is developing, in the train of the naturally developing depletion of resources of the organism's long-term adaptation, the activation of neuroendocrine link occurs in the following prolactin–glucocorticoids–testosterone sequence. With a view on the aforementioned changes, the hormone testing of patients is considered necessary, in case of any disorders being revealed, endocrinologist's follow-up be required as well.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ 100-ԱՄՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԻ ԱՌԹԻՎ

Է. Գ. ՄԻՆԱՍՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան, «Հայկական բանակ» ՈԳՀ գիտախորհրդատվական խորհրդի անդամ

1941 թ. հունիսի 22-ին ԽՍՀՄ-ի դեմ ֆաշիստական Գերմանիայի հարձակմամբ սկսվեց խորհրդային ժողովուրդների Հայրենական մեծ պատերազմը: Հայ ժողովուրդն իր առանձնահատուկ ավանդն ունեցավ ֆաշիզմի դեմ հաղթանակի գործում: Նրա զավակները հերոսաբար կռվում էին խորհրդա-գերմանական ճակատի տարբեր հատվածներում, մասնակցում հիտլերականների դեմ Եվրոպայի տարբեր ժողովուրդների ազատագրական պայքարին, անխոնջ աշխատանքով թիկունքում օգնում կերտելու հաղթանակը:

Մեր ժողովրդի համար այդ վճռորոշ ժամանակահատվածում Երևանի պետական համալսարանը պատերազմի առաջին իսկ օրվանից ակտիվ կերպով մասնակցեց Խորհրդային Հայաստանում ծավալված ռազմահայրենասիրական, զորահավաքային և թիկունքային աշխատանքներին: Հայրենականի նախօրեին մայր կրթօջախի լեզվագրական, պատմության, իրավագիտության, տնտեսագիտության, կենսաբանության, քիմիայի, երկրաբանաաշխարհագրական և ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետներում սովորում էր 1461 ուսանող, 68 ասպիրանտ, դասավանդում էր 19 պրոֆեսոր, 53 դոցենտ, 94 ավագ դասախոս և 54 ասիստենտ: 1941 թ. համալսարանն ուներ 41 ամբիոն[1]:

Երևանի պետական համալսարանի պրոֆեսոր Փ. Ենգոյանը նկարագրել է, թե ինչպես են համալսարանում ընդունել Հայրենական մեծ պատերազմի մասին լուրը. «1941 թ. հունիսի 22-ի ժամը տասներկուսն էր, համալսարանի միջանցքներում ընդհանուր լռություն էր տիրում: Ուսանողները ֆակուլտետներին ու ամբիոններին կից կաբինետներում քննությունների էին պատրաստվում: Հիշում եմ այսօրվա նման՝ ակադեմիկոս Մառի անվան կաբինետում պատմության ֆակուլտետի երկրորդ կուրսի ուսանողները կոնսուլտացիայի էին կանչվել: Այն անց էր կացնում պրոֆեսոր Վահան Ռշտունին, երբ մենք կլանված լսում էինք նրան, լացակումած ներս եկավ կաբինետի վարիչ Աստղիկ Խոնդկարյանը և հայտնեց, որ գիշերը ֆաշիստները ռմբակոծել են

[1] Տես «Երևանի համալսարանը Մեծ հայրենականում»: «Երևանի համալսարան» շաբաթաթերթ, 1985 թ. մայիսի 9, հմ. 17–18, էջ 1:

մեր քաղաքներն ու գյուղերը: Այս լուրի ազդեցության տակ բոլորս ոտքի կանգնեցինք և սպասեցինք պրոֆեսորի խոսքին: Նա իր բնավորության համաձայն հանգիստ դիմեց մեզ. «Ես բազմիցս լսել եմ ձեզանից ու ձեր ընկերներից, որ եթե հարկ լինի, դուք ձեր գրիչները կփոխարինեք զենքով և կպաշտպանեք սոցիալիստական հայրենիքը: Հասել է ժամը,– ասաց նա,– որ գործի վերածեք ձեր խոստումները»: Նրա պարտավորեցնող խոսքից հետո դուրս եկանք միջանցք: Մեկ-երկու րոպե անց անսովոր արագությամբ ուսանողները դուրս եկան նաև մյուս կաբինետներից: Ուսանողների հավաքը միջանցքում սովորականի նման չէր: Միմյանց նայելիս անմիջապես զգում էինք, որ բոլորս էլ փոխվել ենք, լրջացել, զգաստացել: Նույն օրը համալսարանի մեծ դահլիճում տեղի ունեցավ միտինգ: Առանձնապես տպավորիչ էին պատմաբան-դասախոսներ Ներսես Պողոսյանի, Սերոբ Պողոսյանի, Համո Հարությունյանի, համալսարանի ռեկտոր Գարեգին Պետրոսյանի, կուսկոմիտեի քարտուղար Դավիթ Դավթյանի և ԼԿԵՄ կոմիտեի քարտուղար Պետիկ Փիրումյանի ելույթները: Նրանք կոչ արեցին պաշտպանելու հայրենիքը այնպես, ինչպես պաշտպանել են մեր նախնիները դեռևս շատ դարեր ու տարիներ առաջ գերմանական օրդենների, շվեդների, մոնղոլ-թաթարների, սելջուկների, արաբների, պարսկական խաների ու թուրքական փաշաների արշավանքների ժամանակ»[2]:

Հայրենիքի պաշտպանության նպատակով Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում սկսվեց մեծ հայրենասիրական շարժում: Պարբերաբար գումարվում էին նիստեր, ժողովներ, ցույցեր, որտեղ ռեկտորատի ներկայացուցիչները և դասախոսները, իրենց ելույթներում հիշատակելով հայ ժողովրդի անցած պատմական ուղին, նրա մղած ազգային-ազատագրական շարժումների հերոսական էջերը, հայրենասիրական բոցաշունչ կոչերով կամավոր կերպով զինվորագրվում էին հայրենիքի պաշտպանության սուրբ գործին՝ այն համարելով քաղաքացիական պարտականություն և ազգային արժանապատվության գործ:

Հունիսի 23-ին համալսարանի մի խումբ ուսանողներ, այդ թվում՝ աղջիկներ, ներկայացել էին զինվորական կոմիսարիատ և հարցում արել, թե երբ կարող են մեկնել Կարմիր բանակ կամ արդյոք կարող են ցուցակագրվել կամավորական ջոկատներում: Մեկ օր անց պատմության, երկրաբանաաշխարհագրական, իրավագիտության ֆակուլտետների ուսանողներից բաղկացած մի խումբ ներկայացավ զինկոմիսարիատ և խնդրեց զինկոմ գնդապետ Բիլբուլյանին իրենց ժամանակից շուտ ուղարկել բանակ: Կոմիսարը հատուկ գրությամբ շնորհակալություն հայտնեց համալսարանի ռեկտոր Գարեգին Պետրոսյանին ուսանողների ցուցաբերած հայրենասիրության համար և խնդրեց բացատրել նրանց, որ բանակ զորակոչելու հարցը կորոշի կոմիսարիատը՝ ըստ անհրաժեշտության[3]:

---

[2] *Փ. Ենգոյան,* Երևանի համալսարանը Մեծ հայրենականի տարիներին: Ե., 1975, էջ 9–10:

[3] Տես նույն տեղում, էջ 11:

Համալսարանի լավագույն դասախոսներ Հրաչյա Աճառյանը, Արսեն Տերտերյանը և Հովհաննես Կարապետյանը 1941 թ. հուլիսի 3-ին «Սովետական Հայաստան» թերթում հանդես եկան մի հոդվածով, որտեղ գրում էին. «Գիտակցելով ոոպեի մեծությունն ու լրջությունը՝ մենք էլ, չնայած մեր ծերացած հասակին, պատրաստ ենք մեր կառավարության առաջին իսկ կոչին նետվել կռվի՝ ի սպաս դնելու մեր ուժերն ու գիտելիքները մեր լայնածավալ հայրենիքի համար»[4]:

1941 թ. հուլիսի 11-ին համալսարանի ուսանողները Երևանի երկաթուղային կայարանում հայ ժողովրդի հարյուրավոր այլ զավակների հետ բանակ ուղարկեցին իրենց ընկերներին, որոնց թվում էին Պարույր Առաքելյանը, Դրաստամատ Ավագյանը, Մխիթար Մկրտչյանը, Վահրամ Պետրոսյանը, Հրաչիկ Պառավյանը, Վիկտոր Սարգսյանը, Վոլոդյա Սարգսյանը, Միշա Երիցյանը, Գարուշ Մնացականյանը, Գագիկ Մովսիսյանը, Բագրատ Նալբանդյանը[5]: Մեկնելուց առաջ պատմության ֆակուլտետի ուսանողներ Դրաստամատ Ավագյանը և Բարդուխ Գևորգյանը, որոնք մինչ այդ ծառայել էին բանակում, իրենց ուսանող ընկերներին դիմեցին հետևյալ խոսքով. «Ինչպես տեսնում եք, մենք արդեն զինվորագրվեցինք Կարմիր բանակին: Հեռանալով ձեզանից՝ մենք ցանկանում ենք, որ հաղթանակը թշնամու դեմ տանենք առանց ձեզ, իսկ դուք ծառայեք հայրենիքին խաղաղ աշխատանքով»[6]:

Միայն 1941 թ. տարբեր ռազմաճակատներ մեկնեցին 360-ից ավելի ուսանողներ և դասախոսներ, իսկ պատերազմի հետագա չորս տարիների ընթացքում համալսարանից ճակատ մեկնեց ավելի քան 500 մարդ: Նրանցից շուրջ 300-ը զոհվեց հանուն հայրենիքի խաղաղ ու անվրդով կյանքի: Ռազմաճակատ մեկնած 800-ից ավելի համալսարանականներից 213-ը կոմունիստներ էին, իսկ 628-ը՝ կոմերիտականներ[7]:

Ռազմաճակատ մեկնեց նաև համալսարանի այն ժամանակվա ռեկտոր Գարեգին Պետրոսյանը: Նույն զորամասում՝ 408-րդ հայկական հրաձգային դիվիզիայում, իր ճակատային ռազմական ծառայությունն անցկացրեց համալսարանի դասախոս և հետագա տարիների ռեկտոր Մկրտիչ Ներսիսյանը: Երկուսն էլ զորացրվեցին միայն ծանր վիրավորվելու պատճառով[8]: Համալսարանականները ռազմական գործողություններին մասնակցեցին բոլոր ռազմաճակատներում: Պարգևատրվեցին բազմաթիվ շքանշաններով ու մեդալներով, իսկ ԵՊՀ ռազմագիտության ամբիոնի վարիչ գեներալ-մայոր Անդրանիկ Ղազարյանը և ԵՊՀ ֆիզմաթ ֆակուլտետի ուսանող Արտաշես Ղազարյանը արժանացան Խորհրդային Միության հերոսի կոչման:

Համալսարանը ավարտած մեծ թվով մասնագետներ՝ ինժեներներ, մե-

[4] Տես «Երևանի պետական համալսարանի պատմությունից»: Ե., 2018, էջ 67:

[5] Տես *Փ. Ենգոյան,* Նշ. աշխ., էջ 11:

[6] Տես նույն տեղում, էջ 11–12:

[7] Տես «Երևանի համալսարանը Մեծ հայրենականում»: «Երևանի համալսարան» շաբաթաթերթ, 1985 թ. մայիսի 9, հմ. 17–18, էջ 1:

[8] Տես *Հ. Բարսեղյան,* Երևանի պետական համալսարանը 1941–1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում: «Հանդես Երևանի համալսարանի», 1995, հմ. 2:

խանիկներ, երկրաբաններ, քիմիկոսներ, ֆիզիկոսներ ու մաթեմատիկոսներ, մասնակցել էին խորհրդային շինարարությանը և հասել զգալի հաջողությունների: Նրանք ակտիվորեն շարունակեցին իրենց գործը նաև Հայրենական մեծ պատերազմի տարիներին:

Համալսարանն անգնահատելի աշխատանք կատարեց նաև հայրենական գիտության զարգացման ուղղությամբ: Պատերազմի նախօրյակին համալսարանի ամբիոններում ու լաբորատորիաներում մշակվեցին բազմաթիվ գիտակրթական հիմնախնդիրներ, կատարվեցին արժեքավոր հայտնագործություններ, որոնք ներդրվեցին հանրապետության ժողովրդական տնտեսության մեջ: Համալսարանի քիմիական, ֆիզիկամաթեմատիկական, երկրաբանաաշխարհագրական ֆակուլտետների ամբիոնները, մշտական կապի մեջ լինելով հանրապետության արդյունաբերական ձեռնարկությունների կոլեկտիվների հետ, օգնեցին նրանց արտադրական գործընթացների տեխնիկական հագեցվածությունը բարձրացնելու, ժողովրդական տնտեսության ռեսուրսները ճշգրտորեն հաշվարկելու և արտադրական առօրյայում բազմաթիվ խնդիրներ լուծելու գործում: Համալսարանի հայագիտական ամբիոնները խոր գիտական ուսումնասիրություններ կատարեցին հայ ժողովրդի պատմության, լեզվի ու գրականության բնագավառներում:

Պատերազմի առաջին ամիսներին ռազմաճակատներում մարտական գործողությունների ընթացքը Կարմիր բանակի համար անբարենպաստ էր: Չնայած հերոսական պաշտպանական մարտերին և բազում սխրանքներին՝ 1941 թ. հուլիսին խորհրդային զորքերը հարկադրված թողեցին Լատվիան, Լիտվան, Բելառուսիան և Ուկրաինայի մեծ մասը: Ստեղծված դժվարին իրավիճակից դուրս գալու համար անհրաժեշտ էր ամբողջ երկիրը վերածել մեկ մարտական ճամբարի՝ բոլոր ռեսուրսների կենտրոնացմամբ: «Ամեն ինչ ռազմաճակատի համար» նշանաբանով թիկունքում մոբիլիզացվեց ամբողջ աշխատանքային ներուժը՝ արդյունաբերությունը պատերազմի ժամանակաշրջանին համապատասխան վերակառուցելու, գյուղատնտեսական մթերքների արտադրությունն ընդլայնելու, գիտական նորարարություններ կատարելու և դրանք ժողովրդական տնտեսության մեջ ներդրելու, հայրենասիրական թեմաներով ստեղծագործելու ուղղություններով:

1941 թ. ամռան երկու ամիսների ընթացքում Համալսարանի ռեկտորատը, վերադասի ցուցումների համաձայն, վերանայեց ուսումնական ծրագրերը և, ավելացրեց ռազմագիտության ուսուցման դասաժամերը: Համալսարանում մշակվեց կոլեկտիվի անդամների ռազմահայրենասիրական դաստիարակության միջոցառումների ծրագիր: 1941 թ. համալսարանի ուսանողներն ու դասախոսները սովորականից 10 օր շուտ վերադարձան ամառային արձակուրդից: Նրանցից ամեն մեկը զեկույց ներկայացրեց ռեկտորատին, կուսակցական և ԼԿԵՄ կոմիտեներին՝ բերքահավաքի ժամանակ կոլտնտեսություններում ու սովխոզներում կատարած աշխատանքի մասին: Ֆիզիկամաթեմատիկական և պատմության ֆակուլտետների մի քանի ուսանողներ իրենց զեկույցները համալսարան ուղարկեցին Ղարաբաղից կամավոր հիմունքներով բանակ մեկնելուց առաջ:

Առանձնապես մեծ տպավորություն գործեցին երկրաբանաաշխարհագրական ֆակուլտետի ուսանող Սասունիկ Գրիգորյանի և պատմության ֆակուլտետի ուսանող Մուշեղ Սաֆարյանի նամակները: Համալսարանի սաները դասընկերներին ու դասախոսներին հավաստիացնում էին, որ իրենք Կարմիր բանակի շարքերում կկռվեն ու կպայքարեն հայրենասիրաբար և բարձր կպահեն սիրելի համալսարանի պատիվն ու հեղինակությունը: Շատ հուզիչ էր Գրիգորյանի նամակի ավարտական մասը. «Սիրելի՛ Պետիկ (խոսքը ԵՊՀ ԼԿԵՄ Կոմիտեի քարտուղար Պետիկ Փիրումյանի մասին է– *Է. Մ.*), ինչպես գիտես, ես ծնողներիս միակ տղան եմ: Այլևս նրանց մոտիկից մխիթարելու և ուրախություն պատճառելու հնարավորություն չունեմ: Չնայած նրանք ուրախալից նամակներ են գրում ինձ, բայց ներքուստ հասկանում եմ, որ դա նրանց վիճակի իսկական պատկերը չէ: Խնդրում եմ, ընկերների հետ հաճախակի այցելեք նրանց և մխիթարեք իմ փոխարեն: Ես հավատով լցված եմ մեր հաղթանակի նկատմամբ, բայց թե կվիճակվի՞ ինձ վերադառնալ և նորից գրկախառնվել նրանց հետ, դժվարանում եմ ասել: Եթե հազարավոր եղբայր ռազմիկների հետ ընկնեմ ռազմադաշտում, իմացեք, որ նրանք կընդունեն ձեզ իմ փոխարեն»[9]:

Հաջորդ օրը՝ առավոտյան, երկրաբանաաշխարհագրական ֆակուլտետի ուսանողները, որոնք ապրում էին հանրակացարանում, այցելության գնացին Սասունիկ Գրիգորյանի ծնողներին՝ թաքցնելով նրանց որդու գրած նամակի բովանդակությունը: Հետևելով նրանց օրինակին՝ օգոստոսի 31-ին ուսանողները նման կերպով այցելեցին Կարմիր բանակ մեկնած այն ընկերների ծնողներին, որոնք ապրում էին Երևանում: Այդ օրը համալսարանի բոլոր ուսանողների հիշողության մեջ մնաց որպես այցելությունների օր՝ ի պատիվ իրենց հայրենասեր ընկերների ու նրանց ծնողների:

1941 թ. սեպտեմբերի 16-ին համալսարանի կուսակցական ակտիվի նիստը որոշեց ստեղծել աշխարհազորային վաշտեր, հրամանատարներ նշանակել զինվորական գործն իմացող սպաների, իսկ քաղաքացիական գծով տեղակալներ՝ կուսակցական կոմիտեի և ֆակուլտետային բյուրոների քարտուղարներին[10]: Ակտիվի նիստի որոշմամբ՝ Համալսարանի աշխարհազորի ընդհանուր հրամանատար նշանակվեց ռազմական ամբիոնի դասախոս, լեյտենանտ Արտիկ Միքայելյանը, իսկ կոմիսար՝ առաջին քարտուղար Դավիթ Դավթյանը: Աշխարհազորերում ուսանողության ու դասախոսական կազմի ռազմապաշտպանական ուսուցման գործի կազմակերպման ընդհանուր պատասխանատվությունը դրվեց համալսարանի ռեկտոր Գարեգին Պետրոսյանի վրա: Հաջորդ օրը՝ սեպտեմբերի 17-ին, համալսարանի բակում հավաքվեցին բոլոր դասախոսները, վարչական համակարգի աշխատողներն ու ուսանողները: Տեղում, ըստ ֆակուլտետների, նշանակվեցին դասակների հրամանատարներ ու քաղաքացիական գծով նրանց տեղակալներ: Աշխարհազորի հրամանատար Արտիկ Միքայելյանը աշխարհազորականնե-

[9] Տես *Փ. Ենգոյան*, Նշ. աշխ., էջ 15:

[10] Տես Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 1, ց. 1, գ. 4, թ. 28:

րին ծանոթացրեց ռազմապաշտպանական ուսուցման ծրագրերին և հրապարակեց պարապմունքների օրերն ու ժամերը: Աշխարհազորայինները ուսումնասիրում էին ռազմավարություն ու մարտավարություն առարկաները, ծանոթանում ժամանակակից զինատեսակներին, անցկացնում գործնական մարտավարական վարժանքներ, ինչպես նաև ակտիվորեն մասնակցում էին մայրաքաղաքի տարբեր շրջաններում ռազմապաշտպանական նախանշանակմամբ կառույցների պատրաստման աշխատանքներին:

Աշխարհազորային պարապմունքները հաջողությամբ կազմակերպելու և մայրաքաղաքի ռազմապաշտպանական կառույցներին ակտիվորեն մասնակցելու համար 1941 թ. հոկտեմբերին համալսարանի կոլեկտիվը շնորհակալագիր ստացավ Երևանի կայազորի հրամանատարից: Շնորհակալագիրը ստանալուց հետո աշխարհազորի հրամանատար Արտիկ Միքայելյանը հավաստիացրեց, որ այսուհետև աշխարհազորում ռազմական ուսուցումը կկազմակերպվի այնպես, որ ամեն մի աշխարհազորային՝ դասախոս, թե ուսանող, դառնա ռազմականորեն պատրաստված մարտիկ: Եվ իրոք, գործող բանակ մեկնած բազմաթիվ համալսարանականներ ընկերներին գրած նամակներում հիշատակում էին, որ աշխարհազորի պարապմունքների ժամանակ ստացած իրենց գիտելիքները ռազմադաշտում եղել են շատ օգտակար:

1941 թ. համալսարանում ուսանողուհիների համար կազմակերպվեցին բժշկասանիտարական՝ բուժքույրական, դասընթացներ: Ուսանողուհիները սովորում էին բժշկագիտական ընդհանուր հիմունքներ, հիվանդներին ու վիրավորներին առաջին բուժօգնություն ցույց տալու ձևեր ու մեթոդներ: Օրական մի քանի ժամ դասախոսություններ լսելուց հետո դասընթացի ունկնդիրները գործնական պարապմունքներ էին անցկացնում զինվորական հիվանդանոցներում (հոսպիտալներում): Նրանցից ամեն մեկը սովորաբար շաբաթական 1-2 օր պարտադիր կարգով հերթապահում էր հոսպիտալներում: Բուժքույրական դասընթացների առաջին շրջանավարտների (1941 թ. սեպտեմբեր) մի մասը ծառայության մեկնեց հանրապետության հիվանդանոցներ ու հոսպիտալներ, իսկ մյուս մասը՝ տարբեր ռազմաճակատներ: Համալսարանի ԼԿԵՄ կոմիտեի 1941 թ. հաշվետու զեկուցման մեջ նշվում էր, որ բուժքույրական դասընթացներում սովորել և բուժսանիտարական ծառայության է մեկնել 180 աղջիկ[11]: Բուժքույրական դասընթացները համալսարանում գործեցին մինչև 1944 թվականը:

1941 թ. հոկտեմբերի վերջին համալսարանի մեծ դահլիճում հրավիրվեց ուսանողական ընդհանուր ժողով, որտեղ ընդարձակ զեկուցումով հանդես եկավ համալսարանի աշխարհազորի հրամանատար Արտիկ Միքայելյանը: Այդ հայրենասեր զինվորականն իր ազդեցիկ ելույթով այն աստիճան ոգևորեց ժողովականներին, որ զեկուցումից հետո դեսանտային զորամասերում ծառայության մեկնելու համար դիմումների տարափ տեղաց. մեկնելու համար կամավոր հիմունքներով ցուցակագրվեց շուրջ 150 ուսանող: Ժողովի վերջում համալսարանականները կոչով դիմեցին հանրապետության բուհե-

[11] Տես *Փ. Ենգոյան,* Նշ. աշխ., էջ 16:

րի ուսանող երիտասարդությանը, որպեսզի նրանք, հետևելով իրենց օրինակին, զինվորագրվեն կամավորական շարժմանը:

Ռեկտորատի հանձնարարությամբ դեկանատները, ամբիոնները, կուսակցական, արհմիութենական և ԼԿԵՄ բյուրոները ուսումնասիրեցին յուրաքանչյուր ուսանողի ապրելակերպը, նրա նյութական միջոցները, ապահովության աստիճանը, ընտանեկան վիճակը և այլն: Բոլոր կարիքավոր ուսանողները հաշվառվեցին և արժանացան յուրահատուկ վերաբերմունքի. նրանց զիջեցին ուսման վարձը, պարբերաբար տվեցին դրամական օգնություն, արհկոմիտեի միջոցներով ապահովեցին հագուստով, ամառային ու ձմեռային արձակուրդներին ուղարկեցին առողջարաններ ու հանգստյան տներ:

Ռեկտորատը, հասարակական կազմակերպությունները հատուկ ուշադրություն էին ցուցաբերում Հայրենական պատերազմի ռազմաճակատներում զոհված կամ գործող բանակում գտնվող զինվորականների զավակների նկատմամբ: Բացի օգնության վերոհիշյալ ձևերից, ուսանողներն օգտվում էին նաև օրենքով նախատեսված արտոնություններից: 1942–1945 թթ. համալսարանում սովորող շատ կարիքավոր ուսանողներ խոստովանել են, որ եթե չլիներ համալսարանի ղեկավարության հոգածությունը, ապա դժվար թե կարողանային մինչև վերջ սովորել և ավարտել համալսարանը:

Համալսարանի ռեկտորատի, հասարակական կազմակերպությունների, դեկանատների, ամբիոնների և դասախոսական կազմի հայրենանվեր աշխատանքի շնորհիվ համալսարանը պատերազմի բոլոր տարիներին կատարեց բարձրագույն կրթությամբ մասնագետ կադրերի պատրաստման ուղղությամբ պետության առաջադրած խնդիրները: Այդ տարիներին համալսարանն ավարտեցին և ժողովրդական տնտեսության տարբեր բնագավառներում աշխատանքի անցան հարյուրավոր քիմիկոսներ, ֆիզիկոսներ, մեխանիկներ, մաթեմատիկոսներ, տնտեսագետներ, երկրաբաններ, աշխարհագրագետներ, բանասերներ, պատմաբաններ ու իրավաբաններ:

1942 թ. Պաշտպանության պետական կոմիտեն ՀԽՍՀ-ին տվեց նոր տեսակների ռազմական արտադրանք թողարկելու առաջադրանք: Նշված խնդիրը կատարելու համար անհրաժեշտ էր վերակառուցել արտադրական պրոցեսները, մշակել արտադրանքի թողարկման նոր տեխնոլոգիաներ: Այդ գործում արտադրական կոլեկտիվներին մեծ օգնություն ցուցաբերեցին հանրապետության գիտահետազոտական ինստիտուտներն ու բարձրագույն ուսումնական հաստատությունները, այդ թվում՝ Երևանի պետական համալսարանը: Համալսարանի ամբիոններն ու լաբորատորիաները մշակեցին և արտադրության մեջ ներդրեցին մի շարք նորարարություններ, ինչպիսիք են, օրինակ, քիմիկոսների մշակած ածուխի, ֆիզիոլոգիական աղի ստացման տեխնոլոգիաները: Միութենական կառավարության հանձնարարությամբ ուսումնասիրվեցին Ագարակի ու Փիրդոուդանի (Քաջարանի) հանքերը, և 909 նմուշի մեջ ճշգրտվեց պղնձի քանակը, տեղական նյութից մշակվեց կավիճ ստանալու տեխնոլոգիա, լուծվեց բուսական յուղերի գեներացիայի խնդիրը և այլն: Համալսարանի երկրաբանները հետազոտեցին հանրապետության հանքային հարստությունները և ճշտեցին դրանցում եղած պաշարները,

տնտեսագետները օգնեցին հանրապետության պլանավորող կազմակերպություններին կատարելու հումքային ու աշխատանքային ռեզերվների ճիշտ հաշվառում[12]:

Արտադրության մեջ աշխատող ինժեներատեխնիկական անձնակազմի և բանվորների մասնագիտական-տեխնիկական գիտելիքների մակարդակը բարձրացնելու համար համալսարանի գիտնականները բազմաթիվ զեկուցումներ կարդացին գործարաններում ու ֆաբրիկաներում, հրավիրեցին գիտաժողովներ ու գիտական նստաշրջաններ:

Հարյուրավոր ուսանողներ ու դասախոսներ պարապմունքներից հետո Երևանի երկաթուղային կայարանում ու ավտոկայաններում մասնակցեցին բարձման ու բեռնաթափման աշխատանքներին: Նրանք ակտիվ կերպով ներգրավվեցին նաև մայրաքաղաքի փողոցների, տրամվայի գծերի, ջրատար խողովակաշարերի կառուցման ու նորոգման աշխատանքներում[13]:

Իրենց սեփական միջոցների խնայողությունների հաշվին համալսարանի դասախոսներն ու ուսանողները պատերազմի սկզբին զգալի դրամական միջոցներ տրամադրեցին տանկային շարասյունների կառուցման համար: Համալսարանի ԼԿԵՄ կոմիտեի 1942 թ. մարտի 21-ին տրված հաշվետվության մեջ նշված է, որ կոմերիտականների ուժերով միայն 6 ամսում հավաքվեց ու պետությանը հանձնվեց 235 տոննա գունավոր մետաղ, 5820 ռուբլի փոխառության պարտատոմս, կիրակնօրյակների միջոցով՝ 5373 ռուբլի: Նրանք պաշտպանական ֆոնդի համար հանձնեցին 3670 ռուբլու կոմերիտական չերվոնեց, բանակայինների ընտանիքներին օգնելու համար՝ 1780 ռուբլի[14]:

Համալսարանականները ակտիվորեն մասնակցեցին Կարմիր բանակի համար տաք հագուստներ հավաքելու, նվեր-ծանրոցներ ուղարկելու, ինչպես նաև շրջափակումից ազատագրված բնակչությանն օգնելու, ավերված տնտեսությունը վերականգնելու գործին: 1942–1943 թթ. համալսարանի ռեկտորատը, կուսակցական և ԼԿԵՄ կոմիտեները գործող բանակի զորամիավորումներից ստացան շնորհակալական նամակներ իրենց հասցեով ուղարկված արժեքավոր նվեր-ծանրոցների համար:

Համալսարանում ստեղծվեցին հոսպիտալներին կից հանձնաժողովներ, որոնց միջոցով ռեկտորատը հոսպիտալներին տրամադրեց գույք, գրականություն, կուլտուր-կենցաղային այլ իրեր[15]: Պատերազմի տարիներին համալսարանի կոլեկտիվը ուշագրավ աշխատանք կատարեց նաև մայրաքաղաքում հակաօդային պաշտպանության կազմակերպման ու ղեկավարման ուղղությամբ: Ստեղծվեց հակաօդային պաշտպանության շտաբ, որը կազմակերպեց հակաօդային պաշտպանության հատուկ խմբակներ: Շտաբը կոլեկտիվի անդամներին մասնակից դարձրեց գազապաստարանների և թաքստոցների կառուցմանը, ուսումնական մասնաշենքերում ու հանրակա-

[12] Տես ՀԱԱ, ֆ. 116, ց. 1, գ. 83, թ. 21–22:

[13] Տես նույն տեղում, գ. 76, թ. 16–17:

[14] Տես նույն տեղում, թ. 19–20:

[15] Տես նույն տեղում, գ. 69, թ. 28–29:

ցարաններում սահմանեց լուսաքողարկման ռեժիմ, կազմակերպեց հակաօդային պաշտպանության ուսուցման գործը: Պաշտպանական աշխատանքներ կատարեց նաև համալսարանից դուրս՝ քաղաքի թաղամասերում, կարևոր ձեռնարկություններում:

1942 թ. նոյեմբերի 6-ին Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 24-րդ տարեդարձի առթիվ տեղի ունեցած հանդիսավոր նիստում համալսարանի դասախոսները, ուսանողներն ու վարչատնտեսական աշխատողները, բաց նամակով դիմելով ՀամԿ(բ)Կ կենտկոմին, հայտնեցին իրենց պատրաստակամությունը ամեն կերպ օգնելու Կարմիր բանակին, բավարարելու նրա կարիքները և ըստ արժանվույն աշխատելու թիկունքում :

Հաղթահարելով պատերազմական տարիների ծանրագույն պայմանները, ամենատարբեր դժվարություններն ու զրկանքները՝ Երևանի պետական համալսարանի ղեկավարությունն ուսանողների հետ պատվով ու անձնազոհությամբ կատարեց իր հայրենասիրական պարտքը: Սակայն, ինչպես նշվեց, ռազմաճակատ մեկնած համալսարանականներից 300-ը չվերադարձան տուն: Օրինակ՝ Դիլիջանի շրջանի Զարխեչ (հետագայում՝ Կույբիշև, այժմ՝ Հաղարծին) գյուղից Աղաջանյան չորս եղբայրները, որոնցից երեքը համալսարանի ուսանողներ էին, ընկան ռազմի դաշտում: Մեծը՝ Աղաջանը (1909 թ. ծնվ.), պատմության ֆակուլտետի 1938–1941 թթ. ուսանող էր, մյուսը՝ Արփիարը (1912 թ. ծնվ.)՝ լեզվագրական ֆակուլտետի 1936–1941 թթ. ուսանող, երրորդը՝ Պերճը (1914 թ. ծնվ.)՝ ֆիզմաթ ֆակուլտետի 1935–1940 թթ. ուսանող[16]: Կոտայքի շրջանի Արամուս գյուղից ռազմաճակատ մեկնած Մարգարյան հինգ եղբայրներից տուն վերադարձավ միայն լեզվագրական ֆակուլտետի 1936–1941 թթ. ուսանող, հետագայում՝ ուսուցիչ և գրականագետ Դավիթ Մարգարյանը:

Պատերազմի բովով անցած համալսարանական գիտնականների մի ամբողջ բանակ գոյացավ: Նրանցից շատերը բարձրացան, նվաճեցին գիտության ամենաբարձր աստիճանները, դարձան պրոֆեսորներ, դոկտորներ, առաջատար գիտնականներ, նոր գիտաճյուղերի հիմնադիրներ, բնագիտական, հայագիտական, հիմնարար և ճշգրիտ գիտությունների համբավավոր մասնագետներ: Այստեղ տեղին է հիշել պատերազմի մասնակից, հետագայում ակադեմիկոս դարձած համալսարանականներին՝ ֆիզիկոսներ Գուրգեն Սահակյանին, Էմիլ Միրզաբեկյանին, բուսաբան Վահան Ղազարյանին, քիմիկոս Սարգիս Վարդանյանին, պատմաբաններ Մկրտիչ Ներսիսյանին, Գևորգ Ղարիբջանյանին, գրականագետներ Էդուարդ Զրբաշյանին, Վաչե Նալբանդյանին, լեզվաբան Գևորգ Զահուկյանին, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, գրող Վահագն Դավթյանին, գրականագետ ակադեմիկոս Սերգեյ Սարինյանին և ուրիշների:

Ինչպես յուրաքանչյուր պատերազմ, այնպես էլ Հայրենական պատերազմն ունեցավ ոչ միայն իր զինվորն ու զորավարը, այլև իր գիտությունն ու գիտնականը, արվեստն ու արվեստի գործիչը, գրականությունն ու գրողը:

[16] Տես *Հ. Խ. Բարսեղյան,* Նշ. աշխ.:

Համալսարանն էլ պատերազմական տարիներին ունեցավ իր բանաստեղծն ու արձակագիրը: Բանաստեղծ Դերենիկ Չարխչյանը (1916 թ.) 1941 թ. պետական քննասեղանից պատերազմ մեկնեց, բայց, դժբախտաբար, Ստալինգրադի պաշտպանության համար մղված կռիվներում 1943 թ. հուլիսին զոհվեց՝ նախապես աշխարհին հայտնած լինելով մահով ուրիշներին ապրեցնելու իր հավատամքը:

1941 թ. համալսարանի երրորդ կուրսից բանակ մեկնած սկսնակ գրող Հրաչյա Հովհաննիսյանը պատերազմից վերադարձավ որպես կայացած բանաստեղծ և 1948 թ. հրատարկեց իր «Իմ կյանքի երգը» 1-ին գիրքը, որի ամեն մի բանաստեղծություն պատերազմի արահետներով անցած գրողի խոհի և ապրումների քնարական արտահայտությունն է[17]: Բանստեղծ Վահագն Դավթյանը համալսարան եկավ պատերազմում վիրավորվելուց հետո և 1947 թ.՝ համալսարանը դեռ չավարտած, հրատարակեց իր «Առաջին սերը» բանաստեղծությունների գիրքը: Պարույր Ձոթյանը տպագրեց պատերազմական թեմաներով գրված «Գերված աղջիկը» իր միակ վեպը: Բաղիշ Հովսեփյանը համալսարան վերադարձավ՝ իր հետ բերելով «Սերմնացանները չվերադարձան» վեպի միայն այս բանաստեղծական վերնագիրը, բայց այն գրվեց և որպես պատերազմական արհավիրքների լավագույն արտացոլում՝ թարգմանվեց մի շարք եվրոպական լեզուներով:

Այսպիսով՝ Երևանի պետական համալսարանը Հայրենական մեծ պատերազմի տարիներին մեծածավալ գործունեություն վարեց ոչ միայն զորահավաքային աշխատանքները բարձր մակարդակով կազմակերպելով, այլև իր 870-ից ավելի սաներին ուղարկելով ռազմաճակատ՝ ռազմահայրենասիրական արդյունավետ քարոզչությամբ և թիկունքային ակտիվ աշխատանքներով նպաստեց Հայրենական մեծ պատերազմում տարած պատմական հաղթանակին:

Հայրենական մեծ պատերազմում կոփված համալսարանական զինվորն ու զորավարը, գիտնականն ու գրողը մեծ դեր խաղացին հայրենասեր սերունդ դաստիարակելու և զինվորական փորձը նրանց փոխանցելու գործում: Ուստի պատահական չէ, որ 1980-ական թթ. Արցախյան ազատագրական շարժմամբ շարունակվեցին մեծ հայրենականի դասերը: Երևանի պետական համալսարանը շարունակեց մնալ Լեռնային Ղարաբաղի ազատագրման, Հայաստանի անկախ հանրապետության ստեղծման քաղաքական շարժման կենտրոններից մեկը, իսկ այդ շարժման ամենաակտիվ գործիչների թվում էին՝ նոր սերնդի հետ, Հայրենական մեծ պատերազմի մասնակից դասախոսներն ու ուսանողները:

[17] Տես նույն տեղում, էջ 19:

ВОЕННАЯ ИСТОРИЯ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ В ГОДЫ ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ: К 100-ЛЕТИЮ УНИВЕРСИТЕТА

Э. Г. МИНАСЯН, доктор исторических наук, профессор, декан факультета истории ЕГУ, член научно-консультационного совета ВНЖ «Айкакан банак»

РЕЗЮМЕ

В статье представлен богатый фактический материал, освещающий деятельность ЕГУ в годы Великой Отечественной войны по организации и поддержанию всенародного патриотического движения, организации добровольческих отрядов, пересмотру учебной программы в соответствии с нуждами фронта, подготовке необходимых для РККА кадров путем организации курсов боевой подготовки, внедрения научно-практических достижений и новаторских технологий в республиканское производство и т. д.

Преодолевая все трудности и лишения тяжелых военных лет, руководство и студенчество ЕГУ с честью и самоотверженно исполнили свой долг перед Отечеством. В годы Великой Отечественной войны 869 преподавателей, аспирантов и студентов ушли на фронт, 300 из них героически погибли, многие вернулись домой с тяжелыми ранениями и увечьями. Многие были награждены орденами и медалями, а из преподавателей начальник кафедры военной подготовки, впоследствии генерал-майор Андраник Казарян и студент физико-математического факультета Сурен Саргсян были удостоены высшего звания Героя Советского Союза.

В годы Великой Отечественной войны студенты и профессорско-преподавательский состав внесли свою лепту в историческую победу над немецким фашизмом, в то же время сформировав традиции воспитания солдата-ученого, ученого-патриота, традиции, которые возродились в 1980-ые годы, когда ЕГУ вновь стал одним из центров политического движения за освобождение Арцаха и независимость Армении.

MILITARY HISTORY

YEREVAN STATE UNIVERSITY DURING THE GREAT PATRIOTIC WAR: ON THE 100th ANNIVERSARY OF THE UNIVERSITY

E. G. MINASYAN, Doctor of History, Professor, Dean at the Faculty of History, Member, Academic-Advisory Council, "Haikakan Banak" Defense-Academic Journal

SUMMARY

This article presents abundant factual material covering the YSU activities during the Great Patriotic War in organizing and supporting a nationwide patriotic movement, forming voluntary detachments, reviewing the curriculum in line with the needs of the front, training a personnel necessary for the Workers' and Peasants' Red Army by organizing combat training courses, introducing scientific and practical achievements and innovative technologies into the republican production, etc.

Overcoming all the difficulties and hardships of the tough war years, the YSU leadership and students fulfilled their duty with honor and selfless commitment to the Fatherland. During the Great Patriotic War 869 lecturers, graduate students and students went to the front, 300 of them died heroically, many returned home with serious wounds and injuries. A lot of people were awarded orders and medals, and among the lecturers, the Head of the Chair of Military Training, later – Major General Andranik Ghazaryan, and a student of the Department of Physics and Mathematics, Suren Sargsyan, were conferred the highest title of Hero of the Soviet Union.

During the Great Patriotic War, the students and the faculty contributed to the historic victory over German fascism, at the same time having shaped the traditions of educating a scientist-soldier, scientist-patriot, the traditions that revived in the 1980s, when the YSU once again became one of the centers of the political movement for the liberation of Artsakh and the independence of Armenia.

«ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՇՎԱՌՄԱՄԲ»

ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ

Ս. թ. օգոստոսի 7-ին ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանում տեղի ունեցավ գիտաժողով, որին մասնակցում էին գիտնականներ ՀՀ ՊՆ-ից, ՀՀ ԶՈՒ-ի ԳՇ-ից, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ից, ՀՀ Անվտանգության խորհրդից, ԵՊՀ-ից, Պետական Կառավարման ակադեմիայից, ինչպես նաև քաղաքագետներ, պատմաբաններ, փորձագետներ տարբեր բնագավառներից:

Գիտաժողովով հիմք է դրվելու Համալսարանում նմանատիպ ձևաչափով թեմատիկ մասնագիտական քննարկումների շարունակական շարքի:

Ելույթները հրապարակվում են առանց խմբագրական միջամտության:

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ԲՆՈՒՅԹԸ

Ա. Մ. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ, փոխգնդապետ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ԱՈՀԻ-ի Ռազմական ռազմավարական հետազոտությունների կենտրոնի ավագ դասախոս

Այս զեկուցման նպատակն է ներկայացնել, թե ինչ է պատերազմը և ինչպիսի բնույթ ունեն ժամանակակից պատերազմները: Պատմական բոլոր փուլերում պատերազմները եղել են պետությունների, ազգերի, ժողովուրդների, էթնիկ ու սոցիալական խմբերի միջև պայքարի հիմնական և հատուկ ձևերն ու մշտական ուղեկիցները: Ավելին, մարդկության քաղաքական պատմությունը հաճախ անվանում են պատերազմների պատմություն:

«Պատերազմ» երևույթին անդրադարձել են բազմաթիվ մտածողներ, որոնց հայացքներն ու աշխատությունները խորապես ուսումնասիրվում և դասավանդվում են ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի մասնագետների կողմից՝ ՊԱՀՀ-ի կրթական ծրագրի շրջանակներում: Հայտնի այդ տեսաբանների հայացքները երբեմն տարբերվում են:

Օրինակ՝ Սուն Ցզին նշում էր. «100 անգամ մարտ մղել և 100 անգամ հաղթանակ տանել դեռ չի նշանակում լավագույնից լավագույնը: Լավագույնից լավագույնն այն է, որպեսզի հնազանդեցնես հակառակորդի բանակն առանց մարտնչելու: Այդ պատճառով պատերազմի բարձրագույն արվեստը՝ հակառակորդի ծրագրերը խափանելն է»:

Ի տարբերություն Սուն Ցզիից, որը ճշգրիտ հաշվարկների միջոցով հաղթանակի հասնելու կողմնակիցն էր՝ առանց հակամարտող կողմի բանակի հետ ուղղակի բախման, **Կառլ ֆոն Կլաուզևիցն** իր պատերազմի հայեցակարգում ընտրում է ոչ թե «հակառակորդի մտահղացումների կոտրումը», այլ հենց ճակատամարտը՝ մտցնելով «վճռորոշ ճակատամարտի» հասկացությունը, որից կախված է պատերազմի ամբողջ ելքը: Կլաուզևիցը գտնում էր, որ լավագույն տարբերակը թվային գերազանցության միջոցով հակառակորդին հիմնովին ջախջախելն է:

Պատերազմների զարգացման ամբողջ պատմությունը փաստում է, որ որքան էլ դրանք կերպափոխվել են, այնուամենայնիվ, գլխավոր գաղափարը և նպատակը, այն է՝ հակառակորդին ուժով թելադրել սեփական կամքը, մնացել է անփոփոխ:

Հատկանշական է, որ մերօրյա մեծ ու փոքր պատերազմներում մեծապես տուժում է հատկապես քաղաքացիական բնակչությունը: Միլիոնավոր մարդիկ ռազմական հակամարտությունների հետևանքով մնացել են անօթևան կամ դարձել փախստական: Եթե Առաջին համաշխարհային պատերազմում խաղաղ բնակչության կորուստները կազմում էին պատերազմում

զոհվածների ընդհանուր թվի 5 տոկոսը, ապա, օրինակ, 1991–2001 թվականների հարավսլավական տարբեր պատերազմների ընթացքում այդ թիվն աճել է՝ հասնելով 98 տոկոսի: Միայն 1990–2002 թթ. ընթացքում աշխարհում տեղի ունեցած պատերազմներում ընդհանուր առմամբ մահացել է գրեթե 4 մլն մարդ, ընդ որում՝ նրանցից 90 %-ը քաղաքացիական անձինք:

Աշխարհում գիտատեխնիկական առաջընթացը, ռազմական գործողությունների վարման նոր ձևերն ու միջոցները հանգեցրին խոցման միջոցների լայն սպեկտրի ստեղծմանն ու զարգացմանը: Նրանց հեռահարությունը մշտապես մեծանում էր և արդեն Երկրորդ աշխարհամարտում թույլ էր տալիս հարվածներ հասցնելու հակառակորդի խոր թիկունքին:

Այս հանգամանքը հատկապես էական է փոքր տարածք ունեցող պետությունների համար: Օրինակ՝ Հայաստանի դեպքում ռազմավարական խորության բացակայությունը զգալիորեն խոցելի է դարձնում թիկունքը՝ բնակելի տարածքներով հանդերձ, քանի որ մեր տարածաշրջանում առկա սպառազինության խոցման շառավիղը տակտիկական առումով ծածկում է Հայաստանն իր ամբողջ տարածքով:

Սպառազինությունների և ռազմական տեխնիկայի զարգացումը հարստացրեց պատերազմի զինանոցը: Օրինակ, եթե Կորեական պատերազմում (1950–1953) օգտագործվել էր նախկինում անհայտ ընդամենը 9 նոր զինատեսակ, ապա արդեն Պարսից ծոցի կամ Իրաքա-քուվեյթյան պատերազմում (1990–1991) կիրառվել է 100-ից ավելի նոր զինատեսակ:

Նորագույն պատմության շրջանում ոչ միայն փոխվեց պատերազմի զինանոցը, այլև քաղաքական, տնտեսական ու մյուս նպատակները: Ավելի ցայտուն դարձավ պատերազմի սերտ կապը քաղաքականության և տնտեսության հետ: Պետք է նշել, որ քաղաքականությունը որոշում է պատերազմի նպատակը և սոցիալական բնույթը, որոշիչ կերպով ազդում է նրա ինտենսիվության և վարման եղանակների, հիմնական ջանքերի կենտրոնացման ուղղվածության, մարդկային և նյութական ռեսուրսների մոբիլիզացիայի աստիճանի վրա:

Միևնույն ժամանակ, պատերազմը հակադարձ ազդեցություն է ունենում քաղաքականության վրա՝ դանդաղեցնելով կամ, ընդհակառակը, արագացնելով հասարակական-քաղաքական գործընթացների զարգացումը: Նույն ձևով, պատերազմը պահանջում է **տնտեսության** արմատական վերակառուցում, զինված ուժերի կարիքների համար նրա բոլոր հնարավորությունների մոբիլիզացում, պատերազմի վարման համար անհրաժեշտ նյութական միջոցների ապահովում:

Որպես ռազմատնտեսական պահանջմունքների աճի ընդհանրացնող ցուցիչ ծառայում են համաշխարհային ռազմական ծախսերը:

Եվ այսպես, ի մի բերելով այս ամենը՝ տանք պատերազմի սահմանումը:

Պատերազմը հասարակական-քաղաքական երևույթ է, որը կապված է պետությունների կամ ազգությունների միջև հարաբերությունների բնույթի արմատական փոփոխության հետ և ընդդիմամարտող կողմերի՝ պայքարի

ոչ ռազմական, ոչ բռնի ձևերից ու միջոցներից անցում է դեպի զենքի ու զինված պայքարի այլ բռնի միջոցների ուղիղ օգտագործմանը՝ որոշակի քաղաքական և տնտեսական նպատակների հասնելու համար: Իր ներքին բնույթով պատերազմը պետության և դրա իշխող վերնախավի քաղաքականության շարունակությունն է բռնի միջոցներով[1]:

Ըստ էության՝ պատերազմը պետությունների, ժողովուրդների, ազգությունների, սոցիալական խմբերի միջև սոցիալ-քաղաքական, տնտեսական, գաղափարախոսական, ինչպես նաև ազգային, կրոնական, տարածքային և այլ հակասությունները ռազմական բռնության միջոցով լուծելու ծայրահեղ ձևն է: Այսօր էականորեն փոխվել են պատերազմի բնույթը, արագությունը, տևողությունը, պատերազմի վրա ծախսվող միջոցներն ու հնարավորությունները:

Պատերազմի բնույթը պատերազմի առավել էական, հիմնական գծերի, հատկանիշների և առանձնահատկությունների համախումբն է, որով այն տարբերվում է՝ որպես կոնկրետ պատմական երևույթ: Տարբերում են պատերազմի սոցիալ-քաղաքական և ռազմավարական բնույթը:

Պատերազմի սոցիալ-քաղաքական բնույթը արտացոլում է պատերազմի սոցիալ-քաղաքական բովանդակությունը և ընդդիմամարտող կողմերի ուժերի դասավորությունը, նրանց կողմից կազմակերպված զինված բռնության գործադրմամբ քաղաքական, տնտեսական և այլ նպատակների հասնելու մտահղացումը: Ըստ այդմ դիտարկվում են՝ հավանական հակառակորդի կողմից ռազմական սպառնալիքները, հնարավոր դաշնակիցները, պատերազմի պատճառները, դրա քաղաքական նպատակները, պատերազմի նկատմամբ բանակի և ժողովրդի վերաբերմունքը:

Պատերազմի ռազմավարական բնույթով որոշվում է պատերազմի ռազմավարական նպատակները, պայքարի մեջ կիրառվելիք ուժերն ու միջոցները, մասշտաբները, տարածական շրջանակը, տևողությունը, ռազմական գործողությունների առանձնահատկությունները, ձևերն ու եղանակները, պատերազմի սկսման կամ սանձազերծման պայմանները, պատերազմի հնարավոր հետևանքներն ու արդյունքները:

Պատերազմի բնույթը որոշվում է տվյալ ժամանակաշրջանի առանձնահատկություններով և կոնկրետ պատմական պայմաններով, որոնցում վարվում է տվյալ պատերազմը, ինչպես նաև պատերազմող պետությունների սոցիալ-քաղաքական կարգերով, նրանց արտադրական զարգացման մակարդակներով, զինված պայքարում կիրառվող միջոցներով, սպառազինությամբ և ռազմական տեխնիկայով:

Ժամանակակից պատերազմների պատճառները պետք է փնտրել արդի անհանգիստ ու պայթյունավտանգ աշխարհի հակամարտող կողմերի միջև առկա հակասությունների բազմազանության մեջ: Այն, ինչի համար մարդիկ

[1] Տես «Война». «Война и мир в терминах и определениях». Военно-политический словарь. Под общей ред. Д. Рогозина (http://www.voina-i-mir.ru/article/47):

պատերազմում էին հարյուրամյակներ առաջ, այսօր հիմնականում արդիական չէ, քանի որ փոխվել են կենսապայմաններն ու կենսանպատակները: Այն միջոցներն ու եղանակները, որոնցով աշխարհի բանակները պատերազմում էին անցյալում այսօր հիմնականում ժամանակավրեպ է:

Ժամանակակից պատերազմների ու զինված հակամարտությունների պատճառներից են մարդկության տարանջատվածությունը՝ ըստ գաղափարաբանական ու կրոնադավանական ուղղվածության, նորագույն տեխնոլոգիաների, գիտատեխնիկական և սոցիալ-տնտեսական զարգացմամբ պայմանավորված ուժերի հարաբերակցության խախտումը, ազգայնամոլական դրսևորումները, միջազգային ահաբեկչությունը, տարածքային ամբողջականության և ազգային ինքնորոշման խնդիրները, մշտական լարվածության օջախների առկայությունը և շարունակական առաջացումը և, իհարկե, երկրագնդի նվազող հնարավորությունները և հումքային պաշարների սպառումը:

Նորագույն շրջանում դասակարգվում են պատերազմների տարբեր տեսակներ, որոնք ունեն բովանդակային և ձևակերպական լայն սպեկտր՝ տեղեկատվական, կիբեռ, հիբրիդային, անհամաչափ, միջնորդավորված պատերազմներ և այլն: Այսօր մեզանում արդեն սովորական են դարձել «տեղեկատվական պատերազմ» կամ «հիբրիդային պատերազմ» արտահայտությունները:

Ակնհայտ է, որ ներկայիս ընդդիմամարտություններում տեղի է ունեցել շեշտադրումների ու գործիքարանի փոփոխություն՝ ռազմական միջոցներից հաճախ անցում կատարելով ոչ ռազմական՝ տնտեսական, քաղաքական, դիվանագիտական, հոգեբանական, տեղեկատվական, կիբեռ և այլ միջոցների: Ժամանակակից պատերազմների այս ձևերի նպատակային օգտագործումը երբեմն շատ ավելի մեծ արդյունք է տալիս:

Այսօր մեկ բարձրակարգ մասնագետը միայնակ կարող է զգալիորեն խաթարել, կաթվածահար անել մի ամբողջ ստորաբաժանման աշխատանք: Ներկայումս հնարավոր է նույնիսկ ռազմական գործողություններ առհասարակ չվարելով, ոչ ռազմական միջոցների օգնությամբ, այսպես կոչված «անշփում պատերազմներով» հասնել խոշոր ռազմաքաղաքական և ռազմավարական նպատակների իրականացմանը և պետության համար գերակա դիրքին:

Բացի այդ, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը, և հատկապես՝ սոցիալական մեդիան, տարածվող տեղեկույթը դարձրել են անհամեմատ արագընթաց և հասանելի, ինչը կարևոր է ինչպես տեղեկատվական պատերազմի, այնպես էլ տեղեկատվական ընդդիմամարտության տեսանկյունից:

Ժամանակակից պատերազմների բնութագրիչ գծերն են՝

– ազդեցությունը մարդու կենսագործունեության բոլոր ոլորտների վրա,
– ռազմական ուժի և ոչ ռազմական ուժի ու միջոցների համալիր կիրառությունը,

– նորագույն սպառազինության ու ռազմական տեխնիկայի, գերճշգրիտ խոցման զենքերի լայն կիրառությունը, ինչը փոխել է «լայնամասշտաբ պատերազմ» հասկացության ընկալումը,
– հակառակորդի պետական ու ռազմական կառավարման համակարգերի կազմաքանդման ձգտումը,
– հակառակորդի ամբողջ տարածքում նրա ուժերի, թիկունքային օբյեկտների, տնտեսության, ենթակառուցվածքների, հաղորդակցական ուղիների զգալի վնասումը,
– կառավարման օպերատիվության բարձրացումը՝ կառավարման ավանդական խստիվ ուղղահայաց համակարգից անցում կատարելով դեպի զորքերի (ուժերի) և զենքի կառավարման գլոբալ-ցանցային ավտոմատացված համակարգերի՝ զգալի տեղ տալով ռազմավարական առաջնորդությանն ու կառավարման նոր մոտեցումներին, այդ թվում՝ «Հրամանատրում առաջադրանքի ձևով» հայեցակարգին *(Mission Command):* Սրան գումարվում է նաև առկա ուժերի շարժունակության բարձր մակարդակը, որը նույնպես այսօր զգալի բնութագրիչ է ու գերակա դիրք է ընձեռում հակառակորդի նկատմամբ,
– ժամանակակից պատերազմների բնութագրիչ գծերից են նաև դաշնակցային ուժերի և այլ պետությունների ներգրավումը պատերազմին,
– ռազմական գործողությունների ռմբակոծիչ ու ավերիչ բնույթը, դրանց վարման ձևերի հաճախակի ու երբեմն կտրուկ փոփոխությունները, զորքերի գործողությունների տարաշարժությունը: Եվս մեկ օրինակ է հակատանկային միջոցների զգալի զարգացումը, որը երբեմն կասկածի տակ է դնում ընդհանրապես տանկերի կիրառելիության նպատակահարմարությունն ու արդյունավետությունն այսօր,
– ռազմաօդային ուժերի միջոցով օդային գործողությունների անցկացումն ու կարևորումը:

Ժամանակակից պատերազմների առանձնահատկություններն են՝

– հակամարտող մի կողմի ռազմական գործողությունների հասանելիությունը մյուս կողմի համար, ինչը պայմանավորված է հետախուզական և ռադիոէլեկտրոնային պայքարի միջոցների զարգացման բարձր մակարդակով: Հակառակորդը մշտապես հետևում, տեսնում ու տեղեկանում է մյուսի գործողությունների, օրինակ՝ ռազմական տեխնիկայի կամ ուժերի տեղաշարժի մասին: Արագորեն հասցնելով հարվածներ՝ նա կանխում է այդ գործողությունները, ջախջախում հակառակորդի պլանները, խաթարում նրա ուժերի համալրումն ու կենտրոնացումը: Հետախուզության միջոցով նախապես ու արագ տեղեկանալով հակառակորդի մտադրությունների մասին՝ պետությունը ոչ միայն ձեռնարկում է համարժեք քայլեր, այլև հրավիրում է միջազգային հանրության ուշադրությունը՝ հակառակորդին ներկայացնելով որպես

ագրեսոր ու տապալելով նրա ռազմական մտադրությունները: Այնպես որ սա շատ կարևոր առանձնահատկություն է, քանի որ էական փոփոխություն է առաջ բերում օպերատիվ արվեստի խորքային իմաստավորման մեջ՝ հաստատելով, որ ժամանակակից պատերազմներում ուժերի արագ կուտակումներն այլևս նախկինի պես արդյունավետ չեն աշխատում, ուժերի կուտակումը մեկ տեղում հաճախ վերածվում է թիրախի,

– դիվերսիոն-հետախուզական խմբավորումների, անօրինական զինված խմբերի, հատուկ գործողությունների ուժերի օգտագործումը: Այս առանձնահատկության վառ դրսևորումներից մեկը Իսլամական պետության զինված խմբավորումների գործողություններն են: Ցանցային ու անհամաչափ գործողություններով նրանց հաճախ հաջողվում է արդյունավետորեն պայքարել կանոնավոր բանակի դեմ, քանի որ այդ խմբավորումները անվերահսկելի են ու գործում են ոչ մեկ կետից: Եթե դրան հավելենք նաև այն, որ միշտ չէ, որ այդ խմբավորումները կռվում են հին զենքերով, այլ հաճախ նաև լինում են տեխնիկապես լավ պատրաստված ու զինված, ապա առավելությունը նրանց կողմն է: Ժամանակակից պատերազմների այս առանձնահատկությունը հատուկ է նաև մեր տարածաշրջանին: Մեր շփման գծում ամեն օր զգում ենք նշված առանձնահատկության նշանակությունը, երբ թշնամին իրականացնում է հերթական դիվերսիոն գործողությունը,

– տեղեկատվական ընդդիմամարտության դերի մեծացումը, տեղեկատվական ընդդիմամարտության օպերացիաների ու միջոցառումների ինտենսիվությունն ու վաղօրոք անցկացումը, որի նպատակն է առանց ռազմական ուժի կիրառման քաղաքական նպատակներին հասնելը, իսկ հետագայում, միջազգային հանրության բարենպաստ դիրքորոշումների ձևավորման դեպքում, նաև ուժի կիրառումը: Տեղեկատվական-քարոզչական և հոգեբանական թիրախային օպերացիաներն ապակողմնորոշում են հակառակորդի հասարակությանը, ազդում առանձին պետությունների և, ընդհանուր առմամբ, միջազգային հանրության կարծիքի վրա: Այդ օպերացիաները նպատակ ունեն քաղաքականապես մեկուսացնելու հակառակորդին, հուսալքելու, թուլացնելու նրա մարտական ոգին և օրինականացնելու սեփական գործողությունները: Տեղեկատվական ընդդիմամարտության գործողությունների միջոցով հակառակորդի համար ստեղծվում է օբյեկտիվ իրականության աղավաղված պատկեր, երբ նրա բոլոր ջանքերն ուղղվում են ստացված տեղեկույթի ճշմարտացիության պարզմանն ու վերլուծությանը, ինչն էլ նրան հետ է պահում կարևոր և ժամանակին որոշումներ ընդունելուց, հակառակորդը հետ է ընկնում, ուշանում է, իսկ ցանկացած պայքարում հաղթում է նա, ով չի ուշացնում ճիշտ որոշումների կայացումը: Տեղեկատվական-քարոզչական օպերացիաների վառ օրինակ է Երկրորդ աշխարհամարտում Չեխիայի օրինակը, երբ ունե-

նալով ավելի հզոր բանակ, քան նացիստականը, թշնամուն հաջողվեց առանց դիմադրության ներխուժել Չեխիա, քանի որ հակառակորդի վաղօրոք իրականացրած քարոզչական գործողությունները անսահման վախ ու անվստահություն էին սերմանել չեխերի շրջանում,

– գլոբալիզացիայի դարաշրջանում միասնական տնտեսական շահերով կապված պետությունների միջև զինված բախումներն հաճախ անհնարին են դառնում: Պետություններն օգտագործում են այդ հանգամանքը՝ ապահովագրելով իրենց հնարավոր ռազմական ագրեսիայից: Օրինակ՝ Ադրբեջանը ռազմատնտեսական համագործակցություն է ծավալում ինչպես ՌԴ-ի, այնպես էլ ՀԱՊԿ-ի անդամ պետություններ Ղազախստանի ու Բելառուսի հետ՝ այդպիսով Հայաստանի հետ հնարավոր լայնամասշտաբ պատերազմի դեպքում ապահովագրելով իրեն ՀԱՊԿ-ի տվյալ պետությունների կողմից հնարավոր միջամտությունից: Գնելով սպառազինություն և ռազմական տեխնիկա՝ Ադրբեջանը տվյալ պետությունից շարունակում է տվյալ տեխնիկայի համար նախատեսված պահեստամասերի գնումները, ինչը ռազմատնտեսական շահերով կապում է պետությունների ձեռքերը,
– ռազմական գործում հեղափոխության ուղղակի անդրադարձը պատերազմի բնույթի փոփոխության վրա,
– առանձին օպերացիաների զգալի արագընթացությունը և, ընդհանրապես, ռազմական գործողությունների վարմանն ուղղված ժամանակային պարամետրների խիստ կրճատումը: Ներկայիս պատերազմները կարճատև են, տևում են մի քանի օր, ոչ թե, ինչպես նախկինում՝ ամիսներ կամ տարիներ շարունակ (Մեր տարածաշրջանում, օրինակ, այդպիսի պատերազմներ էին՝ Ռուս-վրացական պատերազմը (2008), Ապրիլյան քառօրյա պատերազմը (2016)):

Ներկա և ապագա պատերազմների հնարավոր բնույթի վերաբերյալ ընդհանուր պատկերացումներ տալիս են աշխարհի առաջատար երկրների քաղաքական և ռազմական ղեկավարության հայեցակարգային (դոկտրինային) տեսակետները: Հատկապես կարևորվում է, թե ինչ տիպի պատերազմի է պատրաստվում պետությունը կամ ինչ տիպի պատերազմից է պատրաստվում պաշտպանվելու՝ ջախջախիչ կամ ոչնչացնող, թե քայքայիչ, հյուծող:

Կախված նրանից, թե պետությունը պատրաստվում է ջախջախել կամ հյուծել հակառակորդի զինված ուժերը կամ պատրաստվում է պաշտպանվել հակառակորդի ջախջախիչ հարձակումից, ռազմական բարեփոխումները, ռազմական ծախսերը, ռազմական տեխնիկայի տեսակների ընտրության ու ձեռքբերման ծավալներն իրականացվում են համապատասխանաբար՝ ջախջախիչ կամ հյուծիչ տիպի պատերազմի պատրաստվելու համար:

Հաշվի առնելով Ադրբեջանի ռեսուրսները՝ մեր պետությունը պետք է մեծապես կարևորի այս առանձնահատկությունը՝ սեփական ռեսուրսների

արդյունավետ օգտագործման նպատակով՝ փորձելով անհամաչափ քայլերով փոխհատուցել սեփական սակավ ռեսուրսները, քանի որ սպառազինությունների և ռազմական տեխնիկայի ուղիղ մրցավազքը արդյունավետ չէ:

Բուռն տնտեսական զարգացման և ուժերի հիմնական համաշխարհային (տարածաշրջանային) կենտրոնների միջև մրցակցության, վառելիքաէներգետիկ և բնական այլ ռեսուրսների, ինչպես նաև զարգացող պետությունների տնտեսական ու քաղաքական ինքնուրույնության համար մղվող պայքարի դարաշրջանում միջազգային հարաբերություններում էլ ավելի են սրվում հակասությունները, առաջանում են կոնֆլիկտային և ճգնաժամային իրադրություններ:

Ամփոփելով նշենք, որ արդի պայմաններում համաշխարհային պատերազմի ծավալման հավանականությունը էականորեն նվազել է, միևնույն ժամանակ զինված հակամարտությունների, տեղային ու տարածաշրջանային պատերազմների ծագման հնարավորությունը ոչ միայն պահպանվում է, այլև աճում:

Ապագայի պատերազմները ևս կընթանան մեծ ակտիվությամբ, ծայրահեղ լարվածությամբ՝ մեծ վնասներ հասցնելով խաղաղ բնակչության շրջանում, ոչնչացնելով ռազմավարական նշանակության օբյեկտները, էներգետիկ կենտրոնները, հիդրոտեխնիկական կառույցները, առաջացնելով ավերածությունների լայն տարածքներ, հրդեհներ ու ջրհեղեղներ: Ապագա պատերազմներին շարունակելու է բնորոշ լինել արագընթացությունը, օբյեկտների խոցելիության բարձր մակարդակը, զորքերի տարաշարժության արագությունը, տարբեր զորային խմբավորումների օգտագործումը: Ռազմավարական նախաձեռնողականության նվաճումը, ցամաքում, ծովում և օդատիեզերական տարածքում գերազանցության ապահովումը կդառնան առաջադրված նպատակներին հասնելու որոշիչ գործոններ:

Ձգալի տեմպերով կշարունակեն զարգանալ ավիացիան և ռազմածովային ուժերը, օդատիեզերական ուժերը, տիեզերական հետախուզությունը: Կմեծանա էլեկտրամագնիսական, լազերային, ինֆրաձայնային զենքի, տեղեկատվական կառավարման համակարգերի, գերճշգրիտ խոցման ու հետախուզման անօդաչու թռչող սարքերի և ծովային ապարատների դերը, կզարգանան սպառազինության և ռազմական տեխնիկայի ավտոմատացման համակարգերը:

Ավելին, գերճշգրիտ խոցման զենքերը կդառնան հակառակորդի, որտեղ էլ նա գտնվի, տնտեսական ներուժի անշփում ոչնչացմամբ հաղթանակի հասնելու արդյունավետ միջոց: Օրինակ՝ բավական է մեծ, միջին կամ փոքր հեռահարության հրթիռային հարվածների կամ անօդաչու թռչող սարքերի միջոցով մի քանի գերճշգրիտ հարվածներ հասցնել հակառակորդի սննդամթերքի կամ ռազմական բազաներին, և պատերազմի ելքը վճռված կլինի:

Այսպիսով՝ ըստ իր աշխարհաքաղաքական դիրքի, վարած պետական քաղաքականության և իր տնտեսական, ֆինանսական ու ռազմական

ներուժի (այդ թվում՝ ժամանակակից ՍՈՏ, խոցման ժամանակակից միջոց-ներ)՝ յուրաքանչյուր պետության ռազմաքաղաքական ղեկավարությունը որոշում է, թե ովքեր են իր հակառակորդները և դաշնակիցները, ինչպիսի պատերազմների պետք է պատրաստել զինված ուժերին, ինչ տևողությամբ, ինչ բնույթի, ինչ մասշտաբների, ինչպիսի կառուցվածք ու կազմ պետք է ունենա իր զինված ուժերը, ինչպիսի սպառազինություն և ռազմական տեխնիկա է պետք ձեռք բերել հնարավոր պատերազմի վարման կամ հնարավոր պատերազմի (ագրեսիայի) հետմղման համար: Հետևապես, պատերազմի բնույթը պայմանավորում է պետության զինված ուժերի կառուցվածքն ու բովանդակությունը:

ՀՈԳԵՎՈՐ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ԶՈՒ-Ի ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Մ. Մ. ՄԱՐԳԱՐՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ Պետական կառավարման ակադեմիայի «Քաղաքական կառավարման և հանրային քաղաքականության» ամբիոնի վարիչ

Նոր ձևավորվող աշխարհակարգում գլխապտույտ արագությամբ տեղի ունեցող փոփոխություններին և «նոր սերնդի» պատերազմների մարտահրավերներին հավասարապես պատասխանելու հանգամանքը ստիպում են, որ յուրաքանչյուր պետություն՝ որպես քաղաքական համակարգի գերակա ինստիտուտ, կառավարի անվտանգության ապահովման իր գործընթացը: Ելնելով պատմականորեն ձևավորված պետականության, ինքնիշխանության, անկախության ու ազատության, ազգային և քաղաքական ինքնագիտակցության մասին ունեցած պատկերացումներից՝ պետությունը պարբերաբար նորարարացնում է անվտանգային ռազմավարության կառավարման արժեքաբանությունը: **Հայաստանի և հայության համար, երբ սոցիալ-քաղաքական համակարգի կերպափոխումը հղի է տարաբնույթ անորոշություններով, երբ արմատապես փոխվել է ազգային ինքնության արդիականացման արտաքին միջավայրը, հոգևոր անվտանգության ապահովման հիմնախնդրի ուսումնասիրությունն ունի և՛ գիտատեսական, և՛ գործնական նշանակություն**: Հենց դա էլ հիմք է, որ հոգևոր անվտանգության հիմնախնդիրները ուսումնասիրվեն ՀՀ ԶՈՒ-ի զարգացման համատեքստում: Ակնհայտ է, որ Հայաստանի «թավշյա» հեղափոխությունից հետո անհրաժեշտություն է առաջացել վերանայելու հայ հասարակության հոգևոր անվտանգության ապահովման հրամայականները՝ զուգամիտելով արդյունքի ռազմավարական կառավարումը և ժողովրդավարության որակի հաստատումը՝ հանուն անվտանգ և երջանիկ ապագայի:

Այս դիտանկյունից ՀՀ զինված ուժերի զարգացման ռազմավարության արդիականությունը հիմնված պետք է լինի անվտանգության ընդարձակված օրակարգի (ռազմական, քաղաքական, տնտեսական, սոցիալական, տեղեկատվական) համադրելիության շրջանակներում **հոգևոր անվտանգության** *(spiritual security)* հիմնախնդիրների բացահայտմանը, վերլուծմանը, կանխատեսմանը և հավասարարժեք մեխանիզմների մշակմանը: Համոզված ենք, որ առանց հոգևոր անվտանգության ապահովման անհնար է ՀՀ ԶՈՒ-ի զարգացում՝ «նոր սերնդի» (տեղեկատվական, հիբրիդային, կիբեռ, ցանցային, կետային) պատերազմներ վարելու և հաղթելու համար: Այս համատեքստում էլ հոգևոր անվտանգության հիմնախնդիրների ուսումնասիրումն անհրաժեշտ է իրականացնել համակարգային և գործառութակառուցվածքային մեթոդաբանության սկզբունքների հիման վրա: Առանց այդպիսի մոտեցման

ՀՀ-ում հնարավոր չէ հաղթահարել հոգևոր անվտանգության ապահովման համար սպառնալիք դարձած օտարումը, աղքատությունը, կոռուպցիան, արտագաղթը, մենաշնորհը և գերշահույթը:

Ունենալով բարդ կառուցվածք՝ հոգևոր անվտանգությունը որպես ազգային անվտանգության բաղադրիչ. «…բնութագրում է հասարակության կենսակերտվածքի, պատմության և մշակույթի ավանդույթները, հասարակության բարոյաքաղաքական միասնության մակարդակն արտացոլող ազգային ինքնագիտակցության պաշտպանվածությունը, ինչպես նաև առանց ազգային ինքնությանը վնաս պատճառելու իր առաջադիմական զարգացման համար անհրաժեշտ նոր արժեքներ և գաղափարներ ընդունելու ազգի կարողությունը»[1]: Ելակետ ընդունելով տրված սահմանումը՝ անհրաժեշտ ենք համարում շեշտադրել, որ հոգևոր անվտանգության հիմքում դրված բարոյահոգեբանական և հայրենասիրական նորմավորված արժեքների միջոցով ժողովուրդը արտահայտում է կառավարող էլիտայի քաղաքականության նկատմամբ ոչ միայն իր վստահությունն ու աջակցությունը, այլև պատրաստությունը պաշտպանելու իրեն և իր պետությունն ու պետականությունը: Նմանօրինակ շեշտադրումը արդարացված է, քանի որ «նոր սերնդի» պատերազմների փորձը վկայում է, որ ազգերի և պետությունների դժբախտությունն սկսվում է այն ժամանակ, երբ քայքայվում է ժամանակի ընթացքում ձևավորված նրանց ինքնության մշակութանորմատիվային և բարոյահոգեբանական համակարգի քաղաքական էությունը, երբ իշխանական հարաբերությունների լեգիտիմության ցածր մակարդակը, մարգինալացնելով հասարակությանը, քաղաքացուն հիվանդացնում է ջղախտով և ստեղծում ֆուտուրշոկ *(ապագայաբանական ցնցակաթված)*[2]: Դրա հետևանքով տրոհվում է (փոշիացվում) ազգի ոգին և ազգի իշխանությունը:

Որպես պատմության հոլովույթում ձևավորված և քաղաքական ժամանակի մեջ պարբերաբար կերպափոխվող սոցիալ-քաղաքական տեքստ՝ «Ազգային ինքնությունը թելադրում է մարդու պահվածքը»[3] և «նոր սերնդի» պատերազմների պայմաններում արդիականանում է պետության (հատկապես՝ ազգ–պետության) և քաղաքացիականն հասարակության արդյունավետ փոխկապվածության միջոցով: Այս համատեքստում **ազգ–պետությունն ինքնիշխանություն է ապահովում, եթե ըստ մարտահրավերի կարևորում է մշակութաստեղծությունը** և ինքնակազմակերպվում է իր **«անփոփոխ միջուկի» շուրջ՝** որպես ժողովրդավարական համախմբման ռազմավարական ռեսուրս[4]:

[1] Տես *Դ. Ս. Չիլինգարյան, Ե. Լ. Երզնկյան,* Պաշտպանական-անվտանգային տերմինների բացատրական հայերեն–ռուսերեն–անգլերեն, ռուսերեն–հայերեն, անգլերեն–հայերեն մեծ բառարան: Ե., 2015, էջ 74:

[2] Տես *Э. Тоффлер.* Шок будущего. М., 2002, сс. 11–13:

[3] Տես *С. Хантингтон.* Кто мы? Вызовы американской национальной идентичности. Пер. с англ. А. Башкирова. М., 2004, с. 51:

[4] Տես «Многоликая глобализация». Под ред. П. Бергера и С. Хантингтона. Пер. с англ. В. В. Сапова. М., 2004, с. 90:

Ավելին. նրա անտեսումը խոչընդոտում է, որ մարդն արժեքավորի իր անհատական ինքնությունը՝ գիտակցելով այն որպես ինքնապահպանման, հանրային համակեցության մշակման, զարգացման, գոյաբանության ապահովման և հավատի, մշակույթի, լեզվի, ավանդույթների, առասպելների և խորհրդանիշների ազդեցությամբ տեղի ունեցող սոցիալականացման գործընթաց[5]:

Այս մոտեցմամբ էլ հիմնավորում ենք որ և՛ հոգևոր անվտանգության, և՛ ՀՀ ԶՈՒ-ի զարգացման հիմնական ռեսուրսը ՄԱՐԴՆ է, մարդկային կապիտալը: Հետևաբար, ազգային նպատակները և ռազմավարական տեսլականը զարգացման հարացույցում ընդգրկելուց առաջ պետք է հստակ կերպով պատասխանել ***«Ո՞վ ենք մենք»*** հարցին[6]: Իսկ «Մենք»-ը պետք է գիտակցի, որ իր ազգային կերպարի, նկարագրի ու կեցության, հոգեդրվածքի, ինչպես նաև ճանաչողության և իմացության ամբողջություն հոգևոր անվտանգությունը համակարգում է.

- տվյալ հասարակության գոյաբանության փորձը, որը **անցյալ–ներկա–ապագա** եռաչափության մեջ պատմության կարևորագույն իրադարձությունների ընկալման և արժեքների վերարտադրման հարատև գործընթաց է,
- պետութենաշինության մշակույթի զարգացման շնորհիվ ձևավորված և համագործակցության համար իրական պայմաններ ապահովող ստեղծարար գործունեությունը՝ օտարման ու մարգինալության չեզոքացմամբ,
- պետության և հասարակության անվտանգ ապագայի կանխատեսումն ու ռազմավարական տեսլականի մշակումը՝ ապահովելով ազգի ժողովրդավարական համախմբման և քաղաքացիավարական պատասխանատվության զարգացումը:

Հոգևոր անվտանգության ապահովումը ոչ միայն պատասխան է նոր մարտահրավերներին, այլև իր տեսակի մրցունակությունն ապա նպատակով նոր որակի համագործակցության մշակույթի ձևավորման գործընթաց է: Վերոշարադրյալի շրջանակներում փաստենք, որ հոգևոր անվտանգության ապահովումը ՀՀ ԶՈՒ-ի զարգացման համատեքստում անհրաժեշտություն է առաջացրել հստակեցնել «փափուկ ուժ»-ի դերակատարումը: Վերջինիս թերագնահատումը՝ բացասաբար է անդրադառնում պետության անվտանգության ապահովման վրա՝ վտանգի տակ դնելով, մի կողմից, սոցիալ-քաղաքական կարգի բնականոն արդիականացումը, մյուս կողմից, ռազմավարական և մարտավարական ծրագրերի մշակման հիմնախնդիրը: Հետևաբար, իշխանական հարաբերություններում դերակատարների բազմամակարդակ գործունեության լեգիտիմացումն էլ պայմանավորում է հոգևոր անվտանգության ապահովումը, եթե ներառում է բիզնես միջավայրի և նորարարական տեխնոլոգիաների կիրառման հումանիզացում, ազգային ինքնության արդիակա-

[5] Տես *Г. Алмонд, С. Верба.* Гражданская культура. Политические установки и демократия в пяти странах. Пер. с англ. Е. Генделя. М., 2014, с. 145:

[6] Տես *С. Хантингтон.* Кто мы? Вызовы…, с. 31:

նացման և միջմշակութային հարաբերությունների զարգացման գործընթացում ազգային «Ես»-ի և «Մենք»-ի մրցունակության ապահովում և «Նա–նրանք» մակարդակում համակեցության կանոնների պահպանում, մրցունակ և ցկյանս կրթության ապահովում, ինչպես նաև երիտասարդության սոցիալականացում[7] և քաղաքացիների հարատև սոցիալականացում, միջազգային հարաբերությունների համակարգում պետության–ազգային շահերի ներկայացում և իմիջի արդիականացում:

Միայն նշված գործիքակազմի իրականացմամբ է հնարավոր ապահովել հոգևոր անվտանգություն և «փափուկ ուժ»-ից անցումը «խելացի ուժին», որը արդի մարտահրավերների շրջանակում պետական քաղաքականության անբաժան մասը կազմող հավաքական գործիք է: «Փափուկ ուժ» և «խելացի ուժ» եզրույթների հեղինակ Ջ. Նայի դիտարկմամբ՝ այդ ուժերը, ապահովելով ներքաղաքական կայունություն, հետամուտ են արդի միջազգային հարաբերությունների համակարգում սեփական պետության ինքնության արդիականացմանը[8]: Այս գործընթացում որոշիչ են «խելացի ուժ»-ի արդյունավետությունը ապահովող հետևյալ կարողությունները. հուզական հավասարակշռություն, հեռատեսություն և ժամանակի մարտահրավերներին համարժեք ռիսկերի հաշվարկման ընդունակություն, հանրության հետ շփման անընդհատությունը ապահովող հետադարձ կապի վրա հիմնված հաղորդակցություն[9]:

Փաստենք, որ «խելացի ուժի» ձևավորման և գործառման գործընթացում կառավարող էլիտան քաղաքական դիսկուրսի միջոցով արդիականացնում և ազատականացնում է սոցիալ-քաղաքական համակարգը՝ ստեղծելով նախապայմաններ *անվտանգայնացման և համակեցության կանոնների պահպանման ըմբռնելիության («intelligible») համար:* Համոզված ենք որ «ըմբռնելիություն» եզրույթի օգնությամբ հնարավոր է բնորոշել կառավարող էլիտայի և հանրության միջև ծավալվող հաղորդակցության էությունը, բնույթը, ծավալը և արժեքային բեռնվածությունը: Այս ամենը ներառելով իշխանական հարաբերությունների արժեքաբանության մեջ՝ կառավարող էլիտան, հոգևոր անվտանգության ապահովման նկատառումներով, իր կողմից ծավալված սոցիալ-քաղաքական դիսկուրս պետք է ընդգրկի պատմական հոլովույթում իմաստաբանական, գոյաբանական և ճանաչողական դաշտերի արժեքաբանության ներդաշնակման առանձնահատկությունները:

Իսկ սոցիալ-քաղաքական դիսկուրսի կենսունակությունը պայմանավոր-

[7] Այդ մասին ավելի հանգամանորեն տես *Մ. Մ. Մարգարյան,* Երիտասարդության քաղաքական սոցիալականացումը՝ որպես ազգային ինքնության արդիականացման գործընթաց. հոգևոր անվտանգություն: «ՀԲ», 2018, հմ. 3:

[8] Տես *Дж. С. Най.* Гибкая власть. Как добиться успеха в мировой политике. М., 2006, сс. 176–177, 180:

[9] Տես *Doug Gave.* Joseph Nye on Smart Power. Harvard Kennedy School Insight Interview, 3 July 2008 (https://www.belfercenter.org/publication/joseph-nye-smart-power?fbclid=IwAR2FjkwAaz4sTIukdd2et9AAbuoZOk3aaUYoFJNkEh1aN633YDBKmKfz-MA):

ված է քաղաքացիների (մարդկային կապիտալի) վարքի շարժառիթներով, կառավարող էլիտայի իշխանության արժեքաբանությամբ, սոցիալ-քաղաքական տարածությունում տեղի ունեցող միֆերի և սիմվոլների համակարգային փոփոխություններով: Ընդ որում, հոգևոր անվտանգության ապահովման առումով հենց *միֆերի և սիմվոլների* աշխարհն է առավել նշանակալի, քանի որ դեպի այդ աշխարհն է հիմնականում կողմնորոշվում հասարակության սոցիալական հիշողությունը, որը թույլ է տալիս նրան դիմակայել ինչպես արտաքինից եկող քայքայմանը, այնպես էլ ինքնաարդիականացմանը (նաև վեստեռնիզացմանը): Այդ գործընթացը ենթադրում է.

1. *ծիսային տարածության փոփոխություն*՝ հասարակությունը հրաժարվում է իր նախկին աստվածների պաշտպանությունից՝ սկսվում է քննադատությունը, որը տեղ է ազատում «նոր աստվածների» համար:
2. *Նոր ծիսականությունը մարմնավորվում է նոր սիմվոլների ռացիոնալ ընտրության մեջ*՝ տեղի է ունենում քաղաքների, փողոցների անվանումների, ինչպես նաև հուշարձանների փոխարինում:
3. *Տեղի է ունենում ագրեսիայի գոտու փոխակերպում*՝ հասարակությունը փոխում է հիերարխիան «թշնամի–բարեկամ» համակարգում:
4. *Հին տեքստերը կորցնում են իրենց արդիականությունը,* արտադրվում է մեծ քանակի գաղափարախոսական տեքստեր, որոնք կոչված են իշխանության իրականացման մշակույթում հիմնավորել «հերոս–թշնամի», «հերոս–հակահերոս» նոր կառուցակարգերի անհրաժեշտությունը:
5. *քաղաքական տարածություն են հավաքագրվում նոր լեզվամտածողությամբ, նոր կերպարներ ստեղծող և երևույթները մեկնաբանող մասնագետներ*՝ լրագրողներ, գրողներ, գիտնականներ (ավելացնենք նաև բլոգերներին, մարգինալ ակտիվիստներին):

Արդի քաղաքական տեխնոլոգները, բազմաշերտ ցանցային տարածություններում գերազանցորեն օգտագործելով **միֆերի և սիմվոլների համակարգային փոփոխությունները,** ակտիվորեն ներգործում են, նախ, ենթագիտակցության վրա, մարդկային պարզ ընդհանրացված հույզերի վրա (օրինակ՝ նախանձ, վախ, սպառել, հաղթել, պարտվել), որոնք ճնշում կամ գրգռում են կամային գործողությունները, ապա արդիականացնում են սոցիալական փորձը (անձնական, ցեղային, էթնիկ, կրոնական, ազգային, էլիտար) և դրանով իսկ մղում են **ինքնանույնականացման, ընտրության և գործունեության:** Միաժամանակ, պաշտպանվածության նկատառումներով ստեղծում են «Օտար–յուրային» և «Հերոս–հակահերս» դիխոտոմիայի շրջանակներում իրականացվող հասարակական գիտակցության մանիպուլյացիայի այնպիսի մակարդակ, որը տարբերակում է զինակիցներին և բացահայտում է հակառակորդներին՝ համախմբելով հանրությանը կոնկրետ տարածությունում և ժամանակի մեջ: Փաստորեն հոգևոր անվտանգությունը առաջին հերթին ենթադրում է աշխատանք գիտակցության հետ **տեղեկատվության, գիտելիքների և մշակույթի միջոցով:**

Այս համատեքստում ուշագրավ է ամերիկացի Սյուզան Կելլերի դիտարկումը, որը, վերլուծելով Կարիբյան ճգնաժամը, փաստեց, որ հասարակության կենսունակությունը պայմանավորված է կառավարող էլիտայի կողմից իր սոցիալական գործառույթի ռազմավարական իրացման աստիճանով: Այսինքն՝ կառավարող էլիտայի սոցիալականացման պահանջատերը հասարակությունն է, որն իր քաղաքական մասնակցությամբ հետամուտ է կառավարող էլիտայի պատասխանատվության չափի և գործառնության որակի ինստիտուցիոնալացմանը[10]: Փաստորեն, Ս. Կելլերը նորովի հիմնավորեց մոտեցում, որ ռազմավարական էլիտա կարող է դառնալ այն սոցիալ-քաղաքական խումբը, որը զուգամիտում է արդիականացման, հարատև սոցիալականացման, ինչպես նաև ցկյանս կրթության կազմակերպման և հոգևոր անվտանգության ապահովման գործընթացները՝ կերպափոխելով հասարակության սոցիալ-քաղաքական կարգը ըստ անվտանգայնացման ռազմավարության մարտահրավերների:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ հոգևոր անվտանգության ապահովման գործում առավել քան ազգային–քաղաքական վերնախավերն են որպես գլխավոր դերակատար պատասխանատու պետության պաշտպանական քաղաքականության, ազգային ավանդույթների բնականոն արդիականացման, համագործակցության մշակույթի զարգացման, ինչպես նաև քաղաքական որոշումների ընդունման, իրագործման և վերահսկման համար: Այս դիտանկյունից, ՀՀ-ում ԶՈՒ-ի զարգացման համար անհրաժեշտ է դաստիարակել (ստեղծել, հավաքագրել) նոր որակի ռազմական-ռազմավարական էիտա, որն ի վիճակի լինի ցուցաբերելու բարձր պրոֆեսիոնալիզմ և նպատակադրված կերպով **բնաշխարհիկացման** ***(Indigenization)*** քաղաքականություն կմշակի և կիրականացնի[11]: Այսինքն՝ պատմության հոլովույթում սեփական մշակութային հիմքերը նորովի մեկնելու և ոչ թե կոշտ կերպով մերժելու կամ անտեսելու միջոցով ապահովի հոգևոր անվտանգություն: Միաժամանակ, չհրապուրվելով անհատական ազատությամբ[12] և չշահարկելով մարդու իրավունքները (չկա իրավունք առանց պատասխանատվության), նոր որակի էլիտան, իր ռազմավարական մտածողությամբ նպատակադրված կերպով բարելավելով ժողովրդավարության որակը, կիրականացնի ազգային ինքնության արդիականացման վրա հիմնվող անվտանգային քաղաքականություն: Դա էլ կբարձրացնի անվտանգ ապագայի ռազմավարության մշակման և իրականացման համար իր պատասխանատվության մակարդակը:

---

[10] Տես *S. Keller.* Beyond the Ruling Class. Strategic Elites in Modern Society. New York, 1963. P. 1-21 (http://people.uvawise.edu/pww8y/Supplement/STSup/Keller%20BeyRulCls%201963/03BeyRulCls%20ElitesSocForces.pdf):

[11] Տես *Ս. Հանտինգտոն.* Столкновение цивилизаций. М., 2003, с. 192:

[12] Տես *И. Валлерстайн.* Конец знакомого мира: Социология XXI века. Под ред. В. И. Иноземцева. М., 2004, с 98:

ՀՀ ԶՈՒ-ի զարգացման շրջանակում առաջարկում ենք արժեքավորել բնականոն արդիականացման և հարատև սոցիալականացման գործընթացների զուգամիտումը: Վերջիններս փոխլրացնում են միմյանց՝ միաժամանակ ապահովելով ՀՀ ԶՈՒ-ի զարգացման բնականոն և համաժամանակյա առաջընթացը: Հասկանալու համար, թե ինչ խնդիրներ ունի հայ հասարակությունը սոցիալ-քաղաքական համակարգի կերպափոխման տեսանկյունից, առաջարկում ենք, նախևառաջ, դիտարկել **հարատև սոցիալականացումը որպես հոգևոր անվտանգության ապահովման և ՀՀ ԶՈՒ-ի զարգացման գործընթացների փոխհարաբերություն ապահովող համակարգ:**

Հարատև սոցիալականացումը գիտելիքների, հմտությունների, սոցիալական դերերի վերարժեքավորման գործընթաց է, որը մարդուն հնարավորություն է տալիս նորովի գնահատելու իր քաղաքացիական պարտականությունները և սոցիալ-քաղաքական միջավայրն ու նոր անվտանգության կազմակերպումը՝ «Մենք» և «Նրանք» երկխոսության միջոցով: Հարատև սոցիալականացման շնորհիվ ձևավորված քաղաքացին, բնականոն կերպով յուրացնելով տարբեր սոցիալական դերեր, ոչ միայն ընդունակ է քննադատաբար վերաբերվել սոցիալական տարաբնույթ ցանցերում շրջանառվող տեղեկատվությանը, այլև կարող է ընդդիմանալ մարգինալ ճնշմանը և «Ես»-ի մակարդակում համադրության մեջ վերարժեքավորել հոգևոր անվտանգության ապահովման ազգային և միջազգային ավանդույթները:

ՀՀ զինված ուժերի զարգացման ռազմավարության մշակման և իրականացման արդի պայմաններում հարատև սոցիալականացումն կոչված է հումանիզացնելու և ժողովրդավարացնելու միջանձնային հարաբերությունների և իշխանության իրականացման մշակույթը՝ ռացիոնալացնելով քաղաքական և հանրային ինստիտուցիոնալ նորմերի նկատմամբ վերաբերմունքը: Այս տեսանկյունից կարծում ենք, որ հոգևոր անվտանգության հիմնախնդիր է հանրության գիտակցության տևական մարգինալացման պատճառների ուսումնասիրումը: Այն պայմանավորված է գծային ազատականացման հետևանքով ՀՀ-ում քաղաքական զարգացման ճգնաժամների (բաշխման, մասնակցության, շարժունակության, ինքնության և լեգիտիմության) տևականությամբ: Բացի դրանից, քաղաքացիական հասարակության ինստիտուտների ոչ ֆունկցիոնալ և ձևական գործունեությունը և պոստմոդեռն արժեքների այլընտրանքային մեկնաբանությունները հանգեցրել են «սպասումների հիասթափության» ծնելով անորոշություններով, թերարժեքության բարդույթով, կասկածամտությամբ հագեցած սոցիալ-քաղաքական օրակարգեր: Այս երևույթները ավելի ընդգծեցին հոգևոր անվտանգության հիմնախնդիրը, քանի որ օգտվելով քաղաքական զարգացման տևական ճգնաժամերից և սոցիալական պատասխանատվության բացակայությունից, հանրային իշխանության և անվտանգային քաղաքականության դերակատարներ դարձան փոխհամաձայնեցված տարաբնույթ խմբիշխանական շահեր (բիզնես, քրեածին, վերազգային և այլն) ունեցող և սպասարկող անձինք:

Հոգևոր անվտանգության հիմնախնդիրների վերլուծման և կերպափոխման գործընթացում հարատև քաղաքական սոցիալականացումն մեր կողմից ներկայացվում է որպես ՀՀ ԶՈՒ-ի զարգացմանն ուղղված մարտահրավեր, քանի որ այս գործընթացում, ըստ ամերիկացի Գ. Ալմոնդի դիտարկման,[13] տեղի է ունենում կյանքի որակի պայմանների շարունակական բարելավում, սոցիալ-քաղաքական մասնակցության աճ, ինչպես նաև քաղաքական իշխանության կողմից իրականացվող քաղաքական կուրսի շարունակական լեգիտիմացում:

ՀՀ-ում քաղաքական սոցիալականացման գործընթացի վերոնշյալ հակասական բնույթը պայմանավորված է հասարակության ինքնաիրացման անհավասար հնարավորություններով, որի հիմքում ընկած են և՛ օբյեկտիվ, և՛ սուբյեկտիվ դրդապատճառներ: Այս առումով առաջարկում ենք հոգևոր անվտանգությունը որպես ՀՀ ԶՈՒ-ի զարգացման գործոն դիտարկելիս առաջին հերթին կարևորել ՀՀ-ում 1990-ական թվականներից իրականացվող սոցիալ-քաղաքական ռեֆորմները, որոնք ուղեկցվեցին հասարակության կոշտ բևեռացմամբ, ինչի հետևանքով գծային ազատականացմամբ ձևավորված շուկայական հարաբերությունները հանգեցրին մարգինալ-պոպուլիստական մասնակցության և սերունդների միջև համերաշխության խզման, ստեղծել են սոցիալական անպատասխանատվության միջավայր: Այս տեսանկյունից *«անկախացած մարդը»* ենթարկվեց հոգևոր բռնության, ինչի հետևանքով ստեղծված մարդու հիմնարար պահանջմունքների՝ **գոյաբանական, ինքնության, ազատության և բարեկեցության պայմանների** չբավարարված վիճակը հանգեցրեց անձի «էկոլոգիական հավասարակշռության» խախտման կամ դեգրադացման, ինչպես նաև հասարակական համակարգից օտարման[14]: Այս ամենի հետևանքով հիմնարար պահանջմունքների բավարարմանը սկսեցին խոչընդոտել կեղծ էլիտարիզմը, օգտապաշտությունը, անպատասխանատու ազատությունը, էթնոցենտրիզմը, կոսմոպոլիտիզմը և այլ ընտրանքային ինքնությունը բացարձակ արժեք դիտարկող երևույթները: Վերոնշյալը ենթադրում է սոցիալականացում սեփական մշակութային տիրույթից դուրս և շահադրդված հարատև սոցիալականացում այլ մշակութային տարածության մեջ: Այս գործընթացն է, որ ծնում է մարգինալ քաղաքացիությունը, որը ենթադրում է «որդեգրած» մշակույթի տիրույթում ընդունված վարքային մոդելների, արժեքների և դերերի ընդունում՝ ըստ իրավիճակի և օգտակարության: Հոգևոր անվտանգության հիմնախնդիրների վերլուծման և համակարգման գործընթացում կարևորագույն դերակատարում ունի քաղաքացիական հասարակության ֆունկցիոնալ կայացումը: Այս առումով ՀՀ-ում հոգևոր անվտանգության և քաղաքական սոցիալականացման փուլերի միջև առկա

[13] Տես *Г. Алмонд, Дж. Пауэлл, К. Стром, Р. Далтон.* Сравнительная политология сегодня. Мировой обзор. Учебное пособие. М., 2002., сс. 116–117:

[14] Տես «Роберт Парк: Экология человека», 02.03.2011 (https://gtmarket.ru/laboratory/expertize/5406):

խզումը մանիպուլացնում և մարգինալացնում է անհատին և նրան դնում մշակութային և գաղափարական դեգերումների մեջ[15]: Ի լրումն այս ամենի՝ քաղաքականության դերակատարները ազգային, հատկապես՝ հոգևոր, անվտանգության հիմնախնդիրները ներկայացնելիս սկսել են բևեռացնել և՛ նացիոնալիզմը, և՛ կոսմոպոլիտիզմը: Այստեղ ուշադրության է արժանի այն, որ ՀՀ քաղաքացիական հասարակության ինստիտուտների զարգացման ընթացքում ՀԿ-ները, հանրային շահի սպասարկման օրակարգից օտարվելով, ծառայում էին պոստմոդեռն արժեքների օրակարգին: «Թավշյա հեղափոխությունից» հետո հայաստանյան ՀԿ դաշտը նոր ուժերով է համալրվում, քանի որ նախկին հասարակական գործիչները մուտք են գործում պետական կառավարման համակարգ:

ՀՀ-ում հոգևոր անվտանգության ապահովման գործընթացում քաղաքական և քաղաքացիական հասարակությունների ֆունկցիոնալ զարգացման նկատառումներով, կարծում ենք, նպատակահարմար է երկմակարդակ հասարակական ֆորումի ձևավորումը, նախ՝ ՀՀ հանրային խորհրդին, ապա խորհրդարանին կից, որտեղ ներկայացված կլինեն վերահսկողություն իրականացնող և պարբերաբար նոր սցենարներ շրջանառող ՀԿ-ները: Ֆորումի նպատակը պետք է լինի հասարակության ներգրավվածության, սոցիալական պատասխանատվության, իրավաքաղաքական գիտակցության բարձրացումը, ինչպես նաև համագործակցության մշակույթի զարգացումը: Նմանատիպ ֆորումները կարող են հիմք ծառայել ՀԿ-ի պատասխանատվության բարձրացման համար ինչպես մարգինալ-պոպուլիստական մասնակցության հաղթահարման, այնպես էլ հոգևոր անվտանգության ապահովման տեսանկյունից:

Վերոշարադրյալի շրջանակներում հատուկ կարևորենք Հայ Առաքելական Եկեղեցու և հայ ընտանիքի դերը: Հազարամյակներ շարունակ հայ մարդու հոգևոր անվտանգության և Հայ ժողովրդի բոլոր հաղթանակների աղբյուրը եղել և մնում են ազգային դիմագիծ ունեցող ընտանիքներում դաստիարակված սերունդները: Անկախ «ժամանակակից» այլընտրանքային ընտանիքի իրավունքները քարոզող ՀԿ-ների հայկական ավանդական ընտանիքի մոդելն այսօր էլ լիովին համապատասխանում է ընտանեկան իրավունքի միջազգային նորմերով նախատեսված ամուսինների (մեկ կին և մեկ տղամարդ) միջև եղած իրավահարաբերություններին:

Պետականազուրկ հայ ազգին ուծացումից փրկել և 21-րդ դար է հասցրել Հայ Առաքելական Եկեղեցին: Հայկական պետականության վերականգնումից հետո նորաստեղծ պետությունը և Հայ Եկեղեցին ներքաշվել են իրենց նետած մարտահրավերներին պատասխանելու ցանցային գործընթացում: Խղճի ազատության և ցանկացած կրոն ազատ դավանելու պատրվակով ՀՀ և ԱՀ են թափանցել ու պետական գրանցում ստացել 66 կրոնական կազ-

[15] Տես *Մ. Մ. Մարգարյան,* Քաղաքական արդիականացման հրամայականները Հայաստանի Հանրապետությունում, Ե., 2019, էջ 225–226:

մակերպություններ, և մոտ 200 կրոնական խմբեր էլ գործում են առանց պետական գրանցման[16]: Կարծում ենք, հոգևոր անվտանգության հիմնախնդիրների բացահայտումը և վերլուծությունը որպես համազգային խնդիր ենթադրում է հայության ջանքերի միավորում: Այս համատեքստում նպատակահարմար է մշակել և ընդունել «Հոգևոր անվտանգության մասին» հայեցակարգ, որտեղ կներկայացվի նրա դերակատարների (հատկապես՝ լիդերների և էլիտաների) սոցիալական պատասխանատվության արժեքային բազմաչափությունը և կառուցվածքա-գործառութային դիտանկյունից կհիմնավորվի նրա ռազմավարական կառավարման անհրաժեշտությունը պետության և քաղաքացիական հասարակության փոխհարաբերությունների զարգացման գործընթացում:

Հոգևոր անվտանգության ապահովման գործընթացում էական նշանակություն ունի սահմանադրականության ապահովումը: Համոզված ենք, որ ՀՀ-ում սահմանադրականության շուրջ ծավալվող «PR» տեխնոլոգիաների մանիպուլացման գործընթացները, օտարելով հասարակությանը, վտանգում են ՀՀ ԶՈՒ-ի զարգացման ռազմավարությունը: Ուստի հոգևոր անվտանգության ապահովման դիտանկյունից անհրաժեշտ է ստեղծել նախապայմաններ «PR» տեխնոլոգիաների մանիպուլացման կրճատման համար, ինչպես նաև քաղաքացիական հասարակության ինստիտուտների պատասխանատվության բարձրացման միջոցով ապահովել ժողովրդավարության որակը: Նկատի պետք է ունենա, որ քաղաքական «PR»-ը որպես հարաբերությունների, ներքաղաքական զարգացումների, տարաբնույթ քաղաքական նախագծերի, ընտրական արշավների ժամանակ քննարկվող ծրագրերի ամբողջություն ներառում է հոգևոր անվտանգության հիմնախնդիրների լուծման տեխնոլոգիական բազմաչափ մոտեցումներ: Այս գործում էլեկտրոնային զանգվածային լրատվամիջոցների և «Facebook» սոցիալական ցանցի, ինչպես նաև ՀՀ-ում մասնավոր ԶԼՄ-ների զարգացող ինդուստրիան հանգեցրել են նրան, որ տեղեկատվության բովանդակությունը, կրելով անձնային կամ խմբային շահի սպասարկման բնույթ, զարգացնում են հոգևոր անվտանգության նոր տեքստ *«հերոսների և հակահերոսների», «յուրայինների և օտարների»* մասին[17]: Այս ձևով հնարավոր է բացահայտել սոցիալ-քաղաքական օրակարգից քաղաքական գործիչների օտարվելու և «Facebook» սոցիալական ցանցում ֆեյք օգտատերերի կողմից կեղծ օրակարգեր ձևավորելու և դրանք հանրայնացնելու նպատակները:

Ամփոփենք. հոգևոր անվտանգության ապահովման համակարգը ստեղծել է և՛ հնարավորություններ, և՛ մարտահրավերներ: Հնարավորությունները

[16] Տես *Ղևոնդ քահանա Մայիլյան,* Ժամանակակից աղանդները Հայաստանում: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1999 (http://ter-hambardzum.net/ժամանակակից-աղանդները-հայաստանում-մ/):

[17] Տես *Հրանտ Տեր-Աբրահամյան,* Պապ թագավորի այլընտրանքային պատմությունը (https://timestream.mediamax.am/story/6):

ների շրջանակում զինվորական էլիտան, որդեգրելով «խելացի ուժի» գործիքակազմը, պարտավոր է ՀՀ ԶՈՒ-ի զարգացման նպատակով չեզոքացնել տեղեկատվական դաշտի աղմուկը և անվտանգ ու երջանիկ ապագայի կառուցման իրականացմամբ՝ բարձրացնել սոցիալական երկխոսությունը և պատասխանատվությունը: Բացի դրանից, նպատակահարմար չէ ՀՀ ԶՈՒ-ի զարգացումը պայմանավորել միայն առկա մարտահրավերին պատասխանելու հանգամանքով: Առաջարկում ենք ՀՀ ԶՈՒ-ի ռազմավարական զարգացման նկատառումներով մշակել մարտահրավեր նետելու ռազմավարություն: Իսկ այդ ռազմավարության հիմքում պետք է դնել բոլոր ժամանակներում հայ մարդուն հոգևոր անվտանգություն ապահովող «Հոգևոր Հայաստանի» գաղափարը:

Ի գիտություն հեղինակների և ընթերցողների

ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսն ընդգրկված է ԲՈԿ-ի կողմից հաստատված «Դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների արդյունքների հրապարակման համար ընդունելի ամսագրերի ցանկում»:

Հոդվածները պետք է ներկայացվեն հայերեն լեզվով, երկու օրինակով՝ շարված 1,5 ինտերվալով, մինչև 10 համակարգչային էջ ծավալով (առավելագույնը 20000 նիշ՝ ներառյալ բացատները), հոդվածին կից պետք է լինեն նրա ռուսերեն և անգլերեն ամփոփումները ոչ ավելի, քան 1 (մեկ) էջ ծավալով:

Հեղինակները պետք է վկայակոչեն օգտագործված առավել կարևոր աղբյուրները:

Հեղինակները պատասխանատու են հոդվածներում բերվող փաստերի հավաստիության և գաղտնիության պահանջների պահպանման համար:

Հեղինակների դիրքորոշումը պարտադիր չէ, որ համընկնի խմբագրության դիրքորոշման հետ:

Դիագրամները, սխեմաները, գծագրերը, նկարները, լուսանկարները պետք է լինեն հստակ, տպագրության համար պիտանի:

Հոդվածներում պետք է վերծանված լինեն օգտագործվող ռազմամասնագիտական հապավումները:

Ձեռագրերը հետ չեն վերադարձվում:

Հոդվածները հրապարակվում են պարտադիր գիտական փորձաքննություն անցնելուց հետո:

Նյութերի մասամբ կամ ամբողջությամբ արտատպումը թույլատրվում է միայն խմբագրության գրավոր համաձայնությամբ:

К сведению авторов и читателей

Военно-научный журнал Национального исследовательского университета обороны МО РА «Айкакан банак» включен в утвержденный ВАК-ом «Список приемлемых журналов для публикации результатов докторских и кандидатских диссертаций».

Статьи следует представлять на армянском языке, в двух экземплярах, в пределах 10 компьютерных страниц, напечатанных в 1,5 интервала (максимально 20000 знаков, включая пробелы), с приложением резюме на русском и английском языках объемом не более одной страницы.

Авторы должны давать сноски на использованные наиболее важные источники.

Авторы ответственны за достоверность и несекретность фактов, приводимых в статьях.

Позиции авторов не обязательно совпадают с позицией редакции.

Диаграммы, схемы, чертежи, рисунки, фотоснимки должны быть исполнены в четком изображении, пригодными для печати.

В статьях должны быть раскрыты употребляемые военно-специальные аббревиатуры.

Рукописи не возвращаются.

Статьи публикуются после прохождения обязательной научной экспертизы.

Перепечатка частично или полностью материалов допускается только с письменного разрешения редакции.

For the information of the authors and readers

Defense-academic journal «Haikakan banak» of National Defense Research University of the Ministry of Defense of the Republic of Armenia is included into «The list of acceptable magazines for the publication of the results of doctors and candidates' dissertations», affirmed by the Superior Attesting Commission.

The articles should be submitted in Armenian. Please, supply two copies. Articles are to be 1,5 spaced and should not exceed 10 computer pages in length (maximum 20000 characters with spaces). Provide Russian and English summaries (no more tham 1 page long).

Authors should give footnotes for the sources used.

Authors are responsible for the accuracy and the non-confidential nature of the facts given in the articles.

Opinions expressed herein are those of the authors and are not necessarily those of the editorial board.

Diagrams, schemes, drawings, pictures and photos should be of clear print quality.

Please explain special military acronyms.

Manuscripts are not returned.

Articles get published after obligatory scientific examination.

Partially or fully re-printing of materials is allowed only by written permission of the editorial staff.

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

Պատասխանատու քարտուղար՝ *Ա. Ա. Խաչատրյան*
Ռազմագիտական խմբագրման բաժնի պետ՝ *Զ. Դ. Ասատրյան*
Լեզվական խմբագրման խմբի պետ՝ *Տ. Մ. Անտոնյան*
Տեխնիկական բաժանմունքի պետ՝ *Վ. Ռ. Խալաֆյան*

Ձևավորող նկարիչ՝ *Գ. Վ. Իսկանդարյան*

Տեխնիկական խմբագրումը՝ *Ս. Ռ. Հակոբջանյանի, Ա. Հ. Սարուխանյանի*

Տեքստերի թարգմանությունը՝ *Ա. Ա. Մարտիրոսյանի, Ն. Ս. Մկրտչյանի, Թ. Դ. Չիլինգարյանի, Լ. Հ. Պապիկյանի, Ք. Վ. Փիրոյանի*

Համակարգչային ապահովումը՝ *Մ. Ա. Դավթյանի, Ս. Ռ. Հակոբջանյանի, Ա. Հ. Սարուխանյանի*

Սրբագրիչ՝ *Ն. Հ. Բաղդասարյան*

Լուսանկարչական ապահովումը՝ *Ա. Դ. Ներսիսյանի,* ՀՀ ՊՆ Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության և համացանցային

Խմբագրության հասցեն՝ Երևան, Կ. Ուլնեցու փողոց, 56/6, հեռ. 28-54-25
Էջ ՀՀ ՊՆ կայքում՝ http://www.mil.am/arm/index.php?page=105
Պաշտոնական բլոգ-կայքը՝ http://razmavaraget.wordpress.com
Էլ. հասցեն՝ haykakanbanakmod@gmail.com

© ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2019 թ.

Թուղթը՝ օֆսեթային: Ձևաչափը՝ 70×100 1/16:
Տեքստը՝ 132 էջ + 4 էջ ներդիր: Պայմանական տպագրական 10,5 մամուլ:
Տպաքանակը՝ 500: Տառատեսակները՝ «Arial», «Arial Unicode», «GHEA Grapalat», «Russian Baltica» և «Times»: Տպագրությունը՝ օֆսեթ:
Վկայական՝ 523: Դասիչ՝ 69263: ISSN 1829-0108

Տպագրվել է «Լիմուշ» տպարանում

ՀՀ-ում անցկացվող ռազմավարական զորավարժությունների
շրջանակներում ՀՀ Վարչապետ Նիկոլ Փաշինյանի,
ՀՀ Պաշտպանության նախարար Դավիթ Տոնոյանի,
ՀՀ Զինված ուժերի Գլխավոր շտաբի պետ
գեներալ-լեյտենանտ Արտակ Դավթյանի այցելությունը
պահեստազորի զորավարժարան

2019 թ. սեպտեմբերի 28

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

АЙКАКАН БАНАК НАІКАКАН ВАНАК 3 (101). 2019